Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2606

84
$-71

9011

ՆՈՒՄԱ

ՊՈՄՊԻԼԻՈՍ

84
Ֆ-71

ՆՈՒՄԱ ՊՈՄՊԻԼԻՈՍ

ԵՐԿՐՈՐԴ ԱՐՔԱՅ ՀՌՈՎՄԱՅ

ՎԻՊԱՍԱՆԵԱԼ

Ի ՖԼՈՐԻԱՆԷ

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ

ԱՐՀԻԱՊԱՏԻՒ

ՏԷՐ ԵԴՈՒԱՐԴ Վ. ՀԻՒՐՄԻՒԶԵԱՆ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԻՐԱԿԱՅ

Երկրորդ տպագրութիւն

16

2003

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1866

10.110-42
9
ZUUՊ Арм ССР
Ամ. Ա. ՄՅՈՎՅԱՆԻ
ԱՆՎԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆ
5047
47
2003

ԹԱՐԳՄԱՆՉԻՆ

ԱՌ

ՄԵԾԱՊԱՏԻՒ

ՊԱՐՈՆ ԱՂԱՆՈՒՐ

ՀԵԿՈՒՅՈՒՄՆ

Ցերիան գաղղիացի ազնուատոհմ եկաց 'ի վերջ-
կոյս անցեալ դարու։ Եւ թէպէտ յաղմուկս խառ-
ւռութեան հայրենեացն բազումս վշտակրեալ՝ եղև
վաղամեռիկ ամաց երեսուն և ութից, սակայն ոչ
սակաւ երկս քերթողականս եթող, յորս օգտա-
կարագոյն առաջիկայս է վիպասանութիւն, ցան-
կալի 'ի սմա ընծայեցուցանելով զկրօնս և զազգի
ազգի առաքինութիւնս։ Յայսպիսի օգտակարու-
թիւն մատենիս հայեցեալ ազգասէրն և քաջածա-
նօթ յազգիս այլովք բարերարութեամբքն Պարոն
Աբրահամ Աղանուր, անդ ուրեմն յամին 1812 ետ
թարգմանել զայն և տպագրել 'ի Մատրաս։ Որով
զբանասիրական և զազգասէր ըղձիցն իւրոց ան-
դըստին տուեալ զերախայրիս, հաճոյ գտաւ յոյժ
և սիրելի յաչս մեծափարթամ բարերարի ազգիս
Պարոն Սամուէլի Մուրատայ, որ փեսայացոյց

զնա ինքեան՝ խնամէկան անձուկ յօդիւն զազգաս-
սէր առաքինութիւնն պատուասիրեալ։

Բայց լիցի ինձ օրէն զքերթողահօրն մերոյ 'ի դէպ.
և ես երկրորդել ատանօր, զի թարգմանչին անգէտ
մերումն գոլով արուեստի՝ 'ի բազում մասանց թե-
րացեալ գործն գտանէր։ Վասն որոյ բարեբարին
ոչ խնայեալ 'ի ծախս, դարձեալ վերատին զայն
արդ նորոգ թարգմանութեամբ 'ի լոյս ընծայեցու-
ցանէ՝ օրինակ բարի 'ի յորդոր ազգասիրութեան
տուեալ համազգեաց։

ԵՈՒՄԱ ՊՈՄՊԻԼԻՈՍ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ ԳՐՈՑ

Տուլլիոսի քրմապետին Դեմետրեայ գաստիարակել զՆումա, որ կարծէին որդի Նորա։ Տօնախմբութիւն Դեմետրեայ։ Տուլլիոս յայտնէ Նումայ, զի էր նա որդի Պոմպիլիոսի իշխանին 'ի զարմէ Թագաւորացն սաբինացւոց. և պատմէ նմա զանցս Պոմպիլիայ մօր Նորա, զյափշտակութիւն սաբինուհեացն, զմահ ծնողաց Նորա, զպատերազմ հռովմայեցւոց ընդ սաբինացիս, զնիզակակցութիւն երկոցունց ազգացն, զնուանդ Նումայ 'ի մեհենին Դեմետրեայ, և զպատգամ դիցուհւոյն արձակելոյ զնա 'ի Հռոմ։ Իջանել Նումայ 'ի շիրիմ մօրն, և ապա կազմել 'ի ջու։ Խրատք քրմապետին առ նա, և հրաժարել նոցա 'ի միմեանց։

ՆՈՒՄԱ ՊՈՄՊԻԼԻՈՍ

ԳԻՐՔ Ա.

Ոչ ինչ հեռի 'ի Կորայ քաղաքէ, յերկրին Սաբինաց,'ի վաղեմի ուրեք անտառի կանգնեալ կայր մեհեան Դեմետրեայ։ Հովանացեալ ղդմբեթաւ նորա սաւառնէին ժամանակակից երկրի սարդք և կաղամախք. և գետն Կորէս թանայր ալեօքն զպատուարս նորա, և սողակէր գնայր 'ի բուրաստանս տանց՝ որ սատ անդ շուրջ զմեհեանն կաւուցեալ կային։ Ի բնակարանն յայնմիկ սրբազանս քուրմք դիցուհւոյն, իւրաքանչիւր ոք կնաւն իւրով և որդւովք հանապազորդէին յաղօթս և 'ի վատակս և 'ի գութ ծնեալսէր։ Եւ պաշտպանեալք 'ի դիցուհւոյն՝ զոր պաշտէին, ունեալք յանդաստանացն՝ զորս մշակէին, սիրեցեալք 'ի հարանցն՝ զորոց յարդարէին զբարեբաստութիւն, բարեբանեալք յորդւոցն, խաղաղաւէտք ընդ իրեարս, վայելէին քաղցրութեամբ 'ի կեանս՝ աներկիւղք 'ի մահուանէ և անտենչք նմին։

Արդոյ ծերունին Յուլիոս իշխան էր քրմաց. և յութանամենի քրմապետելով՝ զնախանձայուզութիւն երիտասարդական ընդ ծերունական ներողամիտ հեզութեան միալուծ բերէր յանձին։ Սիրելի ամենեցուն՝ որ կենակիցք էին նմա, պատկառելի բոլորեցունց, չարաց ևեթ ահաւոր, մտերիմ դից և բարեկամ մարդկան, դուն ուրեք խնդրէր ինչ վասն իւր, միշտ իսկ և ցանկ վասն որբոց և այրեաց։ Եթէ 'ի կորացւոց ոք 'ի բնակչաց քաղաքին կամ 'ի դաշտայնոց անկանէր 'ի վիշտս, կամ հերձուած 'ի դերդաստանի ուրեք եթէ պատահէր, կամ խաղաղութիւն ընտանեաց թէ խռովէր, հայրն տառապեալ կամ այր կամ որդի դիմեալ ընդ ճանապարհ մեհենական տնտառին՝ գնային առ Յուլիոս. և կամ եթէ սուղ ինչ նոքա յամէին, ինքն Յուլիոս 'ի խնդիր նոցա երթայր, լսէր զբաղմաթախանձ բողոք նոցա, և ոչ երբէք 'ի լսելոյ տաղտկանայր. քաջալերէր զնոսա և մխիթարէր, և առատ մատուցանէր նոցա նպաստ և խրատս։ Դառնային 'ի նմանէ թշուառք ապրփեալ 'ի տրտմութենէ կամ նուազ եղկելիք. իսկ Յուլիոս, քանզի չհամարէր արարեալ ինչ նոցա, դիմէր անկանէր առաջի դիցուհւոյն, և պաղատէր վասն եղկելեացն։

Յուլիոսի վախճանեալ էր կին, և ամենայն գութ գորովոյ նորա ժողովէր 'ի նումա միայն յորդեակն իւր։ Թուէր ինն զի և երկինք առաքինութեանց ծերունւոյն փոխարինէին, ճոխաս-

ցուցեալ զմանուկն առատաձիր բարեմասնութեամբք։ Դեռ այն ինչ պատանին 'ի վեշտասան ամ հասակին թեւակոխէր, ոչ այլ ինչ զպատանեկան տիոցն բերելով՝ բայց զշնորհս և զքաղցրութիւն. էր նա հնազանդ հօրն՝ զոր սակաւ ինչ ընդհատ 'ի Դեմետրեայ մեծարէր. և վառեալ բորբոքեալ ըղձիւք նմանող լինելոյ նմա, զբարոյականին մասունս 'ի կենաց նորա ուսանէր։ Պարապեալ հանապազ 'ի միտ առնուլ զհրամանս կրօնից, ցանկայր կրթել և յարարողութիւնս պաշտամանց. և զոհք և մաղթանք գրաւէին բովանդակ զպարապոյ ժամանակս նորա. սէր առ Տուէ՛նս և Ջանք յուսումն՝ էին ըղձք սրտի նորա. և միտք նորա պարզ որպէս զկապուտակ եթերին՝ ոչ ինչ խարէր զպարտս 'ի զբօսանաց։ +

Հասին տօնք Դեմետրեայ. այլ ոչ որպէս յԵլեւսիս կատարէին առ սաբինացիս տօնքս այս. քանզի Տուէ՛նսի խափանեալ էր զայն ամենայն խորհուրդս դաղտնածածուկս, անօգուտս ամենևին 'ի բարեկենդանութիւն մարդկան։ Եւ սէր իսկ. Ատուած, որ ամենայն ուրեք երևի մեզ, որ հանապազ յայտնէ զանձն 'ի դերահրաշ գործելիս բնութեան, զիարդ այդքան պահանջիցէ գաղտնիս և այդքան փորձս առ 'ի հաղորդել ընդ մարդկան. իցէ՞ իսկ մարթ՝ թէ դիժուարաւ ևս գոհանալ կարիցեմք զնմանէ, քան ընդունել 'ի նմանէ պարգևս։ Քաւ լիցի. սիրէ Դեմետրէ զմարդիկ առ հասարակ, զի ամենեսին

զնոսա անուցանէ։ Դաշտ, զոր ծածկէ նա հաս-
կօք, տաճար է մշակին. և ամենայն ուրեք ընդ-
տիեզերս պարտ է երկիր պագանել այնմ, որոյ
պարգևք ընուն զերկիր։

Ըստ սոյին իմաստից Տուլլոս միաբանու-
թեամբ ընդ արքային Իւրում պատուէր եւ կա-
տարել զտօնախմբութիւն Դեմետրեայ։ Ամի ա-
մի մինչև ձեռնարկեալ 'ի հունձս մշակք առ հա-
սարակ զգեղեցկագոյն զիւրեանց հանդերձս ըզ-
գեցեալ՝ ժողովէին 'ի քաղաքն Կոր, և անտի մեկ-
նէին գնալ 'ի մեհեանն։ Սրինդք առաջի գնային,
և զհետ նոցա օրիորդք բերելով 'ի գլուխս իւ-
րեանց նուէրս սուրբս դիցուհւոյն 'ի կողովս ծաղ-
կազարդս։ Մանկտին մշակաց հետևէր նոցա սպի-
տակազգեաց, ծաղկամբք ցորենոյ պսակեալ, զոր-
կորայն ածեալ ձգելով զհետ զկաղնաճարակ ե-
րէց գունդս այս բազմահոյլ, խրոխտապանծ՝ 'ի
պահ զոհին, ճոխաճեմ գնացիւք ճգնէր բերել
զհանդարտութիւն. այլ խառնէր զայն անդադար
աղմուկ խնծզալից։ Հարք նոցա դանդաղաքայլ
զհետ գնային՝ յորդորելով զնոսա 'ի լռութիւն,
ներողամիտք անլսողութեան նոցա, իւրաքանչիւր
ուրուք բերելով 'ի ձեռին որայ երախայրի 'ի հնձոց
իւրեանց։ Թագաւորք և զօրավարք և առեն-
կալք ոչ էս զպատուականագոյն 'ի տօնս անդ ու-
նէին զտեղի, այլ թողուին զայն մեծարանաք
անուցչաց իւրեանց։

Տուլլոսի քրմաքն հանդերձ եկեալ էր նոցա

ընդ առաջ'ի մուտս դիցանուէր անտառին. առընթեր նորա գնայր Նումա, պատկեալ նարկիսիւք, և զդեցեալ պճղնաւոր կտաւի։ Եւ հայեցեալ պատանւոյն ետես՝ զի արտասուէր ծերունին, բայց ծածկել հնարէր զարտասուսն. և տրբտեալ ընդ վիշտս հօրն առաւել քան թէ ինքն վշտակրէր, ոչ իշխէր առաջի բազմութեան 'ի վեհափառ պաշտամունս անդ դիմել 'ի գերկանցրա, և զվանէրն զարտասուաց նորա հարցանել։ այլ լռութիւն ծերոյն և գորով և այլայլութիւն դիմաց նորա՝ շատ իսկ յայտնէին զսրտին աղմուկ։ Նումա, որ միշտ մտադիրն էր և անդրեսս 'ի կրօնական պաշտամունս, ոչ ևս ինչ տեսանէր անդ՝ բայց զհայրն, ոչ ևս ինչ խորհէր՝ բայց 'ի հայրն, 'ի մուտացօնս արկեալ զպաշտօն իւր. և աչք իսկ նորա, որք զպատճառս հայրենի արտասուացն խնդրէին նկատել, նսեմացեալէին յարտասուաց։

Հասին 'ի մեհեանն. և Տուլլոս անկեալ առաջի դիցուհւոյն՝ մատուցանելով նմա զերախայրիս հնձոց, այսպէս պաղատէր. Մայրդ մահացուաց, դու որպիսց այսոցիկ աճուն չնորհես, և հայր քոյին Դիոս երկիւղածս զմեզ և չնորհակալուս յարդարէ. Դիք անմահք, զձերս'ի ձերոյ սատի ընծայեմք պարգևս. մի մերժէք զնուէրս մեր, այլ անբաւ բարերարութեամբդ ձերով չընորհեցէք անդատանաց մերոց առատ պտղաբերութիւն, բազկաց մերոց զօրութիւն, և անձանց մերոց առաքինութիւն։ Եւ յաւարտ մաղթա-

նայն էարկ Յուլիոս զմուրկն սուրբ առաջի զոհին. և շրջեալ զգլուխ նորա ընդ երկինս 'ի վեր, զեն զնա, և. եռ զայն 'ի ճաշակ։

Եւ 'ի վախճան լինել զոհին՝ մինչդեռ մատչէին մշակք աւանդել զհունձս իւրեանց, ասէ ցնոսա Յուլիոս. Եղբարք իմ, (քանզի և դուք իսկ քուրմք էք Դեմետրեայ), նուէրքդ այդոքիկ դիցուհւոյն են, այս ինքն է կարօտելոց. և քուրմք դից ոչ այլ ինչ են, բայց դանձապետք աղքատաց, իսկ դուք բարերարք նոցին։ Ընտրեցէք ապա զմի ոք յերիցագունից 'ի ձէնջ, զի հսկեսցէ ընդ իս զայս ամ 'ի սիրուն թշուառաց. պարտ իսկ է զի տաց ձեզ համար զնուիրացդ, զորս աւանդէքդ ինձ վասն նոցա։ Իսկ մշակքն, քանզի դիտէին քաջ զառաքինութիւն Յուլիոսի, չարին յանձն տալ նմա ընկեր. բայց Յուլիոսի պահանջեալ զայն, ընտրութեամբ գործակցին եղև զրաւ պաշտամանն։

Բայց Նումա ոչ ունէր ժոյժ, փութայր տեսանել միայնակ զհայրն. և այն ինչ Յուլիոս էլ 'ի մեհենէն, դիմեաց 'ի գիրկս նորա խանդակաթ որդին, և ասէ. Հայր իմ, դու վշտացնիս, և ես զվիշտս քո անգիտանամ. ո՛հ, գիտեմ քաջ՝ զի մանկականի տիոցս իմոց ոչ է մարթ սիրել զքեզ, այլ դէթ վշտակից եղէց քեզ. և ինքս իցէ ինձ ժոյժ ունել արտասուաց, տեսանելով զարտասուս որ ի ջանեն յաչաց քոց։ Պատասխանի ետ նմա Հայրն. Որդեակ իմ սիրելի, (քանզի ոչ եր-

բէք գաղարեցից 'ի կոչելոյ զքեզ անուշակ ա-
նուամբս), յոլովք են ինձ յոյժ արտասուաց պատ-
ճառք, քանզի առաջի կայ ինձ բաժանել յայն-
մանէ՝ որ սիրելին է ինձ քան զկեանս իմ։ Յայն-
ժամ Նումա գողդոջելով ասէ. կամիս ուրեմն
թողուլ էքանել զիս։ Ծերունին ասէ. քաւ լի-
ցի, որդեակ իմ. ոչ ես, ոչ, սիրելի որդեակ,
այլ դու.... Եւ ոչ կարաց կատարել զբանն,
նուաղեալ ձայնի նորա 'ի հեծեծանաց. և ա-
ռեալ զձեռանէ Նումայ, ձգեաց զնա 'ի ներքսա-
գոյն կողմն անտառին. անդ բազմեցան 'ի գա-
լարուոջ և սկսաւ ասել ցնա ծերունին.

Նումա, դու չես որդի իմ։ Զայն իբրև լուաւ
պատանին, հատաւ գոյն երեսաց նորա, և եղև
տժգոյն մահատիպ, և զդողանի հարկանէր ձեռն
նորա 'ի ձեռին ծերունւոյն։ Զգաց զայն քրմա-
պետն, և թեւապարիկ փարեալ զնովաւ, յա-
ւել վաղվաղակի. հանդարտ լեր, ես եղէց միշտ
քո հայր, սիրելի է ինձ անունս այս որպէս քեզ։
Այլ դու լուր զանցս ծննդեան քո, և ծանիր որ-
պիսի բարձր քեզ նաեհ պատրաստեն երկինք։
Յայնժամ Նումայ փարեալ զհարքն, և ոչ ինչ
տուեալ նմա պատասխանի, լուռ ևեթ ունկնդիր
լինէր, 'ի խոնարհ ունելով զաչս իւր. բայց 'ի ա-
սել կերպարանացն թուէր իմն ասել ցՏուլլոս.
չէք և չէք ինձ և ոչ մի ինչ հաւասար բարեբաս-
տութեան գողոյ քեզ որդի։

Եւ յառաջ ածեալ քրմապետին զբանն, ասէ.

5048
Ա7
ՀՍՍՌ Գիտ.Ակադ. Գրադարան
ՀՍՍՌ Գիտ.Ակադ.
Մ. Ա. Մաշտոցի անվան

Պոմպիլիոս ած զքեզ 'ի լոյս, որդեակ իմ, Պոմ-
պիլիոս իշխան թագաւորաղն, և գերաշխարհիկ
առաքինութեամբքն սիրելի դից և մարդկան։
Զքնաղագեղն Պոմպիլիա 'ի նախնի զարմէ հե-
բակլիդեանց էր հարանացեալնմա'ի տան ամաց
հետէ. և ոչ այլ իմիք կարօտէին ամուքն բարե-
բաստիկք, բայց տեսանելոյ զգրաւական խանդա-
կաթ սիրոյ իւրեանց ընդ միմեանս։ Պոմպիլիոս
ըղձիւք ցանկայր այնմ. իսկ գորովագութն Պոմ-
պիլիա, որոյ նպատակ ամենայն ըղձիցն էր այր
իւր, գայր հանապազօր 'ի տաճար այսր, անկա-
նէր առաջի Դեմետրեայ, թանայր արտասուօք
զաստիճանս բագնին, և զմի ինչ խնդրէր շնորհ
'ի բարեբաստութիւն իւր՝ ծնանել առն իւրում
որդեակ մի։ Մատեայ առ նա 'ի միում աւուրց
յանկարծ 'ի սրբարանին. այլ նա այնու եռան-
դեամբ աղօթէր, զի ոչ եռեալ զիս. և լսէի զի
աղօթէր այսպէս. Բարերար Դեմետրէ, եթէ
հօր քո Դիոսի երկայնաւորս ինձ սահմանեալ
իցէ, մաղթեա ինձ 'ի նմանէ կորնչել մանաւանդ
վաղամեռիկ 'ի ծաղկի հասակիս, բայց միայն թո-
ղուլ առն իմում արդասիս զսուրբ սիրոյ մերոյ։
Բարձ յինէն, հզօրդ և անմահ, բարձ զամենայն
պարգևս՝ զորս ընկալայ. մի՛ տար ինձ զորս պատ-
բաստեան, այլ տուր ևեթ փոխարէն ուսարիկ մի։
Լուայց զձիչ նորա, տեսից զնա, բարձից 'ի գիրկս
իմ, զգուեցից 'ի ծոց իմ, ծածկեցից զնա 'ի համ-
բուրից բերանոյ իմոյ, մատուցից զնա առն իմում

ողողեալ յարտասուս ցնծութեան իմոյ, և մեռայց այնուհետև, բայց մեռայց մայր. շատ իցեն ինձ այնուհետև կեանք իմ։ Ո՛վ Դեմետրէ, եթէ լսելի լիցին քեզ աղօթք իմ և տացես ինձ որդի, երդնում՝ 'ի բազինս՝ նուիրել զնա քեզ, վարժեցից զնա յօրհնութիւնս քո ընդ պարզել շընորհանց նորա 'ի յօդել զանուն քո, տաց զնա դաստիարակել 'ի տաճարիս՝ ուր սպասաւորեսցէ քեզ զամենայն աւուրս կենաց իւրոց, և ուր հաճեսցիս դու լինել նմա 'ի մայր, յորժամ ոչ ևս իցէ Պոմպիլիա։

Հոսէին արտասուք յաչաց իմոց 'ի լսել զաղօթս զայս. և 'ի ծունր իջեալ առընթեր Պոմպիլիայ՝ աղօթէի ընդ նմա, պաղատելով առ դիցուհին՝ լսել մաղթանաց երկաքանչիւրոցս։ Այլ աւա՜ղ, ծանրագնի եղեն պարգևք նորա։ Յետ ոչ բազում՝ աւուրց եկն Պոմպիլիա աւետել զյղութիւն իւր ինձ. և ո՞ կարիցէ բացատրել զցնծութիւն նորա. սակաւ ինչ ընդհատ 'ի ցնորից էր այն։ Ութ լուսնեակք դեռևս մնային հասանելոյ ցանկալի պահուն՝ որում սպասէր, և վաղ իսկ կազմ և պատրաստ կային սպասք մանկանն՝ որ ծնանելոցն էր։ Ցանկութիւն և պարծանք մայրութեան ետուն նմա անձամբ ձեռագործել որ ինչ 'ի պէտս էին մանկանն, չթողուլ ազախնեայց իւրոց հաղորդս լինել բերկրանացն՝ որով վաստակէր վասն որդեկին։ Յոյս անուշանելոյ զմանկիկն յաճախէր ըղխանդութիւնն նորա, որով մնայր տեսանել զծնունդ

մանկանն. և արքեցեալ մայրենի սիրով գորովա-
գութն Պոմպիլիա՝ յաճախէր 'ի տաճարն գո-
հանալ զդիցուհւոյն, առաւել և ս քան զոր յա-
ռաջն յընդունելութիւն ըղձիցն գայր։

Այն ինչ իններորդ ամիսն ժամանէր՝ որում
յայնքան ժամանակաց հետէ ցանկայր, Հռոմուլ՝
որոյ անուն ոչ անծանօթ է քեզ՝ հռչակ եհան
ընդ Սաբինա, զի 'ի նաւակատիս քաղաքին Հռ-
ովմայ՝ որ դեռ ևս կատարեալն էր՝ կամէր
տօնս խաղուց 'ի հանդէս ածել 'ի պատիւ կոն-
սեայ դից։ Գիտես իսկ, որդեակ, քանի մեծա-
րեալ պատուի աստուածս այս առ մեզ։ Մայր
քուբարեպաշտ, որ ոչն ապախտ առնէր զպատեհ
մեծարելոյ զդիս, կամեցաւ գնալ 'ի տօնսն. և
Պոմպիլիոս, դիւրալուր 'ի հաճել զնա, ած զնա
անդր։ Բազմագոյնք 'ի սաբինացւոց աստի մերոց
չոգան զհետ Պոմպիլիոսի. կանայք և դստերք
դիմեցին 'ի Հռովմ՝ զարդարեալք 'ի հանդերձս
վայելուչս տօնիցն։ Այլ աւա՜ղ, քա՛ջ որեարն
մեր անկասկածք զդաւանայն՝ զնային անզէնք։
Մտին աներկեան 'ի կրկէսն, ուր Հռոմուլ բազ-
մէր 'ի հոյակապ բեմի. կանայք նոցա և դստերք
առընթեր նոցա առին կայս. և անժոյժք 'ի տե-
սիլ հանդիսին, շուրջ ածեալ զաչս՝ խնդրէին
զզոհան զենլիս, որ ինքեանք իսկ էին։

Եւ յակնարկել թագաւորին՝ հանեալ հռով-
մայեցւոց զսուսերս, կալան զելս կրկիսին։ Սաբի-
նուհիք զարհուրեալք դիմէին 'ի գերկս հալոցն

իւրեանց և եղբարց և արանց . այլ զօրք Հռոմուլեայ ամենիք յարձակեալ 'ի մէջ կրկիսին, սուր 'ի ձեռին, աչք արիւնռուշտ, սպառնալիցք ընդդէմ արանց, և հրապուրիչք կանանց, յափշտակէին զաղջն ապիկար, որպէս գայլք սովեալք ըզխաշինս ահաբեկս : Ի զուր էր հիզացն 'ի սրտառուչ ճիչ աղաղակի խնդրել զմահ . 'ի զուր քաղաքակիցք մեր զայրագինք, մոռացեալ զի էին անզէնք, 'ի վերայ առևանկացն յարձակէին, հարկանէին ընդ նոսա, կռուէին, յափշտակէին զսուսերս նոցա, և ներկանէին զերկիր 'ի նախճիրս արեանց հռովմայեցւոց : Այլ ոչ քաղաքացիքն մեր բազմադոյնք թուով՝ կոտորեալ զընդդիմակացս, զայլս 'ի փախուստ դարձուցեալ, ածեալ ամրացուցին 'ի Հռովմ զորս իւրեանց, մինչ սաբինացիքն մեր տխուր արիւնաշաղախ ծածկեալք վիրօք վշտացին և կորակոր դարձ առնէին 'ի կոր՝ դուժել զահագին բօթն, և պատրաստել 'ի վրէժխնդրութիւն :

Անդէն 'ի սկզբան աղմկին Պոմպիլիոս հայր քո 'ի վերայ բազկաց իւրոց բարձեալ բերելով զմայր քոյին, խնդրէր բանալ իւր անցս ընդ ամբոխ յելուզակացն : Եւ այն ինչ մերձ հասեալ յելս կրկիսին, և ահա գումարտակ հռովմայեցի զհետ մուտեալ, 'ի վերայ հասեալ յափշտակէր 'ի նմանէ զկինն : Պոմպիլեայ մռնչեալ զայրագին, և զմահ յաչս եղեալ, եգիտ անդ սուսեր մի, և տապաստ արկեալ որ շուրջ զիւրև պատեալ էին

հռովմայեցիք, դիմեաց խոյացաւ, հար և հարաւ, եհաս առ Պոմպէյիա, արկ սրախողխող զսիղեխ նորին, և թափեալ զսիրելին՝ ընդդիմակէր զնա յարիւնաթաթաւ գիրկս իւր, քաջալերէր զնա և մխիթարէր։ Եւ թէպէտ հռովմայեցիք մոլեգին հեռամուտք լինէին, և թէպէտ տարաւք նեռից զնովաւ տեղային, խոյս տայր'ի կրկիսէն՝ ողջագուրելով զհէք մայր քոյին, և ընթափելով զնա, գոհ և զուարթ ընդ փրկութիւն նորին։

Այսպէս առուծ 'ի Նումիդիա տեսանելով 'ի բացէ զյանդուգն զորսորդ յափշտակող կորեանց իւրոց, մոլեգին մռընչմամբ, արիւնռուշտ և հրացայտ աչօք յարձակի 'ի վերայ հիքին։ Նա 'ի զուր 'ի բաց զորան լքանէ. հասանէ ոտքն ըզհետ, յօշ յօշ պատառէ զնա, և ցիր և ցան ղչեբաչեբմ զդողդոջ անդամն արկանէ։ Գորով ապա զզայրոյթ 'ի նմա փոխանակեալ, դիմէ նա առ կորինս իւր, դդուէ զնոսա, կաղկանձէ առ ցնծութեան, լիզու և ստէպ լիզու զնոսա դեռ ևս արիւնաշաղախ լեզուաւն, և առ ընթեր բազմեալ՝ դիւցուցանէ զնոսա, մինչ դեռ անդամք իւր 'ի դողի կան առ արամտութեանն այն ինչ յապելոյ։

Ըստ ամին օրինակի և Պոմպէյիոս. թէպէտ և խոց կարեալէր, թէպէտ և արիւն 'ի նմանէ դունդդագունդ հոսէր, հաս 'ի տաճար այսր, եդ ըզքաղցր բեռնն առ ոտս բազնի դիցուհւոյն, ապերա

արկ Դեմետրեայ փրկել զնա և պահպանել, և ապա նուաղեալ 'ի հոսմանէ արեանն, յաշխատութենէ և 'ի ցաւոց, անկեալ 'ի վերայ վիմին փչեաց զոգի։

Եւս բառնալ վաղվաղակի զմայր քոյին, և ածել 'ի տուն իմ, ուր իբրև զգաց նա անձին, առաջին բարբառ զանուն Պոմպիլիեայ ետ. հարցանէր զնմանէ, խնդրէր տեսանել զնա, և կամէր 'ի խնդիր նորա ելանել։ Զուր ջանային հանդարտել զնա, և ծածկել 'ի նմանէ զմահ հօր քո, իբր թէ դերի առ հռովմայեցիս կայր. արտասուք՝ որ հոսէին յաչաց իմոց, և խէթ մուսց նորա, նշաւակէին զխաբան։ Ճիչ սրտառուչ արձակեալ, մերժեալ 'ի բաց զամենայն զդարմանս, և խոյս տուեալ 'ի բազկաց մերոց, խնդրէր դիմել զնալ անկանել մեռանել 'ի վերայ դիականն Պոմպիլիոսի։

Այնքան յուզումն և վրդով՝ ճեպեցին զպահն յորում պարտ էր քեզ բանալ զաչս 'ի լոյս. երկունք 'ի վերայ հասին նմա, անողորմ ինիթիայք ակէին զնա դառնալէտ, և ընկճեցաւ նա ընդ ցաւոքն, վայրկեանն քեզ կենսատու՝ մօր քում եղեալ մահաբեր։

Եւ 'ի լսելն զայսոսիկ նումայ, անկաւ զպարանոցաւն Տուլլոսի. և բարեգութ ծերունին իբրև զգաց թացեալ զաչս իւր յարտասուց պատանւոյն, զկայ էառ լալ ընդ նմա։ Եւ ապա անդրէն յառաջ ածեալ զխօսս իւր ասէ. Եւս

խնդրել զոք դայեակ 'ի կաղդուրու�դայթ 'ի դայթ կենացդ. զի թուէիր դու 'ի ծննդեան անզօր 'ի վերայ աղէտից դեալ. դու ճիշտ ողորմագին արձակէիր, և կապուտակ դէմք քոյին թուէր մահագոյժ։ Երկրագործի ուրուն կին, բարեգութն Ամիկէա, յանձն էառ զհոգ քոյին. և մայրագործով խնամք նորա, քան թէ կաթն, պահեցին զկեանս քո։

Զեռն արկի յայնժամ 'ի յուշարկաւորութիւն մօր քո և հօր. պատրաստեցի զփայտակոյտն, ժողովեցի զբնակիչս կորայ և զդաշտացս շուրջանակի, և բարեմոյն արքայն մեր Տատիոս զդեցեալ հանդերձ ազոյ, ածէր զնոսա։ Զօրականք, քաղաքացիք, և մշակք արտասուէին առ հասարակ զարժանաւոր հայր քոյին, մաղթանս վասն որդեկիզ մատուցանելով բարիս։ Դիակն Պոմպէ՝ի՝ի՝ոսի այրեցաւ առընթեր հարսինն իւրոյ դիական. և ամիսոիեցի զաճիւնս նոցա 'ի սափոր արծաթի, և եդի զայն 'ի շիրմի 'ի ծածկադոյն վայր մեհենիս։ . . . Յայնժամ դոչեաց պատանին. Կարացից տեսանել զայն, հայր. լոյսի ինձ տեսանել զշիրիմն զայն, լոյսի ինձ արտասուել զնովաւ, և հուպ 'ի ցանկալին յայն լինել 'ի սափոր։ Բրմապետն ասէ. Ա՛յո՝ որդեակ իմ, այսօր իսկ ինչցուք մեք անդր։

Բայց խնդրեցաւ վրէժ մահու ծնողաց քոց. քանզի որեարն մեր սաբինացի ծանրացաւսին ընդ նախատինսն՝ առեալ զէն, և առաջնորդեալ 'ի Տա-

տիոսէ, խաղացին գնացին՝ի վերայ ուխտադրուժ քաղաքին։ Յեղուզակքն վատք ոչ իշխէին գալ ընդդէմ բանակին մերոյ, ամրացեալք՝ի պարիսպս իւրեանց։ Պաշարեաց զնոսա Տատիոս, և ընդհուպ բարեպատեհ յաջողութեամբ տիրեաց միջնաբերդին։ Հռոմուլեայ հարկ լեալ պատերազմել կամ թողուլ լքանել զքաղաքն, ճակատ յարդարեաց՝ի ստորոտ կապիտոլին, այն որում համբաւ ընծայէ յապայս զտիեզերակալութիւն։ Յանձն էառ Տատիոս զպատերազմն. և սաբինացիք մեր, անձկայրեացք՝ի թանալ յարիւն դաւաճանացն՝ անկան՝ի վերայ գնդացն հռոմէականաց ամենայն զօրութեամբ, որչափ ինչ զայրոյթ կարէ յաւելուլ՝ի կորով արիական։ Բեկաւ բանակ թշնամեաց. բայց Հռոմուլ դարձեալ զկաց մնաց զօրացն ժողովէր, Հռոմուլ միայնակ զդէմ ունէր սաբինացւոց. կարդաց նա աղաղակաւ մեծաւ զԴիոս օգնական, և անուանն դիցական և օրինակ զօրավարին կասեցուցին ըզզօրականն փախստական։ Յարձակեցան և հռոմայեցիք, արծարծանէր ամօթ զարիութիւն նոցա. շկահէին զիրարեալ նիզակք, կոփէին ընդիրեարս սապարք, յաճախէին արհաւիրք, յոլովէին նախճիրք. և զօրացն խառնելոց չէր մարթ յառաջ խաղալ և ոչ քայլ մի, առանց ոտնակոխ առնելոց զթշնամին։ Յաղթութիւն յերկբայս կացեալ ընդ երկար, հակամիտեաց ապա՝ի կողմն արդարութեան։ Քաջակորով ալքայն մեր Տա-

տիոս, և անվեհեր ապարապետ նորա Մետիոս խրամատեցին դարձեալ վերատին զբանակն հռոմէական։ Ծածկէր երկիրն համապիւռ 'ի դիականց, յաղթանակ առաջի կայր Սաբինաց, և Հռովմայ և Հռոմուլեայ մօտալուտ կորուստ. և ահա դէպք յեղակարծ քան զամենայն դէպս խափան եղեն յաղթութեան։

Սաբինուհիք, նոքին իսկ կանայք յափաշտեալք 'ի Հռովմայեցւոց 'ի կոնաւական տօնիցն 'ի խաղս. սաբինուհիք հերարձակք, աչք նոցա ողողեալք յարտասուս, բազկատարածք, ճիչս աղիողորմս բարձեալ, դիմէին 'ի խուռն մարտին. ոչ սուսերք և նիզակք արիւնաներկք, և ոչ աղմուկն և կոտորած ահ արկանէին 'ի նոսա, դիմէին գոչելով. Դադարեցէք դադարեցէք 'ի պատերազմէդ, ամպարշտագոյն է դա քան զընտանի պատերազմ։ Վասն մեր պատերազմիք, և մեն մի 'ի հարուածոց ձերոց այրիս զմեզ և որբս կացուցանէ. եթէ սիրէք զմեզ, կենաւտուքդ մեզ, մի բառնայք ըզկեանս արանց մերոց. և որ երդուայքդ մեզ սէր անլուծանելի, խնայեցէք 'ի կենաւտուս կանանց ձերոց։ Յուշ լիցի ձեզ, զի զդրաւական սիրոյ ձերոյ 'ի ծոցի մերում կրեմք։ Ո՛Հռովմայեցիք, սաբինուհիք են կանայք ձեր. ո՛ սաբինացիք, թոռունք ձեր լիցին Հռովմայեցիք։ Դադարեցէք ապա 'ի խողխողելոյ զմիմեանս, որ ոչ ևս այլ և այլէք ազգ՝ այլ ազգատոհմ մի. և կամ եթէ ծարաւի իցէք արեան՝ լուծէք նախ եղծէք զամենայն կապ կցոր-

դութեան, զենէք զդատերս ձեր և զկանայս, և ապա 'ի վերայ ջերաջերմ դիականց նոցա արկէք զմիմեանս արախողխող։

Յետարանն այն, զրոյցք և արտասուք և ճիչ սաբինուհեացն ցածուցին զզայրոյթ սրտից. զկայառին մարտիկք, հայէին ընդ միմեանս զարմացեալք՝ զի ոչ ևս ատէին զիրեարս։ Կառեալ սուսեր թերաքամեալ զգլխով այնորիկ՝ որում ըստպառնայրն, և 'ի կախ եկաց գեղարդն ընդ օդս. անկաւ նեռ յաղեղանէ, որ թուլացեալ՝ ոչ ևս ձգէր զայն։ Դիմէին սաբինուհիք 'ի զէնս անդր, խլէին զայնոսիկ անբռնադատ 'ի ձեռաց հարց իւրեանց և արանց՝ համբուրելով զնոսա և թանալով արտասուօք իւրեանց. լուանային լալեօք զարիւնաշաղախ ձեռս նոցա, և կցորդէին զայնոսիկ ընդ իրեարս 'ի հաշտութիւն. և իւրաքանչիւր ոք 'ի սաբինուհեաց ընդդրկեալ զհռովմայեցի զոք և սաբինացի, մատուցանէին յիրեարս 'ի համբոյր, և ստիպէին զոսոխս ընդ ոսոխի 'ի գրկախառնութիւն։

Ոչ ևս այնուհետև պատերազմ, ոչ ևս վրէժխնդրութիւն. խօսէին ընդ միմեանս թագաւորք 'ի հաշտութիւն, և միաբանէին՝ կցորդել երկուց ազգաց ընդ միմեանս, և մի ևեթ կազմել այնուհետև ազգ, և Տատիոսի և Հռոմուլեայ դահակից բազմեալ՝ բաժանել յիւրեանս զիշխանութիւն արքունի։ Կռեցին ուխտ խաղաղութեան, զենին զոհս Դիոսի, Սրեգական և Երկրի.

և խառնեալ ընդ միմեանս բանակքն երկոքին, և առաջնորդեալք 'ի սաբինուհեացն՝ մտին 'ի Հռոմ 'ի ձայն աղաղակի ցնծութեան, խրոխտագոյնք իմն և փառաւորագոյնք ընդ պարտութիւն իւրեանց 'ի գորովոյ, քան եթէ յաղթանակեալ էր նոցա 'ի զայրոյթ սրտմտութեան։

Բայց դու աճեցեալ առ ինև զարդանայիր, համարեալ յորդի իմ. և ես հաստատէի զպատրաստութիւնն՝ որ ըստ սրտի իմոյ էր և ըստ ըղձից մօր քո։ Անդատին 'ի չորեքամեայ հասակէ շրջէիր զհետ իմ ընդ տաճարն, զգեցեալ զպճղնաւորն սուրբ, և 'ի մատաղ ձեռին քում բերէիր զխնկանոցն ոսկի։ Զմայլէին քուրմք մեր ընդ հեզութիւն քոյին և ընդ շնորհս, և նախանձէին ընդ բախտ իմ՝ զի էի քեզ հայր։ Քանիցս և ինձ ցանկալի էր բախտն այն։ Ի հնգետասան ամաց հետէ, որդեակ իմ Նումա, ոչ ևս կեամ բայց առ 'ի սիրել զքեզ. և եթէ սիրիցեմ զառաքինութիւն՝ որպէս տեսանեաք, որդեակ իմ սիրելի, զայն իակ սրտի մտօք 'ի գործ արկանեմ առ 'ի յոյս տեսանելոյ զփոխարէնն այնորիկ շնորհեալ քեզ 'ի գից։

Ժողովեցի ընդ հուպ զարդասխ խնամոց իմոց, որոյք խնամարկէի քեզ. անդատին 'ի ըստկրզբնաբոյս ախոցդ յայտնեցան 'ի քեզ բարեմասնութիւնք. չեղև ինձ հարկ ազդել ինչ 'ի քեզ 'ի պատշաճից, զի համայնք 'ի սրտի քում բնաձինք էին. և իմաստք բարոյականին տպաւո-

րեալ 'ի միտս քո, մինչչև ուսեալ քո յինէն զայնոսիկ. և զամենայն թելադիր քեզ բանն, որ ինչ իմ 'ի փորձոյ ուսեալ։ Եթէ դէպ լինէր ինձ դժուարինս ինչ հարցանել քեզ առ 'ի փորձ, պարզագոյն և ճշգրիտ ևս տայիր ինձ պատասխանի քան զպատրաստեալն յինէն։ Յաճախ ևս ուր ճառս բարոյական երկայնապատումս յուսումն քո համարէի յօրինել, հակիրճ քոյին մտածութիւնք լուսաւորէին զմիտս իմ. և յաւարտ ճառիցն վարժապետ քոյին գտանէր ուսեալ։ Դու 'ի միտ առեր զամենայն մակացութիւնս իմաստասիրացն մերոց հարուրացւոց, և ասէիր ցիս. Հայր իմ, դոյզն ինչ է զոր ուսայ, և այն երկբայանօք լի. զի առաքինութիւն ևեթ է ճշմարտութիւն աներկբայ. 'ի մեզ իսկ է մատեան նորին, այս ինքն սիրտ մեր. հարցցուք զնա յիւրաքանչիւր գործս մեր, զհետ երթիցուք միշտ թելադրութեան նորա, և ոչ լիցի մեզ մոլորել։ Իսկ ես գիրկս արկանէի քեզ խընդութեամբ, և ոչ իշխէի գոլել զքեզ. կասկածէի թէ գուցէ գտանէր 'ի քեզ տեղի ախտն անշքացուցիչ ամենայն բարեմասնութեանց, և որ 'ի սկզբան անդ թառամեցուցեալ ևեթ զայնոսիկ, և ապա գրեթէ միշտ եղծանէ զնոսա 'ի ըստ պառ, ասեմ իսկ զանապատութիւն։ Զգոյշ լեր յայնմանէ, որդեակ իմ, յամենայն 'ի կեանս քո. յիշեա քաջ զի փնտրատակար յոյժ առաքինութեանց է ախտն այն, և անսիրելիս զնոսա առնէ։

Հրճուանաք տեսանէի զքեզ զերծ 'ի վտանգէ սատի. որ ըստ օրէ 'ի լաւ անդր թեւակոխէիր, որ ըստ օրէ համեստագոյն գտանէիր։ Պատրեալ 'ի հռչակ համբաւոյ, և մանաւանդ յըղձից սրտի իմոյ, համարէի զքեզ յորդի իմ, և խորհէի հրաժարել թողուլ 'ի քեզ զքրմապետութիւն. և քուրմք առ հասարակ և քաղաքացիք համօրէն գուշակէին զայն խնդութեամբ։ Երեք աւուրք են, որդեակ իմ, զի պատգամ երկնաւոր արդել յինէն զայս յոյս։ Դեմետրէ, նա ինքն դիցուհին երևեալ ինձ զամենայն դիշերս, պատուիրէր մեծասաստ՝ արձակել զքեզ 'ի Հռովմ, և յայտնել զազգ քո։ Ի զուր անկեալ առ ոտս դիցուհւոյն, առաջի առնէի նմա զխէթս մտաց իմոց, և յիշեցուցանէի զուխտս մօր քո։ Պատասխանի տայր ինձ դուստրն Դիայ. Ոչ ընկալայ ես զուխտն զայն. մի լիցի ինձ Նումա քուրմ. 'ի բարձրագոյն կոչէ զնա 'ի բախտ ճակատագիր նորա. քաջ ևս լիցի նմա սպասաւորել ինձ 'ի գահոյս, քան ընդ հովանեաւ բազնեաց իմոց։ Երթիցէ նա 'ի Հռովմ, և մի ևս դորով քոյին հակառակ կացցէ հրամանաց երկնից։

Ա.հա, որդեակ իմ, պատճառք արտաքսեալ, զորոց 'ի զոհի անդ տեսանէիր դու զհսկել յաչաց իմոց։ Պարտ է հնազանդել. պարտ է մեզ, Նումա, բաժանել 'ի միմեանց. դիցուհին զայն հրամայէ, ոչ է օրէն ստունգանել։ Լուռ և անբարբառ դողարիկ պատանին հայէր 'ի դէմս

Ցուլլոսի արտասուելով, և ամբարձեալ զաչս իւր յերկինս՝ թուէր վարանել ընդ Հայրն և ընդ դիս. բայց խրախուսեալ 'ի ծերունեոյն, հաստատեցաւ 'ի չու։ Եւ կալեալ զձեռանէ Ցուլլոսի, և սեղմեալ զայն մեղմիկ, ասէ. Ո՛վ Հայր իմ, դու խոստացար ինչուցանել զիս 'ի շիրիմ Պոմպիլիոսի, և տալ ինձ համբուրել մեծարանօք զսափորն, յորում աճիւնք մօր իմոյ պահին։ Քրմապետն ասէ. Ե՛կ զկնի իմ. այժմ իսկ կամիմ ածել զքեզ անդր։ Եւ դիմեալ գնային 'ի մեհեան անդր։

Յետ կուսէ բազնի դիցուհւոյն գոյր դուռն պղնձի, զորոյ Ցուլլոս ևեթ ունէր զբանալին. եբաց զայն, և էջ ընդ ատաճանս. և նումա իջանէր զհետ նորա հառաչանօք։ Հասին 'ի ատորերկրեայ ուրեք տեղի, ուր միակ առկայծէր կանթեղ. անդ էր շիրիմ անարձանագիր 'ի սեաւ կճէ՝ պարզ քանդակաւ, և 'ի վերայ նորա եղեալ կայր սափոր արծաթի՝ ծածկեալ ագատեսիլ քողով։ Ուրընթեր սափորոյն գոյր պիտակ և տասեր և դիսակ դեղձանիկ։ Նումա 'ի մտանելն 'ի վայր անդր 'ի ատորերկրեայ՝ ծունր եդ. և Ցուլլոսի բարձեալ զդուշութեամբ զսափորն, և մատուցեալ զայն առ պատանին, ասէ դաշն ձայնիւ. Համբուրեա՛, որդեակ իմ, զսուրբ նշխարսդ. կա՛լ զսափորդ՝ յորում են աճիւնք լաւագունին 'ի մարս և գորովագունին յարս։ Նոքա արդ ակնկառոյց կան 'ի քեզ, յելիսական դաշտաց անտի ակնարկեալ նկատեն զքեզ, և առաւել քան զա-

մենայն բերկրութիւնս անմահական կենացն՝ յորս վայելեն, զտեսարանս զայս բարեպաշտութեան որդեկին իւրեանց համարին։

Նումա 'ի վերայ բազկայն ունելով զսափորն, թանայր զայն արտասուք, ընդդրկէր զայն, և թուէր իմն նմա այնպէս՝ զի աճիւնքն ցանկալիք վերկենցաղեալ հրճուէին։ Ո՛հ, զի դառն էր նմա տալ զսափորն անդրէն 'ի քրմապետն, և ո՛րպէս ձեռք նորա զհետ կարկառէին 'ի հեռանալ սափորոյն 'ի նմանէ։

Տուլլոս եդ զայն անդրէն ընդ քօղովն. և առեալ զտուսերն հանդերձ գրովն և գիսակաւ, ասէ ցՆումա. Ա.հա տուսերն պաշտպան մօր քո և հայրենեաց, որ երբէք ոչն շկահեաց առ զայրոյթ, և ոչ զոք բաց 'ի թշնամեաց աշխարհիս եհար։ Ա.ւանդեմ զայն քեզ, որդեակ իմ. 'ի նոյն և դու արկցես զայն 'ի կիր. հզօրն Դեմետրէ, որում զայն նուիրեալ էր իմ, արկցէ տապատ ընդ երկաթովք զամենայն դարանակալս կենաց քոց։ Եւ զդիրս զայս մայր քո 'ի մեռանելն իւրում գրեաց առ Տատիոս արքայ. լիցի քեզ տա կարևոր առ 'ի ժառանգել յարքունիս նորա բարձ պատկանաւոր քում ազգատոհմիդ։ Իսկ դիսակքս դեղձանիկք, թէ իցէ իսկ հարկ ասել զայն, դիսակք մօր քո են՝ զորս նուիրեաց նա Դեմետրեայ յաւուր յորում ընկալաւ 'ի նմանէ որդի։ Կրեսջիր զսա միշտ ընդ քեզ, Նումա. սիրտ դիւրազգաց կարօտի գրաւականաց այսոցիկ սիրոյ և բարեպաշտութեան։

Եւ յետ բանից այսոցիկ ելին 'ի ստորերկրեայ խորոց անտի. և դարձաւ Նումա 'ի տուն քրմապետին, կազմել պատրաստել 'ի չու։ Մերկացաւ զպճղնաւորն կտաւի, և զգեցաւ պատմուճան՝ ընդ որով գեղեցկագոյն ևս երևէր։ Հայէր քրմապետն 'ի նա և հառաչէր, գուժկան վտանգաց համարելով նմա զնորն զայն հանդերձ. այլ մերժէր 'ի մտաց զխորհուրդն, առ 'ի չպակասելոյ իւիք 'ի հայթայթանս պիտոյից մանկանն։ Խնամք նախահոգք թելադրէին նմա և զպէտս, որոց չէր մարթ պատանւոյն կարօտել. մերկանայր յիւրոցն առ 'ի մեծացուցանել զնա. և զի մի հրաժարեսցէ մանուկն ընդունել զպարգևսն, ծածկէր ընդ հանդերձիւք նորա զդոյզն ինչ ոսկին՝ զոր խնայութեամբն պահեալ էր։ Եւ ասէր. Ոչ իրիք ինձ պէտք լիցին 'ի մեկնել իմում 'ի նմանէ, այլ ամենայն ինչ լիցի նմա կարևոր 'ի բացեայ յինէն։

Մերձենայր պահն աղիողորմ, և կառք՝ որ զՆումա ածելոցն էին՝ կային կազմ և պատրաստ։ Եկ Տուլլոս 'ի կառս անդր ընդ որդւոյն, զնալ ընդ նմա յուղարկ մինչև անդր քան զմեհենական անտառն. և զայսոսիկ յայնժամ վերջին խրատս թելադրէր նմա զորոնք հայրենի.

Ներեա ինձ, որդեակ իմ սիրելի, ներեա ինձ եթէ սարսեալ դողամ տեսանելով՝ զի մանուկ դեռ ևս գոլով քո տիոմբ, թողեալ զխաղաղաւէտ դաշտորայքս զապաւէն անմեղութեան

ղերծ յամենայն վտանգէ, զնաս բնակել 'ի քաղաքի՝ որ խոհականագոյն իսկ մարդկան է վտանգաւոր։ Լքեալ թողցիս անդ անփորձ, անառաջնորդ, անխորհրդական, և անբարեկամ. զի ո՞ իսկ մանկականի քումդ դեռ ևս հասակի լոյէ բարեկամ. և ՁԵասակարագոյն այն իսկ լիցի քեզ՝ կարծել թէ լոյեն։ Լքեալ թողցիս 'ի մէջ երկուց ազգաց, որք թէպէտև առ քաղաքականութեան միացեալք՝ սակայն այլայլաբարոյք են, և յաչս իսկ անձանց ազգ կրկին այլ և այլ. առելութիւն չև ևս շինչեալ է ընդ Հռովմայեցիս և ընդ Սաբինացիս, և մանաւանդ ընդ թագաւորս նոցա երկուս՝ որք առաւել ևս քան զժողովուրդն հակառակք են միմեանց։ Տաւիս բարեալաւ քան զամենայն թագաւորս, որ ամենասիրելին էր մեզ ցորչափ թագաւորեացն 'ի միջի մերում, բարեբարոյն, բարեգորովն և խաղաղասէր, ժառանգէ առաքինութիւնս օգտակարս քան բազմափայլս. կեանք նորա են առնել իրաւունս և բարերարել։ Իսկ Հռոմուլ, որ առ 'ի բազմացուցանել ըզժողովուրդ իւր՝ բանայ ապաստան աւազակաց, Հռոմուլ տակաւին պահէ զվայրագ բարս նախնոյ ժողովրդեանն՝ որում հրամայէր, պատերազմասէր, փառամոլ, ակեալ յբղձից աշխարհակալութեան. յարձակի նա և նուաճէ մի ըստ միոջէ զազգս մերձակայս Հռովմայ. արհամարհէ նա զամենայն՝ զզօրականս ևեթ մեծարգեալ. զյաղթութեան ևեթ թեկն ածէ, և չիք առ նմա այլ ինչ մեծութիւն։

Աւաղ թշուառ ճակատագրի, զի զարմանալի և թուի թագաւոր աշխարհակալ քան զթագաւոր բարեալ, և ճշմարիտն առաքինութիւն նուազ քան զառան զօշոտէ զաչս։ Զգոյշ լեր, որդեակ, մի՛ զնոսա ընդ իրեարս առնուլ անխնա. տեսջիր քանի՛ գեր 'ի վերոյ քան զգահակիցն իւր գտանի Տատիոս, և մի՛ թողեալ զարդարագոյնն 'ի թագաւորս՝ զազգական քո, զբարեկամ հօր քո, զվրէժխնդիր Պոմպիլեայ, երթայցես զհետ դժնեայ աշխարհակալին՝ որ տակաւին շաղախեալ կան ձեռք յարիւն եղբօրն, և որ տակալի դաւաճանութիւն աւեր հայրենեաց քոց հասոյց, և ծնողաց քոց գտաւ մահառիթ։

Բայց և Տատեայ իսկ արքունեացն վտանգաւոր է քեզ ասպնջականութիւն. դու գնաս 'ի Հռովմ, որոյ բնակիչք պատերազմողք ներեն զամենայն առոյգ պատանւոյ բաց 'ի թերութենէ արիութեան. և արիութիւն պատերազմական ոչ այլ ինչ է, բայց վայրենութիւն՝ ուր այլք յառաքինութեանց չեն նմա կցորդք։ Ոչ ինչ երկբայիմ զի լցիս դու քաջակորով, զի ոչ իսկ է մարթ պոմպիլեան զաւակին վերջանալ 'ի քաջութենէ. այլ զբարս քո, զբարս զայդոսիկ ամբիծս՝ որովք խնամակալութեան դիցուհւոյն գտար արժանի, պահեսցես անեղծս։ Լուր ինձ, Նումա. ոչ ինչ է ինձ փոյթ արգելուլ քեզ զբերկրանս, ոչ կամիմ խօսել ընդ քեզ 'ի բարբառ դժոխքիմ բեր տիոցս իմոց և պակուցող և անհարազատ

երանգաւք նկարագրել քեզ զցանկութիւն. ոչ, ոչ այդպէս, որդեակ իմ. են իսկ հրապոյրք ցանկութեան, և բնութիւն ձգէ զմեզ յայն, հարկ է պատերազմել անդադար առ 'ի կարող լինելոյ այնմ զդէմ ունել. և որչափ առաւել զգայուն է սիրտ մեր, աւա՛ղ, նոյնչափ և տկար։ Այլ այն ինչ քո տեղի տուեալ այնմ, թախիծք խղճի մտաց տիրեացեն 'ի սիրտ քո. կորուսցես դու զքաղցր խաղաղութիւնդ, զվարկդ զայդ և զմեծարանս անձին քում՝ որ զքաղցրութիւն կենաց քոց յօրինէ. սիրտ քո բեկեալ թառամեալ՝ ոչ ևս զնոյն ունիցի զօրութիւն և զնոյն առ բարին սէր. և համառօտ ասացեալ, տաղնապ դժնէադոյն կրեսցես դու ընդ լքանել քո զառաքինութիւն յեռ ճանաչելոյ զայն։

Զկնք իմ տեսեալ զարքունիս, և չկարեմ խրատս քեզ տալ յաղագս որ անդն կենցաղավարութեան. այլ դիտեմ զպարտս մարդոյ, և ամենայն ուրեք պարտ է մարդոյ հպատակել այնոցիկ։ Մատո աւագութեանց զմեծարանս, որ նոցա է սահմանեալ. այլ մատո առաքինութեան յոր և է բախտի զպաշտօնն, որում է նա արժանի։ Խոյս տուր 'ի չարաց՝ առանց ցուցանելոյ երկնչել 'ի նոցունց. զգուշութեամբ վարեսջիր ևս և ընդ բարիս. մի՛ անարդեր զբարեկամութիւն՝ առատաձեռնելով անխտիր զանուն բարեկամի։ Կշռեա զբանս քո, և խորհեսջիր նախ քան զձեռն 'ի գործ առնել։ Զգոյշ լեր նախկին շարժմանց

քոց, բաց յայնցանէ՝ որ յօգնութիւն տառապելոց ձգեն զքեզ։ Ակնածեա՛ ի ծերոց և ի կանանց, կարեկից լեր տկարաց, և ձեռնտու ամենայն թշուառացելոց։ Եւ եթէ, որպէս հաստատուն է ինձ յոյս, յաջողեացէ քեզ դիցուհին, ծանուցիր դու ինձ զայն. աւետիքդ այդ յաւելցեն զկեանս իմ. իսկ փորձել զքեզ եթէ յանկարծ կամեցին երկինք արկածիւք, դարձիր դու առ իս։

Զայսոսիկ խօսելով հասին յելս մեհենական անտառին, ուր Ցուլլոսի պարտ էր հրաժարել ի Նումայ։ Զկայ առին կառքն, լցան պատանեղոյն աչք արտասուօք։ Քաջալերեաց, Նումա, և զօրացիր, ասէր ծերունին. լիցի մեզ տեսանել դարձեալ զմիմեանս և տեսանել ընդ հուպ. կարճ իսկ է որ ասի ի Հռովմ ճանապարհն, գայցես դու ի տաճար այսր, և ես իսկ... Յայնժամ գոչեաց Նումա արտասուօք. Ա՛հ, հայր իմ, եկից ես աներկբայ. այլ ոչ ևս լիցի ինձ կեալ ընդ քեզ, ոչ ևս լիցի ինձ տեսանել զքեզ հանապազ. անցցեն առաւօտք երկայնք, և ոչ գիրկս արկցէ ինձ հայր իմ. հացէ երեկոյ՝ առանց լսելոյ Նումայ զբարբառն հայրենի։ Քանի՛ երջանիկ էի առքև, և ոչ բան բաւականին ծանեայ զայն, և ոչ գոհութիւնս դիցն արժանաւորս յաղագս այնորիկ մատուցի։ Այլ արդ...

Եւ ոչ ևս եթող նմա Ցուլլոս կատարել ըզբանն, այլ սատիւ՝ զոր հնարէրն կեղծել՝ ասէ.

Օ՛Ն երթիցուք հնազանդեալք Դեմետրեայ, և մի՛ տրտունջ հակառակ հրամանաց նորա ելցէ՛ի շրթանց մերոց։ Իցէ՞ իակ՝ ի՛ ճահ, զի ծերա և անզօր՝ ես զքեզ քաջալերիցեմ. կարծիցե՞ս թէ ես նուաղ քան զքեզ կրիցեմ վիշտս. կարծիցե՞ս թէ սիրտ իմ թախծեալ... Եւ յասել իւրում զայսոսիկ, ձայնն որա նուաղեալ, և սպառեալ զօրութիւն նորա, անկաւ՝ ի վերայ բազկացն Նումայ և թանայր զնա արտասուօք։ Այլ բուռն արարեալ իւր անդրէն. Մնա խաղաղութեամբ, որդեակ իմ, ասէ. դարձցիս դու ընդ հուպ առ իս՝ ի տաճար այսր, և կամ ես եկից առ քեզ՝ ի Հռովմ. մնա խաղաղութեամբ, և մի՛ մոռացիս զՏուլլոս։ Եւ զայս ասացեալ, մեկնեցաւ՝ ի բաց՝ միջամուխ հապճեպ՝ ի յանտառն։

Իսկ Նումա տխուր զհետ նորա բազկատարած երիցս ձայնեալ՝ երթ խաղաղութեամբ, հայէր դեռ ևս՝ ի վաղ իսկ անհետացեալն յաչաց. և թողացուցեալ զանձս ձիոցն՝ ի ծփանի՝ դէմ եդեալ գնայր՝ ի Հռովմ։

ՆՈՒՄԱ ՊՈՄՊԻԼԻՈՍ

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ ԳՐՈՑ

Նումա յերլթալն 'ի Հռովմ՝ զկայ առեալ յանտառի ուրեք, տեսանէ 'ի քուն տեսիլ խորհրդաւոր. և ապա անդրէն յառաջ գնայ ընդ Ճանապարհն։ Նկարագրութիւն դաշտորէիցն Հռովմայ, և նորին իսկ պատերազմող քաղաքի։ Հիւրընկալէլ Տատեայ արքայի զՆումա, և նկարագիր բարեաւ արքային և դստեր նորա Տատեայ, և Հռոմուլէայ և դստեր նորա Հերսիլէայ։ Հանդիպումն Նումայ ընդ Հերսիլէայ, և վառեալ 'ի սէր նորա, և ցանկութեանն 'ի նմա նախկին ազդեցութիւնք։ Դարձ և յաղթանակ Հռոմուլէայ։

ՆՈՒՄԱ ՊՈՄՊԻԼԻՈՍ

ԳԻՐՔ Բ

Ծանր էր Նումայ հեռանալ 'ի վայրացն, ուր խանձարուրքնորա լեալ էին. խորհուրդք բիւրաւորք վշտագինք յուզէին 'ի նա, և ասէր ընդմիտս իւր. Թողում զքանեմ զհայր իմ 'ի ծերութեան, յորում կարօտի խնամոց իմոց. հրաժարեմ 'ի պարտուց և 'ի զբաղմանց՝ որ քաղցր են սրտի իմում. մեկնիմ յընկերաց և 'ի աննդակից բարեկամաց, գնալ բնակել յերկիր՝ ուր ոչ ոք լիցի ինձ բարեկամ։ Ո՛հ, երկնչիմ զի չկարացից ես կեալ անդ, և լիցի ինձ անդ նուաղել որպէս ձիթենի մատաղ 'ի բնիկ երկրէն յերկիր անպատկանաւոր տեղափոխեալ, ուր ոչ ինչ օգնեն նմա ցօղ և արև. տերևք նորա թառամեալ անկեալ զոտովքն, և արմատացն ոչ ևս առեալ մնունդ, հասանէ նմա մեռանել 'ի թողուլ զերկիրն սիրելի։

Այսպիսի խորհրդովք տագնապեալ ուղևորէր պատանին ապարէզս իւր երկուս, և զատ

յանտառի ուրեք՝ որ Հովանի հրաւէր առնէր 'ի հանդիսս։ Հետազօտեալ զկարկաչանս վտակի միոյ՝ որ սողսակէր ընդ Հովանեաւն, կասեցոյց զձիանն. և թողեալ զնոսա 'ի ձեռս երկոցունց ստրկացն՝ եկ մինչև յակունս վտակին, և եհաս յաղբիւր մի նուիրական Պանի։ Ծունր եդեալ առ պատկերաւնորին, խնդրեաց հրաման ըմպելոյ յաղբերէ անտի. և իբրև զուշացոյց զպապակ շրթանցն, բազմեցաւ 'ի դալարուոջ անդ ընկողմանեալ առ եզերբ լրոյն, և նիրհէր։ Եւ երևեցան նմա 'ի տեսլեան կառք լծեալք 'ի վիշապաց երկուց, որ 'ի բարձանց ամպոց դիմեալ գային առ նա. և էր 'ի կառն դիցուհին Դեմետրէ՝ պատկեալ հաւոքք, բարձեալ բերելով որայ և մանդաղ։ Եւ կացեալ առ անարիւք Նումայ, և քաղցր 'ի նա ակնարկեալ, ասէ.

Զաւակդ Պոմպիլիեայ, սիրելի էր ինձ մայրքո, և հակեն խնամք իմ զքև. որ ինչ և իղձք իցեն քեզ, լցուցից զայն. խօսեաց, և ասա ինձ որ ինչ և խնդրես, և տացի քեզ։ Յայնժամ զոչեաց Նումա վաղվաղակի. Ո՛հ, զի դարձցի Տուլլոս 'ի մանկութիւն, և Նորոգեսցին կեանք նորա, և զի մի՛ երբէք... Ա.յլ մինչդեռ բանքն 'ի բերան նորա կային, ասէ դիցուհին. Խընդրուած քո 'ի վերս է քան զիմ կար. Դիտա իակ ինքնին գլխովին չկարէ յաւելուլ և վայրկեան մի 'ի կեանս ուրուք 'ի մահկանացուաց. անողորմ Պարկայք չեն ընդ իշխանութեամբ նորա. Նոքա

և զթելս կենացն Պերսէոսի և Հերակլեայ հաստին զսիրելագունից որդւոց վեհագունին 'ի դիս. զի ճակատագիրն հզօրագոյն քան զհայր իմ, սահմանէր նոցա դադարել 'ի կենաց։ Խնդրեա դու ինչ անձին քում. զի 'ի խնդրել զբարեբաստութիւն քո, զՏուլլեայն իսկ դատանիցիս խնդրեալ։

Կրկնեալ անդրէն Նումայ ասէ. Ապա ուրեմն, բարերար դիցուհիդ, արա զիս նմին արժանի. բուսո 'ի սրտի իմում զսերմանս խրատուց արկեալս յարդոյ ծերունւոյն. տուր ինձ իմաստութիւն, քանզի 'ի սմա համարի Տուլլոս զբարեբաստութիւն։

Պատասխանի ետ դիցուհին. Կանխագէտ խնդրուածոց քո, աղաչեցի զքոյր իմ զԱթենաս՝ ընուլ զքեզ պարգևօք իւրովք։ Այլ մի՛ յուսայցես հանգոյն Ողիսական զաւակին զոլ նմա սիրելի. մի՛, սիրեցեալդ իմ Նումա. ոչ ումեք 'ի մահկանացուաց յուսալի դիւցազնին է հաւասարել Տելեմաքայ. հրաշակերտ է նա ձեռին Աթենասայ. և ինքն իսկ դիցուհին չիշխէ հանդոյն ինչ նմին հրաշակերտել։ Բայց երանի՛ այնմ, որ և 'ի բացէ ընդ հեաս նորա գնայցէ. երանի՛ մանկանն քաջազին, յոր դիցուհին հաչտակամբ ակնարկեացէ, և որ զերկրորդն իսկ ժառանգեացէ զտեղի, թէպէտև հեռի 'ի նախատրպէն։

Եւ մինչդեռ նա զայն խօսէր, գտաւ Նումա

փոխադրեալ 'ի մեհեան Աթենասայ. կամէր նա գնալ հասանել մինչև 'ի դիցուհին, այլ ամպ ոսկեփայլ արգել 'ի նմանէ զարբարանն, և անտես յաչաց նորա ծածկեաց զաստուածուհին։ Զուր ջանայր նա հերձանել անցանել ընդ ամպն, զուր յօդնութիւն իւր կոչէր զԴեմեարէ. մերժեաց Դեմեարէ զՀայցուածս նորա, և ակնարկեաց նմա ունկնդիր լինել։ Յայնժամ Աթենաս բարբառեցաւ 'ի միջոյ ամպոյն, և ասէ. Դիր ծունր, մանուկ դու, և երկիր պագ։ Եւ թուէր պատանւոյն՝ որպէս թէ իմաստութիւն ինքնին ուսուցանէր նմա զամենայն զպարտս իւր, և զգայր 'ի սրտի իւրում պատկառանս ի մեն սուրբ, և քաղցր խելամտութիւն. այլ իբրև ամբարձ նա զաչս իւր առ 'ի գոհանալ զդիցուհւոյն, եղև մեհեանն ամպոքն հանդերձ աներևոյթ. և գտաւ Նումա 'ի մէջ անտառին, և ոչ ևս ինչ տեսանէր՝ բայց կամարաձև յարկ սաղարթագեղ, ընդ որով երիտասարդուհիսն յաւէրժահարան սպիտակազգեաց բազմեալ 'ի դալարուոջ՝ ընթեռնոյր ուշիւ։ Խաղաղութիւն և անկեղծութիւն հանդչէին 'ի դէմս նորա, և պարկեշտութիւն ընդ քաղցրութեան և ընդ մեծվայելչութեան պար առնուին զնովաւ, որպէս Աստրէա ինամակալ բարեկենդանութեան մարդկան նկարագրի։ Նումա յանհրաժեշտ հրապուրանաց առ յաւէրժահարանն ձգեալ հարցանէր զԴեմեարէ՝ թէ ո՞ չքնաղն այն ի՞նչ պատկեր։ Եւ ընդ պատասխանել

դիցուհւոյն՝ թէ Եգերիա է, ամենայն ինչ անտես եղև յաչաց։

Հիացումն և յոյզք սրտի զարթուցին զնումա. և դեռ ևս տագնապեալ՝ի խորհրդաւոր տեսլենէն, հազիւ անձին զգաց։ Շուրջ հայէր, և ոչ ևս ինչ տեսանէր՝ բայց զաղբիւրն Պանի, ըզմայրիս, զդալարիս, և զվտակն՝ առ որով հանգչէրն՝ի նիրհ. այլ ոչ ինչ երկուացեալ զի տեսին զոր ետես՝ՀՈՐ դիտէ առաքեալ էր նմա, ուխտս որոտողին մատոյց աստուածոյն, և խոստացեալ զոհս Աթենասայ և Դեմետրեայ, հեծաւ՝ի կառս և մեկնեցաւ յանտառէն։

Խաղաց զնաց անց ընդ երկիրն Փիղենացւոց, և եհաս ընդ հուպ՝ի սահմանս Հռովմայ։ Դիւրին էր նմա ճանաչել զայն յոյզաց անտի շուրջ զնովաւ բնակելոց. դաշտոյք անապատք, և անդաստանք թողեալք առանց մշակութեան, ոչ ինչ բերեն անդ՝ բայց զորոմն. խաշինք նիհարք և վայրավայինք հազիւ գտանեն անդ ճարակ. չէք անդ արտունճ՝ որ զԴեմետրեայն ժողովեսցէ պարգևս, ոչ հասկաքաղ՝ որ երգ՝ի բերան զհետ աշխատաւորացն ընթացի, և ոչ հովիւ՝ որ բազմեալ՝ի զառ՝ի վայր բլրի, անկասկած զխաշանցն՝ զորս հաւատարիմն իւր դամիւռ չթողու օգտել, նուագեցէ՝ի սրինդ իւր զգեղ Ամարիլլեայ, կամ զբերկրանս հովուական կենաց։ Ամենայն ինչ անդ տխուր է համր և թախծական. գիւղօրէք անմարդիք, ՝ի կանանց ևեթ և՝ի

ծերունեաց բնակեալք. կէսք զարս իւրեանց ողբան, այլք զեղբարս անկեալս 'ի մարտի. սատ ալևորեալ ոք հայր վախճանէ զկեանան անմխիթար և անօգնական. չիք ոչ ևս նմա որդի, 'ի կրասերագունէն ևս անզաւակեալ՝ զինուորելով նորա 'ի բանակին Հռոմուլեայ. և կական յուսահատ ծերունին բարձեալ, զդէմն ցոյէ, խղէ զալին, և նզովէ զդէնս իւրոյ արքային։ Անդ ոմն 'ի մարց, փախստական մնացելոցն նմա միակ որդեկաւ, սպասէ յափշտակութեան նորին 'ի գրկաց իւրոց. և լաւ համարի լքանել զհայրենիս իւր, զտուն, և զանդաստան՝ որ կերակրէրն զնա, և գնալ մուրանալ հաց յաղգի՝ որ զնա գէթ ոչ անզաւակէ։ Տրտմութիւն ամենայն ուրեք և կարօտութիւն և ամայութիւն զարհաւիրս իւրեանց արկանեն. և հպատակաց Հռոմուլեայ, յորմէ հետէ թագաւոր նոցա զիարձ էառ զփառաց, չիք խաղաղութիւն և ոչ բարեկենդանութիւն։

Գոչեաց 'ի տեսին յայն նումա. Ո՛վ դիք անմահք, այս ուրեմն ի՞նչ ազգն այն գոռոզ, նախանձելի ազգաց՝ որ շուրջ զնովաւ բնակեն, և գերահռչակն և ահարկու յաղթութեամբքն իւրովք. տեսանեմ զնա թշուառ և կարօտ, և յոյժ խակ առաւել քան զպարտեալն 'ի նմանէ ազգս աւաղելի։ Այսպիսի՞ ուրեմն փառացն է մրցանակ, կամ մանաւանդ այսպիսի՞ պատուհաս երկնառաք. բարւոք այսպէս կամեցան դիք՝ զնոյն կրել աշխարհակալաց չարիս՝ զորս ման կրել

այլոց, և զի զթշուառութիւն ընկալցին փոխա-
րէն թշուառութեան՝ զոր ածեն 'ի վերայ ազ-
գաց մերձաւորաց։

Բաղդատէր յայնժամ Նումա 'ի մտի իւրում
զբարեկենդանութիւն անդորրաւէտ՝ յոր վայե-
լէին Սաբինք, զառատութիւնն, և զզուարթ ան-
դաստան ընդ տեսարանին՝ որ առաջի աչաց նո-
րա կայր։ Յուշ լինէին նմա որ ինչ Տուլլոսի ա-
սացեալ էր նմա զպատերազմէ. և մինչդեռ պա-
զատան առ դիմն մատուցանէր՝ յարուցանել
թագաւորս խաղաղասէրս, և ահա զայր յերևան
քաղաքին Հռովմայ հիսաքանչ տեսիլ։ Բլուրն
այն պալատինեան, հովուաց երբեմն հանգրուան
և մակաղատեղ խաշանց, պատեալ այժմիկ պա-
րապօք, և խիտ առ խիտ ամրացեալ աշտարակօք՝ որ
սպառնալիցք 'ի վեր ամբառնան, խրամք լայնք
և խորաձորք՝ որ խափանեն զթշնամին 'ի բացէ,
պատնէշք անմատոյցք և գերահամբաւեալն Կա-
պիտոլ, պարահայեաց 'ի բարձուէ շուրջանակի
ընդ քաղաքն, որ 'ի դագաթան իւրում զմեհեան
Սրամազդայ բարձեալ բերէ. այս ամենայն պա-
կուցին զնումա. հայէր, զարմանայր, և յառաջ
խաղայր։

Ի դրունս քաղաքին կային 'ի պահ զօրք բազ-
մահոյլ, ծածկեալք 'ի զրահս փայլունս, յեցք 'ի
նիզակս իւրեանց բարձր 'ի գլուխ, և զցցունան
արկեալ յեռակոյս զաղաւարտիւքն սաւառնեալս,
ոլոր թուէին իմն անդատին վատահք 'ի նուաճել

Դ

զտիեզերս . և կերպարան նոցա պատերազմող
ահ արկանէր որոց ոչն իսկ ապառնային : Եմուտ
Նումա 'ի քաղաքն , և տեսանէր անդ ամենայն
ուրեք զպատկեր պատերազմի, և ամենայն ուրեք
լսէր շաչիւն զինուց . ասա պահանորդք զհետ մի-
մեանց փոխանակէին , անդ մանկտին զօրական՝
մարզէր 'ի զէնս , և հեռի 'ի բացէ 'ի հնչիւն
սասկաձայն փողոց կրթէին երիվարք : Վիժէր
հրահալ 'ի դարբնոցս , հնչէին սապարք , դոբն-
չէին 'ի սալս զրահք , հեծէր արոյր ընդ ուռամբ ,
և հուրն առ հասարակ եռնական թուէր բորբո-
քեալ բոցածաւալ 'ի Հռովմ, և Կիկ'ոպայց դարբ-
նել շղթայս զդերութեան տիեզերաց :

Նումա անասէր 'ի շռինդն յայն՝ երկիւղա-
խառն կրէր հիացումն , և վուրթայր տեսանել ըղ-
Ցատիս , և հարցանէր զարբունեաց նորա : Եւ
ցուցին նմա զայն 'ի կողմն քաղաքին , ուր նուա-
զագոյն էր աղմուկ . զի ալքայն բարեդութ հեռի
զզօրականն ունէր , քանզի կամէր սիրելի լինել
և ոչ ահաւոր 'ի զօրաց պահպանեալ : Ամենեցուն
յամենայն ժամ դիւրամատոյց էր , և 'ի դրան
նորա բազմագոյնք էին աղքատք քան ոստանիկք:

Մուծաւ Նումա առ թագաւորն . և մեծա-
բեալ զՑատիս յանուանէ , մատոյց նմա զգիր հի-
քին Պոմպիլեայ : Ցատիս յընթեռնուլն զայն
գոչեաց ցնծութեամբ՝ անկեալ զպարանոցաւ պա-
տանւոյն . Ո՛ օր բարեբաստիկ , և զինչ ծերուն-
ւոյն տաց տրիտուր քրմապետին՝ որ զսիրելագու-

նի իմոյս բարեկամի մատուցանէ ինձ զորդեակն։ Նշմարեմ իսկ 'ի դէմս քո զտիպս կերպարանաց քաջին Պոմպէյիոսի, ահա հայեցուած աչաց նորա, ահաւասիկ քաղցր և գգուելի կերպարան նորա։ Դու հանգոյն նմին լիցիս ինձ բարեկամ աներկբայապէս։ Խայտան ալիք իմ 'ի տեսիլ քո, դանգատէի զդից՝ զի միակ ետուն ինձ դատրիկ, և ահա յաւելուն ինձ որդեակ։

Եւ զայսոսիկ բարբառելով՝ գիրկս անդրէն արկանէր նմա, և ետ կոչել զՏատիա զդուստր իւր։ Տատիա ոչ այնչափ գեղոնն, որպէս քաղցրութեամբ և համեստութեամբ և հայրասէր գորովոնն էր սիրելի։ Եմուտ նա առ արքայ, և արքայի ցուցեալ նմա զնումա՝ ասէ. Ահաւասիկ եղբայր քո, ահա զոր պարտեան սիրելիքդ նեցուկ և զօրավիգն ծերութեան իմոյ, ահա որդի Պոմպէյիոսի՝ զորմէ յաճախն խօսէի առ քեզ։ Ո՛ առուրք բարեկենդանութեան իմոյ, քանի՛ արադ սահեալ անցիք։ Դու ինձ 'ի յուշ ածես, Նումա, զաւուրսն՝ յորս խաղաղաւէտ 'ի Սաբինա, արքայ սիրելի ժողովրդեան իմոյ սիրելւոյ, հայր և այր և բարեկամ երջանիկ, անցուցանէի զամս կենակից ընդ մօր Տատեայ, ընդ Պոմպէյիոսի և ընդ խոհական քրմապետին։ Ընտանիք իմ, զի այսպէս կոչէի ես զհպատակս, ոչ յոյժ բազմաթիւք էին, և կարէի անձամբ խնամել զիւրաքանչիւր ոք յորդւոց իմոց. ճանաչէի զնոսա զամենեսին, և ասէպ այց առնէի նոցա. և 'ի շրջել

իմում՝ ընդ Պոմպիլիոսի ընդ փոքրիկ ածու իմ, գոհանայի զԱրամազդայ՝զի անձուկ եւ ինձ սահման, և հպատակս ոչ ինչ աւելի քան զորս մարթէրն ինձ երանաւետել։ Իսկ այժմ, ո՛յեզակարծ փոփոխումն, վտարանդի՛ ի հայրենեաց հեծեմ հանապազօր։ . . . Ա՜յլ մի՛, մի՛ եւս լիցի ինձ աշխարել՝տեսանելով զքեզ առ իս. դու կացցես ընդ իս, Նումա. դու լիցիս ինձ ՝ի փոխարէն ամենայնի, որ ինչ կորուսի. և թերեւս զօդ քաղցրագոյն աներկեւան պատրաստեսցէ քեզ զթագդ իմ, ՝ի յօրինել զիմ բարեբաստութիւն։ Լիցի ինձ, լիցի ժամանակ բացատրելոյ զխորհուրդս իմ. ցնծութեան է արդ ժամանակ ընդ գալուստ քոյին։

Զայսոսիկ բարեդութ ազգայն խօսեցաւ. և խնդութիւն յաւելոյր զբերկրանութիւն, զոր բնաւորապէսն զդայր՝ ի բացատրել զանկեղծ և զդիւրագորով սիրտ իւր՝ ի ճառս երկայնս։ Դուստր նորա, որ քաջ՝ ի միտ էառ զվերջին բանն, ցածոյց նախ զաչս իւր, և ամբարձ ապա՝ ի Նումա. և պշուցեալ՝ ի գեղ նորա, զմայլէր ընդ քաղցրութիւնն նկարեալ՝ ի դէմն նորա, ընդ պատկառանս, ընդ խանդաղատելի կերպարանս, և ընդ շնորհն զօշուտիչս՝ զոր անկեղծութիւն եւս քան զեւս յաւելու։ Զայս առաջին նուագ ակնկառոյց լինէր օրիորդն՝ ի պատանի. և այլ յայլմէ լեալ և շառագունեալ, դարձոյց զաչսն անդրէն՝ ի հայր իւր։

Իսկ Նումայ պատասխեալ ընդ բարեբաստ թագաւորին՝ համբուրէր զձեռս նորա, և խոստանայր

նմա բոլորանուէր հնազանդութիւն։ Որում Տա-
տիոս ասէ. Մի ինձ զհնազանդութենէ բանք.
զամենայն զկեանս իմ թագաւորեալ, ոչ երբէք
սիրեցի զհաճոյս հրամայելոյ. վաղ 'ի միտ առի,
զի ոչ էր մարթ սիրելի գոլ 'ի լինելն երկիւղալի. և
նախամեծար արարի զբարեկամն քան զտրուկս։
Հռոմուլ օգնեաց ըղձից իմոց. 'ի բաժանելն
ընդ իս զիշխանութիւն արքունի, ընտրեաց նա
զհրամատարութիւն զօրաց և զդատակնիք մա-
հապարտից. իսկ ինձ բարեբաղդագոյն ել բա-
ժին՝ առնել իրաւունս, թեթևացուցանել ըղ-
հարկս, վարձատրել զվաստակս, և միանգամայն
ասացեալ, ո՛ բարեկամ, ամենայն որ ինչ զթա-
գաւորս մերձաւորս դիցն անմահից կացուցանէ։
Յար 'ի յահի կամ, թէ գուցէ բացցին աչք դա-
հակցին իմոյ ընդ անհաւասար բաժանումն իշ-
խանութեանն, և տեսցէ ուր ուրեմն՝ զի բոլան-
դակ ինձ մասունք բարեաց, իսկ չարեաց առ հա-
սարակ նմա անկանին մասունք։ Այլ գոհութիւն
երկնից, չեզև նա ցարդ խելամուտ այսմիկ, և 'ի
շլացութեան իւրում թուի հաճ և գոհ իբրև
զիս։

Այժիս զքեզ առ նա՛ 'ի գաւնալ նորա յարշա-
ւանացն ընդդէմ Անտեմնացւոց, ուստի ոչ ինչ
երկբայիմ զի յաղթանակաւ դարձցի։ Քանզի ոչ
զբ'ի պատերազմողաց հանդոյն նմին եբեր յան-
ձին արիութիւն զինուորի ընդ հանճար զօրա-
վարի։ Կերպարան մեծամայելուչ, դէմք անվե-

հեր և սպառնական, կորով առաւել քան զմարդկեղէն, և քաջութիւն աննկուն՝ որ տայ նմա խիզախել յամենայն ինչ, ոչ ինչ են առ անխոնջելի ժրութեան նորա։ Ի չու զօրաց, 'ի պաշարումն քաղաքաց և 'ի ճակատամարտի տեսանէ նա զամենայն. հասանէ ամենայն ուրեք, կարգաւորէ, հրաման տայ, յարձակի, միանգամայն և պահ ունի յերեսաց թշնամեաց. չիք և ոչ վայրկեան մի հանգստեան մտաց նորա և բազկի. սա 'ի կատարումն ածէ՝ զոր ինչ նայն առաջարկէ խորհուրդ։

Հերակլիա, դուստր նորա միամօր, աջակից է նմա յարշաւանսն։ Ոչ ուրուք երբէք գեղեցկութիւն հաւասարեաց չքնաղագեղին Հերակլիայ. թագաւորք Լատինի առ հասարակ ցանկացան նմա, և ամենեքեան եկին արկանել զպատկս իւրեանց առ ոտս նորա, այլ խրոխտ իշխանուհին մերժեաց զնոսա։ Սովորեալ 'ի մանկութենէ 'ի զէնս, արժանաւոր դուստր Հռոմուլոսեայ, նուիրեաց զանձն 'ի հրահանգս Պալլասայ. սա զաւարտ 'ի դլուխ, նիզակ 'ի ձեռին, դիմէ զհետ հօր իւրոյ 'ի պատերազմ. քնքուշ ձեռամբն նուաճէ զերիվարն ամենի՝ որ փրփրեալս 'ի լորձն ապիտակ զանձն թաթաւեալ, ապշի ընդ հլութիւն իւր առ կամս վերելակին՝ զորոյ չզգայ իսկ զբեռն։ Ա.հաւորագոյն ևս է նա անզէն. ձեռք նորա հրմուտք 'ի շկահել զտուսեր, նովին հմտութեամբ գիտեն հարկանել զքնար. և նուագս դաշնակա-

ւորս խառնեալ ընդ հոգեշարժ դայլայլիկս ձայնին, զնահատակութիւնն երգէ հայրենիս, կը-ցորդ ընդ հօր իւրում 'ի վտանգն եղեալ։

Ահա քեզ նկարագիր Հռոմուլեայ և դստեր նորա, ոչ ինչ 'ի բազմախայլ բարեմասնութեանց նոցա նսեմացուցեալ։... Այլ ընդէր չկարիցեմ ներբողել երկայնագոյն դրուատեօք և զառաքինութիւնս նոցա։ Քանզի աշխարհակալք արհամարհեն զայնոսիկ. և Հռոմուլ ոչ ինչ արդոյ համարի բաց 'ի քաջութենէ։ Դուստր նորա դաստիարակեալ 'ի նմանէ յաղմուկս բանակաց, և ոչ նա ինքն գտանի զերծ 'ի խստութենէ. զամբարհաւաճութիւն Հերայ բերէ յանձին ընդ գեղեցկութեան նորա. և 'ի ստանալ զարիութիւն և զկորով առնացի, թուի զկանացի բնութեանն կորուսեալ նորա զքաղցրութիւն և զբարեգթութիւն։

Ծանեար դու արդ զՀռոմուլ և զՀերսիլիա, տէր ես բնակելոյ առ նոսա կամ առ մեզ, 'ի բանակի նոցա կամ յարքունիս մեր։ Միշտ իսկ եղէց ես քեզ բարեկամ և հայր, եթէ ներես ինձ զքաղցր անուանակոչութիւնս. այլ դու լիցիս միշտ իշխան անձին քում. ընդ այն իսկ, եթէ միայն սիրիցես զիս և լիցես բարեբաստ, գոհ լիցի Տատիոս։ Յայնժամ Նումա դարձեալ վերատին վստահացոյց զբարեալս արքայն ընդ սէր իւր. ապար զընտրութիւնն, կալաւ խորհուրդ անդարձ՝ չթողուլ երբէք զբարեկամ հօր իւրոյ. զթագա-

ւորն համարդեաց, և զոր Տուլլոսի տուեալ էր նմա յօրինակ նմանութեան։ Խուսանայր ստէպ՝ անդրդուելի կալ, և 'ի հրապոյրս իսկ Հերսիլեայ և 'ի փառս Հռոմուլեայ հարևանցի ակամբ հայել, երդուեալ 'ի դիս առհասարակ 'ի հաւատարմութիւն բանիցն։ Եւ պարկեշտն Տատիա ասէր խնդութեամբ զերդմունս նորա։

Զաւուրս ինչ եկաց անդ Նումա 'ի սէր Տատիոսի, բայց յիշելով հանապազ զտեսիլն՝ զոր ետես, և տեղեկացեալ՝ զի էր մեհեան Ամթենասայ 'ի դիցանուէր ուրեք անտառի, որ Եգերական կոչէր, նմանութիւն իրացն ընդ տեսլեանն՝ զարմացումն ածէր նմա։ Դիմեաց յանտառ անդր, ոչ ինչ կարի հեռի 'ի Հռովմայ. սիրտ նորա տրտմէր 'ի գնալն ընդ սաղարթապատ նեմատուեր կամարօք. հազիւ զեփիւռ զթանձրախիտ կաղամախան և զմայրիս երկնաբերձս վաղեմիս տատանէր, և աղօտ ինչ լսելի լինէր շըրշիւն 'ի մեղմագին ոստոցն զիրարել։

Բայց Նումա յառաջ խաղայր դէմ եղեալ 'ի մեհեան անդր, ուրանօր զուխտս իւր կամէր մատուցանել. այլ միտքն նորա տագնապէին յաւերժահարին յիշատակաւ։ Զյուսայր գտանել զնա անդ, այլ աչք նորա շուրջ խնդրէին զնա. և ահա ընդ սաղարթադեղ կամարաւ տեսանէ օրիորդ պատերազմիկ, հանդոյն այնմ՝ որ երևեցաւ նմա 'ի տեսլեան, ընկողմանեալ 'ի դալարուոջ, և խոր 'ի քուն ընկղմեալ։ Սաղաւարտ առընթեր, գլուխ

նորա անպատապար յեց՝ի յասպար. և հոպոպիք սեաւք երկայն վարսիցն անկեալ զզրահիւքն, դեղանշոյլ ևս զմեծավայելուչ գեղեցկութիւն նորա յօրինէին։ Գեղարդունք կրկին հանդչէին ընդ ձեռամբ նորա, և սուսեր ճոխ՝ի յաղդեր։ Հանդերձ նորա մինչև՝ի ծունկան հանդրիճեալ, և երևէին կօշիկքն ծիրանիք՝ի ճարմանդ ոսկի աղխաղխեալք։ Որպէս քոյր Ապոլոնի՝ի սպառել կապարճիցն՝ի նետից յանտառախիտս Երիմանթեայ, գնայ հանդչի՝ի կատար Մենալեայ լերին. յաւերժհարսունք և Դրիադք հսկեն շուրջ զնովաւ, զանդիտէ զերիւռ յուզել զսաղարթս, և դէմք դիցուհւոյն՝ի ննջել իսկ անդ բերեն ըզխիստ և զսպառնական կերպարանն, որ ոչ միայն անեղծ զգեղ նորա պահեալ՝ այլ մանաւանդ պայծառագոյն ևս գործեն. այսպիսի և չքնաղագոյն ևս օրիորդն պատերազմիկ երևէր։

Թուեցաւ Նումայ թէ նոյն ինքն Պալլաս իցէ, և ծունր եդեալ առաջի նորա՝ կամէր աղօթս մատուցանել, այլ ոչ կարէր յօդել զբարբառ. լեզու նորա՝ի քիմս կցեալ, կարկեալ բերան նորա կիսաբաց, բաղուկք նորա անշարժ տարածեալք յօրիորդն կոյս՝ յոր հայէրն, և աչք նորա ակնկառոյց պշուցեալք՝ի նա կային անթարթք։ Զարթեաւ յայնժամ պատերազմիկն, և տեսեալ զպատանին՝ յոտն եկաց անդէն, եդ զսաղաւարտն ահեղ՝ի գլուխ իւր, ճօճէր զգեղարդունս, և զայս՝ի գոչիւն սպառնալից լսելի առնէր բարբառ. Ո՞ դք

և իցես դու, մանուկդ ժպիրդ, որ դաս աղմկել զհանգիստ քնոյս. շնորհս երթ կալցիր բախտին՝ զի անզէն դատանիս. եթէ կարէիր պաշտպանել անձին, պատուհասակոծ 'ի բազկէ ատի յանդգնութիւն քո լինէր։

Որում Նումա ետ պատասխանի. Ունցի զցաստումն քո, ով դիցուհիդ, զի 'ի տաճար անդր քո դնայի՝ մատուցանել քեզ անդ զուխտս իմ և զսիրտ. տեսի զքեզ, և ծունկք իմ զդողանի հաբեալ կթոտեցան։ Ցեսիլ փառաց ատուածութեան ահաբեկէ զհէք մահկանացու. և եթէ համարիցի յեղեռն՝ ակնարկել 'ի դիցուհի, ահա աչք իմ շլացեալ՝ ոչ ևս հանդուրժեն հայել 'ի քեզ։

Ցածեաւ 'ի բանից ատի զայրոյթ Ամազոնին. և զդեղարդունն խանարհեալ, և հաշտ ակնարկեալ 'ի պատանին, ասէ. Մի երկնչիր, ոչ զդիցուհի տեսանես. վեհին Հռոմուլեայ եմ դուստր, և գնամ աւետել 'ի Հռովմ զյաղթութիւնն՝ զոր դեռ ևս կանգնեաց։ Ե՛րթ դու զճանապարհ քո 'ի տաճար անդր, երթ, պատանի դու, խնդրել 'ի դիցուհւոյն զքաւութիւն, զի զնա ինքն վարկար 'ի յիս նկատել։ Եւ զայս ասացեալ, շկամեաց զաէգ ընդ ասպար, և ահա հասին անդր թիկնապահք նորա. ածաւ ահիպարանոցն առ նա երիվար, և աշտանակեալ օրիորդին 'ի նիւս և մտրակ 'ի կուշտ արարեալ, խոյս ետ յաչաց ապագոյն քան զհողմ։

կառեաւ եկաց նումա անշարժ, խռովեալ, ապշեալ, և յայնպիսում զարմացման լեալ՝ զորոյ չէր նորա երբէք առեալ զփորձ. այլ նորա ձգէին զհետ Հերսիլեայ ցոր վայր զօրէին նշմարել զնա, և 'ի ծածկել իսկ օրիորդին յաչաց նորա՝ տակաւին հայէր զհետ։ Բիւրաւորք 'ի միտս նորա յուզէին խորհուրդք, և տիպք տեսելոց իրացն միահամուռ 'ի յուշ նորա դառնային։ Խնդրէր զերծանել յաղմկէն. այլ որչափ առաւել ճիգն գործէր, նոյնչափ յաւելոյր աղմուկն։ Այլ նորա դառնային 'ի վայր անդր, ուր հանդչէրն Հերսիլիա, և չկարէր անտի զնոսա 'ի բաց դարձուցանել. թուէր նմա տակաւին տեսանել զնա անդ, թուէր նմա տակաւին զձայն նորա լսել։ Բարբառք իւրաքանչիւր յօդեալք 'ի նմանէ՝ դեռ ևս հնչէին յունկն պատանւոյն, և տպաւորեալ 'ի միտս նորա կային ամենայն շարժմունք օրիորդին։ Կերպարան նորա վեհ և մեծավայելուչ, դիտակ բարձր և ազնուական, վարք երկայնաձիգք քաջաթուխք, և դէմք խրոխտ և գեղապանծ, նկարէին համանգամայն դէմ յանդիման պատանւոյն. և գեղեցկագոյն ևս պատկեր նոցա խոր 'ի սրտի նորա դրոշմեալ, և անդրադարձ 'ի միտն ամենայն ուսեալք՝ յոր ինչ և հայէրն՝ ցոլանայր։

Ա՛հ, ասէր, ահաւասիկ տեսին զոր տեսի՝ 'ի լրումն եկեալ, յանտառին կամ Եդերեայ. ահա կամարն սաղարթագեղ՝ զոր տեսի, և գեղն եր-

կնաւոր՝ որ ակնախտիղ զիսն շլացոյց. անշուշտ նա ինքն է Հերսիլիա։ Ո՛վ Հերսիլիա Հերսիլիա, քանի՛ քաղցր է ինձ յօդել զանուն քոյին. ըղ-պակուցանողականաւս աղմկաւ՝ որ զիսն տագնապէ՝ չիք արտի իմոյ վայրկեան հանգստեան, բայց 'ի յորջորջել զՀերսիլիա։ Ա՛յլ աւա՜ղ, ո՞վ եմ ես՝ զի իշխեցից սիրել զնա, և տարփալ որում Նոքին իսկ դիք տարփայցեն նախանձընդդէմք անշուշտ ինձ։ Բայց զհետ նորա դէթ կարացից գնալ, կարացից գոնեա ընդ շաւիղս նորա հետևել, վառիլ զանխուլ 'ի սէր նորա, և մատուցանել նմա ուխտս որպէս դիցուհւոյ. այս իսկ քաղցր և բերկրալի զկեանս իմ յարդարեացէ։ Ա՛յո՛, չքնաղա-դեղդ Հերսիլիա, երթայց ես զինուորել ընդ դրօշակաւ հօր քո, ածից զնժոյգս քո, կրեցից զգեղարդունս, եղէց քեզ ասպար 'ի ճակատամարտի. և եթէ 'ի սիրտ իմ մխեցի որ 'ի քեզն ուղղեալ նետ, կարացից ասել 'ի շունչ իմ յետին։ Մեռանիմ բարեբաստիկ, զանձն իմ 'ի վերայ քո փոխանակեալ։

Ա՛յսպէս զիրձս իւր մերկանայր Նումա. և սիրտ նորա առոյգ և եռանդուն տարածեալ ընդարձակէր առ սէր։ Հանդոյն խնկաւէտ անտառի՝ որ 'ի կայծ փոքրիկ բորբոքեալ ծախի, այսպէս ընդխանձել տարփանաց 'ի սիրտ պատանւոյն՝ սէր բոցածաւալ 'ի նմա ճարակէր։ Ոչ ևս խորհէր նա յԱթենաս. դարձ արար ճեպով 'ի Հռովմ, ընդ շաւիղս 'ի սմբակաց ձիոյն Հերսիլեայ տպաւո-

ռեալս 'ի վուշուոջ։ Եմուտ 'ի քաղաք անդր շուա-
ռեալ, այսր անդր ընթանայր՝ առանց դառանելոյ
զոր խնդրէրն, և ոչ համարձակէր զապարանից
նորա հարցանել. զանգիտէր յորջորջել ումեք
զանունն, զոր քաղցր էր նմա յեղյեղել։

Ուր ուրեմն դարձաւ յարքունիս Տատիոսի, և
նախ քան զամենայն ինչ եռեռս անդ զՀերսինիա,
որ պատմէր քաջի արքային զյաղթանակ հօրն։
Նումա ապշեալ և հիացեալ՝ կառեաւ անդ, և
զդողանի հարեալ՝ ցածոյց զաչսն. իսկ Հերսի-
նիայ ծանուցեալ զնա, եհարց Տատիոսի՝ թէ
յարքունեաւն էր պատանին։ Պատասխանի ետ
թագաւորն. Պատանիդ այդ որդի իմ է, և կամ
դէթ զորդւոյ առ իս ունի զտեղի։ Հայր դորա
արդարադոյն 'ի սաբինացիս էր և ազնուականա-
գոյն. արենակից է դա իմ, որդի բարեկամին ի-
մոյ է։ Եւ զայս ասացեալ՝ դիմեաց առ Նումա,
և զգացեալ զյոյզս սրտի պատանւոյն՝ տրտմէր
ընդ այն և ընդ ուժգոյն կերպարանս նորա։ Իսկ
նա փարատել չանայր զհոգս Տատիոսի, այլ թո-
թովէր 'ի խօսս իւր. և 'ի հայել 'ի նա օրիորդ-
դին՝ դէմք նորա ուժգունեալք փոխէին 'ի կար-
մրութիւն, և անմռունչ կայր. և աչք նորա մեղ-
մով 'ի վեր ամբարձեալ 'ի տեսիլ դատեր թա-
գաւորին, չև ևս 'ի դէմս նորա հասեալ՝ դարձեալ
'ի յերկիր խոնարհէին։

Իսկ բարեգութ արքայն ծերունի ոչ ևս յիշե-
լով զնախկին ազգմունս սիրոյ 'ի սիրտ, ժպտէր

ընդ այնքան ամօթխածութիւն նորա, և Ջանայր անբաւիր զնա առնել առաջի Հերսիլեայ՝ յայտնելով նմա զտիս նորա և զդատիարակութիւն 'ի գեղջ ընկալեալ։ Եւ պատճառս ասուի առեալ պատմէր նմա զառաքինութիւնս Տուլլոսի, և զսիրելոյ նորին սանի. և հրճուէր 'ի յօրինեալ ներբողս երկայնաձիգս զպոմպիլեան զաւակէն։

Մտադիւր լսէր իշխանուհին զայն ամենայն, ակնկառոյց 'ի Նումա՝ որոյ դէմք կարմրափայլք գեղեցկագոյնք ևս երևէին։ Խելամտագոյն քան զՏատիոս գտաւ նա վասն որոյ իրաց աղմկեալ յուզէր պատանին, և զայն առաջին նուազ հաճեցաւ ընդ ազգել իւր զսէր. և 'ի մեկնելն 'ի թագաւորէն՝ աչք նորա հանդիպեալ աչաց կաթողնելոյ 'ի նա պատանւոյն, բաբէ, զիարդ 'ի խորս սրտի միմեանց հասին հայեցուածք նոցա, և քանի պերճախօս 'ի սիրտս երկաքանչիւրոցն այնոքիկ գտան, Նումայ յոյս անտի առեալ և Հերսիլեայ սէր։

Յայնմհետէ ոչ ևս զաւակն պոմպիլեան իշխէր անձին. խորհէր հանապազ 'ի Հերսիլիա, կամ 'ի տեսիլ նորին և կամ 'ի խնդիր զբաղեալ. զտիւ հետաքննէր զնա, և զգիշեր զնա ինքն 'ի միտսն յեղյեղէր։ Ոչ ևս զմտաւ ածէր զդութ թագաւորին, մոռացեալ 'ի սպառ զխրատն Տուլլոսի. և առաքինութիւն և փառք, յարիշտակիչք երբեմն սրտի նորա, ոչ ևս ձգէին զնա 'ի սէր իւրեանց։ Հերսիլիա, Հերսիլիա, ոչ ևս այլ ինչ

ընդ տիեզերս տեսանէր, բայց զՀերսիլիա. 'ի նա միայն խորհէր, վասն նորա զամենայն ինչ գործէր. սիրտ իւր և միտք և յիշողութիւն, իմացական զօրութիւնք նորա առ հասարակ հաղիւ բաւէին վասն Հերսիլեայ. ոչ ևս այլ ինչ զգացումն էր 'ի սիրտ նորա բաց 'ի սիրոյ։

Եղուկ զքեզ ո՛վ պատանեակ. չինք ուրեմն այլ ևս քեզ յոյս զգաստութեան. օր մի, վայրկեան մի զբազմամեայ խրատուց եղծ 'ի քեզ զարդասիս։ Ահա արդ սիրելին Դեմետրեայ, ահա զաւակն պոմպիլեան, և սան արդոյ ծերունւոյն Տուլլոսի, օրինակն իմաստութեան, հրաւիրեալն 'ի գերակայ անդր 'ի նսեհ, ահա խաղալիկ լեալ ապերասան ախտին, և գերի անազդակ տռփանաց, մերժէ զամենայն երկնառատ ձիրս՝ առ 'ի հետամուտ լինել անդոյ ստուերաց բարեբաստութեան, որ դժոխքմբեր զամենայն զկեանս նորա գործեսցեն։ Արիութիւն նորա լքեալ, միտք նորա յիմարեալ, մարմին նուաղեալ. չինք նորա ոչ առաքինութիւն, և ոչ բանականութիւն. մօտալուտ 'ի վերայ կայ նմա կորուստ որպէս ցնորելոյ՝ որ ոչն ճանաչիցէ զեղեռն մահաւիթ։

Բայց Հռոմուլ յաղթ անակեալ 'ի վերայ Ամենեմացւոց, դառնայր զօրքն 'ի Հռովմ. և էր նորա սպանեալ Իւրովի զԱկրոն արքայ զոսոխ իւր։ Եւ պատրաստէին նմա Հռովմայեցիք հանդէս յաղթանակի, նախատիպ յաղթանակացն՝

որ ապա շնորհելոց էին տիեզերակալաց։

Տաճիս արքայ ապիտակազգեաց առաջնորդելով քաղաքայնոցն առ հասարակ, գայր ընդառաջ դահակցին իւրոյ. հուր 'ի բազնի փերեսրականին Արամազդայ բորբոքէր. քրմապետք և հաւահմայք, ոսոս արմաւենւոյ 'ի ձեռին, ապասեալ մնային յաղթականին։ Ճանապարհն ամենայն, որ ածէ 'ի Կապիտոլ, ծածկեալ էր 'ի ծաղկանց. դրունք տանց զարդարեալ պսակօք. կանայք հռոմայեցիք 'ի հանդերձս տօնականս՝ բերելով զտղայս իւրեանց 'ի գրկի, դէմս 'ի դէմս կցեալ, գորովական դգուանօք զարթուցանէին զնոսա 'ի ցնծութիւն, ասէպ յունկն նոցա յեղյեղելով՝ զի գնային տեսանել զհարս իւրեանց յաղթականս։

Եւ ահա երևէր 'ի բացէ արծիւն ճաճանչագեղ, փողոց լսելի լինէին հնչմունք, և աղաղակք ցնծութեան բիւրաւորք խառնէին ընդ նոսա։ Խաղայր գայր բանակն, և երևէր վեհն Հռոմուլ 'ի մեծաշուք կառս կացեալ յոտին. ձիք քառեակ ձիւնափայլ ձգէին զկառս նորա լը-ծեալք 'ի մի կարգ. 'ի տեսիլ սոս կերպարանաց նոցա և 'ի խրախնջիւն՝ թուէր ամբարհաւաճել նոցա, խրոխտապանծք ընդ նահատակութիւնս տեառն իւրեանց։ Իսկ ինքն ոգեցեալ հանդերձ յաղթանակի, և պսակեալ տարդեներաւ, բերէր 'ի ձեռին կաղնի հատեալ առ արմին, կախեալ զոսոց նորա ապառաջինութիւնք

Ակրոնի արքային. և յանհեթեթ բեռանէն ոչ ինչ վաստակէր։ Առաջի նորա գնային ընտանիք պարտելոյ արքային սգազգեացք շղթայակապք, զաչս 'ի վայր արկեալ արտասուալից։ Ամբոխ գերեաց կորացեալ ընդ բեռամբ աւարին՝ շուրջ պատէր զյաղթական կառաքն. յեղէոնքն քաջայաղթք զհետ դային՝ խրախոյս խնդութեան բարձեալ, և արձագանգք շուրջանակի կրկնէին 'ի բարբառ ձիգ զփառս Հռոմուլեայ։

Իսկ նա յառաջ խաղացեալ 'ի վերելս Կապիտոլին ընդ մէջ ժողովրդեան՝ որ արբեցեալն էր փառաւք յաղթութեանց նորա, և հասեալ 'ի մեհեան անդր Արամազդայ, ուստեւ 'ի կառացն՝ կաղնեաւն հանդերձ որ 'ի ձեռին. թնդաց երկիր ընդ բեռամբն, և զէնք Ակրոնի բազխեալք ընդ միմեանս հնչեցին մինչև ցմեծ հեռաստան։ Պատեաւ Հռոմուլ առ բագինն, և եդ զախոյեանն առաջի պատկերի վեհագունին դից, ասելով. Ընկալ, ո՛վ Արամազդ, զնախընծայս աւար՝ ոչ աղքատին, զոր քեզն նուիրեն Հռովմայեցիք. և շնորհեա զի այս օր բարեբաստիկ յիշեսցի յաւէրժ յարձանագիրս ժողովրդեան իմոյ, և նորոգեսցի առէպ. և զի ըստ օրինակի իմում կախեսցեն յեռինք զարբազան կամարացս զաւար տիեզերաց։

Եւ զայս ասացեալ, բուռն եհար զզուարակէտ ամեհւոյ՝ զոր հազիւ քուրմք քան զօրէին նուաճել, և ձեռամբ միով ձգեալ զնա 'ի բագին անդր,

արկ զնա 'ի գուճայերկիր. և խլեալ հերս ինչ 'ի լայնածաւալ ճակատուէ նորին՝ եղեն զնա, քըրմացն կատարելով զզոհն։ Եւ իբրև վախճան եղև զոհին, եկ Հռոմուլ 'ի մեհենէն, և բարբառեալ առ զօրս իւր՝ ասէ. Ո՛ Հռովմայեցիք, զինչ զօրեացէ միակս այս յաղթութիւն ցորչափ մնան մեզ թշնամիք։ Պարտեցան Ալտեմնացիք, բայց Վոլսիկք և Հերնիկք և Մարսիկք, միայն արժանիք կալոյ ընդ ձեզ 'ի ճակատ, տակաւին ոչ նուաճեցան ընդ լծով։ Լերուք կազմք և պատրաստք խաղալ ընդդէմ նոցա. այսօր զհանդէս յաղթանակի կատարեալ, վաղիւ միւսում ևս յաղթանակի լիցուք արժանաւորք։ Վաղիւ ածից զձեզ ընդդէմ Մարսկաց՝ յօգնականութիւնկամ պանիացւոց նիզակակցացն իմոց. շնորհեալ ձեզ, ո՛ Հռովմայեցիք, օրս այս ցերեկ յողջագուրանս կանանց ձերոց և որդւոց. այլ ընդ երեկ լուսաճաճանչ այգուն 'ի ծիրանեփայլ կառս իւր, գլաջիք սպառազէնք 'ի դաշտ Արիսին. արքայն ձեր կանխեսցէ անդր, երթիցուք ուսուցանել Իտալիոյ՝ զի յաղթականք ոչ կարօտին հանդստեան։

Խրախոյս եբարձ բանակն ամենայն ձայնիւ ցընծութեամբ, և լեգէոնք ածին զարծուէնչան դըրօշս իւրեանց յարքունիս Հռոմուլեայ. և մինչդեռ գունդ ընտիր պահապանաց հակէր 'ի պահ արքայական աւանդեցն, զօրքն երթեալք առ իւրաքանչիւր ընտանիս՝ զիրկս արկանէին մարց իւրեանց և կանանց, և զորով և սէր բերկրէին՝ աւար առեալ օր մի 'ի փառաց։

ՆՈՒՄԱ ՊՈՄՊԻԼԻՈՍ

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ ԳՐՈՑ

Նումա բորբոքեալ 'ի սէր Հերսիլիայ, խնդրէ գնալ զՀետ Նորա 'ի պատերազմ. Տատիոս սպառազինէ զնա, և ածէ մատուցանէ 'ի բանակն։ Ցնծութիւն հինաւուրց զօրականին սաբինացւոյ ընդ տեսիլ պոմպիլիեան զաւակին։ Տատիոս կամի գնալ ընդ Նմա 'ի պատերազմ, այլ ժողովուրդն առաջնորդութեամբ Տատիայ դատեր Նորա շրջէ զնա 'ի խորհրդոյն։ Ձու և արշաւան բանակին, և հասանել Հռոմուլիայ առ արքայն Կամպանիոյ Նիզակակից իւր։ Նկարագիր բանակի արքային, և բաժանումն Հռոմուլիայ 'ի Նմանէ։ Գալուստ հրեշտակաց Մարսկաց, և զրոյցք Նոցա։

ՆՈՒՄԱ ՊՈՄՊԻԼԻՈՍ

ԳԻՐՔ Գ.

Հանդէս յաղթանակին Հռոմուլեայ լրումն արար արքեցութեանն Նումայ. սիրտ Նորա վաղ իսկ ճարակ բոցոյ սիրոյն, առաւել ևս բորբոքեցաւ Նորահրաշ տեսլեամբն՝ ընդ որ հիանայր։ Փառք պատերազմի հանդերձ ամենայն ճաճանչաւէտ պայծառութեամբն յանդիման լինէին նմա, որպէս ապահովագոյն հնարք արժանի լինելոյ Հերսիլեայ։ Եւ ընդ երկնել 'ի միտս իւր յոյս այսպիսի՝ վառէր 'ի տենչ դիւցազնաբար նահատակելոյ. և երկեակ այսոքիկ կիրք, յորոց մին ևեթ բաւական է 'ի զառածանել զոգի վեհազն, տոչորէին 'ի միասին զմատաղ սիրտ Նորա։

Դարձաւ Տատիոս յարքունիս իւր, և Նումա զհետ Նորա երթայր հառաչելով. կամէր յայտնել նմա զամենայն, այլ երկնչէր 'ի կշտամբանաց բարեգութ արքային. հայէր յերեսս Նորա, և լուռ ևեթ կայր։ Որպէս մանուկ երկչոտ զհետ

մօրն անհանգէտ քայլիւք դիմեալ, և բուռն մեղմիկ զքղանցից նորա հարեալ, լուռ անբարբառ՝ արտասուալից աչացն ևեթ հայեցիւք պաղատի բարձեալ բերել զնա 'ի գիրկան մայրենի, այսպէս Նումա զհետ Տատիոսի գնայր։ Զկայ էառ բարեգութ արքայն, և տարածեալ նմա զգիրկըս իւր. Խօսեաց որդեակ իմ, ասէ, զինչ կամիս զի արարիցս քեզ. կատարեցից զիղձս քո, եթէ միայն իցեմ ձեռնհաս։

Յայնժամ ասէ Նումա. Ո՛վ հայր իմ, վկայեն ինձ երկինք՝ զի 'ի սրտէ խօսէի 'ի յանձն առնուլ իմում նուիրել զկեանս իմ բոլորանուէր 'ի ծերատածել զքեզ, և 'ի կրթել զհետ առաքինութեանց քոց. այլ 'ի տեսիլ յաղթանակին Հռոմուլեայ զարթեան 'ի յոգւոյ իմում կիրք բնաւ ինձ անծանօթք։ Բոցակիզէ զիս սէր փառաց, և պատքու

պատերազմի տոչորէ զիս. ահենակից իսկ եմ քոյին, որդի եմ Պոմպիլեայ. վաղ իսկ դու և հայր իմ 'ի տիս յայս յաղթականք 'ի պատերազմունս լեալ էիք, և ածեալ 'ի գլուխս ձեր սարդենի՝ որում ես արդ փափաքեմ, ես՝ որ քաջին Պոմպիլեայ զաւակ անծանօթ, ես՝ որ ազգական և բարեկամ քաջայաղթ արքայիդ Սաբինաց, ոչ ինչ ցարդ զենի բաց 'ի զոհից։ Փարիմ, ո՛ հայր, զծնգաք քովք, թո՛ղ ինձ նմանողլինել քեզ, ներեա գնալ ինձ զհետ Հռոմուլեայ և լինել գիւցազն որպէս զքեզ և որպէս զհայրն իմ։ Եւ յասելն զայսոսիկ՝ անկաւ առ

ուս ծերունւոյն, խոնարհեալ զերեսս 'ի վայր՝ առ 'ի ծածկել զշառագունանս իւր։

Ա. որ Ցատիոս ետ պատասխանի. Եթէ յանցուցեալ իսկ էր քո, ապաքէն ներէի քեզ. և զիարդ եպերել 'ի քեզ կարիցեմ զիղձս՝ զոր մեծարեմ։ Ա. ամ. ցանկալի ևս էր արդեօք զթոյս՝ որով սիրեմս զքեզ, թէ անդորրաւէտ կամէիր վարել կեանս ընդ հովանեաւ արքունականիս գահու և 'ի ծոց իմ հայրենի. այլ սաբինացի եմ և ես, և քո պէս փորձ՝ քանի հզօր հրապոյրք են փառաց։ Արիութիւն քո, Նումա, հաճոյ է ինձ. սակայն չկարեմ տեսանել անթաց աչօք, զի 'ի ծաղկի հասակիդ կամիս խիզախել յարկածս վտանգաւորագունին 'ի պատերազմունս Հռոմուլեայ. զիտասջիր զի թշնամիք՝ որոց ցարդ յաղթեաց նա, չկարեն կալ 'ի կշիռ ընդ այնոսիկ՝ որոց արդ խաղայ նա ընդդէմ. զՄարսիկս ասեմ ահարկուս, անպարտելիս մինչև ցայսօր, արս վայրենիս հսկայաձևս և անհեղեղս զօրութեամբ, որոց զէնք 'ի ձեռին նոցա են լախտք՝ հանգոյնք մեծին Ա'կիդեայ զինուն. և սլաքք նետից նոցա, եթէ լսեմք համբաւոյ, միսեալ են 'ի թոյս թունաւորս ափանցն Ա.ենեայ, և վէրք նոցա մահացուք առ հասարակ։ Եւ քանի դառն լիցի ինձ կակիծ....

Յայնժամ Նումայ ընդմիջեալ զբանս նորա. քանի փառք, ասէ, և որպիսի բարեբախտութիւն լիցի որդւոյ քում մարզել յաղնուականս յայս արուեստ 'ի ճակատ այսպիսեաց ար-

ժանաւոր ոտխաց։ Յետանեա ահա զի խնամակալ են ինձ դիք, և նոքին իսկ ազգեն ինձ գնալ զհետ Հռոմուլեայ 'ի պահու՝ յորում խիզախէ նա յահաւորագոյն վտանգս։ Զի և ես ելցէ ինձ տատամսել. բանք քոյին, ո՛ հայր, և ես զիս խրախուսեն. և օրինադրէ իսկ .քեզ փոյթ պատուոյ՝ թոյլ տալ ինձ դիմել 'ի ճակատամարտ։

Եւ իբրև վախճան արար նա բանից, և ահա բոց ինն գերաշխարհիկ փայլէր յաչս նորա, հզօր ևս և ազդոյ հնչումն ձայնի նորա դոյր լսելի, և կերպարան նորա և շարժմունք առ հասարակ ազնուականագոյնք և խրոխտագոյնք երևէին։ Այսպէս երբեմն Աքիլլեայ 'ի կերպ կանացի 'ի միջոյ դստերացն Լիկոմեդեայ դիմեալ 'ի տուեր անդր՝ զոր Ոդիսևս յաչս նորա ցոլացուցանէր, և բնաւոր բերումն մատն լինէր կեղծեացն՝ յայտնեալ զարիութիւն նորա։

Յայլայլութենէ անտի Նումայ յուզեցան և 'ի սիրտ Տատիոսի կիրք, որոց ոչ ևս իշխէր. և խնդագին արտասուօք ասէ. Այո, որդեակ իմ, երթիցես դու մարտնչել ընդ Մարսիկս, և հայր .քո մարտակից լիցի .քեզ. այո՝ ես ինքնին ածից զ.քեզ 'ի ճակատամարտ, նախակրթել զքեզ յարուեստ դիւցազանց։ Մի կարծիցես եթէ ալիք սպառեալ իցեն յիս զզօրութիւն. աչս այս կարող է տակաւին ճօճել զեղարդն, և բազուկս այս կրել զասպար։ Նեստոր, ալեորագոյն քան զիս, մարզէր զսիրելին իւր զԱնտիլոք 'ի յաղթութիւն. չեմ

ինչ հաւասար նեստորի, այլ ոչ առաւելագոյն քան զիս սիրէր նա զորդեակն իւր։ Եւ յասել նորա զայս, դիմեաց 'ի գիրկս նորա նումա, և յօժարէր մերկանալ նմա զտարփանս իւր առ Հերսէլիա, այլ առ կասկած նուազելոյ զվարկ իւր առ քաջի արքային 'ի խոստովանելն իւրում զի ոչ փառաց ևեթ տիրէր 'ի սիրտ իւր ցանկութիւն, այլում եթող ժամանակի զդժուարին խոստովանութիւն։

Տատիոս առ 'ի պատրաստութիւն նորոյ խորհրդոյն, դիմեաց առ քուրմն Ամամազդայ 'ի խընդիր զինուցն իւրոց վաղեմեայ՝ զորս նուիրեալն էր 'ի մեհեան աստուածոյ. և ակնարկեալ 'ի նոսա դարձեալ նովին հրճուանօք՝ որով 'ի մանկութեան խրախուսէր, գոչեաց. Ո՛ Ամամազդ, եթէ արեան բիւրաւորաց զոհիցն իմոց խաղացին ընդ բագինս քո վտակք, եթէ սիրտ իմ ոչ մեզաւ երբէք 'ի քեզ, և ոչ ոճիր խորհրդովք, տո՛ւր ինձ, տո՛ւր վայրկեան մի և զզօրութիւնն՝ որ էր երբեմն յիս, յորժամ վայրագն Հռամնէս գայր հերնիացւովք իւրովք յարձակել 'ի վերայ Սաբինաց։ Ամամարհեաց նա զմանկութիւն իմ, ձայն ետ ինձ յասպարէզ, և զանհեգեգն կշռեալ յիս զգեղարդն՝ զոր ոչ ոք յարդի որերոյ ձգել կարէ, կարծէր կարել զդիակն իմ ընդ գետին. այլ խոյս ետու յահագին հարուածոյն, և անկեալ 'ի վերայ Հռամնեայ՝ երիցս 'ի կող նորա մխեցի զսուսեր իմ զչերաչերմ։ Տո՛ւր, ո՛ Ամա-

մաղդ, այլ ևս սակաւօրեայ ինձ փառս, և ինչից ես գոհ 'ի դժոխս։

Զայսոսիկ մաղթէր Տատիոս. այլ դուստր նորա, այն ինչ իրաղեկ լեալ հայրենի խորհրդոցն, դիմեաց առ նա յաղերս՝ 'ի բաց կալ 'ի խորհրդոց անտի։ Այլ 'ի զուր աղերսէր, 'ի զուր հեղոյր արտասուս. Հէք Տատիա տեսանէր եղծեալ 'ի միում վայրկենի զյոյս բարեբաստութեանն երկնեալ 'ի մտի։ Քաջ խելամուտ եղև տարփանացն Նումայ. այլ անտրտունջ, և ոչ ընդ միտս իւր բողոք ունէր զաղիտիցն. բայց յողբալ իւրում զչուն հայրենի՝ այլ ինչ ողբայր նա վիշտս։

Իսկ Նումա ոչ յայլ ինչ խորհէր, բայց 'ի Հերսիլիա և 'ի պատրաստութիւն իւր 'ի չու։ Ոչ գոյին նորա զէնք, բաց 'ի սրոյն Պոմպիլեայ, փութացաւ Տատիոս ինքնին ընտրել 'ի զինարանս Հռոմուլեայ զրահ փայլունակ, պատեալ ոսկւով. և սաղաւարտ պերճագոյն ևս, Սփինքս զնովաւ հրաշակերտ, և ցցունք կրկնակք ծիրանեգոյնք ծածանեալք զՍփինքսիւն. և սապար եօթնկաշեան, 'ի քառից պատեալ 'ի թիթղանց՝ յոսկւոյ յարծաթոյ 'ի պղնձոյ և 'ի կապարէ, զոր Եգէոնի ճարտարի 'ի պէտս արքային Պրոկասայ յօրինեալ էր՝ դրուագեալ զնովաւ զանցս բարեպաշտին Ենէասայ։

Հաճեցաւ Տատիոս ընդ զէնսն, և եռ ածել զայնոսիկ առ Նումա։ Շկահիւն զինուցն ահարկու 'ի լսելիս՝ զդիւցազին մանկանն յաւելոյր և

և զխրախոյս։ Հայեցաւ 'ի նոսա նումա, բուռն եհար զնոցունց, և 'ի հնչիւն նոցին խայտալով՝ արկ զնոսա զանձամբ. և գեղանշոյլ ևս բնածին գեղեցկութիւն նորա սպառազինութեամբքն ելրևէր։ Թնդայր սիրտ նորա ընդ արուրիւն, և աչք նորա փայլատակէին 'ի խիզախելոյ։ Այսպէս առոյգ երիվար ընդ լսել զփող 'ի դաշտի ձայնատուր 'ի մարտ, ամբառնայ զվիզ իւր խրոխտապանծ, ծխաշունչ լայնէ ռնգունս, դիզանան 'ի վեր բաշքն գեղածուփք, և խրխնջելով ձայն առնէ անդրադարձ առ մարտամբոխ շռինդն՝ 'ի լսելիս իւր ազդեալ։

Գիշերն, կարի դանդաղ առ ճեպ ցանկութեանն Նումայ, հասանէր ուր ուրեմն սիրեալ զքօղ իւր զերկնաւ. այլ ոչ զօրէր քուն փակել զարտևանունս պատանւոյն տարփածուի։ Ցատանէր նա, բիւր ազգի ազգի խորհուրդս ածէր զմտաւ, պատրաստէր որ ինչ առ Հերսիլիա պարտն էր խօսել, տենչայր վաղագոյն լինել առ նմա. և անդստին մտաբերեալ 'ի դէպս՝ յորս մարթէր նմա հանդէս առնել քաջութեանն, զառաջիկայսն իւր նկատէր 'ի մտի զնահատակութիւնս։

Այգ դեռ ևս խորին էր, և ահա կանխեաց նա սպառազէն յարքունիս Ցատիոսի։ Ժպտէր արքայն բարեսէր ընդ անժուժութիւն նորա. յարեաւ, ած 'ի գլուխ իւր 'ի սպիտակավարս զսաղաւարտն՝ որ ոչ ևս թեթև թուէր նմա, և զգեցաւ զզրահն՝ զորս լքեալն էր 'ի բազում

ամաց հետէ . և ոչ կամելով տալ դատերն ողջոյն հրաժարական՝ որ դառնակակիծ երկաքանչիւրոցն էր, ել լռելեայն յապարանից՝ յեց յանժոյժ պատանին, և դէմ եդեալ երթայր 'ի դաշտ Արիային։

Վաղ իսկ ժամանեալ էին անդր Հռոմուլ և Հերսիլիա, և բանակն առ հասարակ։ Տատիոս առաջի արար գահակցին իւրում զպատանին մարտիկ, որում կամէրն ինքնին մարտակից լինել։ Հերսիլեայ 'ի տեսանելն զնա շառագունեցան դէմք. իսկ Նումայ մոռացօնք եղեն բանից՝ զորս պատրաստեալն էր խօսել առաջի Հռոմուլեայ, և կարկեալ եկաց 'ի տեսանելն զՀերսիլիա։

Հռոմուլեայ գովեալ զնախանձ պատանւոյն՝ 'ի լսել զազգ նորա և զծնունդ, ած զնա առ լեգէոնս սաբինացիս՝ յորոց կազմէր ձախոյ թև բանակին իւրոյ, և ասէ. Սաբինացիք, ահա միւս ևս քաջազն՝ որ գայ պատերազմել ընդ դրօշիւքդ ձերովք. իրաւունք իսկ են դորա յինքն գրաւելոյ զսէր ձեր. ազգական թագաւորացդ ձերոց է դա, և որդի Պոմպիլիեայ։

Ի լուր անուանն Պոմպիլիեայ՝ հնչեաց ընդ օդս աղաղակ. սաբինացիք առ հասարակ լքեալ զկայս իւրեանց, դիմեցին առ պատանին Նումա. Մէտիոս, Վալերիոս, Վոլսկենս, Մուրեքս, և ամենայն հինաւուրց զօրականք ծածկեալք 'ի խորշոմ և 'ի սպիս, զնախնոյ զօրավարին իւրեանց ողջագուրէին զորդեակն։ Մին ասէր. Շնորհապարտ հօր քում գտանիմ, զամենայն

ինչ 'ի նմանէ ընկալայ։ Եւ միւս ոմն, թէ Նա կեցոյց զիս։ Եւ ամենեքին միաբարբառ գոչէին, թէ բարերարեաց Նա մեզ. ահա, եկ 'ի ռազմս մեր, եկ զաւակդ արդարագունին և քաջագունին 'ի զօրավարս. եկ մարտնչել ընդ հալանեաւ ասպարացս մերոց, քո են բազուկք մեր, քո և սիրտք։ Եւ առ Հռոմուլ դարձուցեալ զբանն, ասէին. Արքայդ Հռովմայ, խնդրեմք զդա 'ի զօրավար մեր. անպարտելիք լիցուք մեք ընդ դովաւ, որպէս եղաքն ընդ Հարբ դորին. եթէ հրամայեսցէ դա մեզ և կոչեսցի Պոմպիլիոս, խոստանամք քեզ անշուշտ զյաղթութիւն։

Յայնժամ Ծերունին Տատիոս Հասեալ անդր, գոչեաց և ասէ. Ա՛յո՝ բարեկամք քաջք, հրամայեսցէ դա ձեզ աներկբայ, և ես տեսից զքաջութիւնս դորա. գամ մարտակից ընդ դմա լինել և ընդ ձեզ և ընդ հինաւուրց զինուորակից իմ՝ որոց ցարդ իսկ չիցեմ արդեօք անծանօթ։ Երթիցուք տեսանել զմիմեանս յասպարիզի անդ փառաց. արքայն ձեր դայ ընդ ձեզ մարտնչել զայս վերջին նուագ։ Եթէ պակասեսցէ նմա զօրութիւն, 'ի բազուկս ձեր զնա բարձեալ բերիցէք։

Եւ 'ի խօսել նորա, աղաղակ ցնծութեան հնչէր. քաջացն առ հասարակ սաբինացւոց. շուրջ պար առեալ զնովաւ՝ գիրկս արկանէին Ծերունւոյ արքային իւրեանց, և համբուրելով զհանդերձս նորա և զձեռս, ասէին. Ո՛ բարեբաղդ

'ի թագաւորս, այո՝ պաշտպանեացուք մեք զկեանսն քո, պատապարեացուք զքեզ անձամբս մերով։ Աղէ, ո՛վ իսկ զբարեկենդանութիւն որդւոցս մերոց յօրինեացէ, եթէ դու բարձցիս 'ի մէնջ։ Ե՛կ, եկ ուստ դու պոմպիլեան զաւակին՝ նմանող արժանաւորին իւրում դոլ ծնողի. և թո՛ղ 'ի մեզ ուսուցանել աղգաց և ազանց, որպէս զթագաւորս բարիս պարտ իցէ սիրել։

Տատիոս փոխան պատասխանւոյ արտասուէր ևեթ. բազկատարած զհինաւուրց զինուորակիցս իւր ընդգրկեալ, յուշ ածէր նոցա զիւրաքանչիւր զքաջութիւնսն, և խնդրէր 'ի նոցանէ առնել ընդ Նումայ զնոյն սէր՝ զոր ունէին ընդ իւր։ Հռոմուլեայ իսկ յուզեցան դութք ընդ տեսիլն ընդայն. և անդէն անուանեաց զՆումա՝ Պոմպիլիոս զօրավար լեգէոնացն սաբինացւոց։ Ամաղակ բազմամբոխ խառն ընդ փողս հնչէր. և խրոխտապանծն Հերսիլիա. ընդ սաբինացիսն միշտ մարտակից, բերկրէր 'ի սրտէ զի անդ ընտրեալ էր իւր տեղի։

Մինչ դեռ բանակն կազմ էր 'ի չու, և Հռոմուլ պատրաստէր տալ նշան, և Տատիոս խոհականին յանձնէր Մեսալայ առնել իրաւունս մինչև 'ի դարձ իւր, և ահա ամբոխ կանանց և մանկանց և ծերոց տառապելոց կականաւորք ձեռս յերկինս ամբարձեալ՝ դիմեալ անկանէին յոտս Տատիոսի, ասելով։

Եւ զիարդ թողուս լքանես դու զմեզ. և զի-

ամրդ, երկուս ունելով մեր թագաւորս մեզ 'ի հարս, յերկոցունցն իսկ գտանիմք որբացեալք։ Եթէ Հռոմուլ 'ի պարսպաց մերոց մեկնի, սովորեալ իսկ եմք տարակայութեան նորա. այլ դու բարեգութ արքայդ մեր Տատիէ, դու որ սիրեաղ զմեզ, և որ կապդ միշտ ընդ մեզ, առ ինչ արդ լքանես զմեզ։ Եւ ո՞ իրաւունս արասցէ մեզ, ո՞ զմեզ սիրեսցէ 'ի վիշտս, ո՞ յաղէտս մեր օգնեսցէ մեզ։ Գիտես իսկ, զի 'ի գնել արեամբ քաղաքայնոցս զյաղթութիւն՝ հարք և մանկունք թշուառացեալք և այրիք սգաւորք առ քեզ ապաւինին, և 'ի դիրկս քո արտասուեն. և արտասուակցորդս իւրեանց զքեզ ունելով, սիրովի վիշտ նոցա։ Զինչ թշուառացն այնոցիկ լիցի բախտ, եթէ փոխանակ սիրելոյ նոցա 'ի քէն գտանելոյ՝ պարտ ի՞նչ նոցա կալ 'ի կասկածի և վան կենաց քոց։ Այլ՝ զինչ խնդիր է քո 'ի պատերազմի, թերևս թերի՞ ինչ ի՞նչ ի՞նչ փառք քո՝ մեծարեմք զքեզ որպէս զդիս, և սիրեմք որպէս զհայր. և զինչ ևս պիտոյ ի՞նչ քեզ, զինչ առաւել քան զայս հայթայթեսցէ քեզ յաղթութիւն. առ 'ի գնալ առնել քեզ գերի, թողուս լքանես զորդիս քո։

Զայս այսպէս մի 'ի Ծերունեացն բարբառեցաւ. իսկ Տատիոս հեղոյր արտօսր, հայէր 'ի Նումա, հայէր 'ի զինուորակիցս իւր վաղեմիս։ Յայնժամ Նումա և զինուորակիցք արքային Ծերունիք անկեալ առ ոտս նորա, յաւելին զաղերս

իւրեանց 'ի պաղատանս ժողովրդեանն. և Տատիոսի ոչ ևս տարակուսեալ, 'ի բաց եդ զսաղաւարտն և զնիզակ. և գիրկս արկեալ ծերունւոյն՝ որ բարբառեցաւն, ասէ. Գիտեմ իսկ քաջ, զի չիք ինձ այլ փառք՝ բայց լինել ձեզ պիտանի. ոչ ևս թողից զձեզ մինչև ցմահ։

Աղաղակ բազում 'ի լուր բանից ամբառնայր յերկինս. ամենեքեան զոհանային զդէց, ամենեքեան օրհնէին զբարեգութ արքայն, և զհայրասէր դուստր նորա զՏատիա։ Տատիա ցայն վայր թագուցեալ կայր յամբոխին, և գիմեալ յայնժամ 'ի գիրկս հօրն, ասէ. Ոչ արդեօք տեղի տուեալ էր քո արտասուաց իմոց, այլ վըստահ էի՝ զի գթայիր յարտասուս ժողովրդեանդ. ես զդոսա ժողովեցի, ես ցուցի դոցա զմօտալուտ աղէտն, և ոչ ինչ դժկամակիմ ընդ նախամեծար լինել դոցա քան զիս։

Յայնժամ Տատիոսի ողջագուրեալ զդուստր իւր, և արտասուօք գիրկս արկեալ պատանւոյն Նումայ, եւ նմա զողջոյն հրաժարական, և յանձն արար զինուորակցացն իւրոց ծերունեաց սաբինացւոց՝ պահ ունել և պաշտպանել գանձուն, զոր նոցա աւանդէր։ Իսկ Տատիա, աչք 'ի խոնարհ, հնարէր յարդարել զբարբառ իւր անապթաք՝ առ 'ի մաղթել Նումայ զփառս և զբարեբաստութիւն, որոց ցանկայրն։

Եւ ահա փող հարաւ 'ի չու. և հառաչէր արքայն բարեգութ 'ի տեսիլ չուոյ զօրականին։

Ալ կարկառէր նմա նումա 'ի հեռուստ. և ժողովուրդն ցնծութեամբ 'ի վերայ բազկաց բարձեալ տանէին զթագաւորն, որոյ տեսիլ ևեթ երեսացն՝ սիրուէր զամենայն աղէտս նոցա։

Երրեակ առաջք էին բանակին։ Առաջինն 'ի լեգէոնաց հռովմայեցւոց կազմեալ, որոց զօրավար էր ինքնիշխան Հռոմուլ. և ոչ տեղի հաստատուն էր նմա. այլ երթևեկէր հեծեալ 'ի ձի թրակացի՝ որ հուր յաչացն և 'ի ռընգաց թըւէր թօթափել, և խոյացեալ ամենայն ուրեք հասանէր, թողեալ զհրամանատարութիւն լեգէոնացն հռովմայեցւոց 'ի ծերունին Ոստիլիոս՝ որոյ որդին ապա թագաւոր 'ի Հռովմ եկաց։ Առընթեր Ոստիլեայ գնայր քաջն Որատ, որոյ որդիք երեք յետ ամաց յիսնից նուաճեցին զՍաբա քաղաք յաղթանակաւն ընդդէմ Կուրատեանց։ Մասիկոս, Աբաս, Սերուիոս, կրտսերն Միսէն՝ որ 'ի հռչակաւորէն էր սերեալ 'ի փողարէն Ենէասայ, և քաջայաղթն Տալաս, յառաջնումն ռազմի կային։ Իւրաքանչիւր 'ի նոցանէ վաղ իսկ արութեամբք բազմաւ նշանաւոր, զանուանուց ուրուք կրէր յանձին զկապուտ ոսխի։ Քաջամարտիկքս այսոքիկ հռովմայեցիք գնային միշտ առաջապահք 'ի չու բանակին, և յաջում թեւի 'ի ճակատամարտս։

Երկրորդն կազմէր 'ի լեգէոնաց լատինացւոց. անդ էին լաւրենտեանք և փիդենեանք, տելլենացիք, արիկիացիք, և նախնոյն Պոլիդորայ և

ցանկալւոյն Լաւինիոյ բնակիչք։ Այս ամենայն ազգք նուաճեալք 'ի Հռոմուլեայ՝ պատերազմէին յայնժամ փոխանակ նորա, խրոխտապածք ընդ անունն Հռոմէական՝ զոր յաղթութեամբն 'ի մարտի ստացան։ Զօրավարք նոցա քաջք էին Ազիլիա, Որիմանթ, Փերալտին, Լադոն որդի Պերենայ յաւերժհարսին, և զեղանին Նիփէոս ծնեալ 'ի յարգաւանդն Կանենտա, և քուրմն Ապոլոնի Կինիրոս՝ որ զսարդենին սուրբ հանդերձ նարօտիւք դիցն զսաղաւարտիւն իւրով կրէր։ Գունդս այս, հետևակազօր առ հասարակ, ըստ միջոց բանակին ունէր 'ի չու և 'ի ճակատամարտ։

Իսկ յերրորդումն զինուորէին սաբինացիքն քաջք. սոքա վերջապահք բանակին ահաւորք՝ կազմէին միշտ զձախոյ թև Հռոմուլեայ։ Ծերունին Մետիոս Եթոզ զհրամանատարութիւն գնդին 'ի նումա. և ինքն արդոյ զօրավարն 'ի ծայրէ ասպարիզին դարձաւ 'ի զինուորութիւն. այլ հասակ նորա և պարծանք և ալիք և սպիք մեծարոյ զնա առնէին առանց իշխանութեան։ Մետիոս ընդ զինուորս կայր 'ի ռազմի, այլ նա ինքն տակաւին հրամայէր։ Յետ նորա նշանաւորք անդ էին խոհեմացեալն Կատիլլոս, ահարկուն Կորաս, և Տանայիս և Տալոս, քաջամարտիկն Կալլոս՝ թոռն Աբարեայ դեռոյ, և մնեալն առ Բլանդուսեայ աղբեր ցանկալին Աստուր՝ զոր տարփածու յաւէրժհարսինն զօրքն առ հասարակ համարէին, և ամենքին Ոփենտ՝ զո-

ըոյ մորուսք թանձրախիտ և գորշախայտ ղկէս դիմացն ծածկէին։ Ամենեքեան ուրբա արք պատերազմողք զհետ երթային Նումայ։

Իսկ ինքն բազմափայլ զրահիւքն ծածկեալ, և արբեցեալ 'ի սիրոյ և 'ի ցնծութենէ, գնայր առաջի նոցա հեծեալ 'ի ձի ձիւնափայլ՝ զոր Տատիոսի նմա պարգևեալ էր։ Որոյ խայտալով անժոյժ ընդ մանկաւն վերելակաւ, դափր ընդ օդս և ընդ երկիր հարկանէր, և 'ի սպիտակ թաթթաւեալ 'ի փրփուր զսանձն՝ որ զաշխոյժս նորա նուաճէին, զայրագնէր 'ի լուր խրխնջելոյ ձիոց առաջապահ գնդին։

Գնայր առընթեր 'ի մեծաշուք 'ի կառս Հերսիլիա սպառազէն որպէս զՊալլաս, և գեղեցիկ հանգոյն հարսինն Հեփեստեայ։ Զճաճանչաւէտ սաղաւարտին կրէր գարգմանակ զարծուին հռոմէական. կապարճ ոսկի յուս նորա փայլատակէր, և 'ի ձեռին նորա աղեղն Պանդարայ, զոր ենէաս ած յիտալիա, և որդի'ի հօրէ ժառանգեալ զայն աւանդեցին թոռին նորա Հռոմուլեայ։ Հանճարեղն Բրուտոս, հայր աղգատոհմի դիւցազանց, վարէր զկառս իշխանուհւոյն՝ նախանձ 'ի տարփածու նորին 'ի Նումա արկանելով սպասաւորութեամբն. իսկ Նումա ակնկառոյց միշտ 'ի Հերսիլիա, գնայր կից կառաց նորա. գեղջիս ոչ ինչ ստորև քան զՊանն բայց աջողութիւն 'ի զէնս յաւելոյր Ամազոնին վեհագոյն իմն կերպարանս պատերազմողի։

Այսպէս Ապոլոն և քոյր նորա Արտեմիս ճեմին սպառազէնք ընդ լերինս Կինթեայ. երկոքին ևս ահաւորք, երկոքին ևս ակնախտիղք, բայց դուստրըն յատոնեան կերպարանս իմն բերելով յանդուգն և խրոխտ՝ որ 'ի քաղցր դէմս եղբօրն ոչ տպաւորին։

Խաղային գնային զօրքն արշաւասոյր, դէմ եղեալ յեզերս Լիրիս գետոյ և 'ի դաշտս Ալքսենտեայ, ուր էր նոցա զօրաժողով ընդ դունդս արքային Կապուայ. այլ պարտ էր նոցա անցանել ընդ երկիր հերնիացւոց։ Հռոմուլ հրեշտակս առ նոսա արձակեաց՝ խնդրել զանցս. և մերժեալ զխնդիր նորա արքայն հերնիացւոց, ասէ. Զեմ ինչ դաշնակից, ոչ ընդ Մարսիկս և ոչ ընդ հռովմայեցիս. եթէ զօրք թշնամեաց քոց դիմեալ գնային 'ի Հռովմ, ոչ թողուի նոցա անցանել ընդ սահմանս իմ ընդ կարճոյ ճանապարհ. պարտ է ինձ ապա խափանել և ձեզ զճանապարհդ. թուի ինձ արդարութիւն, ոչ միւսմ և ոչ միւսումն ձեռն տալ կողման։

Մռնչեաց Հռոմուլ զայրագին 'ի լուր պատասխանւոյն, և ասէ. Ո՛ յանդուգն, 'ի միտառցես դու քանի վտանգ ետ չինել կուսակից միւսմ յերկուց հզօր պետութեանց. այժմէն իսկ գիտասցիր զքեզ ծառայ յաղթականին։ Սակայն հարկ լեալ նմա յապաղել զվրէժխնդրութիւն, և առնել շրջան մեծ առ 'ի հասանել 'ի սահմանս Մարսկաց, դիմէր գնայր անցանելընդ

լերինս սիմբրացւոց՝ ուստի Ենիոն բղխէ գետ։ Յերկայն և 'ի տաժանաւոր չուոյ անտի աշխատեցան զօրքն. այլ կարևոր էր աշխատութիւնն այն դեռակիրթ զօրացն, զորս յաւել Հռոմուլ 'ի բանակ իւր. և մանաւանդ Նումա մարտիկն մանկահասակ խիստ զնախակրթութիւնն արար յարուեստն ազնուական՝ զոր սկսանէր։ Մարզեալ 'ի քաջաց վարժապետացն սաբինացւոց, և վառեալ սիրով և առընթերակայութեամբն Հերսիլեայ, հմուտ 'ի պատերազմ որպէս զհինաւուրց մարտիկ 'ի վերջին ճակատս մարտին գտանէր։ Զև ևս մտեալ 'ի մարտ, գիտէր զմարտընչելոյն յեղանակ. և եռանդն քաջութեան՝ որով տենչայրն առաքինանալ առաջի Հերսիլեայ, յաւելոյր 'ի նա զանձուկ հասանելոյ վաղ առ թշնամիս։

Հասանեն ուր ուրեմն յեզերս Լիրիս գետոյ, որ բաժանէ ընդ Մարսիկս ընդ եկուացիս և ընդ հերնիացիս։ Արքայն կապուացւոց երիւք բիւրուք զօրաց վաղ իսկ անդ յերից աւուրց հետէ բանակեալ էր. և յերևել առաջապահ գնդի հռոմէական բանակին՝ հան ճակատեցոյց զզօրսն առ հասարակ, և 'ի հնչիւն բաղում ազգի ազգի նուագարանաց մնայր ընդունել զնիզակակիցսն։ Եւ և արքայն հռովմայեցւոց հնչեցուցանել ըզփողս, և հաս ճակատեցոյց զիւրսն դէմ յանդիման կապուացւոց. և յառաջ անցեալ առ թագաւորն, դիրկս արկին միմեանց արքայք երկո-

քին, և երդուան անլոյծ բարեկամութիւն։ Բայց Հռոմուլ անժոյժ առ տենչ վաղադոյն տեսանելոյ զզօրս՝ ընդ որս պատերազմելոյն էր, դարձաւ անցանել ընդ ռազմն զօրաց բանակին։

Այն ինչ սակաւիկ մի յառաջ խաղացեալ, և աստ դռնչէին լսելիք նորա 'ի շուինդն խառնաձայն՝ որ ամենայն ուստեք հնչէր շուրջանակի։ Քանզի կամպանիացիք համարձակէին քրքիջ առաջի նորա բառնալ, իշխէին խօսել ընդ սպառազինութեամբք և ոչ հպատակել հրահանգաց մարտի, ընդ որ գրգռէր զայրոյթ Հռոմուլեայ։ Հայեցաւ 'ի նոսա խոժոռ, և ողորմեալ յամբոխ զօրապետացն՝ որք պանծային ընդ ծանծաղ գիտութիւն իւրեանց, չէառ իսկ յանձն տալ նոցա պատասխանի. պակեաւ եկաց խորշոմեալ յօնիւք 'ի տեսիլ հինաւուրց զօրականին՝ որոց զօրապետք մանկունք հրամայէին, և 'ի տեսիլ ոսկւոյն և արծաթոյ՝ որ 'ի զրահս ամենեցուն փողփողէին։ Հաս կալաւ զասպար մի ճոխ և ծանրաբեռն՝ զոր առոյգ ոք մարտիկ կամպանիացի աշխատութեամբ մեծաւ կրէր. զայն Հռոմուլեայ ծայրիւք մատանցն առեալ 'ի վեր, և նկատեալ 'ի նմա զդրուագ տարփանաց՝ շառագունէր 'ի սրտմտութենէ։ Եւ զոմանց 'ի զօրականէն յափշտակեալ զնիզակս, և 'ի բուն իւրում խորտակեալ զայնոսիկ, հարցանէր ընդ հենդն ժպտելով՝ թէ առ ինչ զէնք այնպիսիք էին պիտանացու։

Եւ հասեալ 'ի բանակեալ կամպանիացւոց,

եմուտ անդր. և զայրանայր 'ի տեսանել զվրանն մեծագին, ընդ որով.ք բուրէին խունկք անուշահոտք, և ուր բաղանիք և մահիճք և ամենայն գիւտք և ճարտարութիւնք մեղկութեան քաղաքական կենաց պատրաստ կային։ Եւ տես անդ և հանդէս խաղուց, ուր զօրապետք կամպանիացւոց զմիմեանց կապտէին զարծաթ, և կորուսանէին զմեծութիւնս, զհանդիսատ, և յաճախ ևս զփառս։ Եւ տես և ամօթալի ևս անդ տեղի, ուր ամբոխ անպարկեշտ կանանց՝ սակաւ ինչ ընդհատ 'ի բազմութենէ զօրացն, վարժեալ դիւրամատոյց առ 'ի յախտս, ձգէր և պարուանդէր զմանկտին պատերազմող 'ի կապանս ամօթապարտս, թմրեցուցանէր զքաջութիւն, և կնատեալ զոյժ նոցա՝ մատնէր զնոսա 'ի ձեռս թշնամւոյն անզօր անարի անիսառնակ։ Միանգամայն ասել, եւ տես ամենայն ուրեք զվատ մեղկութիւն, զինասակար դատարկապորտութիւն և զզեղխութիւն։

Եւ վաղվաղակի մեկնեալ 'ի բանակէ անտի, և առեալ զձեռանէ արքային կամպանիացւոց անբարբառ, ած զնա ընդ ռազմս հռովմէական բանակին։ Լռութիւն խոր տիրէր անդանօր, պատրաստութիւն 'ի լուր հրամանի և մեծարանք 'ի դէմս ամենեցուն տպաւորեալ. իւրաքանչիւրք 'ի մարտկաց անշարժ 'ի կայից իւրոց՝ ակնկառոյց 'ի զօրագլուխ իւր, հնարէր գուշակել զպատուէր հրամանի նորա՝ առ 'ի վաղագոյն զայն

կատարել։ Երկաթ և պղինձ ամենայն ուրեք շողային. և եթէ ոակի կամ արծաթ 'ի զէնս ուրեք փայլէր, իշխանաց այնոցիկ կամ զօրավարաց յաղնուականութենէ կամ 'ի քաջութենէ պահեալ էին։ Ոչ կանանի յետոյս բանակին և ոչ գանձք տեսանէին, այլ նժոյգք ընդ անկելոյն 'ի մարտի փոխանորդք, զէնք առ 'ի ընուլ զխորտակելոցն տեղի, և վիրաւորաց դեղ և դարման։ Իւրաքանչիւր ոք մարտիկ կրէր զվրան իւր զպարէն և զզէնս. և ոչ ոք վաստակէր, ոչ 'ի բեռանէն, և ոչ 'ի հեռաւակընթաց յառաջխաղացութենէ։

Թագաւոր նոցա հզօր ճեմէր հանդարտաքայլ ընդ մէջ ահեղ բանակին, և դիտէր լուիկ զարքայն Կապուայ. և առեալ 'ի ձեռանէ միոյ ուրուք 'ի սինլքոր զօրականէն զդեղարդն, ետ 'ի ձեռս թագաւորին. որոյ ոչ կարելով հանդուրժել բեռին, եթող ընկէց զայն՝ շառաղունեալ յամօթոյ։ Յայնժամ Հռոմուլեայ լուծեալ զլռութիւն, ասէ. Քեզ թողում, արքայդ Կապուայ, առնել դատաստան՝ թէ կարիցեն ընդ նոսին դրօշու պատերազմել զօրք քո և իմ. զի և ոչ առիւծք ամենիք ընդ երկչոտ խաշինս միաբանել կարասցեն։ Բանակ քոյին տկարացուցէ զիմս. Հռոմայեցիքս իմ, սովորեալք 'ի յարձակել միշտ 'ի վերայ թշնամեաց, կորուսանիցեն զկէս զօրութեան իւրեանց 'ի պաշտպանութիւն նիզակակցաց իւրեանց։ Դարձեալ և վտանգ ան-

շուշտ տեսանեմ զառաջեաւ. ախտ ժանտ, որ ճարակի 'ի բանակի քում, 'ի յիմս փոխեցի. վատ մեղկութիւն, ահաւորագոյն քան զամենայն հարուածս, ջլատեցէ զկորով զօրաց իմոց. ոչ ևս լիցի մեզ յոյս յաղթութեան, այլ հացէ մեզ պարտութիւն։ Սիրելի է ինձ, արքայդ կապուայ, նիզակակցութիւն քոյին. այլ սիրելի ևս փառք ժողովրդեան իմոյ։ Եթէ կամիս զի ի ցեմք բարեկամք միմեանց, բաժանեսցուք յիրերաց. 'ի բաց տար յինէն զքնաստակար բանակդ. և եթէ չկարես ստիպել զհպատակս քո լինել արս, գէթ մի թողուր նոցա կնատել զարս։

Եւ 'ի խօսել զայսոսիկ Հռոմուլ'եայ, մանուկն կապիս՝ որդի արքային կամպանիացւոց, հռովմայեցւոյ արժանի անուան, կորակնեալ և շառագունեալ՝ զերկիր նշմարէր։ Իսկ հայր նորա սաստանեալ յերեսաց Հռոմուլեայ, որպէս միշտ իսկ այր վեհ մեծարոյ է արքայից թարմատարաց, խնդրեաց 'ի նմանէ ցուցանել որ ինչ պարտն էր իւր գործել. և խոստանայր հպատակել խորհրդոց նորա։ Որում Հռոմուլ ետ պատասխանի. Գիտեմ զի սաստիցիք զան յօգնութիւն Պարսից, և պարտ է անցանել նոցա ընդ քաղաքն Աւքսենտ, և Աւքսենտ ընդ ձեռամբ քով է. երթ ամրացիր 'ի պարիսպս անդ. խափանել զդիմեցումն նոցա անդր։ Կալ առ քեզ ոչ ինչ աւելի քան զերիր մսան զօրաց քոց, և յղեալիր զայլսն ընդդէմ սաստիցւոց, առաջնորդ նոցա

կացուցեալ զքաջագոյնն 'ի զօրավարս քո։ Արդեն նմա, մի 'ի կռիւ դալ ընդ ահաւոր թշնամւոյն. զի ոչ կարասցեն զօրք քո ժուժկալել ընդ զօրս նորա 'ի մարտ։ Պատուէր տուր նոցա խուճապել զբանակ թշնամեաց, զդոյշ կալ 'ի ճակատամարտէ, աշխատ առնել զսամնիտացիս, և խափանել զնոսա 'ի դումարելոյ ընդ Մարսիկս։ Յայնմ վայրի դիմեցից ես 'ի վերայ Մարսից. և անշուշտ լիցի մեզ յաղթութիւն, հայրենականաւս Արեայ օգնականութեամբ. զի թողցէ յայնժամ զօրավարքդ քո անխափան առաջի սամնիտացւոց զճանապարհն, և յառաջ խաղացեալ նոցա յԱլբանետ՝ պաշարեսցին 'ի մէջ զօրաց քոյոցդ և 'ի քոյոցդ և յիմոցս զօրաց. և անհրաժեշտ նոցայն պարտութիւն 'ի միում ևեթ աւուր զրաւ արասցէ մարտին։

Եւ 'ի լսելն զայսոսիկ մանուէն Կապիս անկաւ յոտս Հռոմուլեայ, և ասէ. Արքայդ Հռովմայ զարմանալիդ ինձ, և պաշտելի որպէս զհայր քոյին զԱրէս, ներեա զի որդի արքային Կապուայ ընդ դրոշիւքդ քովք մարտիցէ. ցանկամ մարդել 'ի խիստ արուեստ դիւցազանց, և զո՞ ոք վեհագոյն քան զքեզ կարիցեմ ընտրել ինձ վարժապետ։ Խորհեա աստուածորդիդ դու, զի մարդեալ քեզ 'ի մարտ՝ կարացից և ես մարդել զզօրս հօր իմոյ. և քո լիցեն փառք, եթէ Հռովմայեցիս զնոսա յարդարեցից։

Շարժեալ Հռոմուլեայ 'ի բանից անտի, յա-

ըոյց զկապիս . և ետ նմա վաղվաղակի դումարտակ ընդ ձեռամբ ։ իսկ նա առաւել պարծանս իւր համարեալ զլինելն սպայ Հռոմուլեայ քան իշխան Կապուայ, համբուրեաց զալ զօրավարին, և հրաժարական տուեալ ողջոյն հօր իւրում, փութացաւ կալաւ զտեղի իւր ։ Եւ թագաւորն Կամպանիոյ մեկնեցաւ անդէն բիւրուք զօրօքն ամրանալ յԱլբսենտ, զայլս 'ի զօրացն յղեալ ընդդէմ սամնիացւոց առաջնորդութեամբ հելլենացւոյ ուրումն՝ որ զօրավարէր 'ի ձեռանէ արքային Կապուայ ։

Հռոմուլ առ տենչ վաղագոյն ձեռն 'ի գործ առնելոյ 'ի պատերազմ, կամէր նախ քան զգիշեր հասանել բանակել յայնկոյս Լիրիս գետոյ ։ Եւ գտեալ հուն մի զգետոյն՝ իբրև կազմէր անցանել ընդ այն, հասին առ նա հրեշտակք երեք 'ի Մարսից . տեսիլ նոցա պատկառելի, մորուսք երկայն ինչանէին ընդ կուրծսն, և գլուխք նոցա ճաղատք՝ սակաւս ինչ բերելով հերս ապիտակս . 'ի միում ձեռին նոցա էր անօթ փայտեայ . և 'ի միւսում նետ փայլուն ։ Յառաջ մատեան հանդարտաքայլ և ճոխաճեմ, և երիցագոյնն 'ի նոցանէ խօսեցաւ և ասէ . Արքայդ Հռովմայ, զի՞ կայ քո և մեր . մի՞ թէ զերկիրս քո աւերեցաք, կամ թէ սպառնացա՞ք ինչ ընդդէմ քաղաքիդ։ Ո՞ւրեմն դու, զինչ կամիս, և զինչ խնդիր է քո 'ի մէնջ։ Ահա արքայն կամպանիացւոց դիմէ 'ի վերայ մեր, առ 'ի թափել զկարծեցեալ իրաւունս իւր

'ի մէնջ. այլ տացէ նա զվրէժ։ Իսկ քո և ոչ անուանիքդ այդոքիկ պատճառանք են. անծանօթ իսկ ես մեզ, և ոչ համբաւ մեծութեան լուեալ քո զմէնջ. չիք ինչ մեր, որ զցանկութիւն քո գրգռիցէ։ Ոչ ինչ զանխուլ են'ի քէն որ ինչ պարգևք Մարսկացս 'ի դէց չնորհեալ. արջառք և արօր, դաշխուրանս այս և նեռք և լախտ. առքօք առ թշնամիս մեր և առ բարեկամս վարիմք։ Ընծայեմք բարեկամաց որ ինչ արօրոյ և արջառոց են արդասիք, և դաշխուրանաւս այսուիկ քաւութիւնս վասն նոցա հեղումք Սրամաղդայ։ Իսկ առ թշնամիս արձակեմք զնեռս 'ի բացէ ցոր վայր աչք մեր նշմարեն. և լախտիւքս չաղչախեմք զնոսա եթէ երբէք յանդգնեսցին մերձենալ առ մեզ։ Ընտրեա արդ, արքայդ Հռոմայ, ընդ բաժակս ընդ այս և ընդ նեռս։ Լսեմք զի աստուածորդի ոմն լիցես դու. եթէ ճշմարտիւ այդ այդպէս լիցէ, մարդասիրեա. իսկ եթէ ոք 'ի մարդկանէ լիցես, երկիր յայնցանէ՝որ քաջք իբրև զքեզ և արդարագոյնք քան զքեզ են։

Պատասխանի եւ նոցա Հռոմուլ զայրագին և ասէ. Զիք իմ երկուցեալ բնաւ յումեքէ. զամ յօգնութիւն նիզակակցաց իմոց, և ոչ է ինձ անկ քննել թէ լիցեն նոցա իրաւունք զէն առնլոյ. որդի եմ ես Սրիսի, և ոչ թեմիսի։ Դարձ ծերունիդ առ ազգ քո, և գուժեա նմա պատերազմ և լուծ, և թող ինձ զնեռդ պարզև զեղեցկագոյն՝ որ արժանիս քաջութեան իմոյ ինձ

աւետէ թշնամիս։ Եւ զայս ասացեալ, խլեաց 'ի ձեռանէ ծերոյն զնեան։ Նա լուռ ևեթ պշուցեալ ընդ երկար 'ի թագաւորն, ամբարձ ապա զաչս իւր յերկինս՝ որպէս վկայ զնա կոչելով արդարութեան իւրոյ, և ել յերեսաց թագաւորին անբարբառ։ Իսկ Հռոմուլ անց վաղվաղակի ընդ Լիրիս, և եկեալ բանակեցաւ 'ի դաշտս Մարսկաց։

ՆՈՒՄԱ ՊՈՄՊԻԼԻՈՍ

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՉՈՐՐՈՐԴ ԳՐՈՑ

Համախմբեալ Մարսկաց ընտրել իւրեանց զօրավար, պառակտին. սահմանի ընտրութիւնն այնմ, որ զբուն կաղամախւոյ բեկանիցէ. բայց մանուկն Լեոնդ յաղթող գտեալ, թողու զզօրավարութիւնն ծերունւոյ ումեմն: Զու առնէ բանակն, և գայ հանդիպի հռովմայեցւոց: Հռոմուլ պատուէրս տայ զօրականին: Մարդասիրութիւն Նումայ, և զոհ նորա առ Դեմետրէ, և արձակել զգերին: Դեմետրեայ արկանել առ ոտս նորա զերկնընկէց վահանն: Յարձակել Լեոնդեայ գիշերայն 'ի բանակն հռովմայեցւոց, հուր հարկանել զնմանէ, ողողել զայն արեամբ, և տապաստ արկանել վիրաւոր զՀռոմուլ:

ՆՈՒՄԱ ՊՈՄՊԻԼԻՈՍ

ԳԻՐՔ Դ



Բայց Մարսիկք ժողովեալ 'ի մեհենական անտառին Մարրոբեայ, թէպէտ և տակաւին ոչ անյոյսք 'ի խաղաղութենէ, կազմէին պատրաստէին 'ի պատերազմ։ Ծերակոյտն վերատեսուչ ընկերահաշտ ժողովրդեանն՝ առաքեաց հրեշտակս առ ազգանիզակակիցս, խնդրել 'ի նոցանէ օգնութիւն։ Եւ զինուորեալ մանկտին, երկու բիւր մարտիկք՝ աղեղն և լախտ 'ի ձեռին՝ դէտակն կալեալ ճնային դարձի հրեշտակացն 'ի Հռոմուլեայ։

Եւ ահա հասին նոքա կորագլուխք տխրադէմք, և յառաջ անցեալ դանդաղաքայլ կացին 'ի մէջ առենին։ Շուրջ եղեն. զնովաւ զօրքն, հարցանէին զնոսա, և սիրէին տալ պատասխանի։ Նոքա ասեն. Կազմ զլախտս ձեր կալարուք։ Հռոմուլ ընտրեաց զնեսս. զբանակ հարեալ նստի նա 'ի սահմանս մեր, և զլուծ մեզ իշխէ ապառ-

նալ։ Յայն բան հնչեաց աղաղակ զայրագին. և զօրքն կատաղեալ՝ վաղ ընդ փոյթ խնդրէին գնալ ընդդէմ թշնամւոյն։ Յածոյց ծերակոյտն զարմանութիւն նոցա, յորդորելով զնոսա մնալ հասանելոյ նիզակակցաց յօգնութիւն, և ընտրելոյ իւրեանց զօրավար կարօղ առ'ի կալ ընդդէմ ալքային հռովմայեցւոց։

Այլ բազումք պատերազմողք յառաջ մատեան, թեկն ածելով զաւագութեան. երևելիք'ի նոսա էին քաջն Աւլոն սերեալ'ի Կակոսէ, որ փոխանակ սուսերոյ և գեղարդեան կրէր տապար անհեթեթ՝ զոր ոչ ոք'ի Մարսից կարող էր բառնալ. Պենթէոս՝ յերկոցունց ձեռաց աջողակ, որ ընդ հաւս իւր նախնիս համարէր զհէքն Մարսիա զհայր ժողովրդեանն Մարսից. Լիդեր՝ երագոան քան զեղջերու, որոյ զէնք էին բոլորակք երկաթիք սայրասուրք, զորս այնու աջողակութեամբ ձգէր՝ զի'ի մահուանէ երբէք հարուածք նոցա ոչ վրիպէին. և մանուկն Աստոր, համբակ Ապոլոնի ցանկալի, որոյ վահան լայնատարը յերիս աւարտեալ անկիւնս ծայրասուրս՝ յերկիր բևեռէր, և որ յետկուսէ երկաթեայ պատնիշին ձգէր աջողակ զնետս՝'ի դեղփական դիցն ուսեալ զաղեղնաւորութիւն։ Որքա ամենեքեան ոտիք միմեանց խրոխտապանծք՝'ի մէջ մատեան խնդրել զզօրավարութիւն. իսկ զօրքն՝ որք հաւասար զնոսա սիրէին և մեծարէին՝ զաղաղակ բարձին, կիսոց զԼիդեր խնդրելով, այ-

լոց զՊենթէոս, հեծելազօրաց զԱլՀոն, և աղեղնաւորաց զԱստոր։

Քաջազունքն չորեքին խուժուռ յիրեարս ակնարկեալ՝ դժնեայ ընդ միմեանս խօսէին, և զայրոյթ'ի դէմս նոցա վառեալ բորբոքէր. իւրաքանչիւր ոք պանծայր ընդ ազգ իւր և ընդ արութիւնս, և խուռէր զոսոխացն. և անիրաւութիւն բարձր'ի գլուխ'ի միջի նոցա ճեմէր։ Սպառնալեցք ձայն տային միմեանց յասպարէզ, Աստորի բուռն զնեռից հարեալ, Պենթէի ճօճելով զգեզարդն, Լիգերի զբոլորակն կշռելով, և ամենայն ԱլՀոնի'ի վեր զահագին ակրն ամբարձեալ։

Յայնժամ երիցագոյնն'ի ծերակուտէն խոհականն Սոփանոր, փութացաւ արկ զանձն'ի մէջ, և արգել զնոսա՝ ասելով. Ակք, զի՞ գործէք. կամիք ուրեմն աներկեան պատրաստել հռովմայեցւոց զյաղթութիւն, բառնալով'ի Մարսից զախոյեանս. անապատութիւն գուպարելոյ ընդ միմեանս՝ հզօրագոյն ուրեմն է'ի սիրաս ձեր քան զսրբազան սէր հայրենեաց։ Ա՛ւաղ, և զինչ լինիցին հէք հայրենիքդ, եթէ ընտրելագոյնք յորդիս նորա զզէնս իւրեանց'ի միմեանս դարձուսցեն։ Մի՛ կարծիցէք թէ խնդիր ինչ շահու տայ ինձ բարբառել. ոչ ինչ է ինձ փոյթ զի դրաւել ջանայք զաւագութիւն՝ որ թերևս իմոց վաստակոցս էր անկ, և քաջ'ի դէպ իմուսն ծերութեան։ Պարծանք ոչ այն իսկ են՝ հրամայել հա-

սասարից, այլ յաղթել թշնամեաց. շիթ մի արեան հեղեալ առ այլ ինչ, զողջոյք են 'ի հայրենեաց։ Աղէ, եթէ ծարաւի լցէք արեան, և ոչ ժուժկալիցէք հասանելոյ հռովմայեցւոց, դարձուցէք զղէնս ձեր 'ի յիս. շատ իսկ կեցի, լաւ լցէ ինձ մեռանել այսուհետև քան տեսանել զքաջազունս և զեղբարս զի պատրաստին խողխողել զմիմեանս։ Հարէք զմիմեանս Պարսք, այլ նախ լուարուք ինձ. հաւասար է ձեզ քաջութիւն, ազգաւ և արութեամբք հանդիսապատուք լրերաց էք երևելիք. և այսոքիկ երկնաձիր պարգևք դրդեն արդ 'ի ձեզ գուպար։ Զի՞նք ձեր զօրավար, և իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ արժանի է զօրավարութեան. կորով մարմնոյ սահմանեսցէ ապա, զոր հաւասարութիւն քաջութեան չկարէ սահմանել։ Ի բարձր 'ի բուն կաղամախուոյս վաղեմւոյ արկցի շղթայ երկաթի. և որ ուրուք 'ի ձէնջ ձգեալ զայն՝ բեկցէ զբուն ծառոյն, կամ մինչև 'ի յերկիր զայն հակեսցէ, նա եղիցի մեզ զօրավար։

Ասաց, և զօրքն առ հասարակ և ժողովուրդն հաւանեալ ծափս հարին։ Մերկացան ասիք ըզղէնս 'ի բաց, և երդուան յաչ Սոփանորի՝ հնազանդել յաղթողին։ Փութանակի շրջք 'ի Պարսից ելին բարձր 'ի կատար կաղամախուոյն՝ պարբաւանդել անդր ուժգնապիրկ շղթայ ծանր և երկայնաձիգ, որոյ լայնատարը օղամանեակք թողեալք 'ի բարձանց ի՛նչանէին ահեղ շկահմամբ մինչև 'ի յերկիր։

Անց Ծերակոյսն բազմեցաւ դատաւոր, հնչեցին փողք, եռուն նշան. և ահա լսելի եղև բարբաւ, և անց 'ի մէջ մանուկ Մարսիկ բարձրադիտակ և վեմ, վայելուչ և հաճոյ աչաց 'ի տեսանել։ Առիւծենեաւ նա պանծալեաւ էր ծածկեալ, որոյ ճիրանք ոսկեղէնք զմիմեամբք առ կրծիւքն ածէին. և կառափն գաղանին, յոր սպիտակ և լուսափայլ ժանիք յերախան տակաւին կային, սաղաւարտաձև 'ի գլուխ մարտկին երեւէր։ Կօշիկք կարճաբերձք կիսամերկ սրունիցն պահպանակք, և յաճառուտ բազկին լախտ ոստախիտ և երկաթագամ։ Իսկ ինքն չքնաղագեղ որպէս զԱպոլոն, խրոխտ և վեհ որպէս զԱրէս, թեթև ընթանայր 'ի մէջ ատենին. և զկայ առեալ անդ յեցեալ 'ի լախտ իւր, և զաչս մեծարանօք զծերակուտին ածեալ, ասէր.

Ցորչափ համարէի, ո՛ հանճարեղ ծերակոյտ, զի խոհականութիւն մանաւանդ և հանճար պատերազմական պահանջին 'ի զօրավարութիւն, ոչ թեկն ածէի զաւագութեանն՝ որում անպատկանաւոր զիս հասակն իմ կացուցանէր։ Այլ զի կորովոյ ևեթ արդ սահմանէք զպատիւն, ահաւասիկ կամ նախանձորդ նմին։ Զկարեմ հանգոյն ոստիցն իմոց ազնուականաց զազդ իմ յառաջ մատուցանել. չեն իմ նախնիք նշանաւորք, ո՛վ Մարսք, այլ առիւծենիս այս, զոր տեսանէք զինև, մեծին Ալկիդեայ էր ծածկոյթ. և 'ի լախտէ աստի վիշապն Լերնեան անկաւ տապաստ։

Ահա պարծանք աղնուականութեան իմոյ, աբիւրթիւն և կորով. ահա իրաւունք 'ի նախանձընդդէմ մրցութիւն։ Զայն հռովմայեցիք դատեսցեն, իսկ զայս դուք ինքնին ով Մարք։

Զայսոսիկ վեհագոյն Լևոնդ բարբառեցաւ, և զօրքն առ հասարակ հարին խրախոյս խնդութեան։ Արկաւ վիճակ թէ որով կարգաւ հնգեցունց ոտիսացն պարտ էր մատչել 'ի հանդէս. Պենթէոս առաջին, ապա Ատոր, զհետ նորա Լիդեր, ապա ԱլՀոն, և յետ ամենեցուն վիճակեցաւ Լևոնդ։

Հարան փողք, և քաջն Պենթէոս բուռն զշղթայէն հարեալ՝ ուժգին զայն տատանէր. այլ բուն կաղամախւոյն կայր անշարժ, հազիւ դագաթան ծառոյն տատանեալ։ Պենթէոս զայրագին զամենայն զճիգն իւր թափեալ ընդ վայր, քրտնալից և թշնամանալից ելիք զշղթայն, և անց ծածկեցաւ յետկոյս զօրացն դնդի։

Ատոր ապա, ցանկալին Ատոր յառաջ մատեաւ. այլ առ բազմատենչ ըղձից աւագութեան ոչ 'ի յուշ ածեալ զմարտուսոյց իւր զԱպոլՀոն կարդալ յօգնութիւն, դժկամակեցաւ սակայն համբակն ապաշնորհ, և եթող զնա 'ի ձեռանէ։ Նոյնհետայն չքնաղագեղին Ատորի նըւաղեաց կէս 'ի կէս զօրութիւն, և 'ի զուր յամառէր ձգել զշղթայն. զի և ոչ սաղարթք ծառոյն բարձրաբերձք տատանէին։

Զայնժամ Լիդեր լի խնդութեամբ 'ի ծառ

անդր յարձակեցաւ, և բուռն հարեալ աջո

կիր, էառ հապճեպ զզէնսն, և յետկոյս կառաց իւրոց ամփոփեցաւ զգենուլ զնոսա։

Մնայր միայն Լևոնդ. յառաջ մատեաւ նա, և այսպէս մատոյց աղօթս Հերակլեայ. Զաւակդ Աբրամազդայ, յուշ լիցի քեզ ասպնջականութիւնն՝ զոր արար ընդ քեզ հաւ սիրելոյն իմոյ Կամիլլեայ. Հայեաց 'ի յիս 'ի դիւցընկէց 'ի բարձանց բնակութեան քո, յակնարկել ևեթ քո յիս՝ լցայց զօրութեամբ։ Թէպէտ և յաղթող, թէպէտ և պարտեալ, ուխտեմ մատուցանել քեզ զոհ։

Եւ իբրև կատարեաց զաղօթսն, նոր զօրութիւն ընդ անդամս իւր զգայր ծաւալեալ։ Եդ զմի յոտիցն 'ի վերջին օղամանեակ շղթային, և երկոքումբք ձեռօք բռւռն հարեալ զշղթայէն ըստ ճակատուն բարձրութեան, և զամենայն զօրութիւնս իւր յինքն ամփոփեալ, կորացոյց զգագաթն ծառոյն դանդաղագոյնս, այլ հուպ ևս 'ի յերկիր քան զոր Աւլոնի խոնարհեցուցեալն էր։ Այն ինչ զյաղթութիւնն զայն կալեալ, յաւել 'ի զօրութիւն. կարդաց դարձեալ զՀերակլէս յօգնութիւն, թողաւ 'ի թափ ուժոյն. ճռնչեաց կաղամախն, և բեկաւ. և շղթայիւն հանդերձ անկեալ մանուկն 'ի յերկիր, ընդ լայնատարած սաղարթախիտ գագաթամբ ծառոյն թաղեցաւ։

Յայնժամ ժողովուրդն առ հասարակ և զօրք բարձին աղաղակ մեծ, և ծերակոյտն յաղթող

ղնա յայտ արար։ Յարեաւ Լևոնդ, և թեթեւակի՛ի բաց ուտուցեալ՝ի դիզադէզ կուտակելոց զնովաւ ուտոցն բեկտելոց, դարձաւ առ զօրականն և ասէ. Զինուորակիցք իմ, զօրավար ձեր եմ, որ երդուայքդ հնազանդել հզօրադունին՝ի մէնջ. այլ զօրութիւն պարտի տեղի տալ իմաստութեան։ Հրամայեցից ես ձեզ, բայց ընդ հրամանաւ Սոփանորի. նորա բազմագոյնս մըղեալ է մարտս քան ուրուք՝ի ձէնջ տեսեալ. նորին հմտութեան անկ է առաջնորդել անփորձ քաջութեանս մերոյ։ Դու Սոփանոր լեցիս մեզ զօրավար, և Լևոնդ լեցի բազուկ քոյին։ Եւ յասելն զայս՝ ծունր կրկնեաց առաջի Սոփանորի։

Յապուշ լեալ Մարաք, համարէին զոք՝ի դէց նկատել՝ի Լևոնդ. և Սոփանորի հեղլով արտասուս՝ի զարմացմանէն, ասէր. Ոչ այդպէս, որդեակ իմ, քեզ անկ է զօրավարել. և զմի արութիւնս ոչ գործիցեն Մարաք, եթէ միւս ոք Ալկիդէս առաջնորդեսցէ նոցա։ Որդեակ իմ, զի դու մեծարեցեր զալիս իմ, տացեն քեզ դիք փոխարէն յաղթութիւնս. զայս քեզ կանխաւ աւետեմ. գոհութիւն դիցն անմահից, զի է տակաւին դոյզն ինչ արիւն յերակունս իմ առ՝ի հեղուլ զայն առ քև, և ազօտ ինչ բարբառ՝ի հագագ իմ առ՝ի հռչակել զգովութիւնս քո։

Պատասխանի ետ նմա Լևոնդ և ասէ. Վասն քո անցի ես՝ի հանդէս, և առ՝ի յաղթանակ քո ետուն ինձ դիք զյաղթութիւն. հապա, անց

'ի գլուխ մեր, աղաչեմ զքեզ և թախանձ արկա-
նեմ. և եթէ աղաչանք իմ չիցեն բաւական, յի-
շեա զի երդուար հնազանդել ինձ, և պատուի-
րեմ քեզ յանձն առնուլ զհրամատարութիւն։

Հաւանեցաւ ընդ բանն Ծերունին, և յանձն
էառ զօրավարել. այլ իշխանակից իւր խնդրեաց
զԼանդ. և զօրքն 'ի ձայն բարձր զերկաքանչիւ-
րոցն հաստատեցին զիշխանութիւն։ Ծերունին
Սոփանոր արկ զիւրև անդէն զրահս վաղեմիս.
հասակ նորա, կերպարան պատկառելի, և եր-
կայնամորուաք ապիտակափայլ մեծարոյ զնա
առնէին. իսկ իշխանակից նորա էր ահարկու։
Երկոքեան միաբան կարդեցին զգունդս, կազմե-
ցին զչու, և նիզակակցաց դէտակն կալեալ մնային։
Եւ ահա պելիդնացիք, ամիտերնացիք և ազգք բը-
նակեալք 'ի Փրենտանիա և 'ի Կարակեն իջանէին
'ի լերանցն Ապենեանց, և դային դումարէին ընդ
Մարսիկս։ Եւ Սոփանոր առ 'ի տալ նշան 'ի չու,
եւ ամբառնալ ընդ օդս դրօշ վիշապաձև զյա-
ռաջընթաց Մարսից 'ի ճակատամարտս։

Բայց հրաշք ահագին եղեն խափան, զար-
հուրեցուցեալ զզօրսն առ հասարակ. քանզի ար-
ծուի ընդ օդս երևեցաւ, բերելով 'ի մագիլս իւր
անողորմն վիշապ ահարկու, որ արիւնռուշտ և
ոգեպառ գալարէր և մաքառէր տակաւին՝ զե-
րեքարձեանն սլաք ձգելով 'ի հարուած հաւուն
Արամազդայ։ Բանակն ամենայն անշարժ և ան-
բարբառ կայր ակնկառոյց՝ տեսանել զելս մար-

տի նոցա. այլ յետ վայրկեան ժամանակի յաղ-
թող լեալ արծուին արկ թափանց զկտուցն ա-
մեհի ընդ ժանդաւ թեւիս ոտիսին, և գէշ զնա
էարկ 'ի մէջ գնդացն Մարսից։

Գոյժ չարագուշակ զօրացն պատրաստելոց 'ի
պատերազմ։ Բայց Լևոնդ իբրև ետես զնոսա
զի այլագունէին, բուռն եհար զաղեղանէ՝ որ
անդ առ ական դիպաւ, և ելիշ 'ի յարծուին յաղ-
թական՝ հետազօտելով զշաւիղս նորա ընդ ամպս,
ձգեաց նետ պողովատիկ, և ընկեցեալ զնա առ
ոտս իւր, ասէ. Այսպէս հարից զարծուին հռով-
մէական, այսպէս խնդրեցից զվրէժ ազգաց՝ զորս
նա նուաճել կամի։ Մի՛ և ես երկնչիք, ո՛վ մար-
սիկք. հաւ քաջ՝ արդարութիւն է պատերազմի։
Դուք 'ի վերայ հայրենեաց մարտնչիք, Հռոմուլ
վասն փառասիրութեան։ Ի չու, ընդ ձեզ են
պատերազմակից դիք։

Ի բանից ասի և 'ի քաջութենէ փարատե-
ցաւ երկիւղ ամենեցուն. և քաջալերեալ Մարսք
խրախոյս ստէպ ընդ երկինս հարկանէին, ան-
պարտելիս ընդ Լևոնդեայ զինքեանս համարեալ։
Եւ բանակն լի յուսով և խնդութեամբ յառաջ
խաղայր, զբազում օթևանօք զանց արարեալ։
Եւ ահա եհաս առ հռովմայեցիս 'ի Լուկենեան
դաշտին, զոր 'ի հիւսիսոյ և յարևելից սահմա-
նեն բլուրք, և յարևմտից և 'ի հարաւոյ անտառք։
Որոց տիրեալ Հռոմուլ, յեզերս նոցա կարգեալ
էր զզօրս իւր 'ի ճակատ, իսկ Սուխանոր և Լևոնդ

եկին բանակեցան 'ի ստորոտս լերանցն, յայնկոյս գետոյն Փոկինեայ՝ որ անջրպետէր ընդ երկոսին բանակս։

Փութանակի Հռոմուլ էջ յերգր գետոյն, գիտել զդիրս թշնամեաց, և լրտեսեալ զվայրն՝ զոր ունէին, համբարեալ զայն ընդ իւրումն. զնեաց զդաշտն, յուշի կալաւ և զթուսի իսկ փոքրիկ. եւ չափել զխորութիւն Փոկինեայ գետոյ, և հետազօտել զհուն՝ ընդ որ անհրկեան մարթէր անցանել։ Եւ ակամաւոն վստահ լեալ ընդ զինուութիւնս իւր, դարձաւ 'ի բանակն. և ժողովեալ զամենայն զօրսակոս, ասդ ասար նոցա զի 'ի վաղիւ անդր 'ի ծագել այգուն՝ ճեայր նոցա անցանել ընդ գետն։ Յապուշ եղեն զօրապետքն. բայց Հռոմուլ սուղ բանիւք խնդամուտ արար զնոսա 'ի հնարս յարձակմանն, ուր իւրաքանչիւր ումեք 'ի նոցանէ պարտ էր մղել պատերազմ, ուր ածել ձգել զթշնամին, զինչ 'ի յաղթելն գործել, և յինչ 'ի պարտելն լինել ապաստան, ցուցանելով նոցա զամենայն ինչ կազմ և պատրաստ յանշուշան յաղթութիւն, և զամենայն նախահոգ խնամս կալեալ ընդդէմ արկածից պարտութեան։

Զօրավարքն նորա հինաւուրց զարմացեալ կային. իսկ նումա յարբեցութենէ խնդութեանն չկարէր ծածկել զկիրս իւր։ Եկն եհաս օրն, որում 'ի բազմաց հետէ ուենչայր. օրն բարեբաստիկ, յորում մարթէր նմա ցուցանել զանձն արդ-

ժանի սիրոյն Հերսիլեայ։ Որացաւ ամենեին տարփաւոր'ի կայս Սաբինաց, անց ընդ խորանս նոցա՝ կոչելով յանուանէ զզօրագլուխս իւրաքանչիւր և զվինաւորս։ Աղդ առնէր նոցա զպատերազմն, զիրկս արկանէր նոցա, զգուէր զնոսա, 'ի համար արկանէր զժամն՝ որ մնային մարտին. և առ բարբոք եռանդեանն գանդատէր զՀռոմուլեայ՝ թէ ընդէր ոչ անդէն առժամայն փորձ փորձէր անցանելոյ ընդ գետն։

Մինչդեռ նստան 'ի յոյզս կրկին թողեալ զառաջանէր, եռեռ չկատարի զօրաց Հռոմայեցւոց մտեալ 'ի բանակն, որք 'ի գիւղ ուրեք յղեալ էին յաւարառութիւն. և առաջ, կարի յոյժ յաչկողեալ արշաւանք նոցա։ Ամէն արտաւարքն ընդ իւրեանս կանայս, մանկունս, և ծերս. և ձեռք եղկելեացն կապեալք 'ի յետկոյս՝ զնային զվարակոր, և աչք նոցա տխուրք ողողեալք յարտասուս։ Մայր և դուստր և փեսայ ահիւ յիրեարս ակնարկէին, և ոչ խշխէին բարբառել ընդ միմեանս. զուր չանային մատչել առ միմեանս, և յիրար խառնել զարտասուս իւրեանց. զի զինուորքն վայրենիք չներէին նոցա զդոյզն զայն ախոհութիւն, ատիպէին սպառնալեօք զդանդաղաքայլ գնացս նոցա, մղէին զնոսա բնիւ նիզակացն, և մերթ ևս արիւնաշաղախ երկաթովն։ Խուժադուժ որեար, անողորմագոյն 'ի գերին քան յանասունս՝ զորս խառն'ի խառն ընդ նմա ածէին. կռփահարէին զծերս և զկանայս, և խր-

նայէին 'ի խաչինս և յարչառս՝ զորս 'ի նոցանէն յափշտակեալն էր։

Ոչ կարաց Նումա ժուժկալել ընդ ողորմ տեսիլն. եթող զամենայն, մոռացաւ զամենայն, առ 'ի հաստանել յօգնութիւն եղկելեացն։ Ահա հասեալ էին նոքա 'ի խորանն արքունի, ուր խառն ընդ գունդս զօրաց մնային հրամանին, որ զբաղդ նոցա սահմանելոցն էր։ Հաս անդր Նումա, և անկեալ յոտս Հռոմուլեայ՝ ասէ. Տէր արքայ, տես զեղերունս՝ որ գործին յանուն քո, հայեաց յեղկելիսդ 'ի շղթայակապս 'ի թշնամանէն ալիցս 'ի խլեալս յապատանաց իւրեանց։ Եւ զինչ մեղան դոքա, որ ոճիր է դոցա։ Ա՛հ, անկցին թշնամիք քո տապաստ, զենցին որ հակառակ կան քեզ, ճապաղեսցի արիւն 'ի ճակատամարտս՝ ուր անասդատանելի կացուցանէ վտանգ զանդթութիւն. այլ յարձակել 'ի հէքս ապիկարս պաշտպանել անձանց, այլ յաղթել ծերոց և կանանց, և ոանհար լինել ընկճելոց, վատութիւն է, և անդթութիւն՝ որ զդիցն անմահից կոչէ 'ի վրէժխնդրութիւն զատուածատաստ պատուհաս։ Պատուածորդիդ դու, արա իրաւունս. ազատեա զդերիդ, արձակեա զդոսա 'ի տունս իւրեանց, և հատո դոցա...

Եւ մինչ դեռ բանքն 'ի բերան Նորա կային, ասէ Հռոմուլ. Ողորմիմ 'ի տգիտութիւն քո, մանուկ դու. դերիդ այդ և խաչն ոչ են իմ, այլ զօրաց իմոց. այդ մրցանակ է քաջութեան դոցա

և վաստակոց և արեան։ Առաւել պարտ է ինձ գոլ արդար առ զինուորակիցս իմ, քան ողորմած առ թշնամիս։ Պարտ է ինձ բաժանել զդերիս 'ի զօրապետս բանակիդ, և նոցա ապա անկ է առնել ընդ նոսա զոր կամին. և որպէս զի մի լիցի տեղի դանդաստանաց, վիճակաւ սահմանին բաժինք։

Կրկնեալ անդրէն Նումայ ասէ. Քաջ է, և ինձ ապա անկ է բաժանորդ գոլ աւարին որպէս զայլս 'ի զօրապետաց։ Հռոմուլ ասէ. Եւ կարի խակ քաջ։ Յայնժամ ածաւ 'ի մէջ սաւոր վիճակացն. և մատեան անդր զօրապետք խառնել 'ի ման աւարին, որպէս շունք ամենեքիք դիմեալք 'ի կերակրել զերդիս մատաղ, որք ակն ածեն յորոյն՝ ցորչափ տէր իւրեանց առընթեր կայ, այլ արիւնուռչտ աչօք բերանաբացք շընչապատաք առ խոնջ արշաւանացն և առ խնդութեան, ճեալով մատնելոյ նոցա որոյն։

Բայց Դեմեարէ խնամող Նումայ, որ 'ի բարձանց երկնից բերկրէր ընդ մարդասիրութիւն նորա, ինքնին խակ ուղղեաց զվիճակսն, և փարթամագոյն եհան պատանեւոյն բաժին։ Եւ առեալ Նումայ զգերին իւր և զվաշն և զարջառ, դիմեաց յանտառախիտս՝ որ շուրջ զդաշտին էին. և կանգնեալ անդ բադին հողակոյտ դալարագեաց, և փայտ զնոսաւ ածեալ յողջակիզումն զոհին, ընտրեաց երինջ ապիտակ. հեղ կաթն յեղջերամէջս նորա, եղեն զնա, եդ բո-

վանդակ 'ի փայտակուսին, և մինչև հուր հարեալ գնանէր, զայս Դեմետրեայ մատուցանէր աղօթս. Դուստր Դիոյ, քեզ զզոհս զայս մատուցանեմ. այլ եղուկ զինեւ, եթէ արեամբ ենթի երնջոյ համարիցիմ. քանզի արժանի լինել օգնականութեան։ Քան լիցի, ոչ 'ի զենմունս անուանոց հաշտ առնին զիր. հիրի ուրուք ախտիմն յոյժ առաւել հաճոյ է նոցա քան զհարիւրեղն զատարագ։ Ընկալ ապա, ո՛ Դեմետրէ, նուէր քեզ արժանապոյն։ Եւ զարձաւ առ զերին, և ասէ. Շնորհեմ՝ ձեզ ազատութիւն, ուր հէր.ք և թշուառք. կոչապանցայք յընչից ձերոց, ընկալարուք որ ինչ ունիմն, ձեզ լիցին խաշինքս և անդեայք. բաժանեցէք զդատս 'ի ձեզ, զարձարուք 'ի տունս ձեր, և օրհնէցէք զԴեմետրէ, զի նա է ձեր ազատարար։

Իսկ հիրացն զայսոսիկ լսելով, թուէր նոցա երազել. և յանկարծս կային ձեռնամուծք և բերանաբացք։ Եւ մինչդեռ խօսէին նմանս, էջ բոց յերկնից զդղեալ նորա, և երիցս շրջան առեալ զմարմնովն՝ ցոլացաւ ելոյց զիւղատեղոյս զոհին։ Բորբոքեցաւ խարոյկն, և ճաճանչաւէտ անուն բոց երկայնաձև ամբարձեալ արտանդատաւ ընդ երկին, փեռեկեաց զամպս, և վահան ոսկի էջ անկաւ առ ոտս նմանց. և ահա բարբառ ահեղ արարէս զքանեակի մեծի, որ ասէր. Որ ունի զվահանդ, լիցի անապարանելի. խնամակալ են քեզ դիք, նոմա. ոչ որ հաճոյ

է նոցա և ոչ որ նեմն, բայց որ մարդասիրէն։ Յայնժամ ընկին որոմունք, և եղև խաղաղութիւն ընդ երկին. յաճիւն զարձաւ ողջակէզն, և բուրումն ամբրոտական շուրջ ծառայեալ հանմարիւռ՝ առատածաւոս բարբառոյն լինէր առհաւատչեայ։

Նոմա, որ մինչև ցայն վայր տարածեալ կայր ընդ երկիր, յարեաւ յառն եկայ, և զդայր 'ի արտի զբազդր բերկրանս՝ զոր բարեգործութիւն թագուցեալ զհետ իւր։ Զնոսա զառաջին երկնառաք, և էր այն յանկոյ արդոյ՝ յօրինեալ 'ի քանդակ թրակացի. և հրաշագան ճարտարութեամբ զրուագեալ 'ի նեմ ամենայն անցք թագաւորութեանն Աստուծոյ, զերապանած այնր թագաւորութեան՝ որոյ յիշատակ առաւել քան զայլոցն ամենեցուն եղծեալ է 'ի միտս մարդկան, զի զերազոյն 'ի մեռացուն անկանէին բարիք։ Աստ ժողովուրդ ապաքուկ 'ի սահմանակից ժողովրդենէ ընդունէր զկէս հանիրաց նորա. անդ երդարք 'ի միտսին հանէին 'ի ժառանգութենէ իւրեանց բաժին 'ի սուցուած անդոյ 'ի յապրուստ արդոյ՝ որ ընդ ապառաջ եկանէր նոցա. և հետագոյն ուրեք ասուտէր արդասիքն հանդերձ 'ի հունձս արարեալ, խլէր զաղբս հասկս յարայեց և արկանէր զճանապարհայն՝ ընդ որ հասկաբարդք շրջէին։ Եւ ամենայն իսկ ուրեք ապարն երկնառաք յանդիման առնէր բարեգործութեան և առաքինութեան. ազգ իմն այսպէս ճարտարին անմահի աներկ-

բայապէս առնելով, զի 'ի պատերազմունս մանաւանդ 'ի դէպ է մարդասիրել։

Մինչդեռ Նումա հիացեալ զարմանայր ընդ հրաշակերտն, զերին ազատեալ՝ դարձէր առ ուս նորա տեսարան արժանի 'ի յասպար անդր քանդակելոյ։ Ի ծունր իջեալ առաջի Նումայ, բազկատարածք ընդ երկինս, արտասուք և հեկեկանք յայտ առնէին զշնորհապարտ գոհութիւն իւրեանց և զխնդութիւն։ Մարք 'ի վեր զաղայս ամբառնային, ցուցանելով նոցա զազատարար իւրեանց. հարսունք մատչէին 'ի համբոյր քղանցից նորա. ծերք ուրուարէին նմա զեւս բարեբաստիկ յաջողութիւնս, և ամենեքին առ հասարակ օրհնէին զնա արտասուք։ Եւ երիցագոյնն 'ի ծերունեաց անտի հերձեալ զամբոխն՝ յառաջ մատեալ, և յեց 'ի ցուպն ոստոյից՝ խօսեցաւ առ Նումա և ասէ.

Մանուկ դու, ընկալցիս 'ի դից որ ինչ արարեր մեզ բարիս. չիք երբէք արարեալ մեր թշնամութիւն ընդ ժողովրդեան քում. հոլովք եմք աղքատք բնակեալք 'ի լերինս բարձունս՝ որ բաժանեն ընդ մարսիկս և ընդ հերնիացիս, ազատք յերկոցունցն իսկ յապդայ, և հարատահարեալք յերկաբանչիւրոցն ստէպ։ Ծանուցաք իսկ մեք զայս զօրականին Հռոմուլեայ. այլ նոքա որպէս ընդ թշնամիս վարեցան ընդ մեզ, թէպէտ և գիտէին քաջ զի չէաք թշնամիք. իսկ դու թշնամիս զմեզ դիտելով, որպէս ընդ եղբարս ընդ

մեզ վարեցար։ ԵՐԹ ապա, և հոլանաւոր լի-
ցին քեզ դէզ. և եթէ փորձեացեն ևս նորա
զքեզ, այլ դու լիցիս աննկուն։ Ողջամբ մնա, և
յիշեալքիր դու զհռէացիս, զի այս անուն է մեր.
եթէ երբէք եկեացես 'ի լերինս մեր, լուիցես 'ի
բերանոյ մանկանց տղայոց մերոց՝ զՕրհնութիւնս
Նումայ։

Եւ զայսոսիկ ասացեալ Ծերունեոյն, չոգաւ
կալ վերատեսուչ բաժնի շնորհելոցն 'ի Նումայ
անդէոց՝ զորս հռէացիք բաժանէին յիւրեանս.
և դիւցազն պատանին խոյս տուեալ 'ի շնորհա-
կալեաց նոցա, բառնայր զվահանն ոսկի, և մը-
տախոհ դառնայր 'ի բանակն։ Զի զՀերախլեաւ
միտք նորա յածէին, և սիրտ նորա լի յուսով և
խնդութեամբ՝ թողանայր բոլորովին 'ի բերումն
սիրոյ։ Դառնայր նա, և իբր բռնի մղեալ եր-
թայր 'ի խորան անդր օրիորդին դաւեր արքայի,
և հաւեալ անդր, չիշխէր ընդ սեամն նորին ան-
ցանել. զկայ առնոյր, հառաչէր, և զանդիտէր
յառաջ ևս մատչել։ Պատանին քաջամարտիկ
պատպարեալ ապարատն անպարտելի, պատա-
նին այն դիւցազն՝ որ խրախուսէրն դիմել աներ-
կիւղ 'ի բանակ թշնամեաց, չիշխէր 'ի վեր առ-
նուլ զծիրանածուէն վեղկ խորանի սիրուհւոյն։

Այլ ուր ուրեմն 'ի վեր առեալ զայն, և աչք
նորա երկչոտք՝ խնդրէին զօրիորդն. այլ նա ոչ էր 'ի
խորանի անդ։ Համարձակութիւն անտի առեալ
պատանեւոյն, յառաջ մատչէր աներկեղագոյն.

եմուտ յապաստան անդր, և ամենայն ուրեք թուէր նմա տեսանել զՀերսինիա. ասա զրահք նորա և գեղարդունք և աղեղն անկեալ դնէին, և անդ քնար ոսկի և հանդերձք նորա և առիւծենին՝ յորոյ վերայ ննջէր։ Կառեաւ եկաց Նումա անշարժ. չիշխէր հպել յորս տեսանէրն, և չկարէր զաչս իւր յայնցանէ 'ի բաց դարձուցանել։ Նուաղումն քաղցր՝ զզգայարանօք նորա անկեալ, ոչ ևս կարէր կալ յոտին. նստաւ զդողանի հարեալ 'ի բազմոց Հերսինիայ, և ընչէր զօդս առ 'ի նմանէ շնչեալս, և արբեցեալ նոքօք, և զառանցեալ 'ի մտաց, և հեղձամղձուկ լեալ, ինչուցանէր հեղեղս ջերմջերմս արտասուաց։

Եւ ահա յանկարծ ամբառնային աղաղակք 'ի բանակի անդ, և փողք հնչէին, և շուինդն ահագին լսելի լինէր 'ի թևէ՝ ուր էրն Հռոմուլ։ Ինքն իսկ Հերսինիա խառվեալ և հերարձակ՝ հաս 'ի խորան իւր, գոչելով. Ի զէն 'ի զէն. յաւիշտակեաց զսաղաւարտ իւր և զգեղարդունս, և մինչ անվահան և անզրահ փութայր դարձ առնել 'ի պատերազմ, արգել զնա Նումա ասելով. Ո՛ արքայազն օրիորդ, փութացայց ես սպառազինել զաբինացիս. այլ դու դէթ զվահանս զայս ընկալ, զպարդեւ հզօր դիցուհւոյ. 'ի պատրաստարել սորա զքեզ, պաշտպանեսցէ զկեանս իմ։ Ասաց, և առանց մնալոյ պատասխանւոյ՝ եթող նմա զվահանն երկնաւաք, և սլացաւ 'ի խնդիր քաջացն իւրոց զօրաց։

Բայց զաղմուկն զայն Լևոնդեայ արկեալ էր 'ի բանակ անդր, զի յորմէ հետէ տեսանէր նա մերձ զՀռովմայեցիս, երկնէր 'ի մտի՝ դիմել 'ի վերայ նոցա նախայարձակ։ Խօսեցաւ առ իշխանակից իւր և ասէ. Իմաստունդ Սոփանոր, անշուշտ առ վաղիւ Հռոմուլ 'ի վերայ մեր յարձակեսցի. կանխել քան զնա 'ի յարձակումն փառք են մեզ։ Ընդ ծագել աստեղն երեկորին՝ ելից ես 'ի բանակէս երեք հազար արամբ, անցից ընդ գետոդ 'ի լոզ, և ածից բոց և մահ մինչև 'ի խորան անդր Հռոմուլեայ. և եթէ յաջողութիւն զխորհուրդ իմ պսակեսցէ, 'ի կարևորագոյն ևս մտաբերեցից 'ի խորհուրդ։

Գիրկս էարկ նմա Սոփանոր, և ընթացաւ 'ի միասին ընտրել երիս հազարս 'ի Մարսից. զինեաց զնոսա կարճ սուսերօք, և սաղաւարտս անցրցունս եդ 'ի գլուխս նոցա, և զրահս սեացեալս 'ի ժանգոյ. և պանծացոյց նոցա զփառս գնալոյ ընդ Լևոնդեայ 'ի պատերազմ։ Այն ինչ խաւար ծածկեաց զերկիր, չու արար ընդ նոսա Լևոնդ 'ի վերկոյս գետոյն. և անցեալ ընդ այն, կարդեաց զնոսա անդրէն 'ի ճակատ, խրախուսեաց զնոսա, զարթոյց 'ի նոսա եռանդն, և զիւրն զամենայն ազդեաց 'ի նոսա զանվեհեր յանդգնութիւն։ Եւ զօրքն քաջամարտիկք կուռ ընդ միմեանս պնդեալք, անձայնք և անշշունչք, վրատահք 'ի յաղթութիւն ընդ քաջ զօրավարաւն, ընթանային թեթև և արագ 'ի կողմն՝ ուր բանակէրն Հռոմուլ։

Հասին 'ի յառաջապահս, և մինչև նոցա աճապարեալ 'ի դիմամարտ՝ սրակոխ արարին զնոսա. և որ զհետ նոցա բանակեալ զօրք, զնոյն կրեցին բախտ։ Անծանօթք և անխափանք հասին մերձ 'ի խորանս արքային հռովմայեցւոց. և մեծագոչ աղաղակաւ տապաստ արկանէին որոք և ընդ առաջ լինէր նոցա, և մինչև 'ի խորանն արքունի զնախճիրս և զարհաւիրս ածէին։

Հռոմուլ 'ի յարձակումն վաղուին խորհէր յայնժամ 'ի խորանի իւրում. և ընդ նախկին շուինդն ընդոստեաւ, եդ ունկն, և մռնչեաց առ զայրոյթ՝ զխրախոյս յաղթականացն լսելով։ Կատաղեալ ընդ յեղակարծ յարձակումն բարբարոսացն, ած հապճեպ զսաղաւարտ 'ի գլուխ, առ զսապար իւր և զեղարդունս երկուս, և դիմեաց 'ի նախճիրս անդր արեանց։ Թռեաւ, հար, ձայն եւ, և որոտագոչ բարբառ նորա հնչեաց մինչև 'ի ծագս բանակին. խուռն դիմեցին անդր զօրականք քաջք, Որատ, Միսէն, Բրուտ, Ա-բաս, սպառազէնք, և գտին զարքայն քաջազօր մենամարտս ընդ թշնամիս։ Վաղ իսկ 'ի շանթաձիգ ձեռանէ նորա տապաստ անկեալ և զփուշի խածանէին արին Ոփելտ, կորովին ԱլՀասատոր, Սոփարիս և Կորինէ։ Իսկ Պենթէոս, հէքն Պենթէ վախճան կենաց իւրոց առնէր պարծանաք հարուածոյն Հռոմուլեայ. գեղարդն նորա անց ընդ գրահ արքային, և արքային գեղար-

դէն անց ընդ սիրտ պենթէոսի։ Յապուշ եղեն Մարսք, և շինչաւ եռանդն նոցա. ոչ ևս յարձակէին, այլ պաշտպանէին ևեթ անձանց. խուճապեալք ամենեքեան, խնդրէին զԼևոնդ, և զնըմանէ հարցանէին։

Իսկ Լևոնդ, որ մինչև 'ի խորան անդր Հռոմուլեայ միջամուխ լեալ էր, դարձեալ յայնժամ եկն 'ի յայտ անդր, լախտ 'ի միում ձեռին, և խուրձ 'ի միւսումն բոցավառ։ Կառեան 'ի տեսիլ նորա հռովմայեցիք. և Մարսք խրախոյս խնդութեան հարին. խոյացաւ նա հանդերձ նոքօք խրոխտաղոյնս, հուր զվրանացն հռովմայեցւոց հարկանելով. ճարակէր բոցն զայրագին, բորբոքէին փեղկք խորանացն, և կայմք ճարճատէին։ Իսկ Լևոնդ դանդաղ զհրդեհին համարեալ զաւեր, յաճախէր զայն 'ի հարուածս լախտին։ Յարձակեցաւ ընդ բոցն, տապաստ արկ զԱքաս և զՄասիկ և զՏիբուր։ Տալաս ինքնին անկաւ ընդ հարուածովք նորա, իսկ արին Միսէն արդեալ զնա վայրիկ մի, այլ ապա առաթիւր հարաւ 'ի նմանէ։ Լևոնդ հուր և մահ շուրջ ածէր, և 'ի բոց հրոյ բանայր իւր ճանապարհ։ Այսպէս ուղխ բոցեղէն իջանէ 'ի ծայրից Եանայ, և 'ի յորձանս ահագինս հոլովեալ ընդ դաշտ՝ ծախէ, եղծանէ, և աղխաղխելով առեալ տանի ընդ իւր զվէմ զծառ և զժայռս, և ծածկէ հրաւառ ալեօքն որ ինչ յանցս իւր գտանէ։

Իբրև զայն եռեաս Հռոմուլ, շկահեաց զնեռս իւր 'ի կապարճից, և զլայնատարը վահանն արկեալ զուսովք, անց ընդ նախճիրս արեանցն՝ զդէմ ունել Լևոնդեայ։ Հաս առ նա, կամէր բարբառել, և զայրոյթ հեղձամղձուկ առնէր զբարբառ նորա. զնեռաց զնա փայլակնացայտ աչօք, և խնդրէր ընդ որ զհարուածն կշռել. և ճօճեալ զատուարագոյնն 'ի գեղարդեանց իւրոց, և զամենայն զօրութիւնս իւր յինքն ամփոփեալ, ձգեաց զայն ընդդէմ ոտիին։ Ցեղի արդեօք հարուածոյն տայր մորթ նեմեան առիւծուն, և զրաւ արդեօք նահատակութեանց դիւցազին պատանւոյն առնէր հարուածն ահագին, այլ գեղարդն Հռոմուլեայ դիպաւ 'ի լախտն ծանրակիր՝ որով Լևոնդ սատակէրն զհռովմայեցիս. թափ ընդ ոտս նորին և ընդ գամս երկաթիս էանց, կառեաւ 'ի լախտն, և արկ զնա ընդոտս յերկիր 'ի ձեռաց ոտիին։

Լևոնդ կապտեալ 'ի զինուցն, զկայ էառ. և աչս ածեալ զիւրև, եռեաս անդ ժայռ անհեթեթ՝ զոր ոչ ումեք հնար էր բառնալ անտի, և որ 'ի նշան սահմանաց երկրագործացն կայր անդ. բուռն եհար զայնմանէ, խլեաց, ամբարձ 'ի վերոյ գագաթանն, և ձգեաց զայն ուժգին յոտիս իւր։ Հարաւ Հռոմուլ, և անկաւ ընդ ժայռիւն. անդր դիմեցին զօրականք նորա, և բարձին զնա, այլ նա ոչ ևս կարէր կալ յոտին. ջաղջախեալ յահագին հարուածոյն, արիւն թռուխ և թանձր

ժայթքելով, գլուխ 'ի վայր անկեալ, բաղուկք 'ի յերկիր կախեալ, անզօր, անշարժ և կիսամեռ՝ ածաւ 'ի խորան իւր 'ի պահու՝ յորում Հերսինիա և նումա հանդերձ սաբինացւովքն հասանէին նմա յօգնութիւն։

ԵՈՒՄԱ ՊՈՄՊԻԼԻՈՍ

ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՆԱԽԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՐՈՑ

Հերսիլէայ ընդ Նումայ հալածէլ զՄարսիկս, և նահանջէլ Լէոնդէայ յեռս։ Ամրացուցանէլ Հռոմուլէայ զբանակ իւր. և այլ ևս նահատակութիւնք Լէոնդէայ։ Գումարէլ Մարսից ընդ սամնիացիս, և Հռոմուլէայ կոչէլ ժողով։ Դիմէլ գնալ Նումայի տիրէլ 'ի կիրճս արեբանեան լերանցն, և գտանէլ նորա 'ի լերինս անդ ազգ բարեկամ։ Պարտութիւն Մարսից 'ի կիրճս անդ, և մենամարտ Նումայ ընդ Լէոնդէայ, և մեծանձնութիւն Նումայ։ Զգոյժ առեալ նորա զմօտալուտ մահուն Տուլլիայի, թողուլ զամենայն, և փութալ առ նա։

ՆՈՒՄԱ ՊՈՄՊԻԼԻՈՍ

ԳԻՐՔ Ե

Որպէս ժայռ անհեթեթ զերծեալ 'ի գագաթանէ լերին՝ ահագին գլորմամբ վայրաբերի 'ի հովիտ, և գահավէժ հոլովմամբ յաւելեալ 'ի թափ՝ խորտակէ և ընդ իւր առեալ տանի որ ինչ և գտանէ. յաւէրժհարսունք և տուարածք ահաբեկեալք, մեծագոչ աղաղակաւ խուսեն 'ի բաց. խաշինք վայրավատինք 'ի հովիտ անդր գաբահոսեալ դիմեն. զդողանի երկրագործն հարեալ, կասէ անշարժ՝ սասանեալ յարհաւրացն. իսկ ժայռն 'ի թափ իւր ուժգին հանդիպեալ կաղնեաց ոմանց կորովեաց մերձ առ միմեանս կանգաղելոց՝ որոց արմատք նոցա և բունք 'ի դարէ հետէ ընդ իրեարս իցեն կռուեալ, զկայ առնու. ժուժկալեն կաղնիքն հարուածոյն՝, և հովիւք հանդերձ խաշամբքն զերծանին 'ի վտանգէն, այսպէս Լևոնդ զկայ առնոյր 'ի հանդիպելն Հերսիլեայ և Նումայ։

Ամազոն խրոխտապանծ զինեալ երկնընկէց ասպարան՝ դիմեաց նախայարձակ, գոչելով առ նա. Խուժադուժ դու, զքեզ Արամազդ մատնէ 'ի ձեռս իմ, ահա ժամ քոյին օրհասական. Երթ պանծացիր 'ի սանդարամետս ընդ վիրաւորեալ քո զՀռոմուլ։ Ասաց, և ձգեաց զօրութեամբ ուժոյ զգեղարդն ոստալից. այլ զայրագին կատաղութիւն վրիպեցոյց զձեռն նորա. թռեաւ երկաթն, անց առընթեր Լևոնդեայ, և հարաւ 'ի կորովին Տելոն՝ որ յայնմ վայրի կողոպտէր զԱրոնկ։ Լևոնդեայ անխռով խլեալ զգեղարդն 'ի վիրացն Տելոնի, և հայեցեալ ընդ Հերսիլիա դառն ժպտանօք, ասէ. Դարձուցանեմ զզէնդ 'ի քեզ, զի ուցիս քաջ ևս զայն 'ի կիր արկանել։ Եւ զայս ասացեալ, ձգեաց ուժգին յօրիորդն զգեղարդն։ Յայնժամ Նումա արկ զանձն սիրայորդոր առաջի երկաթոյն. չեղև իսկ նմա յուշ զի վահանն երկնառաք պատսպարարէր ըզկեանս օրիորդին, այլ թուէր նմա իրան իւր ամրագոյն պատսպարան։ Ի կուրծս անդր նորին եկն հարաւ գեղարդն. ծայր նորա անողորմ անց ընդ ոսկին և ընդ պղինձ փայլունակ զրահին, և հերձ իսկ զկող արիասիրտ տարփաւորին, դոյզն ինչ ներկուած ծիրանեգոյն ընդ զէնսն ծաւալեալ։ Նումա իբրև ետես զհոսումն արեանն, 'ի Հերսիլիա անդէն սլացան միտք նորա. որչափ ահագին էր հարուածն, այնչափ ևս առաւել գոհանայր զդէց՝ զի զերծուցին յայն-

մանէ զսիրուհին իւր։ Բայց կիրք սիրոյ տեղի ե-
տուն ըղձից վրէժինդրութեան, և խոյացաւ նա
ընդդէմ Լևոնդեայ. այլ 'ի խառանէ մարտին ան-
ջըրպետեալ՝ խնդրէին ոտիք երկաքանչիւր զմի-
մեանս ընդ երկար, և ոչ կարէին գտանել։

Յայնժամ նումա յարձակեցաւ 'ի վերայ
Մարսից, և արկանէր զնոսա տապաստ ընդ հա-
լուածովք որպէս որայս ընդ գերանդեաւ։ Ա՛ռըն-
թերակաց միշտ Հերսիլեայ, հարկանէր աջովն
զթշնամիս, վանեալ ձախովն զհարուածս՝ որ
սպառնային օրիորդին Ամազոնի։ Իսկ օրիորդն
անձնատուր 'ի զայրագին կատաղութիւն, եւ
ճարակ սուսերին զՈկրէս, զՈպիտեր, զՍորակ-
տոր և զմանուկն Ա՛ֆմերոն, զմիակ յոյս, զմիա-
մօր ուստր հիքին Ա՛ֆմերիայ, զորոյ գուշակեալ
իսկ էր զաղէտս գորովագութ ծնողին։

Զի 'ի զօրաժողով լինել Մարսից ընդդէմ
հռովմայեցւոց, Ա՛ֆմերոն մանուկ չորեքտասան-
ամեայ փախեաւ 'ի մայրենի տանէ՝ գնալ խառ-
նել 'ի բանակ անդր։ Եւ 'ի չու առնել բանակին
մայրն տառապեալ շրջէր 'ի խնդիր որդեկին, և
հարցանէր զնմանէ զամենեսին՝ որոց պատահէրն։
Եռեռ զնա մանուկն Ա՛ֆմերոն, և կամէր խուսել
ծածկել յեռ կոյս զօրացն. այլ ո՛ւր ոչ հասանէ
ակն մայրենի. եռեռ զնա Ա՛ֆմերիա, հաս առ
նա, գիրկս էարկ նմա, եթաց զնա արտասուօք։
Եւ մինչ Ա՛ֆմերոն այլագունեալ, և ակնկոր 'ի
յերկիր՝ չիշխէր գլուխ 'ի վեր ամբառնալ յեր-

կիւղէ կշտամբանաց մօրն, նա հեկեկելով ասէ. Որդեակ իմ, սիրեցեալ որդեակ, և յոյս իմ միակ, ընդէր խուսես յինէն, ընդէր կամիս լքանել զմայր քոյին. աւաղ, զի՞ գործիցես դու 'ի մարտի. բազուկ քոյին տկար՝ չև ևս բառնալ կարէ զնիզակ, ներոք 'ի քէն արձակեալք հազիւ կարիցեն հարկանել զեղնորթ մատաղ, և դու կամիս գնալ կալ 'ի կշիռ ընդ պատերազմողս անուանիս Հռովմայ։ Ո՛հ որդեակ իմ, սիրեցեալ որդեակ. դէթ մնա մինչև ոչ ևս կարօտանայցես մօր քում, և ապա թո՛ղ զիս, դէթ մնա մինչև կարասցես կեալ առանց իմ, և ապա մեռո զիս։ Արտասուես դու և գիրկս զինև արկանես, և ոչ խոստանաս հրաժարել յանողորմ խորհրդոց քոց։ Եւ դուք ո՛վ Մարսք, ներէք դմա զայդ, և իցէ երբէք լեալ ձեզ մայր։... Տո՛ւք ինձ ապա զէնս, զի զհետ երթայց որդւոյ իմոմ, և կցորդ վտանգաց նորա եղէց. պատսպարեցից զնա մարմնով իմով, և տաց առհաւատչեայ զարիւրթեան՝ զոր սէր մայրենի ազդէ 'ի սիրտ։

Յայնմ օրէ ոչ ևս Ամերիա եթող զսիրելի որդեակն իւր. և Լևոնդեայ, որ զերկոսին ևս սիրէր, պատուիրեալ էր նոցա մի մեկնել յիւրմէ. և 'ի նեռաձիգն լինել մանկանն Ամերոնի, դառնայր պատսպարէր ընդ հովանեաւ մօր իւրոյ և զօրավարին. այլ դժնդակ այն գիշեր բաժանեաց զնոսա 'ի զօրավարէն, և ամենայն Հերսիլեայ հանդիպեալ նոցա, ընդդէմ ամենայն ճգանցն

Ալմերիայ, մխեաց զտուսեր իւր 'ի սիրտ տկար պատանւոյն. և անկաւ Ալմերոն որպէս զծաղիկ մատաղ անդէն 'ի փթիթս հարեալ 'ի գերանդւոյ։ Աչք նորա մինչև փակեալ՝ խնդրէին զաչն մայրենիս. ետես զնա մայրն, և մահակից ընդ նմա եղև առանց հարուածոյ։

Նումա ոչ այնպէս անողորմ, այլ հանդոյն նմին ահարկու, զընդդիմակացս ևեթ արկանէր տապաստ։ Հիսբոն, Մարսեննա և Պրիւերնոս անկան ընդ հարուածովք նորա. Նասամոն և Սերայ'փին խածին զփոշի, իսկ կորովին Լիգեր դարանեալ դիւցազնին՝ իշխեաց ձգել 'ի նա 'ի մօտոյ զբոլորակն, և զրաւեալ արդեօք էր Նումա 'ի կենաց, եթէ ոչ յայնմ վայրի խոնարհեալ էր նորա զգլուխն. հար բոլորակն սայրատուր զՍփինքսին՝ որ զսաղաւարտիւն նորա փայլէր, և արկ ընդոստ 'ի բացէ զկրկնակ ցցունն ծիրանեփայլս։ Յարձակեցաւ Նումա 'ի Լիգեր, և եբեկ զնիզակ իւր 'ի սիրտ նորա։ Զինեալ ապա ահագին տուսերաւն Պոմպիլեայ, եհերձ զգլուխ Որիմանթեայ, հատ զբազուկն Տարքոնի զաջոյ, և արկաւ ստս իւր տապաստ զկուերկենտ. և զհետ մտեալ և խուճապ տագնապի 'ի վերայ հատուցեալ Մարսից, դարձոյց զնոսա 'ի փախուստ, և ձեռնհաս եղև հալածել զնոսա ուր ուրեմն 'ի բանակէն, Լևոնդեայ ևեթ մնացեալ անդ։

Բայց թէպէտ և լքեալ Լևոնդեայ յիւրոցն, ոչ հայէր 'ի միայնութիւն իւր. զի եգիտ նա զլախտ

իւր, և ոչ ևս փոյթ էր նմա զօրաց բազմութեան։ Այլ պատեցան զնովաւ սաբինացիք, և ամենին Ոփենտ յառաջ մատեաւ ահարկու գոչմամբ. Ոչ է սատ ժողով Մարսից, ուր թեքմամբ ծառոյ ընտրին զօրավարք. հարկ է սատ մեռանել, և ոչ զերծանիցիս 'ի ձեռաց իմոց։ Ժպտեցաւ Լևոնդ 'ի լուր բանից, և թեթև 'ի բաց ընդոստուցեալ 'ի գեղարդանէն ձգելոյ Ոփենտեայ, անկաւ ապա 'ի վերայ նորա, և բուռն հարեալ զմիջոյ նորա ուժգնապէրկ՝ հեղձոյց զնա 'ի մէջ աճառապինդ բազկաց իւրոց. և զգետնեալ զնա, եդ զմի յոտից 'ի վերայ ջերաջերմ դիականն. և խրոխտ զգլուխն 'ի վեր ամբարձեալ, հայէր անխռով շուրջ 'ի տուսերս արիւնախանձս՝ որ պատէին զիւրև։ Ընմատոյց յերկիւղէ աչս ածէր նա համարձակ, դիտելով ընդ ո՞ր մարթէր նմա յարձակել. այլ ապա խորհուրդ կալեալ 'ի նահանջ, անկաւ 'ի վերայ այնոցիկ՝ որք փակէին զանցս նորա, ցրուեաց զնոսա, և ջաղջախեաց 'ի հարուած լախտին. և ընկրկեալ տակաւ, որպէս գայլ սովալլուկ 'ի հօտէ խաշանց, երիցս զկայ էառ և դարձաւ, և երիցս վանեաց յետս զդունդս հետամուտս, մինչև եհաս առ իւրան։ Զայն նորա ահարկու կասեցոյց զնոսա, և ժողովեալ զնոսա անդրէն՝ յօրինեաց 'ի ճակատ, և կալաւ միայնակ զվայրն՝ որ անջրպետէր զնոսա 'ի հռովմայեցւոց. և շահատակէր ընդ մէջ երկուց ճակատուցն, միուն պաշտպանելով և զմիւսն վանելով 'ի բաց։

Նումայ զրզռեալ 'ի քաջութեանցն Լևոնդեայ, ընդ որս զարմանայր, խորհեցաւ յարձակել 'ի նա. այլ շուինեղն իմն 'ի յափանց գետոյն հնչեցեալ, դարձոյց անդր զմիտս նորա։ Քանզի ծերունին Սոփանոր հանդերձ զօրքն իւրովք գայր յօգնութիւն նահանջելոց իշխանակցին. փորձէին Մարսք անցանել ընդ գետն փոկին, և Նումայ՝ առ 'ի խափանել զանցս նոցա՝ հարկ լինէր թողուլ զԼևոնդ, և ոտքն ահարկու, հանդերձ մնացորդօք իւրոցն, խոյս տայր անվտանգ'ի բանակէ անտի՝ զոր ելից 'ի նախճիրս արեանց։

Սոփանոր այր խոհեմ, և 'ի բազում ամաց հետէ փորձ 'ի հրահանգս մարտի, կալաւ զզօրս իւր յեզր գետոյն մինչև 'ի սկզբնածագ նշոյլս այգուն։ Իսկ Նումա և սաբինացիք, թէպէտև պարտասեալք յահաւոր զիշերին, կացին մնացին յայնկոյս գետոյն։ Ապա 'ի ծագել արևու՝ Սոփանոր ոչ ինչ յերկուացեալ, զի Լևոնդեայ լեալ էր պարապ կատարելոց զխորհուրդս իւր, ամփոփեաց յետս զզօրս իւր, և Նումա զիւրան էած 'ի բանակ անդր։

Յայնմ հետէ պարապէր նա 'ի վիրաւորս. Մարսիկն և հռովմայեցի, և ամենայն որ՝ որում կեանս կամ սիրելումն մարթէր 'ի դարմանոյ գըտանել, հաւասարապէս վայելէին 'ի խնամս նորա։ Նովին նախանձու և եռանդեամբ՝ որով 'ի ճակատամարտս անդ խնդրէր զախոյեանս քաջս, խիլ արկեալ որոնէր 'ի տեղի ճակատամարտից

զայնոսիկ՝ որոց տակաւին էր շունչ 'ի ռնգունս. ոչ ևս խորհէր 'ի փառս, այլ 'ի մարդասիրել. և ասիք պարտեալք՝ էին նմա որպէս եղբարք։

Եւ յետ սրբազան պարտուցն կատարելոյ, և աներկեան գործելոյ զհանգիստ սաբինացւոցն իւրոց քաջաց, դիմեաց Նումա 'ի խորան անդր Հռոմուլեայ, ոչ ևս յամեալ առ 'ի դարման վիրաց իւրոց. քանզի տեսանել զՀերսիլիա կարևորագոյն ևս թուէր նմա։ Հաս 'ի վրանն արքունիս, և ետես զարքայն Հռովմայ ընկողմանեալ 'ի մորթ ընձու, և պատեալ յարիւնաշաղախ 'ի ծածկոյթս. և առ նմա կային դուստր արքայի և զօրապետք բանակին։ Հռոմուլ առաւել քան զաղէտս իւր հոգալով ընդ կոտորած զօրացն, կայր 'ի տխուր լռութեան. այլ 'ի տեսանելն զՆումա՝ ելոյծ զլռութիւն, բարբառեցաւ և ասէ. թեզ ապատեալ մնայի, պատանի քաջ. զի՞տեմ իսկ զքոյին արութիւնս, զի դու միայն փրկեցեր զբանակ իմ։ Մատիր առ իս, և գիրկս ա՛րկ. փառք քոյին ախտիեն զվիշտս իմ։ Յայնմամ Նումայ 'ի ծունր իջեալ, համբուրեաց զաջ արքայի։ Իսկ թագաւորն ասէ. Յոտն կաց, և արա՛ զոր պատուիրեմս։

Խուժադուժքն յեղակարծում 'ի վերայ մեր հասին, և տկարութիւն իմ հարկ առնէ յապաղել զվրէժխնդրութիւն. աւուրք սակաւք դարձուցեն յիս զզօրութիւն իմ, այլ 'ի սակաւ աւուրս յայսոսիկ պարտ է յապահովել զբանակ իմ

յամենայն հինից յարձակմանց։ Եւ թէ ապա քաջդ Նումա, առ ընդ քեզ զումարուակս տասն, աւծ զդուսա յանուտաւ՝ հատանել ցիցս յիսուն հազար մարդաչափս, և երկուսաւեք զայնոսիկ կազմել ծայրասուրս։ Եւ դու, Մեռիէ, տուր պեղել մինչև'ի դարձ նորին փոս խոր և ընդարձակ, քառակուսի հաւասար շուրջ զբանակաւս, մուտս ևեթ ընդ մէջ քառից կողմանցն թողլով։ Լեգէոնքն իմ Լատինք, որ նուազ քան զամենեսին աշխատեղեն 'ի գիշերիս, վաստակեսցեն 'ի գործդ։ Երթայք, և նախ քան զերեկոյ կազմ և պատրաստ լիցի ամենայն, և դարձիք լսել զպատուէրս իմ։

Այսց, և հնազանդ եղեն նմա Մեռիոս և Նումա, Հռոմուլ, այր պատերազմասիրձ, եւ հարկանել զցիցսն 'ի խրամի անդ՝ սակաւ ինչ անջատս 'ի միմեանց, և կաշկանդեալ զնոսա ընդ իրեարս ուժգնապինդ անխլելի, եւ ապա ծածկել զնոսա հողով, զծայրս նոցա այրասուրս հաւասար երկրին թողեալ արտաքս ուղղաբերձ, ամրապահ զբանակեալսն գործելով շուրջանակի 'ի խիտ առ խիտ պաքաց անտի։ Մեռիոս և Նումա յերիս աւուրս կատարեցին զգործն. և դղեակս ութ 'ի քառեակ դրունս կառուցին, լցեալ զնոսա զօրօք. և հռովմայեցիք 'ի բանակի անդ որպէս 'ի քաղաքամիջի ամրացեալք, զարմանային՝ թէ որպէս միոյ ուրուք հանճարոյ մարթէր զբիւրաւոր մարդկան գործել զիրկութիւն կամ զկորուստ։

Սոփանոր յայնմ կողմանէ գետոյն տեսանէր խաղաղութեամբ զվաստակ Հռոմուլեայ, առանց խռովելոյ զայն։ Իսկ Հռոմուլ վարանեալ ընդ անգործութիւն նորա, չկարէր 'ի միտ առնուլ թէ ընդէր անշարժ կայէն Մարսք, և ասէր ընդ միտս. Զի՞նչ արդ գործիցէ ահարկուն Լևոնդ. աւա՜ղ, բերկրիցի անշուշտ ընդ վիրաւորել իւր զՀռոմուլ. այլ Հռոմուլ չև ևս է պարտեալ, տակաւին սկիզբն է մարտի։ Իսկ ընդէր դու պատերազմողն, աջողակ 'ի գիշերամարտ արութիւնս, ոչ փորձի միւսանգամ դալ հրդեհել ըզբանակ իմ. Ո՛ Արամազդ, ո՛վ հայր իմ Արէս. այլ ևս աւուրք ինչ ցաւոց, և առցէ բազուկս այս զիւր զօրութիւն, և ոչ ևս յետկոյս պատնիշաց ամրացի։

Մինչդեռ զայսոսիկ Հռոմուլ ընդ միտս իւր խօսէր, և ահա զինուոր կամպանիացի յարիւն և 'ի փոշի թաթաւեալ՝ հասանէր շնչապառ յԱքսենտեայ քաղաքէ, ուր արքայն Կամպանիոյ ամրացեալ էր։ Զի՞նչ դու բերես մեզ զրոյցս, դոչեաց Հռոմուլ. մի՞թէ անցի՞ն ընդ Ապենեանս Սամնիացիք. մի՞թէ պաշարեցա՞ւ 'ի քաղաքի իւրում Նիզակակից մեր։ Պատասխանի ետ զինուորն. Նիզակակիցն քո է 'ի ձեռս թշնամեաց. Լևոնդ ահարկուն այն երևեցաւ ընդ պարապօք Ադքսենտեայ 'ի պահու, յորում կարծէաք մեք զնա պատաղեալ ընդ քեզ 'ի մարտ։ Կալաւ նա զքաղաքն և զթագաւորն, տիրեաց դանձուց

նորա և զօրաց և պարենից. և ոչ շատ համարեալ զյաղթութիւնս զայս, զիմեաց յանպատրաստից 'ի վերայ հասանել զօրացն՝ որք արդելուին զէջս Սամխիացւոց ընդ Ապենեանս, զորուեաց զբանակ նոցա, և եբաց անցս ահեղիցն թշնամեաց:

Իբրև լուաւ զայն Հռոմուլ, արկ զգլուխ իւր ընդ կուրծս 'ի վայր, և կայր անխօս և անշարժ. և հազիւ 'ի շուինդն փողոց և արնգաց, որ հնչէին յայնմ կողմանէ գետոյն, անձին զգաց: Զի անպարտելին Լևոնդ գայր ածէր 'ի բանակ Սոփանորի զարքայն Կապուայ կալանաւոր, զերի չորեքարիւր, աւար ամբաւ, և զխրոխտ բանակ սամնիացւոց: Խաղային գային ընդ դաշտն 'ի բարբաւ փողոց բիւրաւորաց. արքայն Կամպանիոյ ոսկեհուռ հեծեալ 'ի սօս երիվար. իսկ Լևոնդ ստանձնեալ զառիւծենին գայր հետի առնուաւ, շուրջ պատեալ 'ի Մարսիցն քաջաց. և սամնիացիք վառեալք 'ի զրահ պողոմատիկ բիւրք երկու աւարտէին զչուն յաղթական:

Կանգնեցին անդէն զխորանս իւրեանց մերձ 'ի խորանս Սոփանորի, համախմբեալ բանակքն երկոքին: Եւ իբրև գիշերն ած քօղ զերկնաւ. տեսեալ հռոմայեցւոց խարոյկս բիւրաւորս զափամբք գետոյն բորբոքեալս, խռովեցան՝ կարծելով պաշարեալ զանձինս 'ի թշնամեաց: Հռոմայեցիք անվեհերք, որք ամենայն ուրեք 'ի տեսիլ թշնամեաց՝ խրախոյս խնդութեան

հարկանէին, կային անդ 'ի տխուր լռութեան յերեսաց ահեղ բանակին։ Հայէին ընդ միմեանս զօրքն ահաբեկեալ. զօրապետք չիշխէին յայտնել միմեանց զերկիւղ իւրեանց, և ամենեցուն աչք 'ի Հռոմուլ հայէին։ Կրկնապատիկ ըզպահակապանս ամրացուցեալ, կազմէին յընդդիմամարտ. այլ հանդերձ ամրութեամբ պատնիշացն՝ և բազմութեամբ և քաջութեամբ զօրացն, զտաղնապ 'ի դէմս իւրեանց բերէին։

Հռոմուլ իսկ խռովեալ էր, այլ վեր 'ի վերոյ կեղծաւորէր զխաղաղութիւն։ Ցեց 'ի նիզակ իւր յերկայն, դանդաղաքայլ 'ի պատճառս վիրացն, այց առնէր 'ի կայս զօրացց, և խրախուսէր զզօրս իւր. և թէպէտ լի էր սիրտ նորա տրտմութեամբ, գոհանայր բարձրաձայն զդէց՝ զի համօրէն 'ի ձեռս իւր մատնէին զթշնամիս։ Սակայն պատուէր 'ի ծածուկ տայր դումարելոյ զօրապետաց 'ի ժողով։ Մեսիոս, Վալերիոս, հանճարեղն Կատիլլոս, խոհականն Բրուտոս, և բազում այլ ևս զօրապետք հմուտք 'ի պատերազմ, բազմեցան առ արքայի. և չըքնաղագեղն Հերսիլիա կոչեցաւ 'ի ժողով անդր որպէս դուստր արքայի, և նստուցան վասն իւրոց քաջութեանցն։ Նուիրակք առ սեամս պահ ունէին խորանին արքունի, 'ի բաց վարել անտի զյանդգունս։ Անդ Հռոմուլեայ 'ի բաց մերկացեալ զվեր 'ի վերոյ խնդութիւնն, և յաձեալ դքաջ զօրավարօքն զաչս իւր տաղնա-

ազգաց, ասէ. Զինուորակիցք իմ, միշտ իսկ պի-
տանի եղեն ինձ խորհուրդք ձեր, այլ արդ կա-
րևորք են։ Թշնամիք մեր, յաղթողք Նիզակա-
կցացն մերոց վատաց, եռապատիկ բազումք են
թուով քան զմեզ. կարեմք զդէմ՝ ունել նոցա
աներկեան, ամրացեալք 'ի պատնէշս աստ. բայց
եթէ անցցեն նոքա ընդ գետդ, և պաշարես-
ցեն զմեզ, յառաջ քան զաւուրս ութ նուազես-
ցեն մեզ պարէնք, և կորիցուք անպատերազմ։
Զինչ պարտ իցէ մեզ առնել, բարեկամք քաջք.
յարձակեալ 'ի վերայ կրկին բանակացն գումա-
րելոց 'ի մի, և խափանել մահուամբ մերով զա-
մօթապարտ դաշնադրութիւն, եթէ յետս նա-
հանջել բազում վտանգօք։

Եւ 'ի լռել Հռոմուլեայ՝ յոտն եկաց Մեսիոս,
և խրատ տայր յղել 'ի Հռովմ ինդրել 'ի Տա-
տիոսէ օգնականութիւն, և կալ մնալ ամրա-
փակ 'ի պատնէշս՝ մինչև հասցէ նա զերծուցա-
նել զդահակից իւր 'ի վտանգէն։ Իսկ Բրուտոս
խրատ զհակառակն տայր, ելանել 'ի պատնի-
շացն՝ գնալ ճակատել առ թշնամիս 'ի պատե-
րազմ, զամենայն ինչ 'ի բախտ զինուց ապաս-
տան արարեալ։ Հերմիլիա ընդդէմ եկաց խոր-
հրդոյն, և ասէր. Ցորչափ հայրն իմ ոչ զօ-
րէ զէն առնուլ, մի յուսայք յաղթել թշնա-
մեաց, բազուկ եթէ Հռոմուլեայ տացէ մեզ
զյաղթութիւն, և սա չև ևս զօրէ տալ զայն.
լուիցուք խրատուցն Մեսիոսի, կացցուք մնաս-

ցուք 'ի պատանէշս, և յղեսցուք 'ի Հռոմ առնել վերատին զօրաժողով։ Այլ 'ի յահարկութիւն թշնամեաց, և առ 'ի խափանել զնոսա անգործս, Նումա և ես՝ դիմեալք դիշերային մըտցուք 'ի բանակ սամնիացւոց. և մինչ դեռ նորա պարտասեալք 'ի չուոյ և արբեցեալք յաջողութեամբքն՝ ընկղմեալ կան 'ի քուն, ցցուք 'ի նախճիրս արեանց զվրանս նոցա։ Իմ այս է խորհուրդ. և եթէ հաճոյ թուեսցի հօր իմում, արդ իսկ դիմեալ երթիցուք։

Խնդութեամբ լսէր զայն Նումա, և աչք նորա հրափայլք դիտէին զամենայն շարժմունս օրիորդին. բաբախէր սիրտ նորա 'ի հրճուանացն վասն ընտրելոյ Հերսիլիայ զնա ինքն օգնական իւր. և դիշերն այն, յորում մարտակիցք միմեանց հանդերձեալ էին լինել, թուէր Նումա բարեբաստագոյն յաւուրս կենաց իւրոց։ Բայց Հռոմուլ 'ի դերև եհան զյոյս նորա, հակառակ կաց եալ խորհրդոյ գաստերն իւրոյ։ Եւ այլք 'ի զօրապետաց առ հասարակ տային խորհուրդս անհնարին, կամ զնասակարագոյնս. քան զվտանգն յորում կային։ Ցերկարաձգէր խորհուրդն, և ոչ այլ ինչ յաջողէր խորհրդականաց, բայց զարկածս վտանգին հոլանել՝ առանց ելս ինչ հնարից գտանելոյ։

Ցայնժամ Նումայի խորհուրդ 'ի միտս ազդեալ յԱթենասայ, խնդրէ հրաման խօսելոյ. և 'ի հրամայել Հռոմուլեայ՝ քաղցր 'ի նա ակնարկե-

լով, ասէ դիւցազնն. Ահաւասիկ մեծազօր, միակ թուի ինձ հնար, ոչ միայն փրկութեան բանակիդ, այլ և կանգնելոյ անշուշտ զյաղթութիւն։ Լերինք տրեբանեանք յետկուսէ կան մեզ անմատոյցք. 'ի լերանցամէջն անդ յանձուկս սակաւուց զօրաց տիրեալ նախ բարձանցն՝ դիւրին ելցէ պարտել զբիւրաւորս։ Ցացի ինձ հրաման չու առնել 'ի գիշերիս յայսմիկ ընդ կէսս 'ի սաբինացւոց, և առ վաղիւ ընդ երեկս տիրեացուք լերանցն։ Դու ինքն, արքայ քաջ, փախիցես նախ յերեսաց թշնամեաց. մի ինչ խառնիր ընդ լուր փախստեան, փախիցես առ 'ի յաղթութիւն։ Սարսք և սաստիկք հետամուտ լիցին քեզ, և ձգեսցես զնոսա դիւրաւ 'ի կիրճս անդր լերանցն տրեբանեանց. և զկայ առեալ մնայցես նոցա աներկեան, և յարձակեացիս 'ի վերայ նոցա, մինչ սաբինացիք և ես տեղասցուք 'ի նոսա նեռս և գեղարդունս 'ի բարձանց, և ժայռս զնոքօք գլեսցուք։

Ցայս վայր խօսեցաւ Նումա։ Ցայնժամ Հռոմուլոս գիրկս արկեալ նմա, ասէ. Քեզ, ով արի պատանեակ, ոչ միայն վասն կենաց իմոց գոյց շնորհապարտ, այլ և վասն փառաց։ Փութա՛ կատարել զխորհուրդ քոյին. առ ընդ քեզ զսաբինացիսդ առ հասարակ, թողեալ ևեթ ըզհեծեալս՝ որք չիցեն քեզ պիտանի, և որոց կարօտիմ ես նոցին՝ մանաւանդ 'ի սկզբան նահանջելոյ իմոյ յետս։ Շատ լիցէ քեզ կանխել զիշերը

մի, երթ վաղվաղակի, և եթէ յաջողեսցիս 'ի խորհուրդս քո, ահա մրցանակ քոյին։ Եւ զայս ասացեալ, ցուցանէր նմա զՀերսիլիա։

Կարկեալ եկայ անդ Նումա. ապշութիւն, հըրճուանք, և յուզմունք 'ի նմա այլ և այլ կրից՝ արդեւին զբարբառ նորա, և աչք նորա 'ի Հռոմուլ և 'ի Հերսիլիա միանգամայն յածէին։ Եւ ապա ուր ուրեմն անկեալ առ ոտս Հռոմուլեայ, դոչէր, Աստուածորդիդ դու, անպարտելի զիս կացուցանես. թէպէտ Մարսք, թէ սամնիացիք, և թէ ազինք Իտալիոյ առ հասարակ ընդդէմ ինձ գումարեսցին, իրաւունքեցիս յաղթել նոցա. ասնուն ևեթ Հերսիլեայ հաւասար գոգցես քումդ քաջութեան զիս կացուցանէ, և փառք փեսայութեան քո ամբառնայ զիս 'ի կարդ դիւցազանց։ Եւ 'ի խօսել նորա զայս, փայլատակէին յաչս նորա սէր և խրախոյս. ակնարկէր 'ի սիրուհին, և ընթեռնոյր յաչս նորա զհաստատութիւն խոստմանն Հռոմուլեայ. և 'ի տեսչ վաղագոյն չուոյ՝ դիմէր զինուորել զսաբինացիս.

Վաղվաղակի լեգէոնք 'Լատինք 'ի հրամանէ Հռոմուլեայ ելեալք յիւրաքանչիւր 'ի վրանացն, չոգան ճակատել առ ամն գեղոյն՝ առ 'ի գոգալնալ յաչաց թշնամեաց զչու քաջին Նումայ։ Ցայնժամ Մարսք առ ահի յարձակման թշնամւոյն՝ դիմէին յայնմ կուսէ գեղոյն 'ի ճակատ, և նեռք ասոի և անոի յախուռն արձակէին. այսպէս հռոմայեցւոց պատաղեցուցեալ զթշնամիս,

մինչև Նումա յեռակուսէ բանակին մեկնէր 'ի բաց։

Զու արար, անց ընդ անտառախիտս՝ որ ձգին ընդ Սորա. և առ 'ի խոյս տալ 'ի վտանգէ ճահ-ճացն Արատրիոյ՝ շրջան առեալ 'ի բացէ, և դէմ եղեալ յԱսիլոն, ետես ընդ այգն զլերինս Ցրե-բանեայ։ Այլ մինչչև 'ի լերանցամէջս անդր մը-տեալ, խոհական խորհրդով արձակեաց Նումա առաջի իւր մեկնակաղէնս, և եթող զհետ իւր առաջնորդս Հռոմուլեայ, և ապա մտեալ անդր՝ յառաջ խաղայր ընդ ափափայս։ Զօրականքն վաստակաբեկք 'ի ճեպընթաց շուոյն՝ ոչ զօրէին տղտակել ընդ ժայռս, այլ Նումա խրախուսէր զնոսա և քաջալերէր. և յառաջընթաց միշտ նո-ցին, բուռն հարեալ աջովն զծառոց՝ որ օգնէին նմա 'ի վերելս, հրաւիրէր զհետ իւր ձախովն զզօրականն։ Եթէ ուղխ ընդ առաջ ելանէր, ինքն նախ անցանէր ընդ այն. և մինչչև հասեալ յայն-կոյս, ոչ հրամայէր զօրացն անցանել. եթէ ժայռ խափանէր զուղին, մխէր զսուսեր իւր կամ զգե-ղարդն ընդ հերձս վիմին, և ուն ածեալ 'ի նե-ցուկն տկար՝ վազէր զդահավիժութեամբք, և հասեալ միայնակ 'ի վեր՝ անդր ապա զիւրան կոչէր։ Քանզի պատկեր Հերակլեայ առաջի նորա գնայր, և դիւրէր նմա զառապարս. և յառաջ-ընթաց զօրականին օրինակ նորա տայր նոցա կոխել զամենայն զխոչ և զխութ։

Եհաս ուր ուրեմն 'ի կատար լերանցն, և զար-

մնեայր 'ի տեսանել ամբ գաշտս մշակեալս, և ամբ-ատանս արօրագիրս, և արօտս ծածկեալս խաշամիջ։ Ածին առ Նա Հովիւս ոմանս, զորս Նումայ քաջալերեալ՝ ասէր. Ոչ առ 'ի Նաւաճել զձեզ գամ՝, մի երկնչիք. ոչ կենայց ձերոյց և ոչ գոյից հասցէ ինչ զեռն. ածէք միայն զմեզ 'ի բնակութիւն ձեր 'ի բնիկ, ասէք մեզ պարէնս ընդ արծաթոյ, և թոգէք մեզ ունել զկիրճս լերանց ձերոց զաւարս ենթի երթս։ Զայն իրրև լուան Հովիւքն, առաջնորդեցին ասբինացւոյ աներկիւղ 'ի գիւղ ամբր իւրեանց։

Ամբ էր տեսանել զհիացումն և զմեղութիւն Նումայ, յորժամ Եռես 'ի շինեալոս ամբ և ծանեաւ զհռէացիս՝ զորս ապատեալն էր 'ի գերութենէ։ Նոյն ինքն ծերունին, որոյ խօսեցեալն էր առ Նա յաւուր զոհին, յառաջ մատուցեալ՝ հայեցաւ 'ի Նա, և զոչէր. Ո՛ օր բարեբաստիկ. ահաւասիկ բարեկամքիս և որդեակք, ահա ապատարարն մեր, ահա գիւցազնն բարեդաւթ՝ որ եռ մեզ զապատութիւն, ահաւասիկ Նումա... Ի լուր անուանն Նումայ՝ ապաստակ միաբարան խոխանեաց զիւսս ծերունոյն, և հռէացիքն առ հասարակ 'ի ծունր իջեալ՝ խոնարհին զՆումա։ Մին ասէր. Դու արեւն իցես, և միւսն, որ զմայր իմ դարձուցեր առ իս. և այլ որ, թէ դու ինձ եղար զայր իմ։ Ասացեալ քո, զոչէր մի 'ի մանկանց, ասացեալ քո հարկ էր ինձ մեալ որբ։ Ասասածորդիք դու, քանզի բարե-

բարք մարդկան՝ անմահից են զաւակք, զոր զ-
հաւթիւն մատուցուք նոցա, վասնզի զի շնոր-
հեցին մեզ տեսանել զքեզ անդրէն, համբուրել
զձեռս քո՝ որ խորտակեցին զշղթայս մեր, և
ակնկատոյց լինել 'ի զիւցազնդ անոխակալ։ Զէ
հրամայեա մեզ, զատուէր տուր զգոյից մերոց և
զկենաց, ամենայն ինչ քո է ստանօր. զա՛ խշ-
խան մեր, զա՛ և հայր, և առաւել ևս քան զամ-
հայր, զի զա՛ եղեր մեր ազատարար։

Եւ 'ի լսելն զայսոսիկ՝ չկարաց Նումա ժամ
ունել արտասուաց, և զօրք նորա քաջասիրտք
զարմացան ընդ նմա։ Քաղցր բարեկամութիւն
կցորդեաց զնոսա ընդ բարեբաս մարդկանն. զо-
րանալոյն և չինականքն խառն ընդ միմեանս՝ զերկս
արկանէին երեսաց, և ամենայն տրեան կցոր-
դութիւնք ապանչակատութեան և բարեկամու-
թեան լինէին 'ի նոսա։ Ցունք և խրճիթք յան
զօրքն Նումայ. ագք և կանայք և մանկունք
փութային 'ի ապատարութիւն նոցա, և 'ի բե-
բեալ մատուցանել զամենայն ինչ զիւրեանց։ Ար-
բինացիք և հռէացիք ոչ ևս այլ և այլ էին ազգք,
այլ ազգատոհմ մի. և ամենեցուն սիրելի էր և
մեծարեալ Նումա, և հատարակացն այն սէր կա-
ցուցանէր զնոսա եղբարս։

Յաւուն ինչ 'ի զարմանալն տեսին յայն զիւ-
ցազնին ապարակաւ, ապա արար կոչ զօրակա-
նին. և չինականքն իսկ առ հատարակ 'ի հնչիւն
փողոցն գումարեցան, զէն իւրաքանչիւր առեալ

որ ինչ առ ձեռն գտանէր. ոմն սուսեր վաղեմի ժանգահար, այլ ոք ասպար փոշելից, միւս ոք զխոփ արօրոյ 'ի գեղարդն կազմեալ, և բազմագոյնք լախտս 'ի կոճեաց ծառոց խլեալ։ Եւ ասէին ցՆումա. Պատերազմակիցք լիցուք ընդ քեզ, ընդ քև զինուորեացուք, և եթէ բաւական լցէ արիութիւն սրտի 'ի յարդարել զմարտիկ, ոչ լիցի քեզ արիագունից երբէք հրամայել մարտկաց։ Եւ զայսոսիկ ասելով, կազմէին կային իւրովի 'ի ռազմ, 'ի նմանութիւն սաբինացւոցն զօրաց նկրտեալ. և կուռ զմիմեամբք պընդեալ խառն 'ի խուռն կարգաւ փաղանգ ամբոխաստատ, խնդրէին նախայարձակ խաղալ 'ի վտանգաւորագոյն կայս։

Ի զուր բարեգութն Նումա ջանայր սանձահարել զնախանձնոցա. 'ի զուր հրաժարէր յարկանելոյ 'ի վտանգ զարս՝ որ վասն սիրոյ եթէ նորին՝ զանձինս իւրեանց փոխանակէին. հզօրագոյն էր սէր նոցա քան զսաստ իշխանութեանն Նումայ։ Ամենայն թախանձանք նորա ընդունայն եղեն, և հարկ եղև պոմպիլիեան զաւակին տեսանել կրկնապատակեալ զբանակ իւր. յայնժամ ծանոյց Նոցա զոր խորհէրն, վստահացեալ 'ի նոսա զխորհուրդ իւր՝ ունելոյ զբարձունս, և դարանելոյ ուստի մարթէրն խորտակել զթըշնամիս։

Հռէացիք վաղ ընդ վոյթ առաջնորդեցին սաբինացւոց 'ի կիրճս և յանցս դժուարագոյնս լե-

բանցն, ցուցին նոցա զվայրս դիպողագոյնս 'ի դարան, զկայ առին անդ ընդ նոսա, հատին մայրիս, դլեցին ժայռս՝ առ 'ի ձգել զնոսա 'ի վերայ Մարսից. և խառնեցան ընդ զօրս բարերարին Իւրեանց, ոգի 'ի բռին՝ բաժանորդ լինել վտանգաց նոցա. և դէտակն կալեալ մնային հասանելոյ հռովմայեցւոց։

Ընդ հուպ եհաս անդր Հռոմուլ, ընկրկեալ ճարտարութեամբ 'ի տեղւոջէ բանակին՝ մերթ յինքն ձգելով և մերթ վանելով զսամնիտացիս. և որչափ մօտէր 'ի լերինն, այնչափ առաւել խառն 'ի խուռն զնահանջն հմուտ զօրավարն կեղծաւորէր, պատուէր տուեալ վերջապահ գնդին ցրուել 'ի փախուստ. որպէս զի մուտ հռովմայեցւոց 'ի լերինս անդր՝ թուէր խուճապ տագնապի փախստէից զօրաց։ Սոփանոր, և ինքն իսկ Լևոնդ, և մանաւանդ զօրավարն սամնիտացւոց, անկան առ հասարակ 'ի դաւ. և բանակն ազգաց դաշնաւորաց, յոր դումարեալ էին պատերազմողք քաջք քան հմուտք 'ի պատերազմ, ըմբռնեցան 'ի կիրճս անդր՝ հալածել կարծելով զփախստեայս։

Հռոմուլ առաջնորդեալ 'ի հրեշտակացն Նումայ, ած ձգեաց զթշնամին 'ի դժուարագոյն կիրճս լերանցն. և ապա զկայ առեալ 'ի փախչելսն, կառեաւ եկաց ահեղ գնդաւ ընդդէմ Մարսից, և ձայն տայր նոցա 'ի մարտ։ Յարձակեցաւ արին Լևոնդ 'ի հռովմայեցիս.

և մինչդեռ սաճիկացիք և Մարսք նախանձընդ-
դէմք միմեանց փութային նախայարձակ լինել՝
և ահա տարափք ժայռից և կոճեղաց ծառոց տե-
ղային 'ի բարձուէ լերանցն ջաղջախել զդունդս
նոցա։ Զօրագլուխք հանդերձ զօրօքն ահաբե-
կեալք, զաչս 'ի վեր առեալ՝ տեսին նիզակա-
խուռն զբարձունսն ծածկեալ. և զարհուրեալ 'ի
տեսլենէն, չիշխէին և ոչ քայլ մի ուրին առնուլ
ընդդէմ Հռոմուլեայ։ Եւ ոչ ընկրկել հնար էր
նոցա, խափանեալ նումայ յետկուսէ զանցս ի-
մաստութեամբ։ Ուրբա պաշարեալք յամենայն
կողմանց յանձուկ սապարէզ մարտին, բազմու-
թեանն իսկ նոցա յաճախելով զչփոթն, և ընկ-
ճեալք 'ի վիմաց՝ զորս հռէացիք և սաճիացիք
գլէին անդադար 'ի գլխոց լերանցն, 'ի պարտու-
թիւն մատնեցան՝ ոչ ևս կարելով մարտնչել. և
զէնընկէցք խնդրէին զաշինս։

Ոչ իսկ է մարթ զզայրոյթ կատաղութեանն
Լևոնդեայ նկարագրել. որպէս վագր վրկանիկ
անկեալ 'ի ծուղակ մերձ 'ի խշտի իւր. տեսանե-
լով'ի բաց բարձեալ զկորիւնսն՝ ապիկար'ի պաշտ-
պանել նոցա, մռնչէ, յուզի, խածանէ զվէմս
և մանրեալ փշրէ զայրագին, և արիւնռուշտ ա-
չքն խանձի 'ի թշնամին՝ յոր չկարէ յարձակիլ,
այսպէս Լևոնդ յաւելոյր 'ի կատաղութիւն 'ի
լսել զաղաղակ պարտելոց զօրացն, և ահագին
ձայնիւ գոչէր. Մի այդպէս մի, ցորչափ Լևոնդ
ձեզ հրամայէ՝ մի յուսայք թէ խոնարհեսցի նա

յայդ վատութիւն. Մարդք և սամենիացիք, մինչչև յաղերս խոնարհեալ վասն կենաց ձերոց՝ տեսջիք արիաբար զմահ Լևոնդեայ։ Ասաց, և խիզախեաց ընդ զէնս և ընդ ժայռս, մինչդեռ վէմք զնովաւ և կոճեղք ծառոց տեղային 'ի բարձուէ, և սողոսկէր միայնակ 'ի ծագ լերինն։

Հռէացիք և սաբինացիք փութացան 'ի տեղի անդր, ընդ որ սպառնայր զյարձակումն. և շեղջակուռեցին վէմս առ 'ի տեղալ զնովաւ։ Բայց Նումայ հասեալ անդր, արգել զնոսա. և խափանեաց զտարափն՝ ընդ որով հարկ էր ընկճել Լևոնդեայ, ձայնեալ առ նոսա. Զինուորակիցք իմ, խնայեցէք 'ի յանդգնութիւն դորա. զառաւելութիւն տեղւոյ առաւելութեան թուոյ եղի 'ի կշիռ, այլ քաջութեան միոյ ուրուք քաջութիւն իմ կացցէ 'ի կշիռ։ Կաց մնա Լևոնդիէ, խնայեմզքեզ յաշխատութենէ կիսոյ ճանապարհիդ։ Ասաց, և էջ հանդարտաքայլ, 'ի բաց առեալ զսաբինացիս՝ որ կամէին իջանել ընդ նմա, և հաս ընդ առաջ ահարկու ոտիսին 'ի տափարակ ժայռի ուրեք սեպացելոյ յամենայն կողմանց, ուր ոչ գոյր տեղի՝ բայց միայն զմիմեանս խողխողելոյ։ Ընդ զկայ առեալ երկաքանչիւր՝ հայէին յիրեարս անբարբառ, զարմացման նոցա ընդ միմեանս գոգցես ներգործեալ զլռութիւնն։ Բանակքն երկոքին դադարեալ 'ի մարտէ, կային ակնկառոյցք 'ի Լևոնդ և 'ի Նումա. և իւրաքանչիւր ոք 'ի զինուորաց մոռացեալ զանձն,

'ի Նոսա ևեթ ուշ ունէր, և դիպուածոյ զդիւցազունն զերկոսեան յանձուկ և 'ի բարձու թաւտերն կացուցեալ, թուէր ածել զնոսա 'ի տեսիլ երկոցունց ազգացն՝ որոց բախտ 'ի Նոսա էր հաստատեալ։

Լևոնդ նախ ելոյծ զլռութիւն, և ասէ ցՆումա. Մեծարեմ զքաջութիւն քոյին, արի պատանեակ, դժպհի է ինձ մարտնչել ընդ քեզ. դարձ աղէ 'ի գունդս քո, և թոյլ ինձ յագեցուցանել զարտմտութիւն իմ յոսխս 'ի նուազ քան զքեզ քաջասիրտս։ Եւ Նմա պատասխանի Նումա. Զիք 'ի բանակիս այնպիսի ոք. յետին հռովմայեցին հաւասար է ինձ քաջութեամբ. և ծանիցես դու վաղ՝ թէ իցեմ արժանի քոյոյ գթութեանդ։ Զայս ասացեալ, քանզի ոչ էր մարթ Նմա յանձուկ ասպարիզին արձակել ըզդեղարդն, կալաւ զայն երկոքումբք ձեռօք, և մղեաց ամենայն զօրութեամբ 'ի լանջ ոսխին։ Ամհագին էր հարուածն, այլ տէգն պողովատիկ դիպաւ յառիւծենին, ուրանօր ճիրանքն զմիմեամբք ածեալ՝ եռապատիկ գործէին զրահ. և պահպանակն անթափանց բթեցոյց զերկաթն Նումայ, և թափ հարուածոյն եբեկ զդեղարդն 'ի ձեռին նորա։

Սասանեցաւ Լևոնդ, և յուել 'ի սրտմտութիւն. վերացոյց զլախան անհեթեթ, և ածեալ զայն զգլխոցն 'ի հիւռ, ինչոյց հարուած ահագին 'ի վահան անդր ոսխին. շուրջ թռանէին

բազմախորտակ բեկորք վահանին։ Անկաւ Նումա 'ի ծունր յերկիր. այլ անդէն վաղվաղակի 'ի վեր վազեալ, ձգեաց զսուսեր իւր՝ զսուսերն պոմ պիլեան, որ միայն մնայր նմա 'ի պաշտպանութիւն։ Զհարուածն երկրորդ կամէր Լեոնդ ի-ջուցանել, բայց Նումա խոյս ետ 'ի բաց։ Երկաքանչիւր ակնկառոյցք 'ի զէնս իրերաց, այր զընկերին դիտելով զշարժմունս, դառնային ըզմիմեամբք, արգելեալ փակեալ յանձուկ ասպարիզին՝ որ շուրջ պատեալն էր 'ի վախից դահավիժութեանց։ Կարկառէին և ամփոփէին, և հարուածս խիտ ընդ խիտ ածեալ ընդունային՝ մազապուր յայնցանէ խուսափէին, հանգոյն կըրկնակ օձից ջրայնոց, որ 'ի կոնք անձուկ պատառին անդադար զմիմեամբք և լուծանին, և ոչ կարեն խայթուածս 'ի միմեանս արկանել։

Եւ ապա ուր ուրեմն Լեոնդ ցասուցեալ ընդ յամառ դիմամարտութիւն ոտիին, ամբարձ երկոքումբք բազկօք զլախան, և յարձակեցաւ 'ի վերայ նորա։ Մահ զգաղաթամբն Նումայ կայր, և Նումայ ոչ էր մարթ խուսել յայնմանէ. պաշտպանէր նա զանձն սուսերաւն, այլ տկար պահպանակին անմարթ էր փրկել զկեանս նորա, եթէ ոչ խնամք Դեմետրեայ հասանէին նմա յօգնութիւն։ Ի դիւցընկէց 'ի բարձանց 'ի զնին կայր Դեմետրէ ահաւոր մարտին. ետես ըզլախան վերացեալ, զդողանի հարաւ, սլացաւ, եհաս ընդ էջս հարուածոյն, և աներևոյթ ձե-

ռամբ արկ զայն տարաղէպ։ Իսկ Լևոնդ մղեալ 'ի Թափոյն և 'ի բեռանէ լախտին, հսկայն Լևոնդ տապալէր որպէս մայրի հինաւուրց արմատա-խիլ 'ի մրրկէ։ Հաս 'ի վերայ Նորա Նումա, և բուռն հարեալ զփողից Նորա, եդ աջովն զսուր տուսերի իւրոյ 'ի սիրտ Նորա, և ասէ. Կեանք քոյին 'ի ձեռին իմում է, այլ զքաջի պատերազմողիդ չհանդուրժեմ զրաւել զկեանս. Եկ կռեսցուք դաշինս, ընտրեմ լինել քեզ բարեկամ քան յաղթող։

Եւ զայս ասացեալ՝ յարեաւ Նումա, և եդ զսուսեր իւր 'ի պատեան. Իսկ Լևոնդ ընդ կանգնել կալ յոտին՝ գիրկս էարկ աղնուական ոստին, և ձեռն տուեալ միմեանց՝ իջանէին առ դունդս Պարսից, որք կային 'ի խորհուրդ ընտրութեան ծերունեաց 'ի պատգամաւորութիւն հռոմելեայ։ Նումա 'ի միասին ընդ Լևոնդեայ ածին զնոսա առ թագաւորն հռոմայեցւոց. և յաղերս արկանել Նումայ վասն Պարսից, շնորհեաց նոցա հռոմել զխաղաղութիւն, և ասէ. Դարձուսջիք յազատութիւն զնիզակակից իմ զարքայն Կամպանիոյ, հատուցեալ նմա զգանձն և զգերիս։ Իսկ երկիրն Ուրոնկաց, զի մի 'ի ձեռս ձեր կամ 'ի նորայն լիցի առիթ անապատ գժտութեան, կացցէ ընդ ձեռամբ իմով. և փոխարէն տացէ ձեզ արքայն Կապուայ զքաղաքն Ուքսենտ, և որդի նորա Կապիս կացցէ առ ձեզ 'ի պատանդ մինչև ցկատարումն պայմանի դաշինն։

Մտադիր ընկալան Մարք զդաշինն, նպաստամատոյցս իւրեանց քան զլրքային կամպանիայ. և Հռոմուլ միւս ևս ստացեալ աշխարհ, ոչ ինչ հոգայր ընդ շահ նիզակակցին՝ զոր արհամարհէրն։ Իսկ առ 'ի մրցանակ Նումայ. Պատանիք քաջ, ասէ, դու փոխանակ իմ՝ յաղթանակաւ մտցես 'ի Հռոմ՝ հեծեալ 'ի կառս իմ, յառաջընթաց իմոյ բանակիս. և Լևոնդ առաջի քո երթիցէ. և ընկալցիս զաջ դստերն իմոյ առ բազնաւն Արամազդայ։

Պատասխանի ետ Նումա, և ասէ. Արքայ քաջ, քեզ միայնոյ վայել է յաղթանակել. շատ իցէ ինձ աջ Հերսիլեայ 'ի փառս։ Ոչ ես ինչ քաջին Լևոնդեայ եղէ յաղթական, և ոչ ինև ինչ եղև նա նկուն, ո՛ Հռոմայեցիք. այլ Դեմարէ ինքնին ինչեալ յՈլիմպեայ, ետ ինձ զյաղթութիւնն։ Դարձիր Լևոնդիէ առ ժողովուրդ քո, ազատ ես դու և աննկուն. զի դու անմահից ևեթ ետուր տեղի։

Եւ 'ի խօսել նորա զայսոսիկ, թուէր Հռոմայեցւոց և Մարսից զուրուք 'ի դէց լսել զբարբառ։ Դիմեաց Լևոնդ 'ի դիրկս նորա, փարէր զնովաւ՝ արտասուելով առ զարմացման, և հնարէր համոզել զնա ընդ յաղթանակ իւր՝ զպարտութիւն յանձն առեալ։ Բայց Նումա լու 'ի լու երկոցունց բանակացն խոստովան լինէր զօգնականութիւնն 'ի Դեմարէայ ընկալեալ, և 'ի ձայն բարձր գոհանայր զաստուածուհւոյն վասն

փրկելոյ նորա զկեանս իւր, անմահ ստացեալ փառս հրաժարմամբն յայնմանէ՝ որ ոչ իւր էր անկ։

Կռեցաւ դաշն խաղաղութեան, արքայն Կամպանիոյ դարձաւ յաղատութիւն, Հռոմուլ ազատեաց զկապիս, և չու արարին զօրքն տիրել 'ի սահմանս Ալբոնկայ։ Նումա և Լևոնդ երդուան յանլոյծ բարեկամութիւն ընդ միմեանս. և մինչև մեկնեալ 'ի միմեանց դիւցազունքն երկոքին պարգևս եառուն իրերաց. Նումա եւ Լևոնդեայ զերիվարն Թրակացի զահիպարանոց՝ զոր Տատիոսի պարգևեալ էր նմա, և Լևոնդ եւ Նումայ զսաղաւարան դարբնեալ 'ի Հեփեստեայ՝ զոր ընկալեալն էր 'ի զօրավարէն սաբինացւոց, և ասէ. Կալ զդա անկորուստ, և առաւել ևս քան զդա կալ զբարեկամութիւն քո ընդ իս, և ես ուխտեմ փոխանակել զանձն իմ 'ի վերայ քո, ուրանօր դէպք տացեն ինձ զյաջողութիւն։ Այսպիսի եղև դիւցազանցն երկոցունց ողջոյն հրաժարական։

Հռոմուլեայ պատրաստեալ 'ի չու՝ ուղևորել 'ի Հռովմ, հրամայեաց Հերսիլեայ և Նումայ 'ի նոյն հեծանել 'ի կառս, և խաղալ գնալ զառաջեաւ բանակին։ Նումա 'ի լրումն ըղձիցն հասեալ, չկարէր ծածկել զցնծութիւն իւր. բազմէր առ սիրուհւոյն՝ վատահ 'ի ժառանգել զնա, և առ խնդին չկարէր բարբառել, և ոչ իմաստասիրել ինչ. շուրջ պատեալ փառաք, սիրելի Հռո-

մուլեայ, փրկիչ բանակին, տակաւին դողայը առաջի Հերսիլեայ. հայէր 'ի նա, և չիշխէր խօսել ընդ նմա. 'ի զուր իսկ ժառանգէր զնա, զի չհամարէր լեալ նմին արժանի։

Ընդ անցանել հռովմէական բանակին ընդ Լիրիս, և ահա սուրհանդակ 'ի փոշի թաթաւեալ 'ի ձայն մեծ խնդրէր զնումա. և եկն յանդիման եղև նմա արտասուալից դիմաք։ Նումայ խռովեալ հարցանէր զնա, 'ի կասկած ձախողակի ինչ լրոյ զՑատիոսէ։ Եւ պատասխանի հրեշտակն. Ոչ 'ի Հռովմայ դամ, այլ 'ի մեհենական անտառէն Դեմետրեայ. արդոյ ծերունին Ցուլիոս ոչ ևս կարացեալ հանդուրժել հեռի'ի քէն, և առաւել ընդ մոռացումն իւր առ'ի քէն, առդրունս մահու հասեալ կայ, և խնդրէ տեսանել զքեզ մինչև մեռեալ։ Զայն իբրև լուաւ Նումա, ողբս առեալ՝ ուստեաւ 'ի կառաց անտի, և առ ճեպ վազանգին՝ ոչ հրաժարական տուեալ ողջոյն Հերսիլեայ, և ոչ խօսեցեալ ինչ ընդ Հռոմուլեայ, ձգեաց ընդ իւրև զմի 'ի նժուգից, և ձիարձակ երագամէտ երթայր 'ի Սաբինիա։

ՆՈՒՄԱ ՊՈՄՊԻԼԻՈՍ

ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՎԵՑԵՐՈՐԴ ԳՐՈՑ

Խնդրութիւն Տուլլոսի 'ի տեսանելն անդրէն զՆումա, և զիւցազնին հայրաբար և երկիւղած ինամք զծերունւոյն։ Մահ Տուլլոսի, և սուգ և վիշտ Նումայ ընդ այն։ Խորհի նա գնալ անդրէն առ Հերսիլիա. և անցեալ ընդ գաւառս ուրեք աւերեալ յիշխանուհւոյն, գառնայ արհաւրոք 'ի Հռովմ։ Ամենաբանութիւն Հռոմուլէայ առ ժողովուրդ իւր, և պատասխանի Տատիոսի։ Մերձենան հարսանիք Հերսիլէայ ընդ Նումայ։ Ենդ-ախոշոշ մահ Տատիոսի. Նումա հատանէ նմա յօգնութիւն, և խոստանայ առնուլ իւր 'ի կնութիւն զդուստրն նորա։

ՆՈՒՄԱ ՊՈՄՊԻԼԻՈՍ

ԳԻՐՔ Զ.



Եւ երթայր Նումա ընդ երգր գետոյն Անիոնի՝ մտրակ 'ի կուշտ արարեալ երիվարին, և արտասուէր՝ մեկնեալ 'ի սիրուհւոյն 'ի պահու յորում հանդերձեալն էր առնուլ զնա 'ի հարանութիւն, և հրաժարեալ 'ի փառաց յաղթանակին։ Բայց ոչ այսրիկ պատճառք էին ողբոցն, այլ վտանգկենացն Տուլլոսի, այլ մուրացօնք՝ յոր արկեալ էր զծերունին, զակատեալ 'ի սէր։ Երկնչէր 'ի կըշտամբանացն, զորս առաջի կայր նմա ընդունել 'ի ծերունւոյն. և առաւել ևս՝ թէ դուցէ չդատնէցէ զնա կենդանի, և սէր ընդ միտս. Այլ, եթէ չէր իմ մեկնեալ 'ի նմանէ, մարթէր ինձ թերևս յերկարել զաւուրս նորա, և կամ գէթ սիրելել զվիշտս նորա. զարտ էր ինձ ածել ծերութեան նորա զխնամս, զոր նա էած մանկութեան իմում. ապերախտս գոյ, և խիղճս այս դատնացուցէ զկեանս իմ, և ոչ կարասցեն ամե-

նայն փառք սիրել զիս յայնմանէ։ Ո՛հ, զի՞նչ օգտեսցեն մեզ գովութիւնք տիեզերաց, եթէ սիրաք մեր ստգտանիցեն զմեզ։

Եւ զայսոսիկ Նումայ 'ի մոի իւրում յեղյեղելով, անց ընդ կարսէոլեան դաշտս. և վաղընդփոյթ թողեալ զհետ իւր զցանկալին Տիբուր, զՍրվէժն Սնիոնի, և զանտառն Երեսոնի, նշմարէր զմայրիսն դիցանուէրս և զգմբէթ մեհենին։ Բաբէ, քանի տխուր և քաղցր կիրք 'ի նմա ներգործէին 'ի տեսիլն յայն. ո՛րպէս գորովէր սիրտ նորա 'ի տեսիլ վայրաց ծննդեան իւրոյ։ Այլ հզօրագոյնք ևս քան զայնոսիկ իղձք ձգէին զնա. ճեպեալ եհաս 'ի տուն քրմապետին, խնդրէր հարցանէր, և գտանէր զնա 'ի մահիճս ցաւոց՝ շուրջ պատեալ 'ի քրմաց և յաղքատաց։

Ցայն տեսիլ կական բարձեալ Նումայ, դիմեաց անկաւ 'ի ծունկս, կալաւ զաջոյ ծերունւոյն, և համբուրէր զայն ստէպ արտասուօք։ Իսկ ծերունին իբրև 'ի վեր էառ զարտևանունն խոնարհեալս, և ետես և ծանեաւ զՆումա, անդէն նշոյլ ինչ գերաշխարհիկ էջ 'ի ճակատ նորա, աչք նորա կենդանացան, զուարթացան դէմք. և գոչեաց. Որդեակ իմ, սիրեցեալ որդեակ. լսելի ուրեմն եղեն դից աղաչանք իմ, և տեսանեմ զքեզ վերատին։ Ե՛կ 'ի գիրկս իմ, ե՛կ փութա. գուցէ մեռանիցիմ 'ի խնդութենէս մինչչև զքեզ ողջագուրեալ։ Եւ զայս ասացեալ, բուռն արար անձին՝ յառնել բազմել յանկողնի,

և զդողդոջ բաղուկս իւր կարկառեալ առ նա, դիրկս էարկ՝ փարեցաւ զնովաւ, և ոչ ևս կարէր բարբառել, և ոչ թողուլ զնա 'ի գրկացն։ Իսկ պատանին թացեալ արտասուօք զսպիտակափառ և զերկայնահեր մորուս ծերունւոյն, հեկեկանօք ևեթ պատասխանէր նմա։

Յայդք ներգործեալք 'ի Տուլլիոս ապառեցին ըզզօրութիւն նորա. անկաւ անշարժ և կիսամեռ, բայց կալեալ միշտ զձեռանէ նումայ։ Փութային շուրջանակի 'ի սպաս ծերունւոյն. իսկ նա 'ի ձայնէ որդւոյն ոգի առեալ՝ եբաց զաչս իւր, և լուծան կապանք լեզուի նորա, և հրամայեաց ամենեցուն ելանել 'ի բաց, և թողուլ առանձին զորդի իւր։ Յայնժամ վերատին գիրկս արկեալ նմա, ասէ. Դարձար ուրեմն առ իս որդեակ, բարձցեն զիս այսուհետև դիք 'ի կենաց, և անդութ Պարկայն հատցէ զնարօտ կենաց իմոց. տեսի զքեզ, և մեռանիմ գոհ։ Եթէ էր ինձ այլ ևս կեալ ընդ քեզ, բաղդք ինչ ունէի զքէն. այլ ժամք սակաւք՝ որ մնան ինձ՝ չբաւեն 'ի դութ դորովոյ. զայսմանէ ևեթ և զքէն կամիմ խօսել։ Պատմեա՛ ինձ, որդեակ իմ, պատմեա՛ որ ինչ գործեցեր. անշուշտ օգնական եղև քեզ բախտ, զի դու ոչ կարօտացար դրել ինձ զվիշտս քո. ապա ինձ զամենայն յաջողութիւնս քո, զի 'ի լուր այդոցիկ զկայ առցէ հոգի իմ երկնաչու, և կամ դէթ քաղցրացի ինձ մահ, թէ բարբառք վերջինք յունկն իմ հնչեցեալ հաւատի ինձ արասցեն՝ զի թողում զքեզ բարեբաստ։

Պատասխանի ետ Նումա, և ասէ. Ա՛հ, հայր իմ, չիք այսուհետև ինձ բարեբաստութիւն, եթէ ոչ դիք յերկարեսցեն զկեանս քո, եթէ ոչ շնորհեսցեն զքեզ արտասուաց իմոց և ատելանաց և ցաւոց ընդ լքանել իմ զքեզ, ընդ մոռանալ զհայրդ իմ, և ընդ...

Ընդմիջեաց զբանս նորա Ծերունին, և ասէ. դու զինէն միշտ խօսիս, ուր ինձ զքէն ցանկալի է լսել։ Զիք մոռացեալ քո զիս, սիրես և սիրեցեր դու զիս միշտ. հաճ եմ և գոհ ընդ սիրա քո. մի լինիր խիստ քան զդաստիարակ քո Ծերունի։ Խօսեաց ինձ զորդւոյ իմմէ, զի այս կարևորագոյն խնդիր է իմ. եթէ սխալեցեր ինչ յիմիք. մի երկնչիր յայտնել ինձ։ Ճանաչես իսկ զհայր քոյին. ոչ է մարթ զի 'ի ժամ մեկնելոյ 'ի քէն՝ խստագոյն լիցի նա ընդ քեզ։ Եւ զայս ասացեալ, ձգեաց զալ իւր 'ի Նումա, և թէպէտ 'ի դառնակսկիծ ցաւս էր, ակնարկեաց 'ի նա գողտրիկ 'ի ժպիտ։ Դիւցազին պատանւոյն փարատեցան տակաւ շառագունանք, դէմքն նորա պարզեցան, և աչք նորա ողողեալք յարտասուաց դարձան 'ի ծերունին զուարթ և վստահ հայեցիւք։ Այսպէս վարդ կարմրերիւեան կորացեալ 'ի մրրկէ՝ ամբառնայ մեղմիկ զգլուխ իւր ցօղաւոր 'ի սկզբնածագ ճառագայթից յարփիսակիզբն։

Ցայնժամ Նումա պատմեաց նմա զհասանել իւր 'ի Հռովմ, և զհիւրընկալել 'ի բարեգութ արքայէն, զսաստիկ տարփանան՝ որով հաշէր, և

յոր ինչ 'ի տարփանաց անտի մղեալ՝ եղև ձեռն-
երէց։ Ճշմարտութիւն անկեղծիկ փայլէր 'ի
խօսս նորա, և մեղապարտ զանձն խոստովանէր
պատանին, զի անլուր գտաւ խրատուց քրմապե-
տին՝ թողեալ զՏատիոս. և ոչ հնարէր անբա-
սիր առնել զանձն, 'ի մոռացօնս արկեալ զքա-
ջութիւնս իւր։

Ի լուր բանիցն ոչ ևս զգայր Տուլլիոս զաղէտս
իւր. զորով հայրագութ դուլ առնէր ցաւոց նո-
րա։ Այլ 'ի լսել զի 'ի բոց սիրոյն Հերսիլեայ տո-
չորէր սիրտ պատանւոյն, ամբարձ զաչս իւր յեր-
կինս 'ի վեր, և գոչեաց. Ո՛վ սէր անողորմ, ոչ
ինչ զանխուլ են յինէն հարուածք քոյին. դու
զառաքինի պատանին վառես 'ի տենչ դատեր
ամպարիշտ թագաւորին, որ խուժադուժ անի-
բաւութեամբ հարկեցոյց զմեզ 'ի դաշնակցու-
թիւն իւր. որ անուամբ դիցն ձգեաց զմեզ 'ի
ծուղակ՝ զառածեալ զՕաբինիա 'ի նախատինս և
յաղէտս։ Որդեակ իմ սիրելի, յորպիսեաց տե-
սանեմ զքեզ շուրջ պատեալ 'ի վտանգաց. դու
'ի ծայր բարեբաստութեան համարիս հասեալ,
զի Հռոմուլ խոստանայ քեզ զդուստր իւր. այլ
ես ողբամ զահագին չարիսն, զոր հարսանիքդ
պատրաստեն։ Ընդ փեսայանալ քո Հռոմուլեայ՝
մերկացիս զսէր սաբինացւոց, և Տատիոսի իսկ
լիցիս կասկածելի, գուցէ և թշնամի իսկ նմա։
Մի կարծեր թէ միաբանութիւն երկոցունց թա-
գաւորացն տևեսցէ 'ի սպառ. հեռ 'ի խորս սրտի

նոցա բունեալ կայ. կայծ մի փոքրիկ լուցցէ հըրդեհ 'ի նոսա, և հարկ լիցի քեզ յայնժամ ընտրել ընդ աներ, և ընդ ազգական մտերիմ հօր քո. ընդ ընիկ տէր քո արդարագոյն 'ի թագաւորս և առաքինագոյն 'ի մարդիկ, և ընդ աւազակապետ՝ որ ոչ գիտէ այլ օրէնս քան զբռնութիւն, ոչ առաքինութիւն այլ՝ քան զքաջութիւն, և որոյ նախկին քաջութիւն եղև սրախողխող զեղբայր իւր առնել, և որ արեամբն Պոմպիլեայ կռեաց դաշն ընդ սաբինացիս։ . . . Դու հեծես, այլ այդպիսում ումեք հանդերձիս ահա հայրակոչ լինել։ Դիք անմահք, զչարագոյժ զուշակութիւնս իմ հանէք 'ի դերև, կամ խլեցէք 'ի սրտէ անմեղիդ զնեան չարաթոյն՝ որ եղծանէ 'ի դմա զամենայն առաքինութիւն և զկրօնս և զարբազան սէր հայրենեաց։

Եւ մինչ զայսոսիկ խօսէր ծերունին, Նումայ զաչս 'ի վայր արկեալ՝ չէիշխէր պատասխանել. անուն ևեթ Պոմպիլեայ կարկեցոյց զնա։ Գթացաւ Տուլլոս ընդ վիշտս նորա, երկնչէր կարի ինն վշտացուցանել զնա խիստ ազգարարութեամբքըն. և դադարեցուցեալ զդառն զրոյցն, յամեցոյց զայլ ևս խրատան՝ զորս կամէրն տալ։ Այսպէս համբակ Սակիլեպեայ բաժանէ զդեղ փրկաւէտ, այլ սաստիկ, յոր տկար հիւանդին հաստատեալ է առողջութիւն։

Այնուհետև Նումա յանձն էառ միայնակ զամենայն զհոգս ծերունւոյն. զտիւ և զգիշեր

կայր առ նմա, յուսալով միշտ զբժշկութիւն նորա և երկնչելով ընդ մահ. դիտէր զամենայն զվայրկեանս նորա, և կրէր ընդ նմա զամենայն զցաւս։ Մայր գորովագութ կալով առ մահիճս մահու որդւոյն, ոչ աւելի ինչ սէր և խնամս և համբերութիւն յանձին բերէ քան զոր նայն բերէր։ Նա ինքն զարբուցումն դեղոց մատուցանէր Ցուլիոսի, նա ինքն ամենայն բանից նորա առնէր պատասխանի, ողբայր զնա և խրախուսէր, և թագուցանէր զողբս իւր՝ զուարթ նմա ցուցանելով դէմս, և վեր 'ի վերոյ բերելով յանձին խնդութիւն և յոյս։ Զպարտս բարեկամի և որդւոյ և ծառայի միանգամայն կատարէր, բաւական առ ամենայն. և յաղթականին Լևոնդեայ ոչ այնպէս քաղցր և բերկրալի էր յաղթանակն, որպէս սպասն՝ զոր բարերարին իւրում մատուցանէր։

Օր ըստ օրէ զայրանայր ախտն, և մերձենայր օրհաս Ցուլիոսի. այլ ոչ ինչ արհաւիրս ազդէր 'ի նա ժամն այն, զի արդոյ ծերունւոյն կեցեալ էր հանապազ առ 'ի մեռանել։ Յամենայն 'ի կեանս իւր պատրաստ էր նա երևել յատենի ահաւոր դատաւորին. ամենայն աւուրք նորա համանմանք լեալ էին միմեանց. և վայրկեանն՝ որ զրաւ առնէր աղիտից նորա, սկիզբն էր վարձուցն։

Ոչ այլ ինչ հոգայր նա բաց 'ի նմանէ. հրամայեաց անդրէն ամենայն մերձակայից 'ի բաց

ելանել, և կալեալ զձեռանէ Նորա գգուելով, ասէ ցնա. Որդեակ իմ, ահա մեռանիմ ես. խընամք, զոր ցուցեր առ իս, առաւելեալ քան զպարտս քո, ես քեզ արդ գտանիմ շնորհապարտ, և քաղցրէ ինձ տանել ընդ իս 'ի դերեզման զպարտս զայս։ Յետ սուղ ինչ ժամու ոչ ևս կարօտացայց ես Նումայ, այլ Նումա թերևս ընդ հուպ կարօտացի Տուլլեայ։ Որդեակ իմ, քանի՞ դառնացուցանէ ինձ զմահ խորհուրդս այս։ Սէր քոյին ընդ Հերսիլեայ ընու զյետին վայրկեանս կենաց իմոց դառնութեամբ և արհաւրօք. զառաջեալ է սիրտ քո, վասահ լեր ընդ այս. մղեալ 'ի հարկէ սիրոյ, զակատեալ է զհետ նախընծայ հրապուրանաց, սուղ ինչ վայրկենի արբեցութեան դործելով 'ի նմա երկարայաւէտ զառանցանս։

Նումա, կրկնակ 'ի կենցաղումս է սէր, բարեբաստութեան և թշուառութեան առիթ։ Մին յաճախագոյն և սաստկագոյն, թերևս այն իսկ՝ որ զքեզդ հաշէ, տիրէ 'ի զգայարանս ևեթ, ծնանի և կեայ 'ի նոսա։ Ոչ բնակէ 'ի սրտի մերում՝ այլ գնայ ընդ երակունս. ոչ ամբառնայ զհոգի մեր, այլ ընկճէ զնա. ոչ խնդրէ զյարդ, այլ վայելս ևեթ։ Այս սէր արհամարհ չունի ինչ ընդ հոգւոյս մերում, և համարի զբարեբաստութիւն յիւրմէ։ Ոչ այդպէս, որդեակ իմ. դէք ոչ առ այլ ինչ եաւն նմա զիշխանութիւնդ 'ի վերայ մարդկան, բայց առ 'ի խոնարհել զամբարտաւանութիւն նոցա։

Միւսն սէր, պարզև երկնաձիր, ծնանի 'ի յարգէ և կեայ նովաւ. ոչ է նա ինչ 'ի կրից, այլ առաքինութիւն. չեն 'ի նմա մոլեգին բերմունք, այլ զգացումն ևեթ գորովական։ Հանդչի 'ի հոգւոջ, վառէ զայն անծախ, լուսաւորէ անկէզ, և զյաւուկն ևեթ մատուցանէ նմա զճարակ՝ զիղձս հասանելոյ յամենայն առաքինութիւնս։ Բերկրութիւնք նորա առ հասարակ ամբիծք են, և վիշտք իսկ հաճոյականք. շուրջ պար առեալ 'ի դառն վշտակրութեանց, վայելէ 'ի քաղցր խաղաղութեան. և այս ևեթ խաղաղութիւն կացուցանէ զնա երանաւէտ։ Դու զիտրձ առցես որդեակ իմ, դու խելամուտ լիցիս զի աւագութիւնք և դանձք և փառք իսկ ոչ հաւասարեն խաղաղութեանս այսմիկ՝ զոր անմեղութիւն ևեթ մատուցանէ. ծերութիւն, որ եղծանէ զամենայն, դողցես իմն յաճախէ զքաղցրութիւն նորա։

Քեզ արդ անկ է, որդեակ իմ, դատաստան առնել՝ որմ՞ւմ յերկոցունց ասի սիրելութեանց նման լցէ քոյդ։ Լուր, Նումա, հօր քում սիրելւոյ՝ որում ոչ առ այլ ինչ վշտալի է մահ. բայց զի ոչ ևս կարէ հակել բարեկենդանութեան քում. դու ոչ երբէք հասցես այնմ, ցորչափ ոչ իշխես անձին, և ցորչափ ոչ սիրես իշխանաբար 'ի վերայ կրից քոց։ Զգոյշ լեր, մի անհնարին զիշխանութիւնդ զայդ համարիցիս սկարութեանս մերում. էջ որդեակ իմ 'ի խորս

սրտի քո, և գտցես միշտ անդ առաքինութիւն ինչ կազմ և պատրաստ առ 'ի մարտ ընդդէմ ախտին՝ որ հրապուրէ զքեզ։ Եթէ գեղ վառէ զզգայութիւնս քո, խոհականութիւն զօրավիգն է քեզ. եթէ կիրք դժնդակք պարտասեն զքեզ, արիութիւն խրախուսէ. անիրաւութիւն եթէ գրգռէ զքեզ յապստամբութիւն, սէր բարեկարգութեան յորդորէ 'ի հնազանդութիւն. թշուառութիւն եթէ ընկճէ զքեզ, համբերութիւն հասանէ քեզ 'ի թիկունս։ Ա.յսպէս յամենայն անձկութիւնս հոգւոյ պատրաստեն քեզ երկինք սփոփումն և պատսպարան։ Ցօգուտ ուրեմն 'ի կիր ա՛րկ զնպաստս արարչին. և զգոյշ լեր չհամարել զանձն տկար, որով իրաւունս քեզ պահել հնարիս յանկումն։

Ա.յլ ահա հասանէ առ իս մահ, նուազի տակաւ բարբառ իմ։ Ա.զաչեմ զքեզ, սիրեցեալ որդեակ. հեղձո 'ի քեզ զչարաշուք սէրդ, որ թըշուառ յաւէրժ զքեզ կացուցանիցէ։ Զմի ինչ մնայ ինձ յաւելուլ քեզ. դու ինքնին գիտես, զի սէրդ այդ հազիւ խանձեալ 'ի քեզ, 'ի մուտացօնս ետ արկանել զՑուլիոս. և ո՞ կարիցէ երաշխաւորել, զի նոյն և զառաքինութիւն չտացէ քեզ ապախտ առնել, մինչ դու զիս հաւատար նմին սիրէիր։

Զայսոսիկ 'ի շունչ վախճանին բարբառելով Ծերունւոյն՝ մեռանէր 'ի գիրկս Նումայ, 'ի մահուն իսկ անդ զՀայրենի գութ իւր յայտ առնե-

լով, առ նա զվերջին հեծութիւնն ուղերձեալ։ Բայց թէպէտ և ոչ ինչ յեղակարծ էր մահ նորա, փոքր միւս ևս մահառիթ լինէր պոմպի-լեան զաւակին։ Հարկ եղև կորզել բաժանել զնա'ի մարմնոյ քրմապետին, և խնամ ունել նմա զի մի 'ի յուսահատութենէն ընկճեսցի։ Բայց թէպէտ և պարտաւորեալ 'ի տքնութենէ և 'ի պատմութենէ, թէպէտ և ողողեալ աչք նորա յարտասուաց, և ոչ ինչ ամենևին առեալ կերակուր, կամեցաւ իւրովի ածել զդիակն բարերարին իւրոյ 'ի փայտակոյտ անդր. և երթայր առաջի քրմացն և սաբինացւոց առ հասարակ, գունատեալ հիւծեալ արտասուալից բարձեալ ըզբեռնն ցանկալի։ Ջեռեղեալ ապա զայն 'ի փայտակուտին, և պշուցեալ 'ի նա ձիգ, դիրկս նմա արկանէր ստէպ, և ոչ կարէր բաժանել 'ի նմանէ, և ողբայր զնա այսպէս.

Ո՛ հայր իմ, ոչ ևս ապա տեսից զքեզ, ոչ ևս լիցի ինձ տեսանել զքեզ 'ի սպառ. ոչ ևս շրթունքդ այդոքիկ զսէր քո ինձ յայտ արասցեն, և ոչ աչքդ այդոքիկ բացցին՝ հայելյիս գորովանօք։ Ո՛վ դէք, որ վաղու ևս թողէք զիս որբ 'ի ծնողաց, ընդէր միւսանգամ զնոյն դառն աղէտս ածէք 'ի վերայ իմ։ Ա՛յո այո, կորուսանեմ այսօր իսկ զՊոմպիլիոս և զՊոմպիլիա 'ի դաստիարակն իմ և 'ի բարերար. և ամենայն նպաստք, զորս երկինք շնորհեն մարդկան առ 'ի քաջալերել զնոսա և 'ի մխիթարել, բառնան յինէն առ

հասարակ ընդ Տուլլեայ։ Թափուր է ինձ այս-
ուհետև երկիր, զի ոչ ևս գտանեմ 'ի նմա
զՏուլլիա։ Եկայք եկայք, ողբակից լերուք ինձ
աղքատք և թշուառք, որ որբք հանգոյն ինձ մը-
նայք. աղէտք նմանավիշտք եղբարս զմեզ կացու-
ցանեն. եկայք, եկայք համբուրել զբարւոյ հօրն,
զոր կորուսաք, զցուրտ և զանկենդան նշխարս։

Եւ ահա մատեաւ յառաջ աղքատանին, և
սաբինացիք առ հասարակ ճիչ բարձին կակա-
նաւորք։ Ոչ ևս իմանալի լինէին բարբառք, այլ
հնչիւն խառնաձայն լսելի լինէր և խոր հեծու-
թիւն. և յաճախէր կոծն 'ի բոցածաւալ ամ-
բառնալ հրդեհին։ Նումա բռնի իմն 'ի խարոյկ
անդր մղեալ՝ բառնալ զդիակնն, արգելաւ 'ի մեր-
ձակայից անտի. և ծախեաց անդէն հրդեհն ըզ-
դին անկենդան զարդարագունին 'ի մարդիկ։
Յայնժամ խոր լռութիւն փոխանակեաց զկոծ
կականաւոր. սաբինացիք, քուրմք, և Նումա ինք-
նին, տխուր աչօք նկատէին զաճիւնն զմիայն մը-
նացուած այնորիկ՝ զոր ողբային. և ամենեքին
իսկ վշտադին անմռունչ 'ի մոխիր անդր առնն
բարելաւի կային ակնկառոյցք։

Շինչուցին ապա գինեաւ զկայծակունս խա-
րուկին, և ժողովեալ զաճիւնն՝ ամփոփեցին 'ի
սափոր. և էած զայն Նումա 'ի շիրիմ անդր
ստորերկրեայ՝ ուր սափորն մայրենի հանգչէր,
և ասէ. Կացջիք 'ի միասին աճիւնք պաշտելիք
ինձ, լերուք անմեկինք և յետ մահու, որպէս

'ի կեանս անդ հոգիք ձեր կենդանարարք։ Իցէ թէ հոգիքն այնոքիկ ամբիծք և երանաւէտք խնդակիցք իրերաց լիցին 'ի դաշտս ելիսեան, եթէ ոչ ընդ առաքինութիւն որդւոյ իւրեանց, գէթ ընդ կրօնս և ընդ դութ որդիական։ Յայնժամ՝ հատեալ զխարտեշագեղ գիսակս վարսից իւրոց՝ նուիրեաց ատուերացն Տուլլեայ, և խաչինս տանեակ սեաւս եղեն Երեբեայ, զոհիւն այնուիկ աղիողորմ յուզարկաւորութեանն արարեալ վախճան։

Եւ կատարեալ զխրատին պարտս իւր, դառնայր Նումա 'ի բանակ անդր՝ մնախոհ 'ի խրատս Տուլլոսի։ Թէպէտ և հաւանէր 'ի մտի ընդ ճշմարտութիւն խրատուցն, ընդ վտանգս՝ յորս երթայր անկանել, ընդ վիշտն՝ զոր պատրաստէր Տատիոսի և ժողովրդեան նորա, թէպէտ և տակայր յածել զմտաւ զի գնայր փեսայանալ այնմ՝ որ մահաւորթ ծնողացն լեալ էր իւրոց, սակայն պատկեր Հերսիլեայ, կասկած տեսանելոյ զնա 'ի գիրկս նախանձորդի, ամենայն զառանցանք սիրոյ և ամենայն տուայտանք նախանձու, դումարէին 'ի մարտ ընդդէմ կրօնից նորա և բանին։ Հաւաչէր 'ի ստունդանել յեսմին խրատուց ծերունւոյն. ազաչէր ողբագին զատուերս նորա՝ ներել տկարութեան իւրում. զի և յետ մահուն Տուլլոսի համարէր զատուերս նորա աւրնթերակաց իւր հանապազ, և տեսող ամենայն գործոց իւրոց և գաղտնածա-

ծուկ խորհրդոց. և այս երկիւղ վրկաւէտ՝ յաւել 'ի նմա նորանոր առաքինութիւնս։

Նումա յուսայր գտանել զբանակն յեզերս սահմանացն հերնիացւոց. այլ գիտաց 'ի Տրեբիա զի Հռոմուլ կիսով բանակին երթեալ էր առնուլ յարձակմամբ զՊրենեստ, և Հերսիլիա մնացորդօք զօրացն խաղայր ընդդէմ արքային հերնիացւոց։ Քանզի չտալ նորա անցս հռոմայեցւոց ընդ երկիր իւր 'ի խաղալ նոցա ընդդէմ Մարսից, թուէին թշնամանք անողոքելոյն Հռոմուլեայ, և պատուէր տուեալ էր դատերն առնուլ 'ի նոցանէ վրէժ ահագին. և իշխանութիւն անողորմ լինէր ինքնայորդոր դահիճ հայրենի հրամանացն։

Բազմավոտանդ զարշաւանն Հերսիլեայ համարէր Նումա. և տենչացեալ լինել առ սիրուհւոյն, ճեպէր զտիւ և զգիշեր՝ հասանել առ նա վաղագոյն։ Այլ, աւաղ քանի տակուսն և քանի վիշտ եղև նմա 'ի մտանելն յերկիր հերնիացւոց, յորժամ տեսանէր զշաւիղս Հերսիլեայ կնքեալ յաւերանաց և յաղխից։ Հուր և սուր 'ի ձեռին հալածեալ էր նորա զթշնամիսն տկարս փախստեայս յերեսաց իւրոց. հունձք խոնարհեալ կային ընդ երկիր, սիբակակոխք առաթուր ձիոց. ծառք հատեալք, և կոճեղք ևեթ նոցին մարդաչափ մնացեալ, որոց ուղէշք պողպատեալք համասիւռ ընդ երկիր՝ վկայէին զարշգաստաւորութիւն նոցա։ Գիւղք այրեցաւեալք՝

դեռ ևս ծխէին յաճիւն դարձեալք, և բնակիչք նոցին բազմախողխող երկաթոյն լեալ ճարակ։ Անկեալ դնէր դիտապատ մշակ առ խորտակեալ արօրովն. 'ի գիրկս կողոպտեալ և հարուածեալ մօր կայր մանուկ մեռեալ. սրախողխող տարածեալ կայր փեսայ առ հարսին, և բազուկք նոցա արիւնաթաթաւք և կարկամեալք աջակից միմեանց կային մնային։ Գնային կորընչէին ճապաղիք արեան 'ի մոխրակոյտս. և անգեղք տխալուկք, որ միայն յամայացեալ վայրս անդ մնային շնչաւորք, կռիչ բարձեալ՝ յափշտակէին 'ի միմեանց զընծայս Հերսիլեայ տասկալիս։

Ի տեսիլ աղիտիցն գոչեաց Նումա. Դիք անմահք, այսպիսեաւ ուրեմն հարսին առաջի կայ ինձ լինել փեսայ. այսոքիկ ուրեմն իցեն հանդէսք հարսանեացս։ Իցէ՞ իսկ հնար, Հերսիլիա, զի զայսպիսիս գործեալ իցէ՞ քո արհաւիրս։ Թէպէտ և Հռոմուլեայ զայնոսիկ վճռեալ, պարտ էր ինչ դատերն զայնոցիկ յանձն առնուլ զկատարումն։ Ո՛հ, եթէ մեծարել ինչ պարտ իցէ զհայր և զթագաւոր, սակայն առաւել ևս ըզպատշաճս անձին և զմարդասիրութիւն. պարտիսկ է զմահ յանձն առնուլ, քան հնազանդել թագաւորի որ եղեռն հրամայիցէ։ Ինձ՝ որ զայի պաշտպանել զնա, ինձ՝ որ յօգնութիւն նմին դիմեալ զայի, հարկ լինի արդ զնալ ընդ նախճիրս գործեցեալս 'ի նմանէ, և կոխել զեր-

կիր ողողեալ յարենէ՝ զոր նայն ճապաղեաց։ Անիծապարտ իրաւունք մարտի, զայսոսիկ ուրեմն ոճիրս առնես դու օրինաւորս. այսոքիկ ուրեմն իցեն արդասիք իմոցս քաջութեանց, և հետևանք փառացն՝ վասն որոյ թողի զամենայն։ Աւաղ, մոռացայ զՏուլլիոս, լքի զՏաստիոս, այսպիսեաց արիւնախանձ վագերց գոլ ընկեր. հաւասարել կատաղութեան նոցա՝ի մարտի, և համարիլ դիւցազն։ Ներեա ինձ, Տուլլիոս, զոճիրս զայս ահագին. դարշիմ մերժիմ՝ի սանէ մինչև՝ի սպառ։ Դիւցազն ճշմարիտ վերամարտիկ հայրենեացն է ընդդէմ թշնամեաց, իսկ թագաւոր, իսկ զօրական, որ չիթ մի հեղու արեան՝ յոր մարթէր խնայել, գազան է վայրենի. զոր գովեն մարդիկ, առ՝ի չկարելոյ արդելուլ զնա՝ի գառագղի։

Յայնժամ Նումա՝ի բաց եկայ յաղիողորմ տեսարանէն, և հրաժարեաց՝ի հետոց Հերսիլեայ, զի մի այլ ևս ամաչեսցէ ընդ գնացս սիրելոյն։ Եւ յետս դարձեալ, եկ՝ի սահմանացն հերնիացւոց. և տխուր կորակոր ընդ պատերազմողն գոլ, դառնայր՝ի Հռոմ՝ ուր վաղ իսկ բանակն ամենայն ժամանեալ էր։ Եւ՝ի հասանել անդր Նումայ, Հռոմուլ գոհութիւն՝ի կապիտոլին մատուցանէր դից՝ վասն ամենայն չարեացն գործեցելոց ընդ մարդիկ, անմահիցն գործակցութեամբ ամբառնալ զանդթութիւնս իւր յաղնուականութիւն։

Զոգաւ և Նումա 'ի Կապիտոլ, ուր Յաստիս հանդերձ դատերքն և սաբինացւովք առընթեր կայր զոհին, և ել անդր։ Այն ինչ բարեգութ աղքայն եռեռ զնա'ի հեռուստ, աճապարեաց ըստ ներել տիոցն ընդ առաջ նորա, և գիրկս էարկ պոմպիլեան զաւակին։ Արտասուէր ծերունին 'ի խնդութենէ'ի տեսանելն զնա վերստին. և ապա արտասուեաց'ի տրտմութենէ'ի լսելն զմահ Յուլ-ղոսի, և ասէ. Ո՛վ թշուառ ծերութիւն. հարկ ուրեմն է յերկարակեաց քան զսիրելիս լինել։ Նումա, չիք որ ինձ այսուհետև յաշխարհի բաց 'ի քէն և 'ի դատերէ իմմէ. ամենայն իղձք սրտի իմոյ ամփոփին յերկոսին 'ի ձեզ, և յոյս բարեբաստիկ է ինձ զրաւելոյ զկեանս իմ նախ քան զձեզ։

Եւ զայս ասացեալ՝ կալաւ զձեռանէ դատերն, և ընդ Նումայն կցորդեալ զայն՝ պնդէր առ սրտին։ Օրիորդին կարմրէին այտք, և զողդոջէր ձեռն նորա 'ի հպել յաջ Նումայ. և խոնարհեալ զաչս իւր, չիշխէր հայել 'ի դիւցազնն։ Բայց Նումա խնդրէր աչօքն զՀերսիլիա, և իբրև եռեռ զնա 'ի հեռուստ առընթեր Հռոմուլեայ, արծարծեցաւ 'ի նմա սէր, և բորբոքեալ՝ եղծ 'ի միտս վայրկենի զամենայն արգասիս խրատուցն Տուլլոսի։ Ձեպեալ Նումայ՝ մատոյց բարւոյ արքային զդրկախառն համբոյր. և 'ի բաց խուսեալ 'ի գրկաց նորա, և վեր 'ի վերոյ զդուռն նորա ողջունեալ, փութայր հասանել առ Հռոմուլ։ Հռոմուլ դիրկս էարկ նմա. և յանդիման

կացուցեալ զնա ժողովրդեանն, հրամայեաց լը-
ռել, և ասէ.

Հռովմայեցիք, տեսէք դուք զիս յաղթանա-
կաւ դարձեալ 'ի Հռովմ. այլ Նումայի անկ էր
յաղթանակել ընդ իմ, նմին իսկ շնորհապարտ
եմ վասն յաղթութեանս։ Արդ ահա փոխարէն
նմա տամ զայն՝ որում թագաւորք բազումք 'ի
զուր ցանկացան, զայն՝ որ դիւցազանց բազմաց
չէաւ յանձն հարանալ, զդուստր իմ։

Յայնժամ Հռովմայեցիք զաղաղակ խնդու-
թեան հարին, իսկ սաբինացիք կային 'ի տխուր
լռութեան. Տատիոս եկաց մնաց անշարժ, որպէս
զի տեսանիցէ շանթ յերկնէ առ ոտս իւր անկ-
եալ. Տատիա այլագունեալ՝ առ հօր իւրում
ամփոփէր. Հերսիլիա ետես զայն, և պշնայր 'ի
նա ընդ ակամբ։ Իսկ Նումա շառագունեալ,
զտագնապեալ աչս իւր մերթ 'ի Տատիա ածէր,
մերթ 'ի Հերսիլիա. էր զի 'ի սաբինացիս, և էր
զի 'ի Տատիոս։ Հռոմուլոս անխռով յառաջ
ածեալ զբանս իւր, ասէ. Ա՛ռ վաղիւ կատարեա-
ցին մեծափառ հարսանիքն զբազնաւս, որ բար-
ձեալ կրէ զկողոպուտ Խառլիոյ. և 'ի տասնօրեայ
հանդէս խաղուց ոսնախմբեացին հարսանիքն։

Ի լուր խաղուցն սաբինացիք հայէին ընդ մի-
մեանս՝ զյօն 'ի վայր արկեալ. Տատիոս զաչս
'ի վեր յերկինս ամբառնայր, իսկ Նումա գլխա-
կոր զերկիր նշմարէր։

Յաւել ապա Հռոմուլ. Հռովմայեցիք, հա-

տուցեալ զպարտս շնորհակալեաց, դարձեալ պարապեցայց յօգուտ ձեր։ Կալայ զերկիր Ա-ւրոնկաց. այլ գաւառն այն ոչ լիցի ձեզ 'ի շահ ցորչափ 'ի վոլսկաց է անջրպետեալ. միակ հնար առնելոյ զայն շահաւէտ՝ է նուաճել զվոլսիկս։ Տան այլ ևս աւուրք, և դիմեցիք 'ի վերայ նոցա. առ 'ի մարտ ծնեալ է.ք դուք, ո՛ հռոմայեցիք. և ոչ է հնար ձեզ մեծանալ, և ոչ աննուազելի ունել զմեծութիւնդ ձեր, բայց միայն զինուք։ Խաղաղութիւն քան զամենայն պատիժս պատուհասից լիցի ձեզ դժնդակագոյն. մեղկացի նոքա արիութիւն ձեր, և տկարացին բազուկք ձեր անպարտելիք։ Զմտաւ ածէ.ք քանի՛ հզօրագոյնք քան զամենայն ազգս դատանիցիք, եթէ ոչ թողեալ երթէ.ք զդէնս, և ևս քան զևս կրթեալ 'ի դժուարին արուեստ դիւցազանց, յարձակիցիք 'ի թշնամիս կնատեալս ընդ երկար խաղաղութեամբ. զի եթէ հաւասարք իսկ իցեն ձեզ արիութեամբ, որ յանհնարիցն է, սակայն չկարացեն զօրութիւն և փորձ հաւասար հանել ընդդէմ ձեր 'ի ճակատ։ Մինչև ոտիքն տկարք կրթեացին 'ի պատերազմ ընդդէմ ձեր, մինչև ուսին 'ի ձէնջ զարուեստն ահագին՝ յորում դուք հմուտք է.ք, պարտեալ նուաճեացին։ Այսպէս յամենայն ազգս Իտալիոյ յարձակեալք մի ըստ միոջէ, և բաժանեալ զնոսա՝ առ 'ի դիւրագոյնս նուաճելոյ, դաշնակցեալ ընդ տկարագոյնս, և յետ արկանելոյ զդաշնակցութիւն

նոցա յօգուտ՝ ընկճեալ զնոսա, հայլիք 'ի սուղ ժամանակի 'ի տիեզերակալութիւն՝ զոր խոստացաւ Աբրամազդ Հռովմայ։ Ամենայն հնարք օրինաւորք են առ 'ի ընուլ զկամս դից. և յաղթութիւն արդարացուցանէ զամենայն ճարտարութիւնս՝ որ հայթայթեն զայն։ Ի պատերազմ ևեթ խորհեցարուք, ո՛ հռովմայեցիք. պատերազմ լիցի ձեր միակ գիտութիւն, նոյն և միակ պարապու�։ Թողէք թողէք անդր այլոց ազգաց մշակել զերկիր ապաշնորհ՝ զոր քրտամբք իւրեանց ուռոգեն. թողէք նոցա զխնամս գանձուց, զորս նոքա վաճառաշահութեամբ և ճարտարութեամբ և ամենայն նորանոր հնարիւք զեղխութեան մթերեն, հընձեսջիք դուք զցորեան սերմանեալ 'ի նոցունց. վասնեսջիք զգանձս մթերեալս՝ 'ի նոցունց։ Նոցա զի ծնունդք են երկրի, անկ է դարմանել զայն. իսկ ձեզ, զի որդիք էք Արիսի, յաղթութիւն ևեթ լիցի արուեստ։ Պատերազմ անհաշտ, ո՛ հռովմայեցիք, ընդդէմ անհնազանդից. աշխարհ ամենայն ձեզ տուեալ է 'ի ժառանգութիւն, և որք դրաւեն զմտան ինչ նորին, յափշտակողք են ընչից ձերոց, մի դադարէք յաղնուական ճգանց ժառանգելոյ որ ինչ ձեզ է անկ։

Եւ 'ի բարբառել Հռոմուլեայ զայսոսիկ՝ ծափս հարկանէր բանակն, այլ ժողովուրդն քրթմնջէր. և գնայր հծծիւն ընդ ժողովն, հանգոյն բզզելոյ մեղուաց՝ որ տեղի տան 'ի ծերպէ վիմի 'ի կապտել մշակի զերկս նոցա։

Տաճիոս վայրիկ մի յինքն ամիսոսեալ, Հայեցաւ աղիողորմ աչօք 'ի ժողովուրդն. և յոտին կացեալ 'ի բեմին՝ յոր բազմէր դէմ յանդիման Հռոմուլեայ, 'ի վեր էառ զգաւազանն ոսկի առ 'ի նշանակ ժողովրդեանն յունկնդրութիւն։ Կերպարան նորա պատկառելի, ապիտակաւէրսիւքն ծաղկեալ, մարդասիրութիւն և հեզութիւն նկարեալ յաչս նորա, ազդէին ակնածութիւն սուրբ յամենեսին։ Հռոմուլ խռովեալ և զարմացեալ՝ ակնարկէր 'ի նա դժնէհայեաց. յօնք նորա սեաւք կցէին ընդ իրեարս, և ցասումն 'ի դէմս նորա երևէր, որպէս յորժամ 'ի ժողով դից ահաւորն Արամազդ ակնարկէ 'ի Կռոնոս 'ի հակառակել նորա հրամանաց իւրոց։

Խօսել կալաւ Տաճիոս մարդասէր արքայն, և ասէ. Գահակից իմ և իշխանակից, արքայդ Հռոմմայ. չէք ոք 'ի Հռոմմայեցիս՝ որ առաւել քան զիս զարմացն ընդ քաջութիւն քոյին, ընդ հանճար պատերազմական, և ընդ սէր փառաց։ Բերկրիմ ընդ յաղթանակս քոյին ոչ ինչ նուազ քան զքեզ, և քաղցր է ինձ ածել զմբատաւ՝ զի յերկարաւոր 'ի կեանս իմ չէք իմ զոք 'ի դիւցազանց տեսեալ համեմատ քեզ։ Ա.յլ զքեզս այս անուն ևեթ դիւցազին՝ ոչ է բաւական թագաւորի. է միւս այլ քաղցրագոյն և փառաւորագոյն, կոչել հայր ժողովրդեան։ Հայեաց 'ի մեան ժողովրդեանդ, որ զրահապզեստք կրեն զնիզակս. ապաքէն որդիք քո են դոքա, և դու

հայրապետաց բնակ գոսան վարքս, զոր Հայկազն և 'ի Մեսրոպայ ժողովրդական ասասելոյ ասասելոյ բան զգօրոյ, որ կարգեալս գնդապետս զգեցեալ ն'ն ասա 'ի սակ զգենու զգեստս գնդ խրատելոյ 'ի Հայոց ազգեն վարուն զրուհելոյ։ Ա՞չ զարս ևս որոյ կր կրեն բս, զոր զ. ամենայն վարդապետաց զգոսան բանեսս 'ի զգոյնեն զՀայոց, զՆոր անարգ զի՝ և զոյրն զՀարուն կրոցս գնեսս։ Դասեն կր բս ամենայն ն'ն յարուսանոց նոցս։ և յարգանքն ամենայն ն'ն զանելոյ ընչեր նոցս և արեանն։ Հանգնեն, Ասա՛ է սրոյ սարոյ զոգս Հանեալ սրոյս, զարարս է բեզ նոցս կենալ, որոց Հարքն զասն բս զկեանս խրատելոյ զանարգելոցն։ Դասոյ արեան 'ի կրասրանն է մարդկան, զասոյ արեան մանուսանոյ 'ի կարծելոյ բնաւ զկասն զ կոյ կրասրանն։ Ոչ կր բնակ բարեկենաց ամենայն ն'ն Հրամանքն նոցն։ Զոր բնակ մարդկան։ սասանչեսարարն և նոցն չնարհ, եղև զարն սակեզենեկ, և յանկարծակի ժողով զ կոյն յՍկիթեայ ոչ սաս զոր ինչ բնակարս Ամենեսս զարբ. գանեսկ, բայց զի արարիչ եղև նոս Ամենեցոյ։ Մի զոր 'ի զկոյ անասն, նրանս, ամենայն արեան յասանիս։ և յաչ լեցի բեզ՝ ամենայն արարչս նոս ամենայն։ Ամենայն բեր նոսին, և մի ևս բոյ զ խոն անանգս զարարսեր ամենայն Հրամանքդ նոսա ճիրս արեանց։

Դա կարծես՝ ամենայն չկարելոյն Հասանելոյ կոյ սասանց արասելոյն։ զոյց ինձ սարս զարդ մի, զոր յարհաւիրս մարարն եղև Հասասասա.

թիւն, ապէ սուտ ինձ, թէ երբեմն ապրիլ՝ որոյ հետք խակ չերեւիր 'ի միոյ երկրի։ Մի թէ սրատեսութիւնն հէքն և թիշտատ թերել սրտիցդ զմեծամիտն խր։ ապարէն յարիւնոյ դու ես։ թանձրացուցեալ թանաքատարացն Արքայէսոյ, ապ յարիւ թանաքատարն դեռս ես 'ի երդնուածն։ Մի թէ սրատեսութեանդ դատեսցէ զքեզ սրտիցդ։ Զի որ որ յարձակի 'ի մեզ։ շատ բիւրեալն աշխարհակալաց թիւնք յա մեծամեծք։ զնեա մեզ թէպտ յարդ սրեալ զրարեկեալս սուտ թիւն ապրիլ՝ զրարբանիկս յարիւ ամենեքեան։ Ասեալ, Հանեալ երդ ամենայն ինչս յանիրաւ չրատեալ ես 'ի սրատատ Հասեալ զանիրաւատ թիւնս, և 'ի սերոսեալ զատատարս։ Ձեռն ատր ինձ յարքատանալուս սրաշատն։ Երկեա՛ցարդ 'ի մեռանիլն բեզ ատհանատ մեր բեզ արձակեսցս զբարիս յարիւ թանչատ թանալն, և երբեմն սրբեսցարդ զանանդեսն սրատատ, զյարդ զամենայն կարատատ թիւն և չմեռցիս որ թիշտատ յաշխարհս մերում։ յայնժամ լցցի քեզ բնարձակեալ և ես զատհանատ ատրս։

Եւ 'ի զարարեալ ատրս 'ի խաղալոյ, մինչեր

Հռոմուլ. ամբոխն աղաղակէր, և զօրքն առ հասարակ 'ի գութ շարժէին։ Եւ իբրև պատրաստէր Հռոմուլ 'ի պատասխանել, 'ի դիմացն իսկ տալով գուշակել՝ զի չկամէր շնորհել զխաղաղութիւն, փութացաւ անդէն ժողովուրդն, և խռնեալ զնովաւ՝ չեթող նմա բարբառել։ Կանայք և ծերք, հանդերձ մանրերամ մանկտուով, բազկատարածք առ նա 'ի ծունկս անկեալ աղաղակէին. Խաղաղութիւն, խաղաղութիւն, տուր մեզ ատուածորդիդ զխաղաղութիւն. զայդ եթէ խնդրեմք 'ի քէն շնորհ. ա՛ռ զինչս մեր եթէ կամիս, այլ շնորհեա մեզ զխաղաղութիւն։ Իսկ Տատիոս այլ յայլմէ լեալ, գոչէր արտասուօք. Տացի ձեզ, որդեակք իմ, տացի ձեզ խաղաղութիւն. խոստանամ ձեզ զայդ։ Խնդրեցի զայն 'ի Հռոմուլ՛եայ՝ յաղերս ածեալ զգութ և զբարեկամութիւն, և պահանջեմ զայն արդ 'ի նմանէ որպէս գահակից հաւասար 'ի բարձ և յիշխանութիւն։ Եւ եթէ ժխտեացէ ինձ զայն, ո՛ հռովմայեցիք, երթայց առաջի ձեր, երթիցուք զկայ առնուլ առ դրան քաղաքիս. անդ ապաստացուք նմա հանդերձ բանակաւն. և անկեալ տարածեալ յերկիր, տեսցուք թէ իշխեացեն անողորմքն կոխել ընդ ոտիւք զթագաւորն իւրեանց, զմարս և զմանկունս։

Յայն բան՝ զօրքն ամենայն զաղաղակ բարձեալ ասէին. Մի՛ երբէք մի՛ երբէք։ Եւ իւրաքանչիւր ոք 'ի զօրաց անտի զէնընկէց լեալ, իւրաքան-

չիւր ոք խառն ընդ ամբոխին 'ի ծունկս անկեալ, և գիրկս արկեալ մօր իւրում կամ որդւոյ, աղաղակէր ընդ նոսին. խաղաղութիւն: Իսկ ամենայն Հռոմայեցոյ ստիպեալ զայն առաջին նուագ 'ի կեանս իւրում տեղի տալ, թագոյց զսքրամբրուութիւն իւր, և խոժոռ դիմաք շնորհեալ ըզդուլ զինուց, մեկնեցաւ շտապաւ յապարանս իւր: Գնային զհետ նորա միշտ թիկնապահք նորին, անուանեալքն Երագունք, անձնապահք նորա անմեկինք:

Այլ այն ինչ մեկնեցաւ 'ի ժողովոյ անտի, զմթերեալ 'ի սրտին զցաւումն ժայթքեալ՝ կուտէր անէծս 'ի վերայ Տատիոսի. և 'ի ցասման անդ նորին այթաքեաց ինչ 'ի բերանոյ նորա ազիտից մեծաց պատճառ, զի ասէր. Մինչև ցե՞րբ ծերդ այդ դժպհի արկցէ խոչ ընդ ոտն փառաց իմոց. չէք ոք ուրեմն բարեկամ ինձ, որ զերծուացէ զիս 'ի դմանէ: Այսմ եղեռնաւոր բանի կարի իսկ լսողք եղեն թիկնապահքն Երագունք:

Հերսիլիա զհետ չոգաւ հօրն, բայց Նումա ոչ իշխեաց զհետ երթալ Հերսիլեայ. այլ յեց 'ի սիւն մի, ակնկոր մնայոյզ համեմատելով զառաքինութիւնան Տատիոսի ընդ մոլեգնութիւնս այնորիկ՝ որում հանդերձեալն էր փեսայանալ, ընկղմեալ կայր 'ի խորհուրդս մտաց 'ի խորինս: Մատեաւ առ նա Տատիոս, և ձգեալ առ նա զձեռն իւր՝ ասէ. փեսայդ Հռոմայեցոյ, և դու

ևս կամիս պատերազմել ընդ իս։ Ընդ այս բան յարուցաուս Հարաւ Նումա, և անկեալ առ ոտս բարւոյ արքային, գոչէր. Ո՛ հայր իմ, չիշխեմ հայել 'ի դէմս քո. Ներեա....

Ի վերայ էած ծերունին. Ներեմ քեզ զամենայն, եթէ խոստանաս դու սիրել զիս մինչև 'ի սպառ։ Կատարեցեր դու զհաճոյս քո զաղտ յինէն, և զանամութիւնն անհաճոյ սաբինացւոցս արարեր. ոչ կարծեմ թէ արդոյ ծերունւոյն Տուլլոսի տուեալ ելցէ քեզ զխորհուրդդ զայդ, այլ եթէ բարեբաստ այդուիկ կայցէ քեզ լինել, պարտ է ամենեցուն մեզ հաւանել ընդ այդ։ Կամէի, Նումա, ես ինքն լինել քեզ 'ի հայր, այլ Հռոմուլ զբախտս զայս ժառանգեաց, և ես չկարեմ թանգուզել՝ զի նախանձիմ ընդ նա։ Ո՛հ, եթէ երբէք ոչ լցցէ նա քակ ըզպարտս գորովոյ, եթէ սիրտ նորա ոչ զդայցէ լիով զյարդ յորչորչանացն՝ որ ինձ քաղցր յոյժ պատրաստէր, Նումա, տարածեալ կայ միշտ գիրկ իմ հայրենի ընդունել զքեզ. և Տատիոս չնորհապարտ քեզ լիցի, եթէ դու 'ի սիրելիչ քեզ զնա ընտրեացես։

Եւ զայս ասացեալ, 'ի բաց եկաց. և Նումա կայր անշարժ, տագնապեալ 'ի խրճէ և 'ի սիրոյ, և 'ի յոյզս անդ սրտին յուսայր գտանել խաղաղութիւն առ Հերակլեայ։ Դիմեաց յապարանս Հռոմուլեայ, և տեսեալ զհանդերձանս հարտանեացն, լի եղև խնդութեամբ. այլ խնդու-

թիւնն այն ոչ էր անտխեղծ, սուղ ինչ երկիւղի մարթէր եղծանել զայն։ Խօսեցաւ ընդ սիրուհին, և լուաւ զմայլմամբ 'ի բերանոյ նորա՝ զի սիրելի էր նմա. այլ զմայլումն այն չկարաց փարատել 'ի սրտէ նորա զարհուրելի պակուցանողական։ Հայէր 'ի Հերսիլիա, և գտանէր յաչս նորա զսէր, այլ ոչ էա զխաղաղութիւն. տագնապէր, յուզէր, յեղյեղէր ստէպ 'ի մտի՝ զի տա՛ վաղիւ էր նմա օր բարեբաստութեան. այլ 'ի խորս սրտին բառնայր բոզոք, զի բարեբաստութիւն հեռի էր 'ի նմանէ, և յաւելոյր նմա կշտամբանս։ Զուր ջանայր նուազ անբասիր զանձն առնել, և տարապարտ համարել զկշտամբանս. սիրտ նորա ժխտէր միշտ զպատճառս, զորս միտք նորա ածէին։

Ուր ուրեմն ընկճեալ 'ի հոգոյ, ահաբեկեալ յերկիւղէ, հաշեալ 'ի սիրոյ, զիմեաց յանտառն Եգերեայ, ուր եդիտ երբեմն զսիրուհին։ Ցանկայր տեսանել զվայրն սիրելիս իւր, յուշ ածէր զտեսիլն խորհրդաւոր՝ զոր եռեռ անդ. յուսայր զի 'ի գնալ իւր յոխտ 'ի մեհեան անդր Աթենասայ, շնորհէր նմա զիւսուին զխաղաղութիւն՝ որում կարօտէրն յոյժ։

Օրն տարաժամէր. նորա յառաջ խաղացեալ՝ այն ինչ եհաս 'ի մուտս անտառին, լուաւ ճիչ ողբական. թռէր նմա ծանօթ օրհասականն այն բարբառ, և տեսեր 'ի ձեռին՝ զիմեաց տա հեծութիւնն... Եւ ահա, ով տեսել տեսակին

կալ, տեսանէր զՏատիոս կիսամահ անկեալ ընդ սուսերովք չորից յելուզակաց։ Գոչեաց մեծաձայն, և զերկուս յեղեռնագործաց անտի արկ տապաստ. այլքն զարհուրեալք փախեան 'ի բաց։ Բայց Տատիոս կարեվէր հարեալ զնէր, և գունդագունդ հոսէր արիւնն 'ի վիրաց անտի, և հէք ծերունւոյն վայրկեան ինչ սուղ մնայր ապրանաց։ Գիրկս էարկ նմա Նումա ողբալով. զնէր զվէրսն, զօձիս պատառէր, և զհոսումն արեանն դադարեցուցեալ, և զբարեգութ արքայն 'ի վեր առեալ, կամէր ածել զնա 'ի Հռովմ։

Բայց Տատիոս. Մի որդեակ իմ, ասէ, մի. անօգուտ են ինձ ամենայն խնամք. զի ահա մեռանիմ։ Գոհանամ զդէց, զի շնորհեն ինձ աւանդել 'ի ձեռս քո զշունչ իմ յեռին։ Մեռանիմ ես, Նումա, 'ի ձեռաց Հռոմուլեայ. ծանօթք էին ինձ ապանողքն թիկնապահք նորա երագունք. և 'ի հարկանելն զիս՝ ասէին. Ահա երախայրիք խաղաղութեանն՝ զոր հայթայթեցեր Հռովմայեցւոց։ Սէր քոյին ընդ Հերսիլիա՝ և խնամութիւն ընդ իմումս ապանողի, խափանեն զքեզ 'ի վրէժխնդրութենէ մահուն իմոյ. այլ ինձ կարևորագոյն ևս խնդիր է 'ի քէն։ Թողում որբ զդուստր իմ միակ։ Նումա, չեն նորա ծնօղք, և ոչ պատապարան բայց 'ի քէն։ Ազնուականութիւն նորա և իրաւունք ժառանգելոյ զաթոռ Սաբինայ՝ առնեն զնա յանցաւոր յաչս Հռոմուլեայ. եթէ ոչ դու

պաշտպանեացեա զնա, կորուստ նմա 'ի վերայ կայ։ Տուր ինձ ապա երդումն, որդեակ սիրելի, պահ ունել կենաց դատերն իմոյ, գող նմա պաշտպան և պատսպարան, և լինել նմա փոխանակ եղբօր։ Ասող, յուսայի զի կոչէր նա զքեզ այլազգ, յառաջնմէ իսկ 'ի ժամէ՝ յորում տեսի զքեզ, 'ի մտի եղեալ էր տալ զնա քեզ 'ի հարանութիւն, և նատուցանել զքեզ յաթոռ իմ, և կատարել 'ի միջի ձերում զնշխարեալ կեանս իմ առանց այլ իրիք մեծարանաց անուան, բայց հայրակոչ 'ի ձէնջ լինելոյ։ Յոյս անուշակ՝ կարի վաղ 'ի դերև ել. մարթէր նմա անդորրագոյն զբաւոտ իմ գործել, եթէ տակաւին պատրէր զիս։ Ո՛հ, գէթ մի՛ զշնորհս զայս ժխտեր ինձ, գթա 'ի ծերունիս մերձ 'ի մահ, որ ազգական եղև քոյին և բարեկամ, և մտերիմ Տուլլոսի և հօր քո։ Փարիմ զծնգուկք քոյին, Նումա, լեր պաշտպան դըստերն իմում. խոստացիր ինձ՝ պահ ունել կենաց նորա, և խնամ...

Եւ մինչդեռ բանքն 'ի բերան նորա կային փղձկեալ Նումայ արտասուք՝ 'ի վերայ էած. Երդնում քեզ 'ի ստուերս մօր իմոյ և Տուլլոսի՝ կատարել զառաջին զկամս քո. Տատիա լեցի ինձ հարան, կեցից և մեռայց վասն նորա, հաղորդ ամենայն վտանգաց նորա եղէց, և առեցից մինչև 'ի սպառ զազգատոհմ քոյոյ ապանողիդ։ Որում Տատիոս եռ պատասխանի հրճուանաք. Ոչ ինչ երկբայութիւն էր ինձ ընդ այդ. Եկ 'ի գիրկս իմ

առաքինի պատանեակ. մեռանիմ ես գոհ, վրատահ ընդ երդումն քո։ Եւ զայս իրրև ասաց, հրաման ետ Նումայ փակել զարտեւանունս իւր, և մեռաւ. և Նումա նուաղեալ անկաւ զմարմնով նորա։

ՆՈՒՄԱ ՊՈՄՊԻԼԻՈՍ

ԳԻՐՔ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՕԹՆԵՐՈՐԴ ԳՐՈՑ

Նումայի ածել զդիակն Տատիոսի 'ի Հռովմ, և սուգ մեծ գտեալ ալեքային։ Կամի նա լնուլ զխոտուումն՝ զոր էտ բնիկ ալեքային, և Հռոմուլ խափանէ զնա։ Հերսիլիա գայ առ նա, և ոչ արտասուօքն և ոչ սպառնալեօք կարէ դրդուեցուցանել զնա։ Յուզարկաւորութիւն Տատիոսի, և մահ գտեալ նորա Տատեայ։ Նշկահել սաբինացւոց, և խուժադուժ ըզգուշութիւն Հռոմուլեայ։ Նումա նուիրէ զանձն 'ի վերայ ժողովրդեան իւրոյ, և աքսորի 'ի Հռովմայ։ Հանդիպումն նորա ընդ Լեռնդեայ։

ՆՈՒՄԱ ՊՈՄՊԻԼԻՈՍ

ԳԻՐՔ Է

Այն ինչ գիշերոյ զտխուր զերկնաւ ածեալ քօղ, 'ի միտս իւր գայր Նումա։ Տեսիլ արիւնաթաթաւ գիսականն Տաւխոսի սարսուռ ցուրտ յաւելեալ զնովաւ, յուշ ածէր նմա զերդումն զոր երդուաւ։ Նա անզեղջ ընդ այն և անտրտունջ, խորհէր 'ի լրումն պարտուց իւրոց առ թագաւորն բարելաւ։ Եւ զի մի գուցէ բառնայցեն զդի նորա 'ի մեկնել իւր անտի վայրիկ մի, ստանձնեալ 'ի յուս՝ գայր դանդաղաքայլ 'ի քաղաքն։ Հասեալ յառաջին պահս, ձայն ետ սաբինացւոյ զօրականին, և աւանդեալ նոցա զբեռնն, պատուէր ետ ածել զայն մեծարանօք յապարանսն արքունի առ Տաւխա։ Իսկ ինքն ճեպեալ յառաջեաց առ 'ի պատրաստել զսիրտ հէք իշխանուհւոյն առ գոյժն ստկալի։

Բայց օրիորդն հայրասէր, աւաղ, ծփեալ 'ի հոգս ընդ յամել հօրն 'ի դարձ, գուշակէր իմն

զաղէտան։ Միայնակ առ լոյս ճրագին գործելով զձորձ ծիրանի սիրելագունին 'ի թագաւորս, թողոյր ատէպ զվաստակն, և յոգւոց հանելով դիտէր զժամն՝ որ յետ մեկնելոյ հօրն անցեալ էին։ Գուշակութիւնք կուռ զհետ միմեանց աղեռաւորք՝ զարհուրեցուցանէին զնա, և արհաւիրք 'ի խորս սրտի նորա սողոսկէին. սահեալ 'ի ձեռանէ նորա անկանէր իլ, և աչք նորա սրխուրք պշնուին մնայոյզ ընդ երկիր։

Եւ ահա յեղակարծում յանդիման եղև նմա նումա. սուգ 'ի դէմս նորա նկարեալ, ողբք նորա, և ձորձք արիւնաշաղախք յաճախէին առ հասարակ զարհաւիրս օրիորդին։ Յարեաւ նա սրտաթնանդ, և չիշխէր հարցանել ինչ ցդիւցազնն. իսկ նա հեկեկելով ասէ. Դուստր Տատիոսի, ժամ է արիութեան սրտի, և անդրդուելի համբերութեանն՝ յոր սիրտ քո տարեալ է. հարկ է ինձ զխստագոյն տալ նմա զհարուած. այլ յուշ լիցի քեզ, զի առ 'ի համբերել աղետից թշուառ կենցաղոյս՝ տուեալ են մեզ 'ի դիցն անմահից առաքինութիւն և բարեկամութիւն։

Եւ զոյգ ընդ բանիցն և ահա հասին սաբինացիք՝ բարձեալ բերելով զդիակն թագաւորին իւրեանց։ Տատեայ ճիչ բարձեալ, դիմեալ զեղաւ զմարմնոյն հայրենի, և անկաւ նուաղեալ։ Հասին 'ի վերայ նորա, և դարձուցին զնա 'ի զգաստութիւն. նորա զխարխափեալ աչսն պշուցեալ 'ի

Տաճիս՝ հայէր 'ի մեծաբաց վէրս նորա, և ոչ կաթիլ մի արտասուաց ցօղէր. լեզուն նորա 'ի քիմն ալն կցեալ, և ոչ բարբառ մի ողբոց արտաբերէր. բեռն ահագին ընկճէր զսիրտ նորա, ինքն արձանացեալ կայր անթարթ աչօք և անշարժ. ոչ արտասուք յաչս նորա, և ոչ առևտուր շնչոյ 'ի ռնդունս։

Ի համր վշտաց անսի ահաբեկեալ Նումայ, ետ 'ի բաց բառնալ զդիակն արքունի. յայնժամ օրիորդին ալիոզորմ բարձեալ կական, ուղխս արտասուաց ինչուցանէր։ Նումա պատահեալ յուսոյն, և ոչ ինչ երկմտեալ՝ զի արտասուօք այնուհետև ալիսիեսցի օրիորդն, եթող զնա 'ի ձեռն նաժշտացն, և չոգաւ հրաման տալ՝ զի զդիակն արքունի լուացեալ անուշահոտ գինեօք, հանգուցեն զայն 'ի մահիճս ծիրանիս. և կացոյց պահապանս շուրջ զարքունեօք։ Եւ հաստատեալ զսիրտս ալն ապաս իւր, պատրաստէր առ գժուարագոյնն քան զամենայն, յայտ առնել Հռոմուլեայ՝ զի ոչ ևս կարէր փեսայանալ նմա։

Ո՛հ, քանիսն 'ի նմա յուզէին կիրք 'ի գնալ նորա յապարանս արքային. առաջի կայր նմա կորուսանել 'ի ապառ զսիրուհին, զոր ոչ զբ բառնալ 'ի նմանէ կարող էր բաց յիւրմէ. առաջի կայր նմա հրաժարել ինքնին 'ի նմանէ, և իւրովի նմա զհրաժեշտն յայտ առնել, երևել յաչս նորա գրժոգ, և ընդ դառնակսկիծ կորուսեանն

բերել զամենայն նախատինս յեղամտութեան։ Սասանեցուցանէր պատկերն այն զժպհի զառաքինութիւն նորա. այլ առաքինութիւն զօրացեալ կալաւ զինքնիշխան պետութիւնն։ Ընտուերք Տուլլոսի և Տատիոսի առընթերակացք նմին՝ քաջալերէին զնա. ազդ առնէին նմա զի կարևոր էր նուէրն այն, և զի նախատինք էին նմա խնամեցեալ ընդ սպանողի բնիկ տեառն իւրոյ և ընդ թշնամւոյ ազգատոհմին իւրում, և յանձն առնուլ զհարսանիս երդմնազանցութեամբ և չարագոյժ հմայիւք։

Հասեալ ապա եմուտ յարքունիս Հռոմուլեայ. և էր թագաւորն 'ի ճաշ, և ոտանիկք շուրջ զնովաւ. հոգք տխրատեսիլք 'ի ճակատուն, տագնապ և աղէտք 'ի դէմս նորա նկարեալք, արժանահաս պատուհասի յանցուածոյն կարապետք։ Իրաղեկ իսկ էր Հռոմուլ սպանութեան գահակցին, և խիթայր թէ գուցէ կասկած լցցի զիւրմէ. և տանջեալ յերկիւղէ անտի յոյժ առաւել քան 'ի խղճէ չարեացն, կայր 'ի տխուր լռութեան, որում և դրանիկք նմանօրք լինէին։ Հերսիլիա յոտին կացեալ առ արքայի, զթախծութիւն նորա փարատել ջանայր դաշնակաւոր քնարաւն զդիցահօրն նուագելով զյաղթութիւն ընդդէմ Տիտանանց։

Ոչ առանց հառաչանաց կարաց նումա յանդիման լինել Հռոմուլեայ. տեսիլ սպանողին Տատիոսի ազդէր 'ի նա տակումն, զոր չկարէր

նա ծածկել։ Սակայն գուն գործէր, զաչս 'ի խոնարհ ունէր, որպէս եթէ ինքն իսկ էր մեղապարտ. և գիտելով զի և ոչ յանցուածք արքայից կարեն ազատ առնել 'ի մեծարանաց զհպատակս, խօսեցաւ առ թագաւորն և ասէ.

Հռոմուլէ, սպանին ապիրատք զդահակից քոսկանատես իսկ եղէ անկանելոյ նորա ընդ հարուածովք չորից յելուզակաց։ Տապատ արկի զերկուս 'ի նոցանէ, այլքն խոյս եառուն 'ի բաց, և գուցէ մնացեն անպատուհաս մինչև հասցէ նոցա վրէժխնդրութիւն 'ի դէց։ Ոչ ինչ զանխուլ է 'ի քէն արիւնակից ազգականութիւն իմ ընդ արքային սաբինացւոց. այլ թերևս զանխուլ լցեն կաթոգին մեծարանքն, որով մեծարէի զառաքինութիւնս նորա։ Երկոքին այսոքիկ կցորդութիւնք ածեն 'ի վերայ իմ պարտս մեծամեծս և դժուարին յոյժ. այլ ես յուսամ ընուլ զամենայն։ Արքայդ Հռովմայ, պաշտելի է ինձ Հերսիլիա, և կեանք իսկ ոչ ինչ թուին ինձ առանց նորա. այլ խոստացայ ես Տատիոսի և երդուայ 'ի շունչ վախճանին՝ առնուլ զդուստր նորա ինձ 'ի հարսնութիւն, և չկարեմ դրժել երդմանս իմում։ Գամ 'ի հաստատանել քեզ զխաստատութիւն քոյ, գամ 'ի հրաժարել 'ի միակ սիրելւոյ իմմէ, և խնդրել 'ի քէն հրամանն զի հէք և թշուառ կեցից մինչ 'ի ապառ։

Այսպէս խօսեցաւ Նումա, և աչք իւր ընդ երկիր բևեռեալ կային։ Յապուշ հարաւ Հռո-

մուլ, և եկաց վայրիկ մի անբարբառ. կարկեալ կայր և Հերոդիադա, և սահէր անկանէր քնարն 'ի ձեռաց նորա։ Իսկ ասամանիկք անշարժք կային մեռելոց յայտնելոյ Հռոմուլեայ զվիրս իւր, առ 'ի խնդալոյ կամ տրտմելոյ լինելոյ ընդ նմա։

Եւ ապա ուր ուրեմն յարուցեալ արքայն մեծասաստ, և զայրագին ակնարկեալ 'ի Նումա, ասէ. Պատանի դու, ծանօթ է ինձ մահ իշխանակցին իմոյ, և եռս իսկ հրամանս պատուհասելոյ զապատնոցս նորա։ Որչափ իսկ սիրելի լեալ ինչ քեզ Տատիոս, թեզ 'ի թագաւոր քոյին զՀոգ՝ խնդրելոյ զվրէժ ապատնութեան նորին։ Գիտեմ՝ես պատուհասել զոճիրս, այլ նուաճել զիրաւամոլութիւն նմանեացն Նումայ՝ ոչ ես. արդեաւ՝ քեզ՝ մի զդուստր արքային ապինացուց առնուլ ինութեան. իրաւունք նորա 'ի ժառանգութիւն զահուն հայրենի կատաժելի են ինձ. ասաց ես նմա զայլ որ 'ի փեսայութիւն։ Իսկ զնախատինս մերժելոյ քո զդուստր իմ, զաւակն ներթ արիսեան չհամարեցի իւր 'ի թշնամանս. Ներեսմ՝ քեզ զայն՝ հայեցեալ 'ի տիս քոյին, 'ի խորին անբաւ ընդ մէջ մեր, և մանաւանդ 'ի քաջութիւն քոյին՝ որով եղեր զօրացն իմոց պիտանի։

Եւ զայսոսիկ ասացեալ՝ բռնադրօսելով զվայրոյթ իւր, ել առանց ճեպոյ ելել զպատասխանի Նումայ։ Կամէր տարփաւարն հէք խօսել ընդ

Հերսիլիայ, այլ խրոխտ Ամազոնին ակնարկեալ 'ի նա արհամարհանաք, անց զնուլաւ անբարբառ, և եհաս զհետ հօր իւրոյ հանդերձ զօրականաքն։

Խրոխտութիւն այն և արհամարհանք Հերսիլիայ՝ հարին կարելէր զսիրտ նումայ, այլ դիւրագոյն պատրաստեցին նմա զդառնակիծ նուէրն։ Զայրացեալ ընդ Հռոմուլ, ցասուցեալ ընդդուստ նորա, ոգի 'ի բուին առ 'ի կալ հաւատարիմ ընդ բնիկ տեառն իւրում, արիագոյն և խաղաղագոյն փութայր յարքունիս առ Տատիա։

Եւ հասեալ առ նա, ասէ. Դուստր լաւագունին 'ի թագաւորս, ներեա՛ ինձ զի 'ի վիշտս քո և յարտասուս զհարսանեաց ընդ քեզ խօսիմ։ Հայր քոյին 'ի մեռանելն իւրում 'ի հաւատարմութիւն իմ զքեզ արար ապատան. և անձն ներին վեհ մխիթարեցաւ ընդ երդումն՝ զոր եառնամ առնուլ զքեզ ինձ 'ի հարսնութիւն։ Արդեաւ ինձ զայս Հռոմուլ. բայց Հռոմուլեայ չեն ինչ սատանոր իրաւունք։ Սաբինացիք ծնեալ եմք երկրաքանչիւր, հպատակք արքային Սաբինիոյ. հնազանդել նմա առ կենդանութեանն՝ անհրաժեշտ պարտք էին մեր, իսկ հնազանդել նմա յետմահուն՝ արբանեակոյն ևս պարտք։ Ոչ ծածկեմ 'ի քէն, զի սիրէի յոյժ զՀերսիլիա, այլ յետապանութեան հօր քո՝ լաւ իցէ ինձ աքսոր և պատուհաս ընդ քեզ, քան թագաւորել ընդդէմ տերոյ ապանողին։ Եթէ այս քեզ բաւական իցէ,

պատրաստ լեր խիզախել ընդ իս ընդդէմ սպառնալեացն Հռոմուլեայ. պատրաստ լեր տեսանել վառեալ 'ի խարոյկ հօր քո զՅահ Հիմենեայ քեզ 'ի հարսանիս։

Իսկ օրիորդն, որ 'ի բազմաց հետէ կրէր 'ի սրտի զանխուլ զչարաբաստիկ սէրն ընդ դիւցազնին, զարմացմամբ և գորովանօք լուաւ զբանս նորա, և շառագունեալ՝ ետ պատասխանի. լեցի որպէս և հաճոյ թուի քեզ։ Եւ երդուաւ նմա Նումա. և առաւել վստահացեալ յանձն իւր սպառնալեօքն Հռոմուլեայ քան ամենայն ճգամբքն՝ զոր արարեալ էր ընդ անձին. զհետ լինէր այնուհետև յուզարկաւորութեան բարւոյ արքայի։

Այն ինչ այդն 'ի գիշերոյն մերկանայր, հանդերձէր Նումա 'ի չու՝ գնդաւ միով սաբինացւոց հարկանել փայտ 'ի լերինս վասն խարուկին. և սիրտքէր սիրտ նորա թախծեալ բարեխնամ յանձանձանօքն, զոր ոչ յայլ ոք վստահանայր։ Այլ 'ի չու առնելն՝ ընդ առաջ եղև նմա Հերսիլիա, և խնդրէր խօսել գաղտ ընդ նմա։ Ոչ ևս էր նա խրոխան այն Ամազոն, որոյ արհամարհոտ հայեցուածք խաղաղաւէտ յամօթ առնէր զժպրհեալն յառել 'ի գեղ նորա. ոչ ևս էր նա դիւցազնն օրիորդ, որոյ բազուկ աննկուն տապաստ արկ զթշնամիս բազումս՝ խածանել զփուշի։ Այլ էր նա տարփածու յուսահատ, որոյ ծնօտք ակօսացեալք յարտասուաց, և աչք նուաղեալք 'ի լա-

լոյ. տակաւին փայլեալ նշողէին ընդ ամպոցն որ ծածկէրն զնոսա. վարսք նորա և հանդերձք անյարդարք, և երաշխեալք վշտացն՝ ստուերացուցին զերեզոյ նորա՝ յաւելուին 'ի նա շնորհս իմն խանդաղատելի։

Խօսի օրիորդն ընդ դիւցազնին՝ և ասէ. Նումա, տեսանես ահաւասիկ ցոր վայր ած ձրդեաց զիս սէր. դամ խնդրել զքեզ յարքունիս քո, դամ աղերսաւոր՝ ընդունել թերևս 'ի քէն զմերժումն։ Ա՛հ, եթէ գիտէիր դու զգոռոզութիւն Հերսիլեայ, 'ի միտ առնուիր քանի սիրելի իցես նմա. 'ի միտ առնուիր... այլ դու գիտես իսկ քաջ, ո՛ ապաշնորհ, չկամիմ ցայդ վայր խոնարհել և ասել քեզ զայն. չկամիմ խօսել ինչ զինէն, այլ զքէն միայն։ Ճանաչեմ զքեզ Նումա, և գիտեմ իսկ աներկբայ, զի արդել հրամանի հօր իմոյ փութացուսցէ զքեզ 'ի Հարսանիս ընդ դստեր Տաւիոսի. այլ դու չև ևս ճանաչես զհայր իմ, եթէ կարծես թէ ներեսցէ քեզ զայդ։ Դիր 'ի մտի, զի 'ի պահուն՝ յորում իշխեսցես առնդանել հրամանի նորա, ընդ տապարաւ նուիրակացն անկցի գլուխ քոյին։ Ոչ ինչ երկբայիմ զի այս երկիւղ ոչ կասեցուսցէ զքեզ. այլ ոչ միայնակ կորիցես դու, արիւն Տաւեայ ընդ քոյումդ խառնեսցի։ Եւ համարիցիս թէ Տաւիոս, որոյ այդպէս սիրելի է քեզ յիշատակ, ոչ 'ի ծունկս անկեալ պաղատիցի առ քեզ՝ փրկել զդուստր իւր 'ի մահուանէ։ Յերդմնեցուցանել

նորա զքեզ առնուլ զդուստր իւր քեզ կնութեան համարէր տալ նմա զքեզ պաշտպան, և յապահովել զնա յամենայն վտանգաց. բաց եթէ հարսանիքդ այդ ածեն զնովաւ դատակնիք մահու, եթէ հաւատարմութիւն քո ածէ զնա 'ի կորուստ, յանցանես ընդդէմ մտաց հօր նորա, և եղեռն ընդդէմ դստեր նորին գործիցես։

Ոչ յաւելում ինչ զանձնէ, ո՛ ապաշնորհ, զանձնէ՝ զոր համարէի թէ սիրիցես, զանձնէ՝ յորմէ ոչ խնայեցեր զարիւն քոյին։ Ա՜ւա՛ղ դժբաղդութեան իմում, զի չկարացի ես առնել ինչ վասն քո. այլ այնքան եմ առ քեզ շնորհապարտ, զի զնոսին իսկ զերախտիս քո համարիմ գրաւական նրա անլոյծ սիրոյ քո ընդ իս։ Ա՜յո՛, վասն Հերակլեայ առաքինացար դու, Նումա, և եղեր դիւցազն. նմա եռուր զասպարն երկնառաք, որ զնա կացոյց անպարտելի. զնորին պահեցեր դու զկեանս, արկեալ զքեզ առջի դեղարդեանն Լևոնդեայ։ Քեզ վասն փառաց իմոց, քեզ և վասն կենաց դատանիմ շնորհապարտ. և դու կամիցիս լքանել զիս, յետ պարտական զիս կացուցանելոյ սիրել զքեզ։ Ա՜ռ ինչ ապա կեցուցեր զիս, առ ինչ դատար դու յաչս իմ վեհ և սիրելի քան զամենայն դիւցազունս։ Ա՜ա՛, տո՛ւր ինձ պատասխանի. միթէ դժպհի եղէ քեզ. լցէ՞ ինչ քո բողոք զինէն, ո՞չ բաւական ցուցի քեզ սէր։ Ա՛հ, ներեա դստեր Հռոմուլեայ, այնմ՝ որ ոչն երբէք ցածոյց զաչս առ թագաւորս տարփաւորս

իւր. ներեա զի զնախընծայ բոց սիրոյս ծածկեցի 'ի քէն. ծածկեցի այո՛, այլ բուռն էր ինձ այն քան թէ քեզ, և բռնութիւն՝ զոր ընդ սիրտ իմ առնէի՝ պատուհասէր լիով զդառզութիւն իմ։ Եւ արդ տե՛ս ցո՛ր վայր գառզութիւնն այն ցածնու. առ ոտս քո ահա կամ, արտասուեմ 'ի ծունկըս քո. խոնարհեցո զաչս քո Նումա, հայեաց 'ի Հերսիլիա, և կշտամբեա համարձակ զդառզութիւն նորա։

Իսկ Նումայ հեղձամղձուկ լեալ, չիշխէր հայել 'ի դէմս Հերսիլեայ, զի 'ի լուր ևեթ բարբառոյ նորա գտանէր նուաղեալ։ Ցեսանէր առ ոտս իւր զոր սիրէրն առաւել քան զկեանս իւր, և զբոլորանուէր սիրոյ նորա առ ինքն լսէր զատէպ խոստովանութիւն. և 'ի խօսել օրիորդին՝ լուծանէին տակաւ խորհուրդք դիւցազնին, որպէս որ զլեբամբ կուտակեալ ձիւնք 'ի ծագել զնդրօք ճառագայթից արեգական։ Նումա զգօնն այն պատանի սկսանէր ախորժել զաղերսաբանութիւն Հերսիլեայ. սիրտ նորա սիրաբորբոք խանդաղատեալ և համոզեալ 'ի յետին բանից արքայադստերն՝ մինչ հանդերձէրն տեղի տալ նմա, և ահա ծերունին Մեռիոս զօրավար սաբինացւոց հասեալ անդր՝ խափան եղև հրապուրանացն։ Զաւակդ Պոմպիլիեայ, ասէ լուրջ և տխուր, սաբինացիքս վշտագին զքէն հարցանեն. և որբացեալք 'ի հօրէն իւրեանց, զժառանգաւոր առաքինութեանցն նորա խնդրեն. եկ իշխանդ, եկ միխիթարել զի-

բաւացի սուգ նոցա՝ խոստանալով սիրել զնոսա որպէս սիրէրն զնոսա Յաստուս, և երդումն նոցա տալով օգնել և պաշտպանել արժանաւոր դրստեր լաւագունին 'ի թագաւորս։

Եւ ընդ բանիցն հնչէր առ դուրս պալատանն աղաղակ և հեծութիւն բազմութեան ժողովրդեանն, և 'ի խառնաձայն հառաչանան լսելի լինէր անուն Նումա, զի գոչէին. Եկեսցէ հասցէ առաքինին Նումա, երևեսցի դիւցազնն մերազնեայ, բարեկամն մեր, նշխար իշխանացն մերոց՝ և միակ յոյս թշուառացելոյ ազգիս։ Ե՛կ Նումա, եկ ցուցանել մեզ զվերջին կամս բարեգութ մերոյ արքայի. տեսցես դու զմեզ նահատակեալս 'ի կատարումն այնոցիկ։

Զոյդ ընդ բանիցն և աղաղակն, և արտասուք Մեմիոսի՝ որ անդր հասեալ կայր, և ապրիւնն Յաստիոսի՝ որով տակաւին պատմուճանն Նումայ թացեալ էր, յինքն զդիւցազնն դարձուցին մինչ դեռ ահա մերձ էր 'ի մուտս անձին, և գոչեաց. Հերսիլիա Հերսիլիա, սիրեմ զքեզ, և յոյժ առաւել քան զկեանս իմ. այլ պարտք իմ առաւել քան զքեզ սիրելի են ինձ։ Դիք՝ որ յառեալ Հային յիս, ժողովուրդս՝ որում պարտիմ ընծայել օրինակ բարեաց, սիրա իմ զոր չկարեմ խաբել, որոտան ինձ զօրէնս հաստատիմ կալոյ յերդման իմում զոր եառ. կոչեցի այնմ վկայ զատուերս մօր իմոյ. որչափ և դառն ելցէ ինձ զոհս, սակայն մատուցից զայն. մահառիթ լիցի ինձ այն, սակայն...

Յայնժամ Հերսիլեայ զայրագին ընդմիջեալ զբանն, ասէ. Ոչ, ո՛ անողորմ, ոչ լիցի քեզ այն մահառիթ. յայլ ոք զցասումն հօր իմոյ շըրջեցից, ցուցից նմա զզոհն արժանի՛ի սպանդ. իսկ դու կեցցես, կեցցես դու առ՝ի կրել երկարագոյն զպատուհաս եղեռանքս, և առ՝ի տալ ինձ պարապ և պատեհ՝ի յագուրդ արդար վրէժխնդրութեան իմոյ։ Զիշխես, ո՛ հաւատադրուժ, անցանել զուխտիւդ՝ զոր Յատիոս՝ի քէն յաւիշտակեաց. և առ ոան կոխես զերդումն, զոր ինձ եառուր։ Խնդրեցի՞ ինչ ես զայն՝ի քէն, ո՛ ապաշնորհ, որ ընդ կերպարանօք առաքինութեան ծածկես զփառամոլ իղձս քո թագաւորելոյ Սաբինաց. և յաւիշտակելոյ զաթոռ հօր իմոյ։ Երկիր՝ի դժնդակ բախտէն՝ որ սպառնայ քեզ, զարհուրեայց՝ի չարեացն՝ որոց ձայնաւոր լինիս. մի՛ ակն կալցիս խուսել յայնցանէ։ Համբաւ ևեթ Հռոմուլեայ շուրջ պատեսցէ զքեզ ամենայն ուրեք թշնամեօք. թափառական հալածեալ աքսորեալ՝ի քարշ ածիցես զաղէտս քո և զպատիր առաքինութիւն ընդ ազգս Իտալիոյ, որք մերժեսցեն զքեզ՝ի գրկաց իւրեանց։ Զաբատանջ՝ի կեղեքիչ խղճէ մտաց ընդ մահ հարսինեզ և ընդ լքումն սիրուհւոյդ, ողբասցես յաբաժամ զոճիր յեղամտութեան քո. կարօտասցիս զու Հերսիլեայ, տարածեսցես առ նա զբազուկս քո աղերսաւորս. բայց Հերսիլիա և ևս այնու զրդռեսցի՝ի հալածել զքեզ։ Յորչափ

լցէ շունչ 'ի ռնգունս իմ, քոց 'ի ձեռին հեռաւ-
մուտ եղէց քեզ. և եթէ լքուցեալ 'ի քէն լիցի
ինձ մահաւորեթ, ստուերքիմ ինչցեն գումարեսցին
ընդ ճիւաղս դժոխոց անողորմն՝ յաւելուլ զարդ-
հաւիրս տանջանաց քոց։

Եւ զայս ասացեալ՝ եթող զնումա. իսկ նորա
ամաչեցեալ ընդ կիրս իւր՝ չիշխէր զաչս 'ի վեր
ամբառնալ հայել 'ի Մեռիոս. և երթայր 'ի
սիոփել զաբինացիս։ Բայց երկուցեալ 'ի սպառ-
նալեացն Հերսիլեայ, և կասկածեալ թէ գուցէ
եղեռն ինչ գործեսցէ Հռոմուլ, պատուէր եւ
ծերունւոյ զօրավարին՝ պահ ունել զօրօք յա-
պարանս Տատեայ, և ինքն գնդաւ միով խա-
ղաց գնաց կողոպտել 'ի լերանց զմայրիանուիրա-
կանս Կիբելեայ, և զՀացիս՝ որ տաշեալ 'ի տի-
գաբունս՝ արքենան յարիւն մարդկեղէն, զբար-
ձրաբերձ կաղամախիս և զբուրեան եղևնիս։
Հնչէր անտառն 'ի խիտ առ խիտ հարուածս կաց-
նաց. տիտուր նոճիք կործան ընդ հովիտն անկեալ,
և բարտիք տապալէին ճարճատմամբ Պիսիդեայ
սիրելիք, և ցանկալիք հովուաց սարոյք։
Եւ կապտեալ 'ի դալարագեղ կողերց բունք նոցա
ատաղիտք թաւալէին զսիրամբք Տիբերի, ուր
ոչ ինչ հեռի 'ի քաղաքէն ամբառնայր խարոյկն
փայտակոյտ՝ որ յաճիւն զդիակն Տատիոսի լու-
ծանելոց էր։

Ի վաղիւ անդր իշխանք սաբինացւոց բարձեալ
բերին զդիակն զարդարեալ արքունի ծիրանեօք։

գունդ պատերազմիկ մանկուց հազարք գնային առաջի, գլխիվայր զզէնան բերելով, կորաղլուխք գանդաղաքայլք 'ի տխուր նուագ սատակաձայն փողոց։ Տատիա անմխիթար 'ի քող ագատեսակ համակեալ և նոճիս պսակեալ, ցանէր զդագաղօքն ծաղիկս թացեալս արտասուօք իւրովք։ Հանգոյն նմին և Նումա զգեցեալ հանդերձ ագոյ, զեղեալոյ գնացից նորա օժանդակէր, և սիրէր զնա արտասուակցորդ կարեկցութեամբ, և զգուշանայր նմա յարկաձից յուսահատութեան. և հնչէր դաշան 'ի ճիչ և 'ի կական խռնելոցն զնոքօք ազգովին սաբինացւոց։ Եւ մանաւանդ ծերունին Մեռիոս, 'ի վաթսուն ամաց հետէ բարեկամ և կենակից իւրոյ արքային, բախէր զկուրծս իւր, փետէր զմազին, և անկեալ յերկիր բարբառէր. Տէր իմ և արքայ, ընտրեալդ 'ի թագաւորս, առ այս ուրեմն անողորմն Պարկա խնայեաց յիս, զի տեսից զէջս քո 'ի շիրիմ, զի կորուսից զբարեկամ իմ և զհայր։ Օ՛վ Տատիէ, տեսի զքեզ 'ի մանկութենէ իմմէ զիմաստասէր բազում անգամ 'ի մահ, տեսի զքեզ շուրջ պատեալ 'ի թշնամեաց միշտ յաղթական, միշտ անմահ. և արդ 'ի մէջ ժողովրդեան քո, 'ի մէջ որդւոց քոց, տեսանեմ զքեզ հարեալ 'ի համազգեաց. սիրտ քո ամենչական թշուառաց հարաւ յապաշնորհաց, և ոչ փրկեցին զքեզ դէք. թողին դէք կորուսանել զպատկեր բարերարութեան իւրեանց յերկրի։

Ո՛վ Տաւիէ, սուղ քան զամենեսին՝ որ ողբան զքեզ սատ, Ցայ ինձ ողբալ. սուղ քան զամենեսին լիցի ինձ կեալ յետ տեսանելոյ զմահ քոյին։

Զայսոսիկ Մեռիոս բարբառէր ողբս, և ժողովուրդն ամենայն՝ որ կայր անդ 'ի լուր, աշխարհահեծ կականաւ զնոյնս կրկնէին։

Եղաւ ապա դիակն 'ի փայտակուտին, և զենան զոհք. և եհեղ Նումա յերկիր ամանս գինեայ երկուս լիուլի, և այլս երկուս լի կաթամբ, և այլս արիւնալից կրկին, հեղումն հաճոյական 'ի քաւութիւն ուրուաց։ Եւ ապա կոչեաց բարձրաձայն զհոգի Տատիոսի, և դարձուցեալ զերեսս իւր՝ խոնարհեցոյց զչահն, հուր եհար 'ի փայտակոյտ անդր։ Բոցածաւալ ընդ մայրիսն ամբառնայր հուր. սատկանայր աղաղակ ողբոց ամբոխին, և զօրքն ամբառնային 'ի վեր զասպարս իւրեանց. բայց Նումա լռել հրամայեաց. և երկիւղածութեամբ 'ի ոժգոյն դէմս Տատիոսի ակնարկեալ, որ չև ևս 'ի բոցոյն էր դրաւեալ, գոչեաց և ասէ. Ո՛վ արդարագոյնդ 'ի թագաւորս. խոստացայ 'ի շունչ վախճանիդ՝ փեսայանալ քեզ, երդուայ 'ի պաշտպանութիւն դստեր քոյին կեալ. աւասիկ կամ 'ի կատարել զերդումն իմ։ Խարոյկս այս լիցի մեզ բագին, 'ի վերայ որոյ սեղանոյս, յանդիման ստուերաց քոց, առաջի ժողովրդեանս՝ որ ողբայ զքեզ, 'ի նշոյլ չահիցս եղերականաց. ակն յանդիման դիցն՝ ահաւորաց առ ուխտադրուժս, խոստանամ Տա-

տեայ։ Այժ, ի սաբինացիք, պատուհասեցեն զիս զիք վրէժխնդիրք, և զուք ընդ նոսա և ամենայն բարեկամք Յատիոսի, եթէ երբէք 'ի կեանս իմ թողից 'ի թշուառութեան զարժանաւոր հարանն՝ զոր եւ ինձ Յատիոս. արիւն լաւագունին 'ի թագաւորս 'ի վերայ իմ, եթէ վերկացայց երբէք 'ի հաւուցանելոյ արքայազին զաւերն որ ինչ պարտիմ հօր նորա։

Եւ զայս ասացեալ՝ եւ ել 'ի յաջ օրիորդին, և կից ընդ նմա կամէր կարկառել զերկաթանչիւր 'ի խարոյկն. բայց Յատիա ոչ ևս կարէր կալ յոտին, զեղեւէր, կարկամէր, և քիրան ցուրտ հեղոյր 'ի գիմաց. լեզու նորա ընդ քիմն կցեալ՝ չկարէր և ոչ մի յօդել բարբառ, շրթունքն նորա կապուտակեալ՝ պրկէին և ձգտէին դժնեւառեալք. անկանէր յերկիր, և թաւալէր և ճգունա ընդ վայր գործէր։ Ի զուր նումա և սաբինացիք օգնէին նմա, ահագին ճչիւք փչեաց նա զոգի։

Ժողովուրդն ամենայն խռովեցաւ ընդ տեսին, նշանակք թունից յայտնեցան, հնչեաց գուժկան, և քրթմնջիւն աղօտաձայն ընթանայր հանգոյն հողմոյ մրրկի՝ որ սկսանիցի յուզել զալիս։ Զօրքն և քաղաքացիք հայէին ընդ միմեանս, ցաւումն փայլատակէր 'ի դէմս նոցա, և զայրոյթ 'ի սիրտ նոցա բորբոքէր. և անէծք 'ի վերայ Հռոմուլեայ և Հերսիլեայ տեղային։ Հընչեաց ապա միաբարբառ աղաղակ, և խառնեալ սաբինացիք առ հասարակ շուրջ զնումայիւ, զո-

չէին . վրէժխնդրութիւն , վրէժխնդրութիւն Տատիոսի և դատերն , սպանան երկաքանչիւր 'ի Հռոմուլեայ . ած զմեզ ընդդէմ խուժադուժ արքային , բնութիւն և կրօնք հրամայեն ։ Դիմեացուք այժմ իսկ 'ի Հռովմ , կործանեացուք զքաղաքն ամպարիշտ՝ և աղիտաբեր միշտ սաբինաւոցս ։

Իսկ առաքինին Նումա շուրջ պատեալ և բբռնադատեալ 'ի յուսահատ ամբոխէն , գրգռեալ 'ի տեսիլ դժնդակ մահու օրիորդին , զայրացեալ յիրաւացի արհաւրաց՝ զոր աղդէ եղեռն'ի սիրտ ամբիծ , ոչ ևս էած զմտաւ՝ զի դից զթագաւորս անկ է պատուհասել , և զնախայարձակ թափ կրիցն ոչ կարացեալ սանձահարել դիմեաց 'ի Հռովմ սաբինացւովքն կատաղի ամբոխիւ ։ Բայց խորագիտին Հռոմուլեայ յառաջագոյն գուշակեալ էր զվտանգն ։ Քաջ գիտելով զի և ընդդէմ սատիցն իւրոց սպառնալեաց՝ կատարելոց էր Նումա զուխտ իւր , գրգռեալ յանողորմն Հերսիլեայ , և առ 'ի խնդրել զվրէժ դատերն և զարհամարհանաց իշխանութեան իւրոյ , տուեալ էր խառնել մահադեղ սատիկ 'ի գոյզն ինչ կերակրիկն՝ զոր Տատեայ առեալ էր ։ Այսպէս ոճիրք զոճիրս ծնանին , և անօրէնութիւն յեղեռնաւորագոյն ևս մղէ յանօրէնութիւն ։

Հռոմուլ , որ կասկածէրն զապատամբութենէ , ոչ կամեցաւ գնալ յեղերական հանդէսն՝ առ ապահովելոյ զՀռովմ ։ Ամրափակեալ

էին դրունք, և պարիսպք պատեալ զօրօք։ Ամ-
բաղոյն ևս պատնէշ ընդդէմ ապստամբացն հնա-
բաւորեալ էր խուժադուժ արքային, յափշտա-
կեալ 'ի տանց զկանայս զմանկունս և զծերս սա-
բինացւոց՝ որոց ոչ էր կարացեալ գնալ 'ի յուղար-
կաւորութիւն արքային իւրեանց, և 'ի վերայ
պարսպացն կացուցեալ էր զնոսա 'ի պատսպա-
րութիւն զօրաց իւրոց։

Հասին սաբինացիք կատաղաբար գոչելով
վրէժխնդրութիւն, և զգեղարդունսն ճօճելով.
այլ զկայ առին սոսկացեալք 'ի տեսանելն զծե-
րունիս իւրեանց զմարս և զտղայս, ընդ որս
հարկ էր թափ անցանել նեռիցն առ 'ի հար-
կանել զզօրս Հռոմուլեայ։ Լռութիւն խորին՝
փոխանակեաց յանկարծ ընդ ամբոխի աղաղա-
կին. հայէին ընդ միմեանս կարկամեալք բերա-
նաբացեալք բազկօք ձգելովք, և անկանէին զէնք
'ի ձեռաց նոցա։

Անդէն և անդ զգաստացաւ խոհական պատա-
նին. հասու եղև յաճախութեան չարեացն՝ որ
զհետ գային յանդգնութեան, հառաչեաց ընդ
վտանգն՝ յոր արկանէր զժողովուրդն անպարտ՝
և ընթացեալ ընդ ռազմն զօրացն, գոչէր. Մի՛
ևս վրէժխնդրութիւն, զինուորակիցք իմ. կարի
ծանրագին լիցի ձեզ այն. խնայեցէք 'ի հարս
ձեր և յորդիս, որբաշնագոյն քան զվրէժխնդ-
դրութիւն թագաւորացդ ձերոց են պարտքս այս։
Աղէ՝ կամիցիք հայրասպանք լինել և որդեսպանք

առ սէր Ցատիոսի. և ընդէր զԺերակոյտ բազմութիւնդ և զողորմ երամ մանկուսդ մատուցանիցէք 'ի սպանդ, ի՞նչ ուցանել զնոսա 'ի զժոխս։ Ա՛հ, դուք որք զՑատիոս ծանեայք, խորհեցարուք թէ սփոփեացին այդուիկ սուրերք նորա։ Այլուր, ո՛ սաբինացիք, այլուր իցեն փառք յաղթութեան. սատանօր պարտութեան են փառք։ Մեռիէ, աւա ուղէշ ձիթենեւոյ, ե՛րթ առ թագաւորն Հռովմայ, և խոստացիր նմա զհնազանդութիւն սաբինացւոց. սա դու նմա, զի պատրաստ են տալ պատանդս, և ընդունել զնա 'ի թագաւոր իւրեանց, եթէ միայն երդնուցուցանել նոցա։ Եթէ զոհ 'ի նոցանէ զոք խնդրիցէ, ահաւասիկ կամ ես. յիս ամենայն յանցանք նոցա, ինձ ևեթ մի՛ ներեսցէ։ Ե՛րթ, ընթա՛, մի՛ յապաղեր, կռեա զուխտ խաղաղութեան, խոստացիր նմա զգլուխ իմ եթէ խնդրեսցէ. քաղցր իցէ ինձ կորնչել 'ի վերայ ժողովրդեան իմոյ։

Զայսոսիկ խօսեցաւ Նումա, և կամէր Մեռիոս պատասխանի առնել, այլ արգելնմա դիւցազնն, և ճեպեցոյց զնա 'ի պարիսպս քաղաքին։ Դիմեաց անդր Մեռիոս, ետ բանալ ըզդրունս քաղաքին, և դարձաւ եբեր զաւեռիս խաղաղութեան և զհաշտութեան, եթէ միայն ելցէ Նումա անդէն 'ի սահմանացն Հռոմուլեայ։ Զայն իբրև լուան սաբինացիք, զաղաղակ բարձին զէն առնուլ անդրէն. բայց Նումա հանդարտ

տեցոյց զնոսա, աղաչեաց, հրամայեաց հնազանդել. եցոյց նոցա զահագին աղէտս, որոց ինքն միայն գտանէր պատճառ. ապառնացաւ երթալ զիւրովի յանդիման աչաց նոցա, եթէ ոչ յանձն առնուին զխաղաղութիւն. և առեալ մեկուսի զՄեռիս, և զիրկս արկեալ նմա, ասէ. Բարեկամ պանծալի, սրբեա՛ զարտասուս քո. աքսորս այս՝ որ փրկէ զազգ իմ, կարևոր է յանդորր սրտի իմոյ։ Ի՞նչ եցէ ինձ հայել միւսանգամ յերեսս Հռոմուլեայ, ի՞նչ հանդուրժել 'ի տեսիլ խուժադուժն Հերսիլեայ՝ որոյ զայրոյթ դարձակից էր աներկբայապէս եղեռանն՝ ընդ որ ահա հառաչեցաք։ Ա՛հ, Մեռիէ, բժշկեցաւ սիրտ իմ 'ի դժոխըմբեր կրից անտի՝ որ ապականէր զկեանս իմ, այլ տակաւին ընդ երկար ելցէ 'ի վերաց իմոց շարաւ։ Սիրեցեալդ իմ, դառնագոյն յաղէտս և դժնդակագոյն 'ի չարիս, է ամաչել ընդ այն՝ որ քան զամենայն ինչ սիրելի եղև մեզ։ Ներեա՛ ինձ զարտասուս, զոր հեղում զայս վերջին նուագս սիրոյ. այսուհետև առ զեղջ արտասուեցից։ Յանձն առնեմ քեզ, սիրեցեալդ իմ Մեռիէ, ժողովել զաճիւնս արքային մերոյ և զդաստր նորին զհիքի. հանդիցեն 'ի միասին 'ի վերայ շիրմի մօր իմոյ ընդ աճիւնս Յուլիոսի։ Յո՛ւր ինձ խաստումն՝ ածել զայնոսիկ քեզէն, և մի վատահել յայլ ոք զինեան՝ վասն որոյ նախանձիմն ընդ քեզ. մնա խաղաղութեամբ զինուորակից իմ, երկայնաւուրս տացեն դիք ծերունւոյդ։ Զմտաւ

ած, զի դու միայն մնաս սաբինացւոց. թագաւոր նոցա ոչ ևս է։ Տատիա մեռաւ, և Նումա հեռի 'ի նոցանէ կեցցէ. քեզ մնայ սիրել զորբացեալն։ Քեզ յանձն առնեմ զնոսա, բարեկամդ իմ մեծարոյ, և յուսամ շնորհս երբեմն ունել քեզ զբարեաց, զոր ընկալցին 'ի քէն։

Ի զուր Մետիոս զհետ նորա երթայր, կցորդ լինել բախտի նորա. դարձաւ դիւցազնն և ասէ. Խորհեաց 'ի ժողովուրդդ, միշտ անտես լեալ։ Եւ զայս ասացեալ՝ արացաւ 'ի բաց, դէմ եդեալ 'ի Մարս ընդ նոյն ճանապարհ, ընդ որ յառաջ քան զամիս ինչանցեալն էր սպառազէն 'ի զրահս բազմափայլս առաջնորդելով զօրացն սաբինացւոց, արբեցեալ սիրով, ցանկացեալ դիւցազնաբար շահատակութեանն, քաջայոյս ժամանելոյ փառաց 'ի բարեբաստութիւն։ Եհաս նա փառացն, այլ դառնայր ընդ նոյն տեղիս միայնակ աքսորական և վշտալից, խոյս տալով յերեսաց արքային՝ որում ծառայեացն, ամաչեցեալ ընդ այն զոր ոգւով չափ սիրեաց, և ստիպեալ խնդրել իւր ապաստան յազգի՝ զոր յաղթահարեաց։

Խաղաց դնաց ել 'ի սահմանացն Հռոմուլեայ, և թուէր նմա թեթևացեալ յահագին բեռանէ։ Եւ հասեալ մերձ 'ի Վիտելիա, եմուտ 'ի հովիտ մեծ՝ ուր հոսէր վտակ ականակիտ ափնածիր յուռենեաց և 'ի կաղամախից. և երթեալ ընդ եզր վտակին՝ եհաս առ ստորոտով բլրի միոջ 'ի քար-

այր խորին։ Եւ 'ի խոխոջանաց աղբերականն ձգեալ, ուստի բղխէր վտակն խաղաղաւէտ, եմուտ անդր 'ի ներքս. և ահա, հիացումն մեծ. տեսանէ անդ պատանի զօրական ծածկեալ ա-ռիւծենեաւ և ընկողմանեալ զլախտիւն 'ի նիրհ։ Հայի նկատէ և ճանաչէ զնա, զի էր քաջն Լեոնդ՝ զոր երթայրն խնդրել 'ի Մարսս, զայն՝ զորոյ զփորձ քաջութեանն առեալ էր, և ճնայր նմա զբարեկամութեանն ևս առնուլ զփորձ։

Զարթեաւ Լեոնդ՝ և իբրև ետես զնումա, դիմեաց գիրկս արկ նմա, և գորովանօք համբուրեալ ընդ միմեանս դիւցազունքն երկոքին. Ո՛վ բարեկամ, ասէն ցմիմեանս միաբարբառ, 'ի խնդիր քո դիմեալ դայի։ Եւ յաւել Նումա. Դու 'ի Հռովմ։ Պատասխանի ետ Լեոնդ զուարթ և համարձակ. Այո՛, 'ի Հռովմ գայի աքսորական և անապատէն, ապաստանելառ յաղթողդ իմ։ Յայնժամ գոչեաց Նումա. Ա՛հ, մի՛ ևս զյաղթութենէ բանք. բարեկամութիւն անցցէ 'ի հանդէս։ Թուի ինձ այնպէս բախտին կամք՝ պնդել և ևս զզօդ սիրոյ մերոյ ընդ միմեանս, նմանավիշտս զմեզ յարդարեալ։ Աքսորական և ես հանգոյն քեզ, գայի խնդրել առ քև ապաստան։ Յիշիցես իսկ որ ինչ արարի ես վասն խուժադուժ բռնաւորին Հռոմուլեայ, միայնակ ինձէն փրկեալ զնա և զբանակ նորա. և արդ նա ինքն փոխարէն վաստակոցն իմոց՝ ետ դաւաճանել զազգականն իմ և

զթագաւոր, և զեղով զդուստրն նորա ապանանել, և եթէ իշխէի ես երևել 'ի Հռովմ, հարկ էր արեամբ զքաղաքն ողողանել, և կամ մատուցանել տապարաց զգլուխ իմ։ Ա.հա արդարութիւն թագաւորաց. այսպէս ահա հատուցանեն նոքա վարձս ընդ վաստակոց։

Կրկնեալ անդրէն Լևոնդեայ ասէ. Նումա, ծառայեցի ես հասարակաց պետութեան, և տեսեր դու զպատերազմել իմ դիմագրաւեալ 'ի վերայ նորա. և թերևս յիշիցես զՀրդեհ բանակին Հռովմայեցւոց և զառումն քաղաքին Ա.ԷքսենՏեայ. պատերազմունք ևեթ որեքանեան լերանցն յիշատակին 'ի Մարսից։ Եւ իբրև կռեցաւ ուխտ խաղաղութեան, և դարձան զօրքն 'ի տունս իւրեանց, գոռոզ ծերակոյտն որոյ զօրավար կացուցեալն էր զիս՝ կոչեաց զիս յատեան առ 'ի տալ համար զզօրավարութեան իմոյ։ Ընկեցին նախատանօք զծերունին Սուփանոր յիշխանութենէ. և զիս արտասահման արարին իբր պատրեալ 'ի դաւոյ Հռոմուլեայ, և արկեալ ըզզօրս 'ի դարան՝ զոր դու ինձ գործեցեր։ Ա.յսքան է, սիրեցեալդ իմ, արդարութիւն հասարակաց պետութեան. նա աւանիկ այսքան է արդարութիւն մարդկան. ապաշնորհք են առ հասարակ, և անարժանք սիրոյ։ Բայց սակայն պարտ է բարերարել նոցա առ 'ի հաճոյս դիցս, և 'ի գոհութիւն արտից մերոց։

Նումա ասէ. Ա.յլ լցաք մեք զպարտս մեր,

հեղաք զարիւն մեր 'ի վերայ հայրենեաց . իսկ նոքա մերժեն զմեզ , և ազատ կացուցանեն՝ կեալ այսուհետև վասն մեր : Եւ Լևոնդիէ , Եկ ընդ իս յանապատ ուրեք Ասպենեանց . ձլեսցուք զկոշտ , մշակեսցուք զերկիր . յոյժ առաւել շնորհընկալ գոցի սա մեզ քան զմարդիկ . կեցցուք հեռի 'ի նոցանէ , և բարեկամութիւն պատրաստեսցէ մեզ բերկրանս արժանաւորս վեհից ևեթ հոգւոց : Եւ 'ի բարբառելն զայսոսիկ , բոց աստուածային փայլէր յաչս նորա : Իսկ Լևոնդեայ անկեալ զպարանոցաւ նորա , արտասուէր առ ցնծութեան սրտին և ասէր . Այո՛ , եկից զհետ քո , և ոչ ևս թողից զքեզ , զսիրտ և ըզկեանս իմ նուիրեալ քեզ : Դառնացան կեանք իմ ընդերկար 'ի սիրոյ . ժամ է այսուհետև կեալ վասն բարեկամութեան : Յայնժամ գոչեայ Նումա . Բա՛ր է , դու զսիրոյ բարբառիս , և գիտիցես զտառապանս նորին . և չիցէ որ 'ի մահկանացուաց՝ որոյ կեանք լեալ իցեն զերծ յաղմըկէ դժոխըմբեր աստուածոյն : Լո՛ւր զաղէտս՝ զորս հասոյց նա ինձ , և դու ևս պատմեա՛ ինձ զաղէտս քո , ո՛վ բարեկամ . քանզի գիտեմ քաջ , զի ոչ է ինձ մարթ կեալ առանց բարեկամի :

Եւ մտադիւրութեամբ քաջն Լևոնդ ունկն դնէր պատմութեան նորա , որ ինչ 'ի ծննդենէ մինչև ցայնժամ անցեալ էին ընդ նմա անցք : Եւ դիւրագորով սիրտ նորա զմայլեալ ընդ անկեղծ և ընդ ցածուն յեղանակ պատմութեանն ,

ևս քան զևս յարեցաւ յարժանաւոր բարեկամն զոր ընտրեաց. արտասուէր նա ընդ մահ Ցուլիոսի և ընդ արքային սաբինացւոց, սոսկայր ընդ վայրենութիւն Հռոմուլեայ, և երանէր զՆումա վասն կարելոյ նորա յաղթել կրիցն որ ընդ եղեռնաւորին Հերսիլեայ, և ասէր.

Վշտագին յոյժ լեալ ինչ քեզ յաղթել անձին, ով բարեկամ. հարկ լեալ է քեզ ընտրել ընդ սէր և ընդ առաքինութիւն, և նախամեծար արարեալ զառաքինութիւն՝ գտանիս հալածեալ 'ի Հռովմայ, թափառական փախստեայ անապատէն, բարձեալ բերելով յանձին զնեան կեղեքիչ սրտի քո։ Ա.յլ աղէ ասա՛ ինձ. եթէ ապաքէն արարեալ էր քո զուխտիւդ, և զաճիւն Ցատիոսի առ ոտն կոխեալ, և փեսայացեալ Հռոմուլեայ, կարծիցես թէ վայելէիր 'ի բարեբաստութեան. ոչ այդպէս, այլ թախիծքն խղճի մտաց տանջէին զքեզ, և փեսայդ Հռոմուլեայ, ժառանգ թագաւորութեան, և տէր սիրուհւոյդ, աւաղելի ևս գտանէիր և չարատանջ քան զառաքինին Նումա հալածեալ։ Զփորձ առեալ դիտեմ, ով սիրեցեալդ իմ Նումա. երկինք որ պատրաստեցին մեզ զբարեկամութիւնս զայս, նմանավիշտս զմեզ արարին ըստ նմանութեան սրտից մերոց. զամենայն ինչ փոխանակեցի ես ընդ պարտեաց իմոց։ Կորուսի մեծութիւնս բազումս, այլ այն ամենայն ոչ արժեն զխաղաղութիւն իմ և զանդորրս սրտի՝ զոր յանձին բերեմ։ Սուրբ է սիրտ

իմ որպէս զվտակդ ականակիտ. այս առաջին բարեբաստութիւն։ Իսկ երկրորդ՝ վիճակել բարեկամի սիրելոյ. և ահա գտի զայն։ Լուր արդ անցիցն՝ որ անցին ընդ. իս. յանկարծ կա՜ րեկից լինէիր ընդ նոսին, որպէս եղէ ես 'ի լուր քոյոցդ։

Յայնժամ վերատին նոսա գիրկս էարկ զսիրելեաւն, և դիւցազնն մարմիկ սկսաւ պատմել այսպէս։

ՆՈՒՄԱ ՊՈՄՊԻԼԻՈՍ

ԳԻՐՔ ՈՒԹԵՐՈՐԴ

ՆԱԽԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՒԹԵՐՈՐԴ ԳՐՈՑ

Լևոնդ պատմէ Նումայի զիրս մանկութեան իւրոյ, և զգրոյով առ Միրտալէ մայր իւր. զտարփանսն ընդ Կամիլլայ, և ուրպէս փոխանակեաց զայնոսիկ ընդ առաքինութեան. և որ ինչ մայր նորա Միրտալէ 'ի մահուն ծանոյց նմա։ Յանկայ Նումա գնալ ընդ Լևոնդեայ 'ի նախնին նորա 'ի հիւղ. մոլորին ընդ Ապենեան լերինս, և հանդիպի Նումա ծերունւոյ ումեքմին, որ հանդերձ գաստերքն երկիր պագանէր հրոյ։

ՆՈՒՄԱ ՊՈՄՊԻԼԻՈՍ

ԳԻՐՔ Ը

Ի Լերանցամէջս Ապենեանց ծնայ ես 'ի Մարսա. աղքատ էր մայր իմ և ցաւագար, և այլ ինչ ոչ գոյր նորա՝ բայց միայն երամակ մի խաշին, հիւղ փոքրիկ և պարտէզ. և կոչէր նա Միրտալէ։ Եւ յետ ամսոց ինչ ծնանելոյ իմոյ՝ այրի մնացեալ 'ի հօրէ իմմէ, սիրէր նա զիս որպէս բնաւորեալն է մայր սիրել զորդի որբ 'ի հօրէ։

Անդատին 'ի մատաղ տիոց ծածկեալ 'ի գայլենեաց՝ զոր Միրտալէայ յարմարեալ էր ինձ 'ի զգեստս, և զինեալ 'ի տէգ փոքրիկ՝ զոր գիտէի իսկ ճօճել և ձգել, արածէի զխաշինս մօր իմոյ, ունելով ընդ իս շունս երկու ահարկուս 'ի պահ հօտին և հովուիս։ Ոչ երկնչէի 'ի գազանաց ամենեցուն, այլ մանաւանդ ցանկալի հանդէս առնել դեռակիրթ քաջութեան իմոյ ընդդէմ նոցա։ Սողոսկէի ընդ ժայռս ընդ կարի իսկ ահապացեալս. անցանէի 'ի լուղ ընդ ուղիս ընդ կարի

իսկ արընթացս, հասանել զհետ ուղից այծեմանց, և բառնալ 'ի բունոց զձագս աղաւնեաց վայրի'ի գագաթանց մայրեաց, առ 'ի պէտս մօր իմոյ։ Քանզի դիւրէին ինձ ամենայն գժուարինք, յածել զմտաւ զի մարթ էր փաւիկիկ որսոցն երկարել զկեանս նորա կամ տալ նմա առողջութիւն. և քան զթագաւոր աշխարհակալ երջանիկ զանձն համարէի յածել զբռամբ զձագան։

Ընդ երեկս ածէի զհօտն 'ի հիւղ մեր յարդածածուկ, և խայտայր սիրտ իմ ցուցանելով մօր իմում 'ի հեռուստ զաղաւնին և զուլս՝ զորս ածէի յաղթանակաւ։ Բայց մայր իմ յանդիմանէր զիս քաղցրութեամբ, և ապառնայր գըգուանօք՝ ոչ ևս թողուլ ինձ երթալ ուրեք, մերժէր իսկ երբէք երբէք զպարգևս իմ, և ոչ ընդունէր զայնոսիկ՝ մինչև առնոյր յինէն խոստմունս բազմապատիկս ոչ ևս արկանելոյ զանձինս 'ի վտանգ։ Եւ ասէր ցիս. Որդեակ իմ սիրելի, որպէս չկարեմ զհետ քո ընդ լեառնդ գալ. ոչ ևս լինէր ինձ երկնչել 'ի վտանգաց, եթէ ընդ քեզ 'ի նոսին գտանէի. այլ տկար, ախտակիր, արգելեալ կամ ցաւովք 'ի հիւղս յայս, որ լայնատարբ ինձ թուի յոյժ՝ ընդ մեկնել քո ասի, և սիրտ իմ և միտք թռանին զհետ քո։ Զմտաւ ածէ զարհաւիրս իմ. մերթ տեսանեմ զքեզ առղտակեալ 'ի տուր ծայր տճեոյ, և ծառն ողջոյն թուի ինձ տկար առ 'ի բառնալ զքեզ. և մերթ ընդ յորձանս ուղխից անցանելով՝ այրթաքէ ան

քո ընդ վէմ ողորկ, անկանիս բազկատարած, և փրփրադէզ ալիք ընկլուզանեն զքեզ։ Շատ իցէ քեզ, սիրեցեալ որդեակ, պահպանել զհօտդ. կաթն խաշանց մերոց և ունդք պարտիզիս բաւականք են մեզ 'ի կերակուր. մի՛ անզաւակեր զեղինս և զտատրակս 'ի սիրելեաց իւրեանց յորդեկաց, զուցէ կինճք և վարազք անզաւակեսցեն և նոքա զիս։ Ա՛հ, զէթ 'ի խշտիս անգութ գազանացս խոստացիր ինձ չմտանել, ուր ծածկեն զկորիւնս իւրեանց. երդուիր ինձ Լեանդիէ որդեակ, եթէ ոչ առ սէր անձին, զէթ առ սէր մօր քո. խորհեայց զի քև կեամ. խորհեայց զի 'ի տարաժամել քո վայրիկ մի 'ի դարձ, գտանես զմայր քո ոգեպատառ 'ի հոգոց և 'ի վշտաց։

Այսպէս բարբառէր առ իս Միրտալէ. քաջալերէի զնա զգուանօք, և խոստանայի նմա խոյս տալ 'ի վտանգաց՝ յորոց կասկածէրն։ Իսկ նորա ողջագուրեալ զիս, հարցանէր որ ինչ այն օր անցք անցեալ էին ընդ իս, և ինքն զիրս մանկութեան իւրոյ պատմէր ինձ յառնուլ մեր կերակուր, և արագ անցանէր ժամ ընթրեացն 'ի քաղցր խօսակցութիւնն։ Բարեգութ մայրիկն իմ՝ նախ քան զլինելն 'ի քուն՝ պատրաստէր ինձ զպաշար վաղուին, և դարձեալ վերատին յորդորէր զիս 'ի զգուշութիւն, զիրկս բազում անգամ արկեալ ինձ. զգուէր և զշունս իմ հաւատարիմս, ապսպարեալ իմն զիս 'ի պահ նոցին և 'ի պաշտպանութիւն։

Շինական կենցաղ զարթոյց յիս վաղ զկորով. 'ի տիս տղայութեան՝ գտայ ես հասեալ յարբունս և հուժկու. 'ի հնդեւտասանամենի ոչ ես ահարկու էին ինձ արկ.ք և վարագ.ք. ներկանէր նիզակ իմ յարիւն նոցա, և ծածկէի ես զայն 'ի Միրտալեայ։ Շունք իմ, որք պահպանէին զիս 'ի մանկութեան, ծերացեալ էին և անկեալ յուժոյ. և ես այնուհետև պաշպանէի նոցա։ Խաղաղ երջանիկ 'ի պահ հօտին իմոյ՝ նուագէի արնգաւ, կամ հետամուտ լինէի բնակչաց անտառին։ Ոչ ինչ ցանկալի էր ինձ, ոչ ինչ սիրելի, բայց միայն մայր իմ։ Վիշտ էր ինձ միայն, զի անզօր և գայթ 'ի գայթ առողջութիւն նորա օրըստօրէ ևս .քան զևս տկարանայր յամաց։

Ի միում յաւուրց բազմեալ կայի 'ի կատար ժայռի մեոյ, ուստի գահավիժէին ահանք անդընդախոր ընդ ինև ահագին խոխոջանօք, և տեսի յանկարծ եղջերու հարեալ նետիւ՝ զի փախչէր ճապաղելով զարիւն, և եկն անկանել 'ի հեղեղատ անդր՝ որ 'ի կարկաչահոս .քարափաց զից գետահեռեալ գնայր։ Եւ ահա երևեցաւ օրիորդ Ամազոն, արկեալ զիւրեաւ առիւծենի, կապարճ 'ի յուս, աղեղն 'ի ձեռին, մարակ 'ի կուշտ առնելով թեթևընթաց երիվարի՝ որ սրընայր զհետ նետահար եղջերուին։ Ընահոտական էր գեղ նորա. վարսք երկայնաձիգ սեաւք գեղաձփեալ զուսով.ք, և արիութիւն և եռանդն փայլէին յաչս նորա՝ ոչ ինչ զ.քաղցրութիւն դիմաց

նորա այլայլեալ։ Եւ մինչ դեռ ակնկառոյց 'ի նա զմայլեալ կայր կաթոգին, և ահա խեռ երիվարին վազեալ 'ի յուղկն, և 'ի յորձանաց անտի մղեալ տանէր. 'ի զուր վերելեակն ջանայր վարել զնա յայնկոյս, ալիք փրփրադէզք յեռս ընդ կրունկն մղէին զնա։ Խուսեաց ձին 'ի ներքուստ, և ընդ ուղխքն թաւալէր, և օրիորդն ջրասոյզ անհետանայր։

Ընդոստանոյնհետայն յալիս, հետազօտէի ընդերկար փրկել զնա, մինչև բուռն հարեալ զերկայնաձիգ վարսին՝ ձգեցի զնա յերդր անզգայեալ։ Եւ ոչ կարացեալ դարձուցանել զնա 'ի զգայութիւն, ածի զնա 'ի հիւղ մեր, ուր խնամօք մօր իմոյ՝ ուր ուրեմն երաց նա զաչս իւր։ Ամա՛ղ, աչքն այնոքիկ գեղեցիկք և քաղցրահայեաց.ք՝ վառեցին յիս հուր անշիջանելի։ Հայէի 'ի գեղ նորա գերաշխարհիկ, զոր խանդաղատելի ևս գործէր ուժգոյն գեղնութիւն. և յոյզք և աղմուկք կրէին յիս անծանօթք։ Բայց թէպէտև աղմկեալ՝ սակայն ոչ յապէի 'ի տեսանելոյ զնա, և ոչ կարէի 'ի բաց կալ 'ի նմանէ։ Եւ իբրև լուծան շրթունք նորա, և սկսաւ շնորհակալ լինել ինձ, շառաղունեալ թոթովէի. եհարց նա զանուն իմ, և հարկ եղև մօր իմոյ տալ նմա զպատասխանին։

Ժամանակ անդ առ մեզ հանդուցեալ Ամազասպն գեղանի, պատրաստէր ապա գնալ՝ առանց յայտնելոյ մեզ թէ ո՛ էր։ Մատոյց մօր իմում դրամս ոսկիս, այլ մեք վշտանայաք ընդունել. զգայ

զայն, և յետս առեալ զդրամն, հան 'ի պարանոցէ իւրմէ զքառամանեակն մեծադին, և եդ զայն 'ի պարանոց Միրտալեայ. և ակնարկեալ յիս շնորհապարտ խանդաղատանօք, մերկացաւ զառիւծենին՝ զոր կրէր զհանդերձիւքն ծիրանեօք, և մատոյց ինձ ասելով. Մեծն Ալկիդէս կրէր զսա, և ետ հաւուն իմում 'ի պարգև փոխարէն հիւրընկալութեան նորա. զնոյն և ես հանգոյն Հերակլեայ պարգևեմ իմումս կենսատուիդ. և եթէ ոչ սխալէ գուշակութիւնս իմ, մորթս ահաւոր՝ զոր զաւակն Դիոսի արկ զանձամբ ոչ 'ի ձեռս անարժանս անցանէ։ Եւ զայս ասացեալ, գիրկս էարկ մօր իմում, ակնարկեաց յիս քաղցր և ցածուն հայեցիւք, արգել զիս 'ի գնալոյ զհետ իւր, և սրացաւ 'ի քաց։

Հայէաք ընդ միմեանս ես և մայր իմ. արկածք եթէ նորա տային մեզ հաւատալ, զի չէր նա մին 'ի դէց։ Կարկեալ զարմացմամբ և ապշութեամբ նկատէի զառիւծենին դեռ ևս թաց յոզոզմանէն. ցանկալի ևս թուէր ինձ այն՝ վասն զՈ.մաղոնին ծածկելոյ զթիկունս, քան ասասուածորդւոյ գլուցաղինն կրելոյ զայն զիւրեաւ։ Կերպարանք նորա և շարժմունք և գնացք տպաւորեալ կային 'ի միտս իմ, խօսք նորա հնչէին յականջս իմ. զայն առաջինն նուազ 'ի կեանս իմ ցնորեալ և տարտամ 'ի լուր մօր իմոյ, թագուցանէի 'ի նմանէ զկիրս՝ որ կրէին յիս։

Ի վաղիւ անդր ընդ ծագել արևու դարձայ

ընդ խաչն իմ՝'ի ժայռ անդր 'ի ՀրվէՀ, արկեալ զինև զառիւծենին պանծալի։ Յորմէ հետէ հարաւ սիրտ իմ յայն՝ զօրութիւն նորա հեղաւ յիս և արիութիւն աննկուն, միանգամայն և հուր վառեցաւ յիս ծախիչ. որոյ և ևս արծարծանէր բոց 'ի դառնալ իմում 'ի վայր անդր՝ ուր զգեղանին տեսի զՍ.մազոն։ Ինչեալ յեզր հեղեղաին, խնդրէի զտեղին՝ ուրանօր կեցուցի զնա. քաղցր էր ինձ բազմել 'ի դալարոլն, ուր հանգուցի զնա կիսամեռ։ Հառաչէի, տագնապէի, հայէի շուրջ զինև. և լերինքն և սահանք և տեսարանն գեղեցիկ՝որ երբեմն զուարճացուցանէին զիս, ոչ ևս ձգէին զաչս իմ յիւրեանս. ամայիք ինձ թուէին ժայռքն, և զարհուրելի միայնութիւնն։ Ոչ ևս հոգ էր ինձ զխաշանց իմոց. զժպհի թուէր ինձ արինդ իմ, և մոռացայ զնիզակ. սակայն չկարէի մեկնել 'ի վայրացն, որ ցանկալի էին տխրութեան սրտի իմոյ։

Ի դառնալ իմում առ մայր իմ՝ ոչ ևս քաղցրանայր ինձ խաղաղութիւնն, զոր առնմա գտանէի, երկայն թուէին ինձ ժամք, զորս անցուցանէի 'ի հիւղի անդ. հաղիւ պատասխանէի հարցուածոց նորա. հնարս հնարէի առ 'ի տալ նմա խօսել զօրիորդէն անծանօթէ, իսկ ես ոչ իշխէի խօսել զնմանէ. մանաւանդ՝ զոր կրէր Մերտալէ 'ի պարանոցին, ձգէր զաչս իմ յինքն անդադար. դիրկս ատէպ արկանէի մօր իմում, առ 'ի կարող լինելոյ համբուրել զմանեակն։

Անցին աւուրք երեք, և այգուն այգուն դառնայի 'ի Ջրվէժ անդր, և անդ մնայի ցմուտս արևու ակնկալելոյց 'ի կողմն լերինն՝ ուստի Ամազոնն եկն ինձ յերևան. և ահա 'ի չորրորդումն աւուր՝ դառնայր նա անդրէն, զինեալ որպէս զառաջինն, և հեծեալ 'ի ձի ոսկեայր. և 'ի տեսանելն զիս 'ի վերայ ժայռին, շառագունեցան երեսք նորա։ Սրացայ առ նա. էջ նա ընդ ոտս յերիվարէն, և ապապարեալ զայն 'ի բուն մի ծառոյ՝ նստաւ 'ի մխում ուրեք 'ի վիմի, և հրաւիրեալ զիս 'ի նիստ, հովուիկ քաջ, ասէ. ոչ ինչ երկմտէի գտանել զքեզ ստոր. առ քեզ իսկ եկի։ Դու կեցուցեր զիս, ինձ զկեանս քո պարտ է երանաւետել, և առ այս իսկ գամ։ Այսր ինձ համարձակ, զինչ պէտք իցեն քեզ առ 'ի բարեբաստութիւն. թիմ իմիք կարօտի մայր քո. գիտացիր զի շնորհապարտ եմ յոյժ առ քեզ, և հաւասար շնորհապարտութեանս իմոյ է յիս կար։

Աչք 'ի խոնարհ, ետու պատասխանի. Ո՛վ դու, զոր չգիտեմ զինչ անուանել. դու որ ազդեա յիս պատկառանս՝ որպիսի առ դիս ևեթ կրի յիս, որ արժան համարեցար յիշել զհովիւս, և որ յանձն առեր այց առնել նմա. ահ, մեծ է բարութիւն քոյին քան զվաստակս՝ զոր ես քեզ մատուցի. այսուհետև ես քեզ շնորհապարտ գտանիմ։ Դու հարցանես՝ թէ զինչ պէտք իցեն ինձ առ 'ի բարեբաստութիւն. մինչև իմ տեսեալ զքեզ, ոչ ինչ պէտք էին ինձ։ Ոչ ինչ պակասէ մեզ, ինձ և

մոր իմում. է մեր խրճիթ առ 'ի պատսպարութիւն 'ի ջնատակարութեանց օդոց, պարտէզ առ կեր-րակուր, և խաչն առ 'ի զգեստ։ Գնամ իսկ ստէպ 'ի գիւղս մերձակայս վաճառել զասրն յաւելեալ քան զպէտս մեր, և ածեմ մոր իմում արծաթ՝ որ մեզ չէ ինչ պիտոյ, այլ տամք զայն մուսադիւր կարօտելոց ծերունեաց՝ որ երբէք երբէք դան առ մեզ 'ի խնդիր հիւրընկալութեան։ Զկը քեզ ապա այլով իւիք բարեբաստիկ զկեանս իմ յարդարել, բայց դովին իսկ զոր առնեսդ, զի չկը յաւուրս կենաց իմոց բարեբաստագոյն քան զայս օր։

Ժպտեցաւ Ամազոնն 'ի լսել զայն, և ասէ. Քաջ է. և զի տեսլեան ևեթ իմում կարօտիս, եկից երբէք երբէք քեզ 'ի յայց. երախտիք իսկ քոյին պարտ առնեն ինձ զայս. այլ ոչ ասացից քեզ՝ թէ ո՞ւ իցեմ. շատ լիցի քեզ գիտել զի Կամիլա կոչիմ. և որ ինչ իսկ լեալ իցեն գաղտնիք ծննդեան իմոյ, լեր աներկբայ զի քաղցր է Կամիլայ շնորհապարտ վասն կենացն իւրոց գոլ ղևոնդեայ։

Եւ զյետին զայսոսիկ գորովական ձայնիւ ասացեալ զբանս, յարեաւ, ելոյծ զերիվարն 'ի ծառոյն, և յուս նորին աշտանակեալ՝ ակնարկեաց յիս, և եղև անտես։ Իսկ ես խելայեղեալ կայի 'ի խնդութենէ. գորովն՝ զոր եցոյց առ իս, ակնարկել նորա յիս 'ի մեկնելն իւրում, և խոստումն դարձի նորա այլ յայլմէ առնէին զիս, և բորբոքէր սիրտ իմ. կրկնէի ստէպ զանունն Կա-

միլլա, կամէր ուսուցանել զայն արձագանգաց լերանց շուրջանակի. և քանդակել զայն 'ի կեղև ամենայն ծառոց։ Կամիլլա ևեթ ընոյր զսիրտ իմ, ոչ ևս ինչ տեսանէի ընդ տիեզերս բաց 'ի Կամիլլայ։ Ոչ տրտմութիւն կրէր յիս այնուհետև, և ոչ տաղտուկ. անապատքն այնոքիկ էին ինձ վայրք ցանկալիք. մայրիքն և ժայռք և սահանք թուէին ինձ նորահրաշք, զամենայն ինչ գեղեցկացուցանէր ինձ սէր։ Թուէր իմն ինձ բնութեանն զամենայն գեղեցկութիւնս իւր ժողովեալ յանապատ անդր 'ի չքնաղ երկընչէի թէ գուցէ ոք յափշտակէր զայն յինէն, և կամէի զայն անմատոյց այլոց առ հասարակ մահկանացուաց։ Գեղածիծաղ ևս թուէր ինձ հիւղն իմ. առաւելայգոյն ցնծութեամբ գնայի առ մայր իմ, քաղցրագոյնք էին գրկախառնութիւնք մեր, և խօսակցութիւնք ևս քան զևս սիրելի և գորովական։

Կամիլլա եկաց 'ի խոստմանն, և յետ երկուց աւուրց դարձաւ անդրէն. ահ, քանի արագ անցին վայրկեանքն՝ յորս եկաց նա ընդ իս. բաղում անգամ եկն 'ի շրթունս իմ, փոքր միւս ևս՝ և կամէի յայտնել զսէր իմ, այլ 'ի շրթունս անդ բանք իմ զկայ առնուին, 'ի հայել իմում 'ի նա, կամէի բարբառել. և իբրև հայէր նա յիս, պատկառանք կապէին զլեզու իմ։ Զօրհանապաղ այնուհետև Կամիլլա գայր 'ի Լրվէժն. և առանց յայտնելոյ նմա զի սիրէի ես զնա, և առանց լսե-

լոյ 'ի նմանէ զառհաւատչեայ փոխադարձ սիրոյ, խօսակցէաք ընդ միմեանս որպէս տարփաւորք։ Մինչև մեկնեալք 'ի միմեանց՝ ժամադիր լինէաք դարձեալ տեսանելոյ զմիմեանս. և երկաքանչիւր կանխէաք քան զժամադրութիւնն։ Քանի խնդութիւն էր մեզ 'ի դառնալն առ միմեանս, քանի բերկրանօք պատմէաք իրերաց զխորհուրդս մեր. զինէն ևեթ բարբառէր ինձ Կամիլլա, և զԿամիլլայ ևեթ բարբառէի ես առ նա. զրուցատրութիւնքս այսոքիկ բերկրալիք նոյնք էին հանապազ, և նորանորք մեզ հանապազ թուէին։

Ոչ ինչ թաղուցանէր Կամիլլա յինէն, բայց միայն զազգ իւր։ Զի փոյթ է քեզ, ասէր, զազնուականութենէ իմմէ. շատ է զի զգորով սրտի իմոյ դու գրաւես բովանդակ։ Եւ հնարէր ևս սիրելին իմ Կամիլլա կրթել և զարդարել զոգի իմ. ուսեալ էր նորա, և ուսուցանէր զիս. պատմէր ինձ զթագաւորութիւն Յանուսի, զարշաւանս Արգոնաւորդաց, և զպաշարմունս Թեբայ և զՏրոյադայ, և վարժէր զիս 'ի տաղս Հեսիոդեայ և Հոմերի։ Քանի՛ քաջ ուսանէի զդաս իմ. ամենայն որ ինչ 'ի շրթանց նորա ելանէր, տպաւորէր 'ի միտս իմ. և ոչ ևս մոռանայի որ ինչ միանգամ ասէր ինձ Կամիլլա։ Զմայլէի 'ի լուր նորա, վառէի 'ի լսել զքաջութիւնս Աքիլլեայ, և 'ի նկարագրել Հոմերի զԱստղիկն՝ գեղեցկագոյն քան զնա թուէր ինձ Կամիլլա։

Այսպէս անցանէին կեանք իմ. զուիւ 'ի սէր անցուցանէի, և զերեկոյս 'ի գորով որդիական, զի տարփանք Կամիլլայ ոչ միայն ոչ եղկացուցանէին 'ի սիրտ իմ զսէր Միրտալ'եայ, այլ և ևս արծարծանէին։ Ոչ բաժանէր սիրտ իմ ընդ Միրտալէ և ընդ Կամիլլա, այլ երկաքանչիւր դրաւէին զայն բովանդակ. 'ի դէպն արդեօք բարեբարութենէ այսպէս անօրինեալ, սատկագոյն իսկ սիրոյ յաւելուլ զզօրութիւնն այլոց առաքինութեանց առ հասարակ 'ի սիրտ մեր, եթէ միայն իցէ սէր առաքինի։

Բարեբաստութիւն իմ ոչ ընդերկար տեւեաց. անց օր մի, և ոչ ևս երևէր Կամիլլա. 'ի վաղիւ անդր ոգեսպառ 'ի հոգոց՝ մնայի հառաչանօք դալլատեան նորա. և ահա եհաս, այլ գոյն երեսաց նորա հատեալ էր, և ասէ. Սիրեցեալդ իմ, բարեբաստութեանս մերոյ եհաս վախճան, ողբք առաջի կան մեզ ընդ կարճատև կենակցութեան։ Ցարդ թագուցի 'ի քէն զաղդ իմ, թէ գուցէ երկուցեալ 'ի մեծութենէ նորին՝ չիշխէիր 'ի սէր իմ. և քաղցր էր ինձ սէր քոյին, առանց գիտելոյ քո զաղդ իմ. այլ արդ ժամ է ինձ յայտնելոյ քեզ զայն, զի դուսար եմ արքայազն ըստ արկածից բախտի։

Զայն իբրև լուայ, քիրան ցուրտ էջ ընդ մարմին իմ. ծունկք իմ կթուցեալ և ընդ միմեանս բաբախէին, և լեզու իմ կարկամեալ՝ չկարէի յօդել և ոչ բառ մի։ Եւ կալեալ Կամիլլայ զձե-

ռանէ իմմէ, նատոյց զիս առ իւր. և փարատեալ զերկիւղ իմ, ասէ. Դուստր եմ արքային վեստացւոց. սուղ է ճանապարհն՝ որ ատի 'ի կինկինիա քաղաք թագաւորութեան նորա. զզբօսանս պատճառեալ որսոց՝ գայի առ քեզ զօրհանապազ, յուսով ընդերկար վայելից բարեբաստութեան. այլ դուստր եմ միամօր հօր իմում, և ժառանգ թագաւորութեան նորա։ Ամենայն թագաւորք իտալիոյ խնդրեն զիս 'ի հարսնութիւն. և մանաւանդ երկու 'ի նոցանէ սպառնան 'ի վերայ մեր պատերազմ, եթէ ոչ վաղ արարից զընտրութիւնն։ Մի 'ի նոցանէ է արքայն Մարսկաց, որոյ սահմանք կից են մերոցս, և ազգ նորա ոսոխ մերոցս լեալ միշտ։ Հարսանիք իմ ընդ որդւոյ նորա լուծցուսցեն յաւէրժ ըզպատերազմունս 'ի միջի մերում, և կացուսցեն զպետութիւն մեր հզօր։ Օրէնք քաղաքավարութեան և բանին և մարդասիրութեան նպաստեն արքայորդւոյն, որ 'ի մատաղ տիոց շրջի ընդ կղզիս Եւլադայ՝ դաստիարակ լեթ զդօն ընդ նմա, ուսանել և կրթիլ յարուեստս մեծ թագաւորելոյ, և դառնայ նա արդ առ հայր իւր։

Ոսոխ նորին ահաւոր է Տելեմաս արքայ սալենատացւոց։ Զօրութիւն նորա և մեծութիւնք և ազնուականութիւն տոհմի, զի Տելեմաք և Ենտիոպ նախահարք են նորա, նախամեծար զնա կացուցանեն քան զարքայորդին Իշխան Մարսկաց։ Այլ մեզ ոչ ինչ է երկիւղ 'ի սալենատացւոց,

որ հեռի են՝ի մէնջ՝ անջրպետեալք յազգայ բազմաց. և հրեշտակք Յելեմասայ դժուարաւ կարացեն յաղթել արքային Մարսկաց, որ ինքնին իսկ եկեալ է յարքունիս հօր իմոյ՝ խնդրել զիս՝ի հարսնութիւն։ Ցերկաքանչիւրոցն հաւասար է ինձ վիշտ, զի ոչ ևս եղէց ազատ սիրելոյ զքեզ՝ի սպառ։ Այլ դու Լևոնդիէ, գիտես քաջ զորդիական պարտս. ծերունի է հայր իմ, և տկար՝ի պաշտպանել անձին յերեսաց թշնամեաց. ստիպէ զիս յընտրութիւնն, երդմնեցուցանէ զիս յալիս իւր՝ մի գրգռել պատերազմ, որ ածեալ ձգեսցէ աղէտս՝ի վերայ իւր և՝ի վերայ ամենայն ժողովրդեանն։ Զինչ առնել ինձ. լեր ինձ խորհրդակից։

Եռու նմա պատասխանի. Կամիլլա, զի տոհմ քոյին և իշխանութիւն ոչ ինչ աւելի մեծարոյ առնեն ինձ զքեզ քան զանուն ևեթ քոյին, սիրա՝ որ գիտէ սիրել, փոխանակէ ընդ սիրոյ զամենայն, այլ սիրա առաքինի փոխանակէ զսէր ընդ իւրոցն պարտուց։ Արիութիւն իմ քաջ վըստահ առնէ զիս պահ ունել աշխարհիդ, և լախտիւս այսուիկ զինեալ, և զնեմեան առիւծուն արկեալ զինև մորթ՝ վանել քաջ՝ի պարսպաց ձերոց զմարոկացին զսալենտացին և զամենայն ազգս Իտալիոյ. այլ թեպէտ և գտանիցիմ վեհագոյն քան զամենայն դիւցազունս, և հաւասարիցեմ Այկիդեայ, սակայն իշխեցից առնուլ զքեզ ինձ՝ի հարանութիւն. քաւ լիցի ինձ, չկարեմ եր-

քէք ժառանգել զքեզ։ Եւ դոչէի արտասուօք. դու դուսար արքային, իսկ ես հուլիւ հէք։ Աւաղ անմտութեանս իմում, զի... ո՛վ կամի՛լա, քանի՛ ծանր լիցի ինձ տոյժս։

Եւ միթէ թեթևագոյն իմս լիցի, յաւել կամի՛լա. կարծիցես թէ սիրտ իմ թաղծեալ նուազ քան զքոյդ վշտանայցէ։ Այլ է ինձ տակաւին նշոյլ ինչ յուսոյ. ճանաչեմ ես զարքայն Մարոկաց, ոչ զկամի՛լա՝ այլ զսահմանս նորա խընդրէ նա 'ի ժառանգութիւն որդւոյ իւրոյ։ Խօսեցայց ընդ նմա յայտնապէս, երդուայց թողուլ 'ի նա զթագաւորութիւն իմ 'ի մեռանել հօրն իմոյ՝ եթէ թողուցու նա ազատ զընտրութիւն իմ, և պաշտպանեսցէ մեզ յերեսաց Տելլեմասայ։ Յոյս իշխանութեան 'ի վերայ ազգացն երկոցունց յանկուսցէ զսիրտ նորա փառամոլ, և բարեբաստիկ զանձն իմ համարեցայց 'ի փոխանակել զթագ ընդ քաղցր իրաւունս՝ սիրելոյ զքեզ Լևոնդիէ։

Զուր ջանացայ շրջել զնա 'ի խորհրդոց անտի, մեկնեցաւ նա յինէն, 'ի մտի եղեալ դիմադրաւել յամենայն վտանգս։ Մնայի վշտագին դէտակն կալեալ անժոյժ դարձի սիրուհւոյն իմոյ, և դարձաւ նա յեռ երից աւուրց զուարթադէմ, և ժպիտ 'ի շրթունս նորա, դոչելով. Բարեբաստիկք լիցուք մեք, բարեբաստիկք լիցուք. խօսեցայ ընդ՝ արքային Մարոկաց, և յայտնեցի նմա աներկիւղ զի սիրտ իմ ընդ քեզ է. կարեկից եղև

ընդ մտերմութիւն իմ, և նուէր թագի հաւանեցոյց զնա 'ի նպաստ մեր։ Լուր զառաջարկութիւն արքային. որդի նորա որ գայր 'ի կղզեացն Ելլադայ ընդ դաստիարակի իւրում միայնակ, մեռեալ է 'ի կրեատէ. զի ուղևորէր յանծանօթս, ոչ ոք գիտէ զմահ նորա։ Դաստիարակ արքայորդւոյն յետ գրելոյ զդոյժ մահուն առ հայր նորա տառապեալ, չև ևս իշխէ երևել առաջի նորա՝ զկայ առեալ 'ի Դալմատիա։ Թագաւորն ողբայ զորդեակ իւր, այլ առաւել վիշտ է նմա ընդ կորուստ խնամութեանն՝ որ մատուցանէր խաղաղութիւն ժողովրդեան նորա, և ընդարձակէր զսահմանս նորա կրկնապատիկ։ Լրումն փառաւորութեան նորա սփոփեացէ զվիշտ նորա. այլ զի մի 'ի Տելեմաս անցցէ թագաւորութիւն իմ, այս ևեթ մնան նմա հնարք։ Ոչ ոք յարքունեաց նորա ճանաչէ զարքայորդին մեկնեալ անտի 'ի սկզնաբոյս հասակի. և մինչ դեռ համարին զնա կենդանի, և ապասեն նմա հանապազ, արքայն Մարսկաց ընկալցի զքեզ փոխանակ նորա յորդեգիրս։

Խորհուրդ ետ թագաւորն մեկնել զնալ քեզ 'ի Դալմատիա, յարել 'ի դաստիարակ արքայորդւոյն, ածել առ նա զմատանի արքային և զհրովարտակ, և ապա դառնալ ընդ նմա. և ընկալցի զքեզ թագաւորն որպէս զորդի իւր, և ժողովուրդն պատրեալ համարեսցի զքեզ որդի նորա, և եղէց քեզ 'ի հարանութիւն, և լիցիս

դու բարեբաստիկ, և խաղաղութիւն երկոցունց ազգաց և բարօրութիւն քո և հանգիստ իմ եղի-ցին արդասիք անմեղանչական կեղծեացս, որ առանց վնասելոյ ումեք՝ այսքան տնօրինէ բարիս։

Ահա այսոցիկ քեզ դամ աւետաբեր. լիցուք մեք 'ի միասին, Լևոնդիէ. թագաւորեսցես դու 'ի վերայ երկուց ազգաց, կացցուք անմեկինք 'ի միմեանց. բախտ և սէր 'ի միասին գեղեցկանը-սեհ յօրինեսցեն զկեանս մեր։ Ազէ դու ընդէր ոչ բերկրիս, ընդէր ոչ 'ի գոհութիւն դիցն երկիր պա-գանես. առ ինչ անշարժ, առ ինչ որոմագինզաս-հաւատչեայ բարօրութեան մերոյ ընդունիս. զինչ այլ վիշտ աղմկէ զքեզ... յինչ խորհիս...։

Իսկ ես եռու պատասխանի. Ի մայր իմ։ Հարկ էինձ կամ զքեզ կորուսանել, կամ զկենաս-տուն իմ տեսանել մեռեալ առ վշտին. դու ինքն լեր դատաւոր, դու որ հանդերձեալն էիր փոխա-նակել զսէր մեր ընդ խաղաղութեան հօր քո. օրէն ելցէ ինձ թողուլ լքանել զՄիրտալէ, օրէն ելցէ ինձ բառնալ 'ի նմանէ զմիակ պատապարանն՝ որ մնայ նմա։ Ընդ միջեաց զբանս իմ Կամիլլա. Այլ լցցուք զնա ամենայն բարեօք։ Իսկ ես ասեմ։ Այլ բառնաս դու 'ի նմանէ զորդի նորա, այլ բռնադատես զորդին՝ ոչ ես ունել զնա 'ի մայր իւր. խորհել ևեթ յայն՝ սոսկումն է ինձ։ Զէք, սիրեցեալդ իմ Կամիլլա, չէք իսկ թագա-ւորութիւն և ոչ բարեբաստութիւն ինչ յաշխարհի՝ որ արժէցէ զիմաստս զայս գերագոյն 'ի պար-

գևս բնութեան, և նախամեծար 'ի բերկրանս սրտից մերոց։ Զկարեմ զիմաստս զայս մերժել 'ի սրտէ իմմէ, և ոչ կեղծել իսկ զմերժումն զայն։

Եւ ոչ ասա զկայ առնու եղեռն, զոր լիցի ինձ գործել յանուանելն թագաւոր Մարսկաց. այլ, պատրանքդ ժպատեհ, հնազանդեսցին ինձ խաբկանօք ազգք, և եղէց թագաւոր խաբուսիկ։ Ա՛հ, եթէ օրինաւորացն իսկ արքայից ծանունք են պարտք, և տացեն համարս դ'ից զբարեացն՝ զորոց անփոյթ արարին, և զչարեաց՝ զորս ոչ արգելին, քանի՛ ահագին քան զնոցայն պահանջեսցի յինէն համար, որ անհրաման 'ի դ'ից անցեալ կացից յաթոռ՝ իբր գողացեալ զթագաւորութիւն, և ապաս մեծարանաց յետնոյն 'ի ռամկէն կշտամբեսցէ զխաբէութիւն իմ։ Մի՛, ով Կամի՛ն՝ մի՛ լիցի ինձ այս. պատուականագոյն ես դու ինձ քան զամենայն բարութիւնս, վկայեն ինձ երկինք և սիրտ իմ՝ զի տաց ես ըզկեանս իմ առ 'ի ժառանգել զքեզ օր մի. այլ բարեբաստութիւնս այս մեծ՝ յոր 'ի խորհելն ևեթ զմայլին միտք իմ, ոչ ևս լիցի ինձ բարեբաստութիւն՝ եթէ խիղճ մտաց իմոց չիցէ խաղաղ։ Յաջողութիւն 'ի դէպ եկեալ առաքինութեան, ոչ է մարթ զբերկրանաց ինչ առնուլ զճաշակ առանց խաղաղութեան՝ զոր նայն ևեթ տայ։ Բազմեալ ընդ քեզ զահակից, զտայց 'ի զահոյս անդ թշուառ տանջեալ 'ի խղճէ. լաւ ևս իցէ ինձ թշուառութիւն 'ի բախտէ։ Թո՛ղ զիս յանա-

պատի տատ. լի է սա .քև. և լեցի ինձ կեալ 'ի սմա։ Լացից զքեզ տատյաւէրժ, այլ զքեզ ևեթ լացից, անկորուստ ժառանգելով զառաքինութիւն։ Մնա խաղաղութեամբ, Կամի՛ՀՀա. դարձիր յարքունիս հօր .քո, մուռա զհէքս. և բերկրութիւն, զոր կրէ անձն վեհ 'ի ընուլ զպարտս իւր, մեղմեացէ զկարեկցութիւն .քո ընդ թշուառութիւն իմ։

Եւ 'ի բարբառելն իմում զայսոսիկ՝ զաչս 'ի խոնարհ ունէի առ 'ի ծածկել զարտասուս իմ. իսկ Կամի՛ՀՀա մտադիւրութեամբ ունկն դնէր բանից իմոց՝ պշուցեալ յիս, լուռ եկայց նա ընդերկար, և ապա կալեալ զձեռանէ իմմէ պնդապէս, ասէ. Սիրեմ զքեզ Լևոնդիէ, և առաքինութիւն .քոյին լրումն առնէ անչափ և յաւերժական սիրոյն՝ զոր դու յիս ազդեցեր. այլ հաւանիմ .քեզ, և այժմէն հրաժարիմ 'ի .քէն։ Ա.յո՛, հրաժարիմ 'ի .քէն. այլ դարձեալ վերըստին խոստանամ և երդնում՝ ածել ընդ իս 'ի գերեզման զսէրն՝ որ կցորդեացն զմեզ, և զպատկեր .քոյին բերել անջինջ տպաւորեալ 'ի տխուր յիմուսն սրտի՝ ցորչափ սա բաբախէ. և եթէ ընկճեցայց 'ի վշտաց սորին, որպէս մաղթեմն 'ի դէց, առ .քեզ շունչ իմ յետին ուղերձեացի։

Եւ զայս ասացեալ՝ եթող զիս. և ընդոստ 'ի ձի աշտանակեալ, և զողջոյնն հրաժարական փղձկեալ ձայնիւ երիցս կրկնեալ՝ առ իս զբազուկն տարածանելով, մեկնեցաւ, և դառնայր

հայէր արտասուալից աչօք 'ի ժայռն, 'ի լրվէժն, 'ի տեղին՝ ուր յաճախ 'ի միասին բազմէաք, և թուէր նոցին իսկ տալ ողջոյն հրաժարական։ Եւ ապա զայն վերջին նուագ ակնարկեալ յիս գորովանօք և արտմութեամբ, եղև անտես։.. Եւ ոչ ևս յաղեռալի օրէ անտի և այսր տեսի զկամիլլա, ո՛ բարեկամ։

Ասաց և զկայ էառ, և վտակք կրկին ինչանէին յաչաց, ընկճեալ ոգի նորա յահագին բեռանէ վշտացն։ Փարեցաւ զնովաւ Նումա, և դիւցազունքն երկոքին կային գիրկընդխառն անբարբառ. և ապա ուր ուրեմն Լևոնդ բուռն արարեալ անձին, զհառաչանն ընկրկեալ, զհեծութիւնն հեղձուցեալ, և յառաջ ածեալ զբանն, ասէ.

Կամէի թաղուցանել 'ի մօրէ իմմէ զզոհն, զոր վասն նորա արարի. զի գորովոյ նորա ընդ իս յաւելուլ այլ ևս ոչ էր կար, այլ լինէր ինձ յաճախել նմա վիշտս։ Զամենայն ջան 'ի գործառնէի առ 'ի ծածկել զվիշտ իմ. անցուցանէի զաւուրս ցերեկ 'ի լաց 'ի նմին ժայռի 'ի նոյն տեղիս, ուր տեսեալն էր իմ զկամիլլա. իսկ 'ի դառնալ իմում 'ի հիւղ՝ զուարթութիւն կեղծաւորէի, յարդարեալ զդէմս իմ. և եթէ երբէք չյաջողէր ինձ թաղուցանել զարտմութիւն իմ 'ի արտաս մայրենի աչաց, հնարէի այլ ինչ արկածս ոչ յոյժ արտմակաւոր Միրտալլեայ, և յորոց մարթ էր նմա սփոփել զիս։

Անցին այսպէս ամիսք երկու, և ոչ ընդունէի

զրոյց ինչ զկամիլլայ, և ոչ մեղմանայր վիշտ իմ քան զօրն զառաջին՝ յորում եհաս ինձ։ Աւաղ, միւս ևս ընդ հուպ յաւելաւ ինձ վիշտ. զի անկաւ մայր իմ 'ի մահիճս։ Զամենայն բանջար ախտաբոյժ զշրջակայ լերանց մատուցի 'ի փորձ, այլ հասեալ էր ժամ նորա։ Զգաց նա զի մերձ էր 'ի մեռանել, և կոչեցեալ զիս առ ինքն նուաղ ձայնիւ, ասաց զբանս զայսոսիկ՝ որ տակաւին թուին հնչել յունկն իմ. Պատրեցի զքեզ, Լևոնդիէ, չեմ ես մայր քոյին. 'ի մահիճս մահու խընդրեմ 'ի քէն թողութիւն պատրանացս, որ քաղցրացուցին ինձ զկեանս իմ։ Փախուցեալ յերեսաց պելիգնացւոց՝ որ պատերազմէին յայնժամ ընդ մեզ, թողի զհիւղ իմ, հասի յեզր Ասերնեայ գետոյ 'ի գիւղն Ասիա՝ այն ինչ թողեալ այրեացաւեր 'ի բարբարոսացն. և 'ի նշխարս զարհուրելանս հրդեհին և կոտորածոյ, 'ի զրահանս դիականցտեսի զքեզ յորրանս գունատեալ արիւնաշաղախս հարեալ 'ի սրոյ՝ որ տակաւին 'ի կողս քո կայր։ Գթացայ 'ի գեղ քոյին, եդի զձեռն իմ 'ի սիրտ քո, և զդացի զի դեռ ևս բաբախէր. բարձեալ բերի զքեզ որրանօքդ, ողջացուցի զվէրս քո, խնամեցի զաղկաղկ տիս քոյին, դու մայրակոչ ինձ եղեր, և չկարացի ես երբէք հրաժարել 'ի քաղցր անուանէն. երկնչէի թէ գուցէ 'ի յայտնել իմում քեզ՝ զի չէիր իմ որդի, թողուիր զիս։ Ասէի 'ի միտս իմ. Զգիտեմ ըզծնօղս դորա, և ոչ նոքա աւելի ինչ կարիցեն սի-

րել զդա, թողից զդա 'ի պատրանան, որ առանց թշուառացուցանելոյ զկեանս դորա՝ սփոփէ զիմս։ Այսոքիկ եղեն պատճառք խաբէութեանս իմոյ, Ներեա տկարութեանս իմում. այնպէս սիրէիր դու զիս, սիրեցեալ որդեակ, զի դու ինքնին անհնարին ինձ առնէիր զյայտնութիւնն՝ որ զբրկէր զիս 'ի սիրոյ այսի քումմէ։

Զայս իբրև լուայ, գիրկս արկի նմա, և թացի զնա արտասուօք. և ասէ ցիս. Սիրեցեալ որդեակ, հարկ է մեզ արդ մեկնել 'ի միմեանց. դադարեա՛ յարտասուաց՝ որ դառնագոյն զհրաժեշտ իմ գործեն. խորհեաց 'ի սիրտանս քո. զի դու միայն բարեբաստիկ արարեր զիս. խորհեաց զի քև միայն երկարեցան կեանք իմ։ Սուաղ, չգիտեմ եթէ անցցէ քոյդ խաղաղաւէտ. ցորչափ կէի ես, երկնչէի թէ դուցէ մայր քո բընիկ եկեալ բառնայր զքեզ յինէն. այլ արդ մինչ մեռանիմս, ցանկալի է ինձ աւանդել զքեզ նմին։ Ա՛ռ զքարս զայս պատուական, յորում քանդակեալ կան տառք ինձ անծանօթք, 'ի պարանոցի քում դիր զդա 'ի փրկելն զքեզ, և ծածկեցի 'ի քէն ցարդ. յանկարծ յայտնէր դա քեզ զմայրն բարեբաստիկ, որ 'ի ծոցի իւրում կրեաց զքեզ։ Ա՛հ, եթէ տեսցես դու զնա, ասա դու նմին՝ քանի՛ նախանձիմ ընդ բախտ նորա. ասա դու նմա. զի զորով իմ արժանի զիս թերևս այնմ յարդարէր, և թողէք ինձ երկաքանչիւր, զի կոչեցի զքեզ որդի իմ. Մնա խաղաղութեամբ որդեակ իմ,

և թող ինձ կրկնել զայս վերջին նուագ զքաղցր անունդ. մատիր ելկ առ իս, ձեռք քոյին կափուսցեն զաչս իմ, և մինչ չև զյետին տուեալ շունչ՝ կոչեցայց միւսանգամ 'ի քէն մայր։

Ո՛վ մայր իմ, գոչեցի ես յայնժամ, մայր սիրելի. ես որդի քոյին եմ, և եղէց մինչև ցմահ, 'ի զուր..։ Այլ նա ոչ ևս էր կենդանի, մահ անողորմ առեալ էր զաւարն։ Ոչ նկարագրեմ քեզ, Նումա, զսուգ իմ. զի նմանավիշտք են սիրտք մեր, և չև ևս մոռացօնք լեալ են քեզ որ ինչ 'ի մահուն Տուլլեայ կրեալ վիշտք։ Դիզի խարոյկ դուզնաքեայ, ուր դիակն Միրտալլեայ դարձաւ յաճիւն. ժողովեցի զմոխիրն 'ի սափոր ձեռակերտեալ յինէն, և թաղեցի զայն 'ի շիրիմ հողալբուր՝ զոր կանգնեցի ոչ ինչ հեռի 'ի բնակութենէ իմմէ. և 'ի վիմին, զոր ածի զշիրմաւն, եդի արձանագիր. Աստ հանգչի Միրտալէ. հիւրդ մայրաւէր խորհեաց 'ի սա, և հեղ արտօսր։ Խցի ապա զխուց իմ, և թողեալ զայն ընդ պահպանութեամբ յաւերժհարսանց, և ըզհօտ իմ լքեալ, մեկնեցայ 'ի լերանցն, և դիմեցի մղեալ բռնի 'ի մայրաքաղաք վեստացւոց։ Եւ հասեալ 'ի Կինկինիա, գիտացի զի չքնաղագեղն Կամիլլա յետ ընդերկար հակառակ կալոյ հօրն՝ յանձն առեալ էր լինել կնութեան արքային սաբինացւոց, և մտեալ ընդ հրեշտակս նորա 'ի նաւ։ Հարաւ սիրտ իմ կարեվէր ընդ դոյժն, որպէս թէ անակնկալ էին ինձ լրքն. դարձայ

վաղ ընդ փոյթ յԱպենեան լեառն, և թափառեալ այսր անդր՝ ոչ ուրեք դէմ եդեալ, հասի 'ի բանակն Մարսից 'ի պահու՝ յորում ընտրէին զօրավար։ Տեսիլ բանակին զարթոյց յիս զեռանդն փառաց. եդի 'ի մտի կորնչել կամ կալ դիւցազն. արկի զանձն յառաջ՝ 'ի վէգ եկեալ վասն զօրավարութեան, և դէպք 'ի բարի ելին ինձ։ Գիտես իսկ ո՛րպէս 'ի մարտի անդ առաքինացայ, և ահա այս ինձ հատուցաւ մրցանակ։

Եւ վախճանեաց Լևոնդ զբանս իւր. բայց Նումա'ի լուր պատմելոցն կարկեալ կայր անշարժ՝ պշուցեալ 'ի նա. և ամենայն կիրք 'ի խօսել դիւցազնն մարսկի 'ի վեր երևեալք, ներդործէին 'ի յոգւոջ սաքինացւոյ դիւցազնն. 'ի նկարագրել Լևոնդեայ զմանկութիւն իւր և 'ի մանրապատում առնել զմայրաքէր գորովանս իւր, զուարթանային դէմք Նումայ 'ի ժպիտ քաղցր։ և 'ի խօսել Լևոնդեայ զկամիլլայ և զտարփանաց իւրոց, հոսէին յաչաց Նումայ արտասուք։

Խոնարհէր արեգակն 'ի ծոց Թեատեայ, և բարեկամքն երկոքին խորհուրդ կալան կալ զդիշերն զայն յայրի անդ։ Ելին քաղել միրգս ինչ 'ի հովտին, և դարձեալ անտի ճեպին քնոյ։ Յայնժամ ասէ Նումա. Հասաք իսկ ուր դէմ եդեալն էր երկաքանչիւրոցս, զի գտաք զմիմեանս. խորհեսցուք առ վաղիւ՝ ուր հաճոյ իցէ գնալ։ Էր իսկ 'ի սրտի իմում՝ ուղևորել ընդ Ելլադա, դիտել զբարս ազգաց, և յաւելուլ գիտութեամբն

յիմաստութիւն և յառաքինութիւն։ Լևոնդիոս ասէ. Եթէ սիրէին մարդիկ զառաքինութիւն, սիրելիդ իմ, օգուտ էր դիտել զայնոսիկ, և յաւելուի՝ թէ շրջեսցուք ընդ աշխարհ, լինել լաւագոյնս 'ի դառնալ մերում։ Այլ զի՞նչ լիցի մեզ տեսանել յԵՒՅադա, զի՞նչ իսկ այլ ամենայն ուրեք. թագաւորութիւնս, ուր ստրուկք հնազանդին և բռնաւորք հրամայեն. հասարակապետութիւնս պառակտեալս, ուր քաղաքացիք յառհաւատչեայ ազատութեան իւրեանց խողխողեն զմիմեանս. արս աւագս հալածեալ վարեալ աքսորեալ, որոց դառնագոյն քան զկորուստ հայրենեացն է կորուստ փառացն՝ զոր առաւել քան զհայրենիս իւրեանց սիրէին. իմաստասէրս պանծացեալս յիմաստութիւն, որ յուզեն հանապազ զկեանս իւրեանց 'ի խնդիրս անտես՝ զորոց ինքեանք իսկ երկբային։ Եւ զի՞ մի մի թուիցեմ. ազգս հարստահարեալս. զառաքինութիւն անտես լեալ, զփառամոլութիւն կամ զանափառութիւն տիրապետեալ 'ի մարդիկ՝ որ առաւել թուին զարմանալիք։ Եւ զի՞նչ օգուտ լիցի մեզ, Նումա, յուղևորութենէս. թերևս ախտաւորագոյնք անտի դարձ արասցուք։ Թո՛ղ անդր 'ի բաց. ոչ էր մարթ Արարչապետին տիեզերաց հարկ 'ի վերայ դնել մարդկան առ իմաստութիւն շրջել ընդ աշխարհ, սպառել զդեղեցկագոյն կէս կենացն 'ի ստացուած առաքինութեանց վասն անհաւատի ծերութեան. իւ-

բաքանչիւր ումեք 'ի մէնջ տուեալ է 'ի ծնէ մա-
տեան և դատաւոր խիղճ մուտց մերոց, խաղա-
ղութեամբ ընդ սմա կեցցուք, և դատիմք ամե-
նագէտք։

Նումա ասէ. Քաջ է, մի մեկնեսցուք ապա
յիսուսէից, դարձցուք 'ի լերինս քո, երթիցուք
բնակել 'ի հիւղ քոյին և դտանել զհօտ քո։
Մշակեցից ես զերկիր քո, արածեցից զխաշն քո,
ողբացից ընդ քեզ 'ի վերայ դերեզմանին Միր-
տալեայ, խօսեցայց ընդ քեզ հանապազօր զկա-
մին՝ այ 'ի ջրվէժն վաղ իսկ ծանօթ ինձ. և փո-
խանակ մայրենի գորովոյ՝ որ երանաւետէրն զա-
ւուրս քո յապատանի ատ. բարեկամութիւն
սիրելիս քաղցրացուսցէ զվիշտս քո։ Եւ 'ի լսել
զայն Լևոնդեայ՝ գիրկս արկեալ փարեցաւ զնո-
վաւ, և յուղի անկան երկոքեան 'ի միասին. և
անցեալք ընդ երկայնութիւն աշխարհին Եկուաց,
և ընդ Տոլոն գետ արբնթաց, մուին յանտառս
արբենկացուց, և հասին յՍպենեան լեառն։

Բայց դիւցազունքն երկոքին, որոց պարէնք
էին որսք իւրեանց, մոլորեցան հետամուտք զհետ
անտառաբնակ երէց։ Սնցին ընդ քարաժայռս
սիսիկայս. խորամուխ եղեն յանտառախիտս, և
տեսին ապա հովիտ մի զուարճալի՝ շուրջ պա-
տեալ յանմատոյց լերանց, յորոց աղբիւրք բա-
զումք բղխեալ՝ ոռոգանէին զհովիտն։ Թմբիք,
բարտիք և սարոյք՝ ամբառնային յեզերս վտակաց
խառն ընդ ձիթենիս, ընդ կնձնիս պատկեալս ող-

կուզաբեր ուռովք, և ընդ այլ պտղաւէտ ծառս։ Դալարի խիտ և ծաղկաւէտ յօրինէր ամենայն ուրեք գորգս կիտուածոյս։ Ընդ ամենայն ինչ ազդէր խաղաղութիւն և առատութիւն, յստակք էին անդ օդք և վտակք ականակիտք. և ոչ այլ ինչ լսելի լինէր անդ՝ բայց կարկաչ ալեաց և դայլայլիկ թռչնոց, որ ճախր առեալ ընդ սաղարթս ծառոց թռուէին նախանձընդդէմ միմեանց հռչակել զբարեկենդանութիւնն՝ յոր վայելէին։

Բարեկամք երկոքին հարեալք 'ի գեղ վայրացն, փութացան ելին 'ի հովիտն. գնային ընդ այն և զարմանային, և վայելէին 'ի բերկրութիւն սուրբ՝ որքան յերկնից շնորհեալ 'ի տեսիլ չքնաղագեղ բնութեան. և ընդ գնացս յորդագունի վտակին հետևեալ, ոչ ուրեք հետս գտանէին մարդոյ։ Եւ հասին 'ի տեղի ուրեք՝ուր յերկուս վտակն բաժանէր. և ժամադրեալ 'ի նոյն տեղի դառնալ գտանել զմիմեանս, մեկնեցան գնալ ընդ երկաքանչիւր առաջս գետոյն։ Լևոնդեայ ձիգ ընթացեալ, ոչ այլ ինչ եգիտ՝ բայց միայն ծառաստան և ծաղկունս և միրգս. իսկ Նումա բարեբաստագոյն գտեալ՝նշմարէր'ի հեռուստ խաչինս ճարակաւորս անշուն և անհովիւ մերձ յանտառակ ուրեք սարդենեաց։ Եմուտ անդր յամրաքայլ, և դիտեալ և հետազօտեալ՝ ետես ընդ կամարաձև յասմկաւ վայրի օրիորդ սպիտակազգեաց նստեալ 'ի բազմոց դալարի, և թուէր ընթեռնուլ ուշիւ մատեան մի՝ զոր ունէր 'ի վերայ

ծնգացն։ Վարսք նորա խարտեաշք անկեալ զուսովք նորա և զերեսօք ամբառնային մեղմիկ 'ի զեփիւռ, և երևէր դէմք նորա չքնաղագեղ՝ որպիսի չէիք լեալ երբէք, և զգեղեցկութիւն նորա 'ի բնէ պայծառացուցանէին պարզութիւն և անկեղծութիւն նկարեալ 'ի կերպարանս նորա։ Երեսք նորա քաղցր և զուարթ զանդորը բարեբաստիկ և զխաղաղութիւն առաքինութեան 'ի յայտ ածէին. գերաշխարհիկ ինն էր 'ի նմա. որ 'ի բաց մերժէր զամենայն պատկեր զգայական, և ամբիծ և զմայլական իմաստիւք ընոյր զհոգի. չազդէր երբէք տարփանս, այլ մեծարանս ինն սուրբս և զորով եռանդուն քան զտարփանս իսկ։

Ի տեսիլ նորին զկայ էառ նումա, ոչ ևս այլ այլեալ և աղմկեալ. ոչ յաճախէր բաբախիւն սրտի նորա, այլ բերկրութիւն ինն զգայր նա քաղցր՝ որ ոչ ինչ զմիտան զառաածանէր, և հեռի էին 'ի նմանէ խորհուրդք սիրոյ։ Ոչ ևս դիցուհի զհոգեւորին կարծէր. զգայութիւնք նորա խաղաղաւէտք և հիացեալք՝ ոչ ինչ կուտակէին նմա զիրան. այլ զիսկն ևեթ զնոցին տեսեալ, նկատէր յօրիորդն անծանօթ զգեղեցկագոյնն 'ի մահկանացուաց, արդեօք և զառաքինագոյն։ Լռիկ ինչիկ մտեալ ընդ թփուտան, մատեաւ առ նա. գիտէր զմատեանն. որ 'ի վերայ ծնգաց նորա կայր, այլ տառք նորա անծանօթք էին նմա. և ընկրկեալ զգուշութեամբ, յետկուսէ սաղարթախիտ թփոյն կայր 'ի թագաւորեան։ Եւ ահա

դայր ծերունի ոմն պատկառելի, յեց՝ի ցուպիւր՝ի բազմոտ. սպիտակավարսիւք գլուխ նորա ծածկեալ, և մօրուաք երկայն ընդ կուրծան ինջանէր, և՝ի խորշոմն դիմացն բերէր կերպարան ինն վեհ՝ զոր աղէտք և ամք ոչ էին եղծեալ։ Եւ ասէ ցհովուուհին. Դուստր իմ, ահա արևն խոնարհի, երթիցուք ընուլ զպատուէրս աստուածային օրինաց։ Յոտն եկաց հովուուհին, և մեծավայելուչ տիպ դիտակի նորա երևէր նումայ։ Ականողիք նորա կապուտակք հայէին՝ի հայրն, և կարկառէր առ նա զուարթութեամբ զբազուկ իւր. և ծերոյն յեցեալ՝ի բազուկ նորին, դառնայր դանդաղաքայլ՝ի հիւղ մի կառուցեալ՝ի խորս անտառին։

Ոչ ևս իշխեալ նումայ գնալ զհետ նոցա, դիտէր զամենայն շարժմունս նոցա։ Լուացան նոքա զձեռս իւրեանց յաղբեր ականակիտ ջրոյ, և մտին՝ի հիւղ անդր. բայց ծերունին. ել անտի ընդ հուպ փոխեալ զձև իւր, ընդ պճղնաւոր պատմուճանին հանդուշն ինն զգեցեալ պարեգօտ, և երփնագոյն ածեալ ընդ մէջս կամար, և զդէմն սքօղեալ կիսովին։ Բարձեալ բերէր աւնօթ պղնձի, յորում բորբոքէր հուր բոցածաւալ. և հանգոյց զայն երկիւղածութեամբ՝ի սրբաստաշ վիմի։ Զհետ դայր և դուստր նորա, բերելով խունկս անուշունս և արմատս և տրցակ ցամաք ոստոց։ Երկաքանչիւր՝ի գուճս ինջեալ՝ արկին զնուէրս իւրեանց՝ի հուր, արծարծեալ ըվ-

բոցն գործեաք ոսկեղինեաք, և սասցեալ աղօթս 'ի բարբառ անծանօթ։

Յարուցեալ ապա ծերունին, նովին երկիւղածութեամբ 'ի բաց տարաւ զանօթն, և օրհորդն հովուուհի ժողովեալ զխաշինս իւր ցրուեալս ընդ արօտ, աճ զնոսա 'ի փարախ ցանկապատ, և դարձաւ առ հայր իւր։ Իսկ Նումա լի եղեալ զարմացմամբ և խնդութեամբ, դառնայր փութապէս առ Լատնդ։

ՆՈՒՄԱ ՊՈՄՊԻԼԻՈՍ

ԳԻՐՔ ԻՆՆԵՐՈՐԴ

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԻՆՆԵՐՈՐԴ ԳՐՈՑ

Նումա և Լևոնդ հիւրընկալեալ 'ի ծերունւոյն, աքանչանան ընդ դուստր նորա Անայիս, և տրտմութեամբ մեկնին 'ի խրճթէ անտի։ Լևոնդեայ դարձ 'ի նախնին իւր արարեալ 'ի հիւղ, գտանէ զԿամիլլա. հրճուանք երկոցունց տարփաւորացն։ Կամիլլա պատմէ զարկածս իւր, և հարցանայ Լևոնդեայ. և մեկնեալ ընդ Նումայ դառնան առ ծերունին։ Նումա, առ 'ի փրկել զԱնայիս և զհայր նորա 'ի ձեռաց աւազակաց, վերաւորի։ Վէպք Զրադաշտի, և ճանաչել Լևոնդեայ զհայր իւր։

ՆՈՒՄԱ ՊՈՄՊԻԼԻՈՍ

ԳԻՐՔ Թ

Նումայ հասեալ փուլթանակի առ բարեկամ իւր, պատմեաց նմա որ ինչ եղեան. և առաջնորդեալ նմա 'ի հիւղ անդր, հասանեն բաղխեն զդուռնն։ Գայ հովուուհին, և 'ի բանալ զդուրսն՝ 'ի տեսիլ նոցին խուռվի։ Լևոնդ ասէ. Մի երկչիր, արք խաղաղութեան եմք. լեր մեզ ասպնջական, վաղիւ 'ի ծագել այգուն գնասցուք ըզճանապարհ մեր, գոհացեալք զդից վասն բարերարութեան քո։ Զայն լուեալ օրիորդին, փութացաւ յառաջ քան զնոսա՝ ազդ առնել հօրն, որ 'ի խորս անդ խրճթին նստեալ կայր 'ի բազմոց փսիաթեայ, և 'ի ձեռին նորա աղեկատն և իլ թողեալ'ի դատերէն։ Ամենեքն քանի մի անհարթք, սեղան խարխուլ, պնակք փայտեղէնք կախեալք զունկանցն, և առընթեր նոցին քնար երեւնեայ. այսոքիկ էին ամենայն կահք և մեծութիւնք անփառունակ տնակին։

ընդ տեսանել ծերունւոյն զհիւրսն՝ յարեաւ
ել ընդ առաջ նոցա, և հրաւիրեաց զնոսա՝ հան-
գիստ առնուլ. և ասէ ցդուստր իւր. Ամնայիս,
պատրաստեա ջուր եղկ, և ապասաւորեա հիւ-
րոցդ որ ինչ իցէ մեր լաւագոյն։ Եւ օրիորդն
պարկեշտ հնազանդեալ՝ արծարծեաց զհուր 'ի
վառարանի, չոգաւ խնդրեաց անօթ պղնձի,
ելից զայն ջրով, և ընթացաւ 'ի պարտէզ մինչ-
դեռ բոցն փարէր զպղնձեաւն։ Եւ դարձաւ ան-
դէն բերելով խաղող և ձիթապտուղ և այլ միր-
գըս, խորիսխ մեղու և ծաղկունս՝ զորս խառն
ընդ միրգս եդ 'ի սեղանի. ած և բաժակս հա-
ցեայս, և անօթ խեցեղէն լցեալ 'ի գինի նոր, և
'ի կոնք մեծ փայտեայ հեղեալ ջուր եղկ, եբեր
զայն առ հայր իւր։ Եւ ծերունւոյն լուացեալ զոտս
նոցա, թէպէտ և հրաժարէին, բազմեցաւ ընդ
նոսա 'ի սեղան։

Հազիւ երկոքին գիւղացունքն կարէին բացա-
յել ծերունւոյն զշնորհակալիս իւրեանց առ
յոյզս սրտից. և Նումա ակնկառոյց Ամնայիս՝
զքանչանայր ընդ գեղ նորա, ընդ բնական շնորհ-
սն, ընդ բարեձևութիւն ախորժ և անճիգն.
և մանաւանդ ընդ գութ նորա հայրասէր, և ընդ
ցանկալի պարզմտութիւնն՝ որ և 'ի դուշնաքեայս
իսկ 'ի նորին դրծս երևէր, առանց խնդրելոյ
նորա ցուցանել զայն և յակամայս իսկ նորին։
Ո՛հ երանի՛, ասէր ընդ միտս իւր Նումա, որում
այսպիսի որ իցէ քոյր. քանզի ակնածութիւն

նորա յերեսաց օրիորդին ոչ ներէր նմա այլ իղձս։ Իսկ Լևոնդ ընդ Ծերունւոյն առաւել պարապէր քան ընդ դատերն. իղձք իմն ներքինք՝ իւր իսկ անգիտելիք՝ ձգէին զնա 'ի սէր նորին. ալիք նորա, դէմք պատկառելի՝ յորում տպաւորեալ երևէին թշուառութիւն ընդ առաքինութեան, և վսեմ ծանրութիւն առանց իրիք խստութեան, ազդէին 'ի Լևոնդ մեծարանս խառն ընդ սիրոյ։ Ակնկառոյց և Ծերունին իսկ կայր 'ի նա նուաղեալ աչքն, նկատէր զնա և դարձեալ հայէր յԱնայիս, և թուէր համեմատել զտիպս դիմաց նոցա։ Եւ 'ի նկատել անդ՝ յոգւոց հանէր. և միրգն՝ որ 'ի ձեռին նորա՝ անկանէր, աչք նորա ընուին արտասուօք, և բարեգութ Ծերունին սրբէր զարտասուսն առ 'ի նկատել և ևս զդիւցազնն մարսիկ։

Անայիս, որ դիտէրն միշտ զհայր իւր, զգաց զյոյզս սրտի նորա. և վարկուցեալ զայն արդասիս տխուր յիշատակաց, առ զքնարն փարատել զտրտմութիւն. և փափկիկ մատամբքն յարմարեալ անդէն զլարս քնարին, քաղցր և խանդաղատելի ձայնիւն նուագէր։ Նումա և Լևոնդ և Ծերունին իսկ զմայլէին 'ի լուրն։ Եւ երդեաց նա զաշխարհս 'ի հրամանէ Որմզդի 'ի գոյ աստեալ, զարեգակն 'ի փչմանէ նորին ծագեալ 'ի բեղնաւորութիւն երկրի, բերել հունձս և ծառս զբանջար և զբոյս ախտաբոյժս։ Եւ զստեղծումն նուագեաց զմարդոյ անմեղ 'ի բնէ և անմահ, և

զանկումն նորին 'ի բարեբաստիկ կենացն և զապականումն 'ի խարամանուոյ չարեացն արարչէ որ են ընդ տիեզերս. զի ոտիոն այն ազգի մարդկան, գոյակից Որմզդի, ապականեաց զաղբերակն բարեբաստութեան՝ խառնեալ չարիս անհամար ընդ բարերարութիւնս գերագունի էին, և հեղ ընդ երկիր ախտս ընդ ցաւոց. և զի օրէնադիր առաքեցաւ 'ի յերկնից՝ մարտնչել ընդ խարամանուոյն և յաղթահարել զնա, առ 'ի կանգնել զանկումն մարդկութեանս, ածել զմարդիկ 'ի ճշմարիտ կրօնս, և կենդանացուցանել 'ի սիրտս նորա զբողբոջ առաքինութեան՝ որ խամրեալն էր յանօրէնութենէ։

Ասանօր ծերունւոյն ակնարկեալ յԱնայիս, և լուեաց նա զանուն օրէնադրին։ Հայէին ընդ միմեանս Նումա և Լևոնդ զարմացեալք ընդ աքանչելիսն՝ զորս երգէր, և յորոց ինչ ինչ համաձայնք էին կրօնիցն իւրեանց. այլ սիրտք նոցա շարժէին մանաւանդ ընդ սիրելի պարզութիւնն և ընդ գերիմաստ խրատսն բարոյականս՝ զորս Անայիս յեռոյր 'ի վէպսն։ Զայն նորա գողտրիկ, զգօնութիւն և ամօթխածութիւն յաճախէին զգեղ նորա. թուէր Նումայ վերափոխեալ 'ի բնակարանս դից, և լսել 'ի շրթանց Աթենայայ խորհուրդս նորահրաշ։

Ապա հիւրոցն 'ի քուն եղեալ, 'ի վաղիւ անդր ընդ առաւօտն պատրաստէին ուղեւոյ լինել. այլ յօժարութիւն իմն և սիրելութիւն գաղտ ցան-

կալի առնէր նոցա զհիւղն զայն, դառն էր նոցա մեկնել անտի, և հաճոյ կեալ նոցա անդ։ Զնոյն և Անայիս և հայր նորա ցանկային. փութացաւ Անայիս 'ի պարտէզն քաղել պտուղս և բերել առ Նումա, և ծերունին ատիպէր զլևոնդ տանել ընդ իւր գինի 'ի տկի. և երկաքանչիւր ցուցանէին հիւրոցն զճանապարհս դիւրինս, և աղաչէին զնոսա դառնալ անդրէն 'ի հովիտ անդր։ Եւ խոստացան նոցա զայն Նումա և Լևոնդ, և անկան յուղի՝ ընկճեալ սիրտք նոցա 'ի հեծութեանց։ Երկաքանչիւր անբարբառ դարձուցանէին ատէպ զաչս իւրեանց 'ի հիւղ անդր տրրտմութեամբ, և զմտաւ ածէին 'ի լռութեան որ ինչ տեսեալն էր նոցա և որ ինչ լուեալ։ Կրօնքն անծանօթք՝ զորոյ երգէր Անայիս զխորհուրդս, և աղօթքն առ հրոյն 'ի բարբառ արբազան, յուզէին զմիտս նոցա և աղմկէին զուշ և զուրուշ. զարմանայր Լևոնդ զծածուկ իմն սիրելութենէն՝ զոր կրէր ընդ անծանօթին, որ ոչն թուէր ծնեալ Յիտալիա. իսկ Նումա զսիրելութենէն ընդ օրիորդին, որ խանդաղատագոյն քան զտարփանս էր։

Եւ ապա ուր ուրեմն Նումա լուծեալ զլռութիւն. խորհուրդ 'ի մէջ էարկ՝ դառնալ բնակել ընդ օրիորդին։ Զնոյն և Լևոնդ ցանկայր, բայց կամէր զնախանին միւսանգամ տեսանել զհիւղ, և ողբալ անդրէն զգերեզմանաւն Միրտալեայ։ Մեծարոյ էին Նումայ խղճք նորա. և 'ի յոյզս արտի երկաքանչիւրոցն նորոգէին տխուր յիշա-

տակը. Լևոնդ բարբառէր զԻամիլլայ, իսկ Նումա համեմատէր զՀերակլիա ընդ պարկեշան Անայիս. և առ գութ գորովոյ տրամութեան լային երկաքանչիւր, և զմիմեանս մխիթարէին։ Ո՛ ըստքանչելիք բարեկամութեան, որ ամոքէ զաղէտս կարեկցութեամբ, և որ 'ի վշտաց իսկ յառաջ բերէ բերկրանս։

Զաւուրս երիս ուղևորեալ նոցա, և ահա եւ տես Լևոնդ զհիւղ իւր, և 'ի տեսիլ նորին ըզկայ առեալ նուաղեցաւ։ Ապա օգնեալ 'ի Նումայ՝ յառաջ խաղայր, և ծառք իւրաքանչիւր և վայրք և որ ինչ իրք անդ ծանօթք՝ ածէին 'ի միտս նորա քաղցր յիշատակ։ Ատ ուրեմն զբօանոյր ընդ Մերտալեայ, անդ ըստ զկարատս նորա, և այլուր դարձեալ մշակէր ծաղկունս՝ ընծայել նմա զայնոսիկ. և ամենայն ինչ յիշեցուցանէր նմա զաւուրս գորովանաց և բարեբաստութեան։ Ամէն նորա արտասուալից՝ չկարէին տեսանել որ ինչ յաճախն տեսեալ էր. օդք, զորս շնչէրն, հեղձամղձուկ առնէին զնա. ընկճէին զդայարանք նորա 'ի զգացմանց, ճմլէր սիրտ նորա, և սակայն քաղցրութիւն ինն գաղտնածածուկ զդայր 'ի տրտմութենէն։

Հասեալ 'ի դրունս անդր, եդ ծունր, համբուրեաց զերկիր, և ամբարձեալ զձեռս իւր՝ մատոյց զաղօթս զայս դիցն դաշտականաց. Ողջոյն ընդ ձեզ յաւէրժհարտունք և պարիկք, որք խնամարկեցիք ինձ 'ի մանկութեան իմում, և

զոր ս զարձեալ տեսանեմ ցնծութեամբ, ողջոյն ընդ ձեզ. ընկալարուք այժմէն զաղօթս՝ զոր 'ի բոլոր սրտէ ձեզ մատուցանեմ, և ապա հանից ձեզ մատն 'ի նուիրաց կաթին՝ զոր զդերեզմանաւ մօրն իմոյ հեզից։ Եւ յետ աղօթիցն յարուցեալ եմուտ 'ի հիւղն. և յապուշ եղև 'ի գտանել անդ զամենայն որպէս և թողեալն էր, զամենայն ինչ 'ի կարգի, զամենայն ինչ յիւրում տեղւոջ. տեսանէր զգեղարդունս իւր զառաջինս, զգործիս մշակութեան, և զառաջին սրինգն՝ որում երգեալն էր զՆամի՛ն՛յա, եռեւ զսրինգն զայն, և համբուրեաց խանդաղանօք։ Բայց թողեալ զամենայն, դիմեաց 'ի գերեզման անդր Միրտալ՛եայ; և եգիտ զայն դալար ծաղկամբք զարդարեալ. և բազումք այլ ևս թառամեալք յայտ առնէին, զի ձեռն երկիւղած նորանորս հանապազօր ծաղկունս մատուցանէր անդր։ Լևոնդեայ անդանօր 'ի ծունր անկեալ, թանայր արտասուօք զխիտ դալարին՝ որ զդերեզմանաւն էր բուսեալ, և օրհնէր զձեռնն անծանօթ՝ որ զարդարէրն զնա։ Իսկ Նումա լուիկ ճնչիկ առընթեր բարեկամին աղօթէր, կարեկից լեալ նմին։

Կալեալ ապա Լևոնդեայ զձեռանէ նորա, յորջորջելով զՆամի՛ն՛յա, ձգէ զնա 'ի ժայռն կոյս և 'ի ջրվէժն՝ որոյ սիրելի էր նմա յիշատակ։ Փութացաւ հաս անդր, և նախ քան զամենայն եռեւ զՆամի՛ն՛յա բազմեալ 'ի ժայռին։ Եւ ձայն բարձեալ դիմեաց 'ի վերայ նորա. և Կամի՛ն՛յայ

դարձուցեալ 'ի նա զգլուխ իւր, նուաղեցան երկաքանչիւր մինչ չև հասեալ առ միմեանս։ Եհաս նոցա Նումա յօգնութիւն, և զգաստացոյց զնոսա. և այն ինչ բացան աչք նոցա, յածէին 'ի խնդիր միմեանց, և ասէ Լևոնդ. Ճշմարտիւ դու ինքն իցես, զոր լացի այսքան ընդ երկար. դիք անմահք, եթէ երազք իցեն որ ինչ տեսանեմ, տուք ինձ մեռանել 'ի քուն։ Իսկ Կամիլլայ գիրկս արկեալ նմա խանդաղանօք, զհաւատին տայր ասելով. Այո՛ ես ինքն եմ, տարփաւոր քոյին հաւատարիմ, զոր ոչ ևս ինչ բաժանել 'ի քէն կարէ. եղէց ընդ քեզ միշտ, ընդ իշխեցօղդ սրտիս, ընդ փրկիչդ կենաց իմոց՝ զոր քեզ միայնոյ պահեցի։ Եւ փարեալ զնովաւ՝ դարձեալ ասէր. Ես ինքն եմ, մի լար. և ժպտէր գորովանօք, և 'ի ժպտել անդ ինքն ևս լայր. սակայն յարտասուալից դէմս իւր բերէր զցնծութիւն և զբարեբաստութիւն. զօրէն ոսկեզոյն ամպոց՝ որ անձրևեն հեզիկ 'ի ծաղկունս, և արեգակն աղօտացեալ 'ի նոցունց՝ սփռէ թափանցիկ զճառագայթս իւր, և ճաճանչէ ընդ մարգարտատիպ շիթս անձրևաց ցօղեալս 'ի նոցունց։

Սիրոյ և խնդութեան դրաւեալ զառաջին վայրկեան նոցա, էած ապա Լևոնդ զսիրելին իւր զկամիլլա 'ի տեղի անդր՝ ուր երբեմն խօսակցէին տարփանօք, և ասէ. Ստանօր լուայ, ատ պատմեցեր ինձ զամենայն անցս քո. խօսեաց 'ի լուր բարեկամիս իմոյ, զիտակ է նա ամենայն

գաղտնեաց մերոց, գիտէ նա զսիրտ իմ ոչ ինչ ընդհատ յինէն ինքենէ, և դու ինքնին յայտնեսցես նմա զքոյդ 'ի ճանաչել զառաքինութիւնս նորա։ Յայնժամ կամիլլա ակնարկեաց քաղցր 'ի նումա, և բազմեալ 'ի մէջ երկուց դիւցազանցն, սկսաւ պատմել զանցս իւր՝ զոր ցանկային անժոյժ 'ի լսել.

Հաշտք էին ընդ իս դիք, և զերծուցին զիս 'ի հարսանեաց՝ որ դժպհի էր ինձ առաւել քան զմահ։ Հնազանդեցայ հօր իմում, առ 'ի փրկել զնա 'ի պատերազմէ՝ որում ոչն կարէր յաղթել։ Արքայն Մարսկաց դարձաւ յաշխարհ իւր, և մեկնեցայ ես ընդ հրեշտակս Տելեմասայ 'ի նաւ մի սալենտացի՝ զոր արքային յղեալ էր վասն իմ։ Լռեմ, սիրեցեալդ իմ Լևանդիէ, որ ինչ յայնժամ յուզէին 'ի միտս իմ խորհուրդք. սիրտք մեր քաջ հասու լինին իրերաց, և չեն կարօտ լսելոյ զամենայն որ ինչ 'ի նոսա կրին։

Մինչդեռ հողմուռոյց առագաստիւք դէմ եղեալ 'ի ծովափունս Սալենտեայ նաւէաք, և ահա 'ի բարձանց Մեսինեայ ամպք թանձրախիտք գումարեալ զմեօք՝ ծածկեցին զերկին և զարև յաչաց մերոց։ Շղթայազերծք առ հասարակ եւոլեան զաւակք յարուցին փրփրադէզ զալիս, և գիշեր ահարկու ծածկեաց զծով. փայլատակունք խաղային ընդ ամպս. շանթք հողմք և կոհակք յանդիման աչաց տային նկատել մեզ զմահ։ Ոչ յայլ ինչ խորհէի յայնժամ, բայց 'ի

քեզ լե�։ օրհնէր զդիս, զոհանայի զմիրելէն, ասեսէր անձին զարգասութիւն 'ի Տեառնայդ, և անկեալեալ մնայի բեկանելոյ ներեմ դառն։ Հասին արկածքն, զօրապրուխք և զօրք և դառնասէր ընկրուն, և ես ինքն արբի զդառն այս, այլ ոչ կրնամ զարբեցութիւն և զկրակ, զարձայ 'ի վեր 'ի միանգամս արկոց, և բառնէ Հարեալ 'ի բեկոր մի դառան, խրատատուցի 'ի յոյս արուեստոյ զկեանս իմ՝ մասն քս։ Յեզ 'ի փոյթն ծանանուն, խառարիկ Հարանց և արկոց, արատեալ անձեալ խառարս, անկեալ 'ի ծանրս մնաց, ասէր ցիս։ Գոչարերեալոց, մեռանիլ Հասանէ քեզ, կամ՝ կեալ արբելոյ քան՝ լեալ։

Սիրոյն արդեաք առատանան Հանէր'ի վերայ իմ՝. Հանդարտեալոց ծանր ասեալս, այլ զարիս մնալ մարել մարեալն 'ի ծանրոյ զմարեալ՝ զոր արիոյ ասեն, մինչև ասեալ զցանեալ. և եղի անդր անուշ խառս. և 'ի ծանր անկեալ՝ զոհացոյց զդիս, մասն մարեալոյ նոցա զիս 'ի մնացանել, և առաջեալ մասն զերծուցանելոյ 'ի Հեռոյ Տեղեանայ։ Շարչ Տարեալ՝ անասնեալ լերինս բարձրանալ. և մի ամն 'ի մշակաց ծանոյց մեռ, զի էր յԱստուծոյ առ ասս Հաշտարարն Դարձանելոյ լերին։ Եւ էած զիս նա 'ի խրճիթ իւր, և զառաջս երթիս Հանդուցեալ անդ՝ զարոյց։ Դրանմէր մեր մեզ ասելոյ՝ որ էին առ իս, առոյգս արկէն և նեռս, և մարձանալեալ զմշակն։

եւ վիրաւորեալ անուշադրութեան, յորմէ իսկ եւ եւ ամենայն, խորհելոյդ զատանալ յԱստուծոյ 'ի լեռան 'ի հիւղ բոլորեն։ Երկոքին եւ ճանապարհին, և անմեղութիւն ինձ չատիցէ։ այլ 'ի նոցանէ ա-զատութիւնս խնդրեմ 'ի քեզ աշ եղեալ, խրատ-խուսափ անելիքիս յանցս։ Վասն զի յոչ ունիմ ինչ ասելիս։ Վասն զի ունիս ամենայն անելիս, զիշերապահեալս քեզ ամ 'ի երանելի զճանապարհին, անցեալ քեզ զեռս, ապրակեալ քեզ սոխոտիցս, և ձայնաւոր քեզ զապրանաց սանձիցս։ Զանազանութիւնս մնանա-նոյ ճեռապատիւ ներեալս եւ զանազանս անիցիս, զի մի զուցէ ճանապարհս որ զիս, իսկ՝ սայլեանացն որ զերծեալ և ինքն 'ի նոսա արեալս-մի՝ նեղեն՝ զաստուածն ինձ։ Եւ չէր ինչ ասորոյս երկիւղ իսկ։ զի 'ի կիրս սանձեալքս սանձեցոյ և զրեալսանացոյ, մինչ երանելի քեզ այրն յարդ-ասանէր՝ ասէ զի զիշերն կայեալ էր։ բուսոյ զձայն ասրանոյ բարձեալոյ։ և հարան յանձնէ իսկ՝ անուն կրանիցոյ։ Ասասանեալ մեռաց 'ի բարդեալոյ, և աշ եղեալ 'ի բուր։ զբարձեալոյ 'ի զարանանէ՝ որ էին 'ի նոսա ներ՝ Դանեալոյ զբարդաս, զոր խասանին քեզ մեռանեալս զանձնասանեալ խանիլ, և անա-սանարանէր 'ի սոսոր աշխարհ՝ մնասարելին յարա-զանարեալն։

Որ եղարան կայի յերկիրս 'ի բուր բանիցն, որ-զէս յարեան՝ սերանարոյ երկչաս Դանիկեալ 'ի մեռաս սանանալ զանձնանալ սոխարան չանոյ մերձ անցեալ։ Վասն անցանելոյ զարանանին, և և-

լեալ յայրէն՝ անկայ 'ի ծունր, աղաղակեցի և ասեմ. Ո՛վ աստուածուհիդ բարեգորով արարից Ամաղիկ, զու փրկեցեր զիս յալեաց. այլ զինչ օգուտ ինձ 'ի բարերարութենէ քումմէ, ցորչափ հեռի կամ յայնմանէ՝ զոր սիրեաց անձն իմ։ Ո՛վ չքնաղագեղդ 'ի դիցուհիս, յիշեա զարտասուս՝ զոր ես քեզ սէր հեղուլ. անկցի գութ 'ի սիրտ քո ընդ վիշտս՝ որոց փորձ իսկ ես։ Ուղղեա զգնացս իմ առ սիրելին իմ, ցոյց ինձ զճանապարհ՝ ընդ որ պարտ է ինձ գնալ։ Դշխոյ դից և մարդկան, եթէ լսելի լիցին քեզ աղօթք իմ, խոստանամ այր և ուխտեմ կանգնել քեզ բագին 'ի տեղւոջ՝ յորում տեսից դարձեալ զլևոնդ, և զեղեցկազոյնն 'ի խոյից նորա նուիրեցի քեզ 'ի զոհ։

Եւ 'ի կատարել աղօթից իմոց՝ զոյգ աղաւնեայ թռուցեալ ընդ օդս, եկին ինչին առաջի իմ։ Ահեռաւոր էր ինձ նշանն. տեսի զհաւս Ամաղկան, և զհետ եկի նոցա վստահութեամբ։ Ամենեկինք 'ի միմեանց աղաւնիքն երկոքին՝ մերթ սրաթռիչք լինէին ընդ երկիր, և մերթ զկայ առնուին 'ի դալարաւոջ ճարակաւորք. այլ ոչ երբէք անտես լինէին յաչաց իմոց։ Զաւուրս ինն ուղևորեալ, տեսի ապա 'ի հեռուստ զհիւղ քոյին, և 'ի տանիս անդ հանդեան աղաւնիքն. գրգային, վու վուս արկանէին, և թռիչս առեալ՝ անտես լինէին։

Զմտաւ այծ Լևոնդիէ, 'ի միտ առ զցնծութիւն իմ. գոհանայի զդիցուհւոյն, գոհանայի զաղաւնեացն, և բոլորից դից շնորհս ունէի։ Այլ ա-

ւայղ, հասեալ 'ի հիւղ քոյին՝ 'ի զուր աչք իմ խնդրէին զքեզ, 'ի զուր զքեզ ձայնէի, ընթանային շուրջ զհիւղիւդ, և ոչ այլ ինչ տեսանէի՝ բայց ամայիս։ Ցեսի ապա շիրիմ մի, ծանեայ յարձանագրէն՝ զի Միրտալէ անդ հանդչէր։ Ա՛հ սիրելիդ իմ, փոքր միւս ևս և ընկճեալ էր իմ 'ի յետին հարուածոյ ասի։ Գոչէի արտասուօք. Զի՞նք այլ ևս ինձ յոյս. շրջի՞ն անշուշտ զհետ իմ, 'ի Սալենտին խնդրէ զիս, ուր զնաւաբեկութիւն իմ լուիցէ, և սուգ մահաւիթ հարցէ զնա։

Զայս խորհէի, և զայս հանապազօր կրկնէի, և զօրհանապազ շուրջ ընթանայի ընդ լեառն 'ի յոյս գտանելոյ զքեզ։ Եթէ կեայ տակաւին, ասէի ընդ միտս իմ, դարձցի այսրէն աներկբայ, դարձցի 'ի շիրիմ մօր իւրոյ, 'ի նախկին ապաւան սիրոյ մերոյ. թէպէտ թագաւոր, թէպէտ և դերի, ընդ առնուլ վայրիկ մի պարապ՝ դարձցի այսրէն. ոչ անծանօթ է ինձ Լևոնդ, 'ի վայրս ցանկալիս երկիւղածութեան նորա պարտ է ապասել աներկեւան դարձի նորա։

Սովին յուսով զկայ առի 'ի հիւղի քում, ժողովեցի զխաշինս քո, և խնամ կալայ զքոյոցդառ հաստակ։ Խնամքս այսոքիկ սիրելիք՝ ամենքէին զտաղտուկ իմ. քաղցր էր ինձ չունել աւելի ինչ քան զքոյդ, քաղցր էր ինձ չխորհել յայլ ինչ՝ բայց 'ի հատուցանել քեզ 'ի դարձին քում զքոյդ անկորուստ։ Հանապազօր ածէի զխա-

չինա քո յարօտ, զօր ամենայն զարդարէի ծաղկամբք զշիրիմ մօր քո, կոչէի զստուերս նորին ցանկալիս, և խնդրէի 'ի նմանէ ածել զքեզ առ իս։ Լսելի եղեն աղօթք իմ. և ահա տեսանեմ զքեզ, Լևոնդիէ. և ամենայն վիշտք իմ սպառին։

Ցայսմայր Կամիլլա. իսկ Լևոնդ գիրկս էարկ նմա, և երկիւղածն Նումա կառուցեալ բագին հողակոյտ դալարազգեաց, ընթացաւ յանդեայ՝ ընտրել զխոյն ուխտեալ Աստղկան 'ի Կամիլլայ։ Ած զայն 'ի բագին, և երեքեան 'ի միասին ծունր եդեալ՝ կատարեցին զզոհն։ Դարձան ապա 'ի հիւղ անդր. և 'ի վաղիւ անդր բարեհաճեան աւուրն՝ տարիաւորք երկոքին ծաղկապսակք չոգան 'ի գերեզման Միրտալլեայ. և առաջնորդէր նոցա Նումա, այն որ 'ի մանկութենէ ուսեալ գիտէր զպաշտամունս քրմութեան. եղեն ուրուաց ոչխարս երկու թխատիպս, և գառինս չորս խնամակալուին իւրում Դեմետրեայ։ Կարդաց զնա, և մաղթէր 'ի նմանէ՝ օրհնել 'ի բարձանց երկնից զհարսանիսն Կամիլլայ ընդ Լևոնդեայ. և կցորդեալ զնոցին աչ ընդ աչ, զուգեաց զնոսա յանուն Դեմետրեայ և Միրտալլեայ. և ծախեալ 'ի պատիւ նոցա բոլորանուէր զողջակէզն, ընդ երկուս ամուսինսն դառնայր նուագելով երգ հարսանեկան։ Արարողութիւն պարզ և ցանկալի, յոյժ աննման բազմավրդով և տխրական հարսանեաց արքայազանց. խանդաղատելի հար-

սանիք, որոց դիք ևեթ են վկայք, երաշխաւոր՝ առաքինութիւն, և արարողապետ՝ բարեկամութիւն։

Բարեբաստութիւն երկոցունց ամուսնացն յուշ ածէր Նումայ զՀովիան դեղեցիկ. Անայիս ևեթ էր 'ի շրթունս նորա, հովուուհին ևեթ 'ի խորհուրդս. և անխառով տայր նա զանձն 'ի զգացումն յայն, այլազգ ինչ 'ի տարփանաց սիրոյ համարեալ զայն։ Զի այնպէս աննման սէր նորա ընդ Անայիս 'ի տարփանացն Հերսիլեայ, և այնպէս 'ի կրից անտի թշուառացեալ էր, զի ընդ յիշատակ ևեթ տարփանաց զդողանի հարեալ, բարեկամութիւն անուանէր զանհրաժեշտ բերումն իւր առ օրիորդն։

Եւ պարապեալ զաւուրս ինչ 'ի ցնծութիւն նորատէր ամուսնացն, ապա խորհուրդ առաջի արար նոցա Նումա՝ ուղևորել 'ի Հովիան ցանկալի։ Ժպտեցաւ Լևոնդ. իսկ Նումա շառագունեալ, յիշեցոյց նմա անդէն զխոստումն նորա առ ծերունին. և հաւանեցաւ մտադիր դիւցազնն մարսիկ, և ոչ կամիլա կարէր բաժանել 'ի նմանէ։ Վասն որոյ երեքեան 'ի միասին զինեալք անկան յուղի, և խօսակցութեամբ ամոքէին զտաղտուկ տաժանաւոր ուղւոյն։ Եւ կանխէր Նումա յառաջէր անժոյժ քան զամուսինան երկոսին. և տակաւ ճեպեալ 'ի գնացս, 'ի նշմարել զՀիւղն 'ի հեռուստ՝ շտապէր և ևս զքայլսն, 'ի դէց ուստեք անշուշտ առաջնորդեալ։ Զի ընդ հաստ-

նել 'ի հովիտն՝ լսէր ճիչ աղաղակի, սրացաւ ե-
տես զծերունին անկեալ 'ի ձեռս աւազակաց
բազմաց, որք ձգէին զնա 'ի քարշ ընդ փոշին,
և զտուսեր թերաքամեալ 'ի վերայ նորա ունէին.
և անդ 'ի բացեայ զդուստր նորա զԱնայիս յա-
փրշտակէին, որ արտասուալից մաքառէր շրջա-
պատեալ յայլոց աւազակաց։ Զինչ առնել էր
Նումայ, օրիորդն և հայր նորա 'ի հաւասար կայ-
ին վտանգի, զի յերկոցունցն պարտ էր նմա
փրկել, ուստ նախ ժամանել յօգնութիւն։ Տկա-
րագունին։ Յարձակեցաւ նա 'ի վերայ ապիրա-
տիցն, որ առաւել բռնանային 'ի ծերունին. հար
զերիս 'ի նոցանէ, և անկեալ 'ի վերայ այլոցն՝
վանեաց զնոսա զայրագին, և ձայն եբարձ առ 'ի
ձգել յինքն զայլս՝ որ յափշտակէին զԱնայիս։
Դիմեցին աւազակքն 'ի ձայն աղաղակին, և գու-
մարեցան առ հասարակ ընդդէմ Նումայ։ Յայն-
ժամ ոգի էառ Նումա, զի նմա միայնոյ 'ի վե-
րայ կայր վտանգ, և չէր ինչ նմա վտանգն ահար-
կու։ Խոյս եւ Անայիս առ հայր իւր, և Նումա
պատսպարեալ անձամբ իւրով զերկաքանչիւր,
ժուժկալէր միայնակ ընդդէմ գնդի աւազա-
կացն։ Հոսէին 'ի նոցանէ առուք արեան ընդ
հարուածովք նորին. իսկ նորայն ներկանէր
արիւն զզրահն։ Զորք 'ի թշնամեաց նորա տա-
պաստ անկեալ՝ խաղին զփոշի. այլ մնացեալ-
քըն մերձ էին ընկճել զդիւցազնն։ Եւ մինչ-
դեռ գայթ 'ի գայթի կայր արին Նումա մերձ

'ի նուաճել, որուընդոստ 'ի վերայ ապիրատիցն էջ լախտ Լևոնդեայ։ Իսկ Կամիլլայ ծանուցեալ զնոսա զի էին զօրք սալենատացիք զերծեալք 'ի նաւաբեկութենէն, ապան նեռահար զորս և կարացաց։ Եւ հայր իսկ օրիորդին յարուցեալ յափրշտակեաց զուսեր միոյ 'ի թշնամեաց, և պաշտպանէր նովաւ զպաշտպանս իւր։ Ասազակքն առ հասարակ ապանան. Անայիս գիրկս էարկ հօրն, և 'ի շնորհապարտ արտասուաց նոցա թացան նումա և Լևոնդ։

Բայց նումա վիրաւորեալ էր. աշխատութիւն և պատերազմ երկար, արիւնն հոսեալ 'ի նմանէ, և յերկիւղէ կորուսանելոյ զԱնայիս անցք 'ի յեղակարծ խնդութիւն տեսանելոյ զնա փրկեալ իւրև, պարտասեցուցին զնա 'ի սպառ։ Ածաւ 'ի հիւղն, և շուրջ եղեն զնովաւ ամենքին առ 'ի խնամս. ծերունին և Լևոնդ զննեցին զվէրս նորա, և պատեցին։ Մատեաւ և բարեդութ օրիորդն, և սեղմէր մեղմով զձեռն նումայ, և ասէր. Դու կեցուցեր զիս, և զհայրն իմ յառաջ քան զիս. երկոցունց կենաց գտանիմ քեզ շնորհապարտ։ Սպեղանի երկնային եղեն զիւցազինն բանք նորա. ոչ ևս կարէր պատասխանել, այլ աչք նորա բերկրալից դարձան յԱնայիս, և բացատրէին զորովանօք որ ինչ չկարէին շրթունք նորա արտաբերել։

Հատոյրք էին վէրք նումայ, թէպէտ և ոչ մահացուք, և կարօտէր ժամանակի բժշկու-

թիւն նոցա։ Անայիս և հայր նորա, Կամինֆա և այր նորա, առ մահիճս նորա կային միշտ. և գուրթ բարեկամութեան՝ որ ընդ Ծերունին և ընդ դիւցազնն մարսիկ՝ օր ըստ օրէ յաւելոյր։ Ցանկայր Լևոնդ դիտել զազգ և զպայման սիրելոյն, ցանկայր և Նումա լսել զիրս հօր սիրելոյն. և 'ի միում աւուրց, մինչդեռ ամենեքեան էին առ հիւանդին, աղաչեցին զնա դիւցազունքն երկոքեան 'ի միասին պատմել զիրս իւր. և Ծերունին ամբարձեալ զաչս իւր յերկինս, սկիզբն արար այսպէս.

Ծնեալ եմ ես յաշխարհին բակտրիացւոց. արիւնախնի թագաւորացն Պարսից խաղայ ընդ երակս իմ, և անուն իմ հռչակաւոր Ասիա՝ հասեալ ինչ թերևս յունկն ձեր, զի կոչիմ Զրադաշտ։

Ի լսել զանունն զայն՝ Նումա և Լևոնդ և Կամինֆա հայէին ընդ միմեանս հիացմամբ, և դարձուցին զաչս իւրեանց լի մեծարանօք 'ի Ծերունին։ Իսկ օրիորդն քաղցրիկ տեսեալ զմեծարանս նոցա, զուարթ 'ի ժպիտ եցոյց նոցա զշնորհակալիս իւր։

Եւ յառաջ ածեալ Ծերունւոյն զբանս իւր, ասէ. Հայր իմ հալածեալ յաթոռոյ յերեսաց արքային սարեատանեայց, շրջեցաւ աղերսաւոր 'ի դրունս թագաւորաց Ասիոյ, և ոչ եթող ինձ 'ի ժառանգութիւն՝ բայց զփորձ թշուառութեան և զիրաւունս իւր 'ի թագաւորութիւն Պարսից։

խորհեցայ փորձ փորձել. զբռամբ ածել զայն. զօրաժողով եղէ, դարձայ յաշխարհ անդր՝ ուր իշխեցին հարք իմ. գտի զՊարսս 'ի բարեբաստութեան ընդ ինքնակալութեամբ իմաստնոյն Փիլիպայ արքային նինուէացւոց, որ թագաւորէր անդ արդարութեամբ այրն մեծ։ Ցեսի զի չէր մարթ ժողովրդեան իմոյ լաւագունի վիճակել բախտի 'ի փոխել զտէր իւր, և անդէն հրաժարեցի 'ի խորհրդոց իմոց, եղեռն համարեցայ աղմկել զբարեբաստութիւն ազգի միոյ վասն մնոտի իրաւանց՝ որ ինձ ևեթ պատկանէր, և ոչ կարացի հաւանել խողխողելոյ բիւրաւորաց առ 'ի յաջորդել թագաւորի, զորոյ առաքինութեամբքն ոչ կարէի գերազանցել։ Արձակեցի զզօրս իմ, թագուցի զազգ իմ ճարտարանօք, նուաճեցի զկիրառումն փառասիրութեան՝ յորմէ չիք ոք ազատ, թէպէտ և յամբծագունից ոք իցէ. և անձնատուր լեալ բոլորանուէր 'ի խելամտութիւն բնութեան, ընտրեցի լինել իմաստուն քան թագաւոր։

Շրջեցայ ընդ Ասիա առ Հասարակ, խնդրեցի առ Բրաքմանս, առ ճենս, առ իմաստասէրս հնդիկս զիմաստութիւնն՝ որում տարփայի, և գտի ամենայն ուրեք սիրելի մարդկան զանապաշտութիւն քան զճշմարտութիւն։ Ճշմարտութիւն, որոյ ամենայն գեղ 'ի պարզութեանն է, ոչ շլացուցանէ զմիտս որպէս զմոլորութիւն. և յուսահատեալ 'ի գտանելոյ զայն յերկրի, ցանկայի մեռանել։

Մեծն Աբրամազդ 'ի սարաւանդեալ գահոյից իւրոց ակնարկեաց յիս 'ի ստորև, և ծագեաց 'ի սիրտ իմ զճառագայթ լուսոյ՝ յորում բնակէ։ Զամս քան պարապեցի յանապատի 'ի խորհել, և խելամուտ եղէ՝ զի մի ևեթ պարտի գոլ աստուած, և զի նորա տուեալ է ինձ հոգի՝ որ երկարակեաց պարտի գոլ աներկբայապէս քան զմարմին իմ, առ ընդունելոյ վարձս կամ պատուհաս։ Սիրտ իմ ազդեաց ինձ զի բարի է աստուած, և զի չարեացն՝ զորս տեսանէի յերկրի՝ չմարթէր նորին գոլ արարած, այլ չարի ուրուք՝ թշնամւոյ մարդկան և աստուծոյ։ Ատեցի զնա, և պաշտէի զարարիչն իմ, և պաշտէի զսա 'ի գեղեցկագոյնն յարարածս իւր, պայծառ ընչանակ զօրութեան նորա և փառաց, և մանաւանդ բարերարութեան։ Ցեսի զի արեգակն բուսուցանէր զցորեան 'ի հունձս Սկիւթաց և Պարսից և Ատրուոց և ամենայն ազգաց երկրի այլակրօնից. և 'ի միտ առի, զի աստուած՝ ներող 'ի վեր քան զամենայն միտս և մարդասէր՝ երկայնամտէ առ զրպարտիչս իւր, ներէ տկարաց՝ և պատուհասէ զհալածիչս։

Վասահ 'ի ճշմարտութիւնս յայտնիկ յաւիտենականս, խորհեցայ զի կարի յոյժ մեծամեծք էին բարիքն, և ոչ ինձ ևեթ անկատարք 'ի վայելս. և պարտ անձին վարկայ քարոզել զայնոսիկ։ Դարձայ յանապատէ, և ասացի ցաղգս. Սիրեցէք զաստուած, սիրեցե՛ք զմիմեանս. պաշ-

տեցէք զարարիչն ձեր յարեգակն՝ ՅԱՀ աշխարհի, և 'ի հուր՝ հոգի ամենայնի. լերուք սուրբք 'ի խորհուրդս 'ի բանս և 'ի գործս. բարի արարէք ամենայն մարդկան, ևս և այլազգենից, կեցցէք և մեռցէք հաւատարիմք տերանց ձերոց, և հաստատեցէք նոցա զհարկս անտրտունչ. գործեցէք զերկիր, զի այս է ծառայել աստուծոյ. և զգոյշ լերուք մի առնել ինչ, ընդ որ երկբայիք թէ բարի իցէ կամ չար։ Այս էր վարդապետութեանս իմոյ օրինակ, զոր քարոզեցի յափանց Եփրատայ մինչև ցինդոս։ Ազգք և ազինք հաւատային 'ի լուր բանից իմոց, և յաճախէին օրըստօրէ ինձ աշակերտք. և եթէ զինուորել կամեցեալ էր իմ զնոսա, կարէի նուաճել զԱսիա. այլ մարդասիրութիւն հզօրագոյն էր 'ի սրտի իմում քան զսէր օրինաց իմոց. մերժեալ իսկ էր իմ 'ի բաց զիղձս տեսանելոյ տիրեալ զօրէնս իմ, եթէ կարօտէին ճապաղեաց արեան։ Ցրուէի զաշակերտս իմ, վարէի զնոսա 'ի բաց, ասելով. Սիրեցէք զխաղաղութիւն, կացէք 'ի տունս ձեր. աստուածն, զոր քարոզեմ, չհրամայէ ձեզ տալ զկեանս ձեր վասն իմ։

Էր յաշակերտս իմ օրիորդ մի Ռքսանէ անուն, որ ոչ կամեցաւ մեկնել յինէն, թէպէտ և ուժգին թախանձէի զնա։ Արտասուք յաչաց իմոց դեռ ևս քամին 'ի յիշել իմում զցանկալի անուանն։ Ռքսանէ սիրէր զՔրիստոս առաւել քան զօրէնսդիր, և զհետ իմ ամենայն ուրեք գայր. լսէր ինձ զմայլմամբ. հոգի նորա յաչսն էր, և

բարեբաստութիւն նկարեալ 'ի դէմս նորա։ Եթէ երբէք լռէի, և կամ աղօտ ինչ ամպ եթէ մռայլ 'ի ճակատ իմ թուէր արկանել, Ոքանէ տրտում քան զիս գտանէր. չիշխէր հարցանել ինձ. այլ բարեգորով և ցաւագին հայեցուածք նորա ցուցանէին ինձ զվիշտ նորա։ Ասէր զնա հանապազօր, մի՛ զկնի իմ գալ. իսկ նա ասէր. Հայր իմ, 'ի վերայ օրինաց քոց ցանկամ մեռանել, թող ինձ կեալ վասն քո. որչափ տեսանեմ զքեզ, և որչափ լսեմ 'ի քէն, յաւելում 'ի սէր աստուծոյն քո։ Երկնչիմ զի կրեսցես դու հալածանս, և վշտակից կամիմ լինել ընդ քեզ. քաւ լիցի, ոչ թողցէ զքեզ Ոքանէ մինչև գրտցես դու զհարան սահմանեալ քեզ յԱրամազդայ։ Ցանկամ տեսանել զնա, կամիմ աղաչել բարեբաստիկ օրիորդին՝ որ գորովանօքն իւրովք և խնամովք, և զբարեկենդանութիւն քոյին յարդարելով, հաղորդ լիցի բարերարութեանցն՝ որոց շնորհապարտ գտանի աշխարհ։

Ասինքան սէր նորա և այնպիսի հաստատութիւն զարթոյց 'ի սիրտ իմ զգացումն, որ թուէր ինձ անգիտելի. և հարնացուցի զնա ինձ։ Օրհնեաց Արամազդ 'ի բարձանց գահոյից իւրոց զքաղցր զոդ մեր, և 'ի շնորհել ինձ կին առաքինի և ամուսնատէր՝ վարձատրեաց զամենայն որ ինչ վասն իւր արարեալ էր իմ։ Այլ, աւա՜ղ, աւուրք բարեբաստութեան իմոյ ոչ ընդերկար տևեցին։ Կայաք մեք ընդ Ոքանեայ 'ի Պարսս. և աշա-

կերտք իմ, որոց զմոգութեան կալեալ էր զանուն, ցրուեալք յիւրաքանչիւր կայս՝ պաշտէին զկրակ, գործէին զերկիր, և ուղղէին զառաքինութիւն։

Փիլէս արքայ Նինուէացւոց ներէր նոցա, որպէս և ամենայն թագաւորք մեծամեծք. և փակէր զաչս առ կրօնս՝ որ ոչ ածէին զհպատակս իւր ոչ յապստամբութիւն և ոչ 'ի զեղծումն։ Այլ զդօն արքայն հասեալ յալիս ծերութեան, հատոյց զհարկ բնութեանն, և եթող զաթոռն 'ի Սարդանաբալ որդի իւր։ Թշուառ արքայորդին 'ի տարաժամ հասակի թագաւորեալ, և շուրջ պատեալ և հրապուրեալ 'ի շողոքորթից, եթող 'ի նոսա զերասանակ պետութեանն, մոռացաւ զնրատան հայրենիս՝ զժողովուրդ իւր և զպարտս, ընկալաւ խորասոյզ 'ի չարաչար շուայտութիւնս։ Յոռութիւնք՝ որ ապականեցին զարքունիս նորա, հասին և 'ի Նինուէ, և անտի ընդ ամենայն սահմանս ինքնակալութեանն ճարակեցան։ Յետ զերկեամ թագաւորութեան նորա, մայրաքաղաք նորա և մարդք առ հասարակ էին զառածեալ յապականութիւն։ Թագաւորն խաղալիկ լեալ պաշտօնէից իւրոց, ստրուկ ներքինեաց, բռնաւոր 'ի վերայ ժողովրդեան, ոչ ևս յիշէր զի ոչ առ 'ի ստորագրել ևեթ հրովարտակս անողորմս թագաւորէր, ոչ առ 'ի հրամայել հարկապահանջութիւնս, և ոչ առ 'ի յագեցուցանել անպարտ արեամբ ժողովրդեան իւրոյ զվատթար հաճոյս իւր և զանարդ շողոքորթս։

Ամենայն ինչ 'ի վաճառ ելանէր 'ի Նինուէ. պատիւ և աւագութիւն և արդարութիւն այնոցիկ էր պահեալ, որք առաւելագոյն հատուցանէին գինս. կանայք պոռնիկք իշխէին պետութեանն, հրամայէին ընդ ծաղր զաւեր գաւառաց, և պարծանս համարէին գրաւել 'ի խնջոյս ուրեք զինչս բիւրաւոր տանց։ Նախարարք վատք և անողորմք, թշնամիք աշխարհին և ժողովրդեան, արհամարհողք տերանց իւրեանց և անձանց, 'ի վաճառ հանէին հրապարակաւ զհամբաւ իւրեանց, վաճառէին անպատկառ զժառանգութիւնս որբոց և զազատութիւն անմեղին։ Պատերազմողք պանծային 'ի մեղկասիրութիւն. դատաւորք ոչ ևս ամաչէին ընդ անիրաւութիւն. յամենայն կարգս քաղաքայնոց յափշտակութիւն 'ի փառս էր. և ոմիկն չքաւորեալ 'ի հարկաց, զոհ աւագանւոյն իշխանաց դատաւորաց և ստրկաց իսկ թագաւորին. ոմիկն հարստահարեալ առ ոսն կոխեալ՝ կարկառէր յերկինս զձեռն աղերսաւորս։

Մեղկութիւն և անգթութիւն կցորդին գրեթէ միշտ։ Սարդանապալ ընկղմեալ 'ի գարշպղծութիւնս, յորոյց հալածանս ընդդէմ մոգացիկորակոր դարձեալ նա 'ի պատերազմէ, և համարելով զայրացեալ զդիս իւր, դիւրին ևս վարկաւ խնդրել զվրէժ նոցա ապանութեամբք, քան առաքինութեամբք հաշտ առնել զնոսա։ Հրամայեաց բնաջինջ առնել մինչև զվերջին յաշակերտ-

տաց իմոց, խոստացաւ քանքարս տան ոսկւոյ՝ որում կենդանւոյն զիս 'ի ձեռս իւր մատնէր, և դատապարտեաց զիս անդատին 'ի տանջանս նորանշանս։

Նոյնհետայն տուր և հուր աւերեցին զբնակութիւնս մոգաց. տունք նոցա ճարակ եղեն բոցոյ, և արիւնք նոցա յապաւէնս նոցա հեղան։ Խուժադուժ զօրք Սարդանաբալայ, որոց այնքան վատութեամբ ընդ թշնամիսն պատերազմեալ էր, լի նախանձու ընդդէմ քաղաքայնոցն իւրեանց ցուցան։ Սուսեր 'ի ձեռին զհետ մտին սակաւուց փախստէիցն մոգաց, խողխողեցին առհասարակ զորս ըմբռնեցինն. զենին զմայր առդստեր՝ բռնաբարեալ զնոսա նախ, և զամենայն օրէն համարէին չարիս, 'ի նախանձ դիցն իւրեանց գործելով։

Փախչէի ես կնաւ իմով. բազում անգամ խորհուրդ 'ի մտի եղև ինձ գնալ յանդիման լինել Սարդանաբալայ, առ 'ի զրաւ առնել հալածականացն. բայց անողորմ բռնաւորին դատապարտեալ էր զամենայն զմոգս, և մահ իմ ոչ զոք կեցուցանէր։ Եւ դարձեալ զի Ռքսանէ կրէր յարգանդի զգրաւական ամբիծ սիրոյ մերոյ, և հայրակոչն լինելոյ իւրձ՝ցանկալի առնէր ինձ զկեանս։ Քաջալերեալ 'ի կնոջէ իմմէ, խրախուսեալ յարիութենէ նորա, թափառական ընդ անապատս, անոք անօգնական, և յաճախ իսկ տվալլուկք, անցաք ընդ Պարսս, ընդ Սոգդիս, ընդ Բակտրիս,

հանապազ 'ի վտանգի անկանելոյ 'ի ձեռս հալածչաց, և մերժեալք միշտ կամ մատնեալք յայնցանէ՝ առ որս խնդրէաք ապաստան։ Այլ յայնքան 'ի վտանգս մինչ հարատահարէին զմեզ չարիք, զմտաւ ածեալ զի վասն ճշմարտութեան կրէաք զայն ամենայն, քաղցրանային վիշտք մեր. վշտաց իւրաքանչիւր նորանոր հատուցմունս ընկատէաք հանդերձեալ. զօրացուցանէր զմեզ յոյս, և սէր յաւելոյր մեզ սիրեանս։

Միջամուխ լեալ ապա յանապատս Արաբիոյ, մտաք յայր մի խորին՝ ուր էր 'ի միջի շիրիմ, վէմ նորա թաւալեալ, և 'ի ներքս անդ շիրմին գոյր և ոչ ինչ։ Բայց թիթեղն ոսկի դիպաւ աչաց իմոց, և առեալ զայն, յաղօտ նշոյլ՝ որ յայր անդր մտանէր՝ ընթերցայ գրեալ 'ի տառս մեհենական. Զրադաշտ, աւանդեալիր ասա զմատեան սրբոց օրինացն զՁանդիկ կեշտն, զոր ազդեցութեամբն Ամամազդայ գրեցեր։ Զև ևս հասեալ է ժամանակն, յորում զաստուածազդեցիկդ այդ մատեան ծանիցեն մահկանացուք, և կրօնք քոյին տակաւին ընդերկար հալածեսցի 'ի ժողովրդոց. բայց միւս այլ օրէնադիր համանուն քոյին ծնցի 'ի լրումն սահմանեալ ժամանակին, և առաջնորդեալ 'ի յայր այսր՝ գացէ զմատեանդ սուրբ. և ցուցեալ զայն Ասիոյ, կացուցցէ 'ի գահոյս կանոն ազգաց և ազանց։ Իսկ դու կատարեցեր զպաշտօն քո. լեր արդ դիմագրաւ մրրկաց ծովու, երթ խնդրեա քեզ յարևմուտս խաղա-

զաւէտ հայրենիս, ուր անուն քոյին անծանօթ զերծուցէ զքեզ 'ի հալածչաց։ Այսպէս կամի Աբրամազդ. հնազանդ լեր և անտրտունջ։

Ընթերցայ երկիցս զբանս զայսոսիկ, և գիտացի աներկբայ՝ զի հրեշտակագիր զրոշմեալ էին։ Եղի դարձեալ երկիւղածութեամբ զտախտակն ոսկի 'ի շիրիմ անդր, և աւանդեցի անդ ընդ նմին զմատեանն սուրբ՝ յորում էին օրէնք աստուածայինք, և փակեալ զշիրիմն վիմաւն՝ որ թաւալեալն կայր, խոնարհեալ երկիր պագի Աբրամազդայ։ Եւ օրհնեցի զանուն նորա, և ելեալ յայրէն՝ դէմ եղի 'ի մեծափարթամն Տիւրոս. անտի ընդ սիրելւոյն իմում Ոքսանեայ ելեալ 'ի նաւ, գնայի ապաստանել առ ազգս Հիւրասէրս Եվ՝ադայ և Իբերիոյ։ Բայց նաւ մեր վարեալ 'ի մրրկէ ընդ Հանդրին անդունդս, եկն խրեցաւ 'ի ծովեզերս փրենատցւոց։ Կարդացի առ Աբրամազդ, և փրկեաց զհարան իմ. ածի զնա 'ի վերայ բազկաց իմոց 'ի շէն մի Մարսից, ուր գտի ապանչականութիւն, և անդ սիրեցեալն իմ Ոքսանէ, ոհ, տկար և նուաղեալ և պարտասեալ 'ի տառապանացն ընդ ծով, ըմբռնեցաւ յերկանց, և արար զիս հայր ուստեր միոյ և դստեր միանգամայն։ Խորհուրդ կալաք բնակել 'ի Մարսս, և ընդ ականց ոմանց զոհարաց, որ միայն Ֆնացեալ էին ինձ 'ի նախնի մեծութեանց իմոց, ստացայ տնակ մի գեղջուկ։

Մինչդեռ առաջի կայր մեզ բարեբաստու-

թիւն. մինչդեռ առաջի կայր մեզ վայելել յանդորը, 'ի պաշտել զաստուած մեր և 'ի դաստիարակել զորդիս, և ահա պեղիդնացիք անողորմք, որ պատերազմ տային յայնժամ ընդ մարսիկս, հասեալ 'ի գիւղ մեր՝ յաճիւն դարձուցին զայն։ Եւ յարձակեալ 'ի խրճիթ մեր, ուր կայի ես յանկողնի ընդ Ոքսանեայ և ընդ երկոսին որդեակս մեր, խողխողեցին անագորունքն զկին իմ և զաստրիկ. ոչ արտասուք, ոչ աղաղակ և ոչ ճիգն կարացին պաշտպանել նոցա։ Զդստրիկ իմ ևեթ կեցուցի ծածկեալ զնա ընդ ինև. յանձն ընկալայ զամենայն հարուածս՝ զորս վադերքն այնոքիկ կամէին տալ նմա։ Եւ նոքա հանդերձ փախստեայ ընդ հրդեհն և ընդ դիակոյտ, շաւիղ յարենէ իմմէ թողով զհետ իմ, հասի 'ի հովիտ այսր, ուր ձեռք իմ կառուցին զխրճիթս զայս, և ուր անուցի զդստրիկն իմ սիրելի զՈնային, զմիակ և զվերջին մխիթարութիւն ութանամեայ աղետից իմոց։ Ո՜հաւասիկ վասն որոյ ցանկանամ կեալ. առաքինութիւնք նորա և տիպք կերպարանաց յուշ ածեն ինձ հանապազ զՈքսանէ։

Եւ զայս ասացեալ, անկաւ ծերունին զպարանոցաւ դստերն։ Բայց Լևոնդ ընդ լուր վիպացն 'ի փղձուկ հարեալ, կալաւ զձեռանէ ծերոյն, սեղմէր զայն, և արտասուալից և խանդաղատելի աչօք հայեցեալ 'ի նա, ասէ. Ա՜ւաղ, և յորո՞ւմ գեղջ կորուսեր զորդեակն քո։ Ծերունին ասէ.

ՅԱՎԻԹ առ եզր Ատերնեայ գետոյ։ Լևոնդ ասէ. Իցէ թէ որդեակն քո այն, զոր ողբաս, կրէր յուլան զմրուխտ քանդակեալ։ Այո՛, ասէ ծերունին զարմացմամբ. մայր նորա կախեալ էր զայն զպարանոցէ որդեկին, և անուն Աբրամազդայ 'ի նմա քանդակեալ 'ի տառս պարսիկս...։ Եւ գոչեաց յայնժամ Լևոնդ, դիմեալ 'ի գիրկս նորա. Ե՛կ ապա գիրկս ա՛րկ զորդեկաւ քով, նոյն ինքն իսկ եմ բարեբաստիկ որդեակ քոյին. ահա զըմրուխտն քանդակեալ։ Գոյ ես կիսամեռ յՅԱՎԻԹ. 'ի ծոցի իմում կրեմ զապի տուսերին՝ որով հարին զիս պելիդնացիք։ Յօրէ անտի տեսանեալ իմ զքեզ, խայտայր սիրտ իմ. աղապատանք և բերումն սրտի ինքնաշարժ զգացուցանէին ինձ՝ 'ի քէն ընկալեալ զկեանս։

Ոչ ևս ծերունին բարբառել կարէր. ծանեաւ զգոհար ակն քանդակեալ, ընթերցաւ 'ի նմա զանուն Որմզդի, փարեցաւ թևապարփակ զորդւոյն, համբուրէր զնա, և շնչասպառ 'ի խնդութենէն՝ յոգիս ապաստան կայր։

ՆՈՒՄԱ ՊՈՄՊԻԼԻՈՍ

ԳԻՐՔ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՆԱԽԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԱՄՆԵՐՈՐԴ ԳՐՈՑ

Ալմուկք 'ի Հռովմ, և բախտ Նումայ։ Լեռնդ խնդրէ 'ի հօրէ իւրմէ զԱնայիս 'ի կնութիւն բարեկամին իւրում. Զրադաշտ ոչ հաւանի ընդ այն։ Ճառ Նումայ, և համոզել զԶրադաշտ։ Մերձ 'ի հարսանիսն հասանեն հրեշտակք հռովմայեցիք գուժել զաղէտս Հռովմայ, զձարակել սրածութեան, զմահ Հռոմուլէայ, և աւետել զընտրութիւն Նումայ։ Նումա չառնաւ յանձն թագաւորել. Անայիս ջանայ համոզել զնա. Նումա կայ անողոքելի։

ՆՈՒՄԱ ՊՈՄՊԻԼԻՈՍ

ԳԻՐՔ Ժ.

Արհաւիրք յայնժամ և աղմուկք էին 'ի Հռոմ. սաբինացիք յուսահատեալք մահուամբն Տատիոսի և աքսորանօքն Նումայ. առ զարհուրանաց ևեթ մարդախուշտ բռնաւորին հնազանդէին։ Գարշէին և 'ի Հերսիլեայ, համարելով զնա չարեացապարտ սոսկալի մահուն Տատիայ։ Պառակտեալք ևս քան զևս 'ի Հռոմայեցւոց, և երկաքանչիւր կողմանք զմիմեանց կասկածեալ, և ոչ զմիմեանս 'ի սրտի ոմն թագուցեալ, կազմ և պատրաստ կային հանապազ 'ի խողխողել զմիմեանս։ Կասկած և թշնամութիւն յամենայն իսկ 'ի տունս տիրէին. և եթէ չէր խոհականն Մետիոս, քաղաքական պատերազմի յաճիւն դարձուցեալ էր զՀռոմ։

Հռոմուլ անձնատուր 'ի դառն զայրոյթ, որ յաւագանին եղեռնաւոր զիսղճի մտաց ունի զաեղի՝ առ 'ի նուաճել զժողովուրդ իւր, յաւելոյր 'ի

վերայ նորա հարկս. հեղոյր զարիւն ազնուականաց, և ահարկութեամբ ևեթ իշխէր։ Իսկ Հերսիլիա, դուստր կարի իսկ հարազատ նորին, պարարէր 'ի թունից նախանձու և կատաղութեան։ Ոչ ինչ երկբայեալ զի յայլմէ ումեքէ ոստիւ գրաւեալ էր սիրտ Նումայ, յղէր զոր հանապազ պատուիրակս անծանօթս յամենայն ազգս Իտալիոյ, հետազօտել զոսոխն, առնուլ զրոյցս զնումայ, սպառնալ զզէնն հայրենիս ընդդէմ թագաւորաց՝ որ տայցեն նմա ապաստան, և զինս հատանել գլխոց նոցա։

Յայնմ ժամանակի ամրացեալ Նումա խաղաղաւէտ 'ի խորս Ապենեանց ընդ հաւատարիմ բարեկամն, արտասուէր առ ցնծութեան՝ շնորհապարտ առ Զրադաշտ և առ Լևոնդ, և կցորդէր հրճուանաց նոցա՝ տեսանելով զերջանիկ հօրն ողջագուրել զորդին իւր։ Իսկ բարեդորով ծերունին ոչ յագենայր 'ի տեսանելոյ, 'ի լսելոյ և 'ի գիրկս արկանելոյ որդւոյն, և ասէր. Գտի ուրեմն զքեզ որդեակ իմ. տեսանեմ ուրեմն ըզքեզ. ահ, ես ոչ խաբէի. յառաջնմէ օրէ գալըստեան քո 'ի հիւղ իմ՝ կապեցաւ ոգի իմ ընդքեզ անհրաժեշտ բերմամբ. ծանեաւ զքեզ անդրսահին սիրտ իմ. քանի՛ քաղցր է ինձ ակնարկել 'ի քեզ. քանի՛ գեղեցիկ ես, քանի՛ վեհ. եկ արդ 'ի գիրկս իմ, եկ լեր ինձ արդ հայրակոչ, զի զամենայն զգուանս մանկութեան քո պարտիս դու ինձ։

իսկ Լևոնդ արտասուէր ևեթ. և Կամիլլա լուռ ևեթ կացեալ լսէր։ Ապա առեալ Լևոնդեայ զձեռանէ հարսինն, ած զնա առ Զրադաշտ, և ասէ. Ահաւասիկ, հայր իմ, զոր սիրեաց անձն իմ. ահաւասիկ որ գրաւեաց զսիրտ իմ. կորուսաք զմիմեանս ընդ երկար, այլ յաջողեաց մեզ ապա գոլ ամուսին։ Սատիկ էր յոյժ սէր մեր ընդ միմեանս. բայց եթէ դիտէաք թէ առաջի կայր մեզ բախտ գտանելոյ զհայրդ իմ, ահ, մի երկբայիցիս՝ զի ինայաք ժամուս այսմիկ, որպէս զի օրհնութեամբ քով զհարսանիս մեր կատարէաք. թող մեզ զբարեբաստութիւն մեր, և յաւել մեզ զայն հաճութեամբդ քով։ Եւ զոյգ ընդ բանին եդ ծունր Կամիլլա. սիրտ նորա բաբախէր, աչք նորա ցածուն, գլուխ խոնարհեալ, երեսք կարմրագեղ, և հազիւ իշխէր նա հայել պատկառանօք 'ի Զրադաշտ, և ինայր անձկանօք կոչելոյ նորա զինքն դուստր. ոչ երբէք այնքան լեալ էր 'ի նմա խղճ երևելոյ գեղեցիկ, և ոչ յաչս սիրեցելոյն իւրոյ Լևոնդեայ. և անմռունչ կացեալ՝ թուէր իմն ասել ծերունւոյն, մի 'ի դէմս իւր հայել՝ այլ 'ի սիրան արժանաւոր նմին։

Յայնժամ յարուցեալ զնա ծերունւոյն, ասէ. Դստրիկ իմ, զեր 'ի վերոյ քան զվիշտս իմ պատահէ ինձ բարեբաստութիւն. միակ կորուսի որդեակ, և գեղեցկանսեհս ինձ այս օր երկուս պարգևէ։

Եւ զայս սասցեալ գիրկս էարկ գեղանւոյն Կամիլլայ. և խանդաղատելի տեսարանին լրումն արար Լևոնդ պատմութեամբ արկածիցն իւրոց. և սրտեռանդն կարեկցութիւն ծերունւոյն և դստեր նորա ընդ այնոսիկ՝ յաւել զզդացումն ազդեալ 'ի բնութենէ 'ի սիրտ նոցա։ Խնդակից լինէր նոցա և Նումա. և 'ի ծանօթս գալ օրիորդին՝ զի էր քոյր Լևոնդեայ, գեղեցկագոյն ևս թուէր յաչս նորա. նորանոր առաքինութիւնս հանապազ նկատէր 'ի նմա, և անդադար զնմանէ խօսէր ընդ բարեկամին. և բարեկամութեանն ևեթ անուն ոչ ևս թուէր նմա բաւական։

Իբրև հատատէր նա տակաւ յառողջութիւն, ելանէր ընդ առաւօտս 'ի զբօսնուլ. և երթայր միշտ 'ի վայրս՝ ուր Ամայիս զհօտն արածէր, և ինքն իսկ հովուէր՝ առ 'ի կալ ընդ օրիորդին։ Եւ մինչ Լևոնդ և Կամիլլա ելանէին յորս վանս ծերունւոյն, ինքն զանցս իւր պատմէր օրիորդին և լսէր հրճուանօք զմտածութիւնս նորա և ըզխորհուրդս, զարմացեալ ընդ հանճար նորա և ընդ խնամատութիւն յայնմ 'ի մատաղ հասակի. և վարժէր առ նմա հանապազօր 'ի խոհականութիւն և յառաքինութիւն։ Մերթ եղեգունս յիրար յարեալ մոմով, նուագէր նոքօք, և կըցուրդէր արնգաւն գողտրիկ ձայնի հովուհւոյն. և յաճախ ևս յեղյեղէր զտաղս և զերգս ուսեալս 'ի նմանէ։ Ոչ ինչ խորհէր նա 'ի սէր, այլ ախորժագոյն ինչ զգայր 'ի սրտի և մեղմագոյն։

ընդ ծագել այգուն, կանխէր առ նա. ոչ խայտայր 'ի տեսիլ նորա, այլ կարօտէր տեսոյ նորին. ոչ այլայլէր յերեսաց նորա, այլ նովաւ ևեթ էր բարեբաստիկ։ Հեռի 'ի նմանէ գտանէր անզգայեալ, հեռի 'ի նմանէ ոչ ևս կեայր։ Այսպէս արևադէմն Կլիտիա խանդակաթ անկանի թառամեալ և նուաղեալ 'ի մեկնելն 'ի նմանէ Ապոլոնի. իսկ 'ի ծագել անդրէն լուսաճաճանչ դիցն, ամբառնայ զգլուխ իւր 'ի վեր, և զդէմս 'ի յաստղն տունջենային հաստատեալ՝ շրջի զատեղամքն իւրով ընդ շրջագայել նորին, և ակնկալեայ 'ի նա կայ մինչև յընկղմել նորա 'ի ծոց թեատեայ։

Իսկ պարկեշտն Ենայիս, որոյ ոչ 'ի սիրտ իւր և ոչ 'ի նումն էին ինչ պատճառք երկիւղի, անհնատուր լինէր 'ի բերումն անդր՝ որ ձգէրն զնա։ Սիրէր զազատիչ իւր և զկեցուցիչ հօրն իւրոյ. շնորհընկալ գոհութիւն պարտ անձին վարկանէր զայն, և առաքինութիւնք նումայ ցանկալի զայն առնէին։ Քաղցր էր նմա խօսակցել ընդ համբակին վարժելոյ առ ոտս Տուլլեայ զզարմանալեաց բնութեան, զընթացից աստեղաց, զայլ և այլ ազգաց և զտեսչութեանց, զկրօնից՝ որ ամենայն ուրեք զանազանին, և զբարոյական օրինաց՝ որ առ ամենայն ուրեք են նոյն։ Երկաքանչիւր հաստատուն 'ի կրօնս իւրեանց՝ մեկնէին զայն և պաշտպանէին. և անմիաբանք 'ի պաշտօն, միաբանք էին 'ի պարտս. հաշտք էին

սիրտք նոցա 'ի հակառակել մտացն. և Նումայ՝ որ ոչն յագէր 'ի զարմանալոյ ընդ ներհուն իմաստութիւն օրիորդին, օրըստօրէ յաւելուին մեծարանք առ նա։

Լևոնդ նախ իրազեկ եղև ըղձից նոցա առ միմեանս, և ցանկայր յոյժ խնամութեան բարեկամին իւրոյ։ Ի միում աւուրց եհարց ցնա, և ասէ. Սիրեա՞ դու զքոյր իմ, ասա՛ ինձ համարձակ։ Իսկ Նումա շառագունեալ այլայլէր։ Ցաւել Լևոնդ. Եւ ընդէր ամաչես, 'ի դից անտի բնաւորեցաւ 'ի մեզ սէր առ 'ի սիրելիս վշտաց մերոց և առ 'ի վարձ առաքինութեանց։ Եթէ սիրա .քո լուծեալ ելցէ 'ի սպառ յանարժան կապանացն Հերակլեայ, եթէ սիրես դու զԱնայիս՝ որչափ սիրէ զքեզ Լևոնդ, ընկալայց զնա .քեզ 'ի հօրէ իմմէ. խօսեայց, ասա ինձ միայն՝ թէ կամիս բարեբաստիկ զքոյր իմ կացուցանել, և հաւատացից բանի .քում որպէս զելցն մերոց պատգամաց։ Եւ պատասխանի Նումա. Սիրեցեալդ իմ, անուն Հերակլեայ տակաւին զդողանի տայ ինձ հարկանել, իսկ Անայիս աներկեան առնէ զիս. զգացումն, զոր .քոյր .քոյին ազդէ յիս, յոյժ աննման է այնմ՝ որ թշուառ և հէք զիս կացուցանէ։ Տեսանեմ հանապազօր զԱնայիս, կամ ընդ նմա անմեկին, և ոչ 'ի միտս իմ անկանի խօսել ընդ նմա զսիրոյ և զհարսանեաց. այլ խելամուտ եմ, բարեկամ, զի եթէ բարեբաստութեան մարթ ելցէ բնականալ յերկրի՝ լիցի նա բնակակից ամուսնոյ .քեռ .քո։

Զայն իբրև լուաւ Լևոնդ, դիրկս էարկ նմա. և առեալ զձեռանէ նորա, ածէ զնա առ Զրադաշտ։ Ոչ ինչ երկմտէր ընդ հաւանութիւն նորա, և խնդրեաց 'ի նմանէ զՆայիս 'ի հարսնութիւն բարեկամին իւրում և կեցուցչի նորա, և որ քան զամենայն մարդիկ սիրելին էր իւր և մեծարոյ։ Եւ քանի՛ ապշութիւն եղև նմա և վիշտ, իբրև եառեալ զի Զրադաշտ լուեալ նմա լուրջ և անժպիտ՝ տխուր եւ պատասխանի. Որդեակ իմ, սիրեմ ես զնումա, նորին պարգևք են կեանք իմ, և օրհնեցեալ զօրն՝ յորում լիցի ինձ փոխարինել պարգևաց նորա. բայց դուստր իմ զմոգաց պաշտէ զդեն, որոց գտանիմ ես դեն. պետ. և օրէնք՝ զորս քարոզեմ՝ արգելուն զխնամութիւն ընդ կռապաշտս։ Ոչ ինչ զանխուլ է 'ի քէն, զի 'ի վերայ օրինացս այսոցիկ արքոց զամենայն ինչ փոխանակեցի, զպատիւ, զգանձս և զհանգիստ, և զամենայն ինչ զոհեցի նոցա. և կամիցիս զի մերձ 'ի վախճան կենաց իմոց, 'ի պահու՝ յորում առաջի կայ ինձ ընդունել զվարձս վաստակոց, կորուսցես զայն ստունգանելով օրինացն՝ զորս ես ինքն ուսուցի։

Եւ ընդմիջեալ Լևոնդեայ արտասուչս ինն ասէ. Ապերախտութիւն ուրեմն ուսուցեր։ Զրադաշտ ասէ. Ոչ, որդեակ իմ, այլ խոհեմութիւն. ոչ կամեցայ զի որ 'ի մոգաց արկցէ զանձն 'ի վտանգ ուրացութեան, այլապէն ածեալ կին. կալցայ զառաջս իշխանութեան սիրոյ, և

զբնաւոր յօժարութեան գիւրագործով սրտի 'ի խորհել զօրէն սիրելոյն։ Դուստր իմ սիրեսցէ զՆումա, ընկալցի զհաւատս նորա, թողցէ ըզկրօնս մեր, և ես վասն այսր ամենայնի առաջի մեծին Սրամազդայ գտայց մեղապարտ։ Շատ իսկ վիշտ է ինձ զի որդի իմ, զաւակն Զրադաշտայ, դատիարակեալ 'ի կռապաշտից հեռի յինէն, պաշտէ այլ ինչ դեն, և ոչ զհայրենին. կամիմ զէթ զդուստր իմ պահել աստուծոյ, վասն որոյ այսչափ ինչ կրեցի. կամիմ 'ի բաց կացուցանել զՆայիս 'ի վտանգէ թողլոյ զնա։ Որչափ մեծարոյ է Նումա, այնչափ մեծագոյն է վտանգն. ահ, ոչ հալածանք և ոչ դահիճք սասանեցուցանեն զհաւատս, այլ օրինակ առաքինութեան յայլադեն 'ի կրօնս։

Դարձեալ զի և դժպհի են տակաւին կրօնք իմ առ ամենայն ազգս. և Նումա ասելի լեցի բոլորովին խաչիոյ յածել իւր 'ի կնութիւն հարսն մոգակրօն, գուցէ և դուստր իմ ոչ այնպէս սիրելի լեցի նմա... Ներեա՛ ինձ, Նումա, եթէ թշնամանեմ և տրամեցուցանեմ զքեզ. առաւելագոյնս արդեօք թուեսցի քեզ նախանձայուզութիւն իմ, և թուեցայց քեզ ապաշնորհ. այլ ես հաւատամ 'ի կրօնս իմ, սիրեմ զդուստր իմ, չկամիմ արկանել զնա 'ի վտանգ անհաւատութեան, կամ բերելոյ քեզ յօժիտ զատելութիւն ազգի քո։

Եւ լուեաց Ծերունին 'ի խօսելոյ. և Լեռնդ

կարկեալ կայր, զաչս 'ի վայր արկեալ տխրագին, զի ոչ կարէր պատճառս զօրաւորագոյնս ածել ընդդէմ ծերունւոյն։ Իսկ Նումա մտադիւրագոյնս լուեալ զամենայն, և զուարթ 'ի նա ակնարկեալ, ասէ.

Զրադաշտ, յորմէ հետէ ծնեալ եմ, դիք՝ զորս պաշտեմն՝ ցուցին առ իս զզօրութիւնս իւրեանց. սիրեմ զնոսա, երկնչիմ 'ի նոցանէ, և լաւ համարիմ մեռանել՝ քան յուրասա 'ի նոցանէ կալ։ Այլ քաւ լիցի ինձ անարգել զայլս 'ի կրօնից, որ ընդտիեզերս. եթէ դիք ներեն այնոցիկ, ինքր խրատագոյն քան զդիսն գտանիցիմ, կորիցեն արք արիւնահեղք, որք զօրէն Սարդնաբալայ սուր 'ի ձեռին հալածեն զայնոսիկ՝ որք ոչ ըստ նոցա խորհին, առաջի եդեալ նոցա մահ և զաղանդ, և յաճախեն վկայս ընդ ոճիրս իւրեանց, որոց մարթէր բարերարութեամբքն առնել եկամուտս։ Ոչ թշուառ մահկանացուացս է անկ ըզվրէժ դիցն խնդրել, և ստանձնել զհոգ նոցին. մինչիւնք 'ի յանդի ոչ ապանանեն զմիմեանս վասն տեառն անդոյն, այլ ժառանգեն 'ի խաղաղութեան զբարին՝ զոր 'ի նմանէ ունին։ Գերագոյն 'ի կատարելութիւնս դիցն է բարութիւն. և թշնամիք նոցին չարագոյնք՝ են հալածիչք, զի կապտեն 'ի նոցանէ զքաղցրագոյն բերկրանս նեբրելոյ տկարաց։

Այս են կրօնք իմ, ո՛ Զրադաշտ. քեզ արդանկ է դատել, թէ հաւատք դատերն քո լիցի

առ իս՝ի վասանդի։ Մեծարեցից ես զկրօնս նորա, և մեծարեսցէ նա զիմն. պաշտեսցէ նա զԱրամազդ, և պաշտեցից ես զԴիոս։ Այլ Արամազդ և Դիոս զնոյն մեզ պատուիրեն. սիրել զքեզ, յարգել զալիս քո, գթալ՝ի միմեանս, ապրիլ զթշուառս, զայսոսիկ պատուիրէ աստուածն քո, զայսոսիկ և իմն ինձ հրամայէ։ Սիրտք երկաքանչիւրոցս, ՝ի հնազանդել նոցին, սերտագոյնք կը-ցորդեսցին. և խառնեսցին յիրեարս որպէս վը-տակք կրկին ականակիտք, որոց աղբերակունք այլևայլք իցեն, և ջուրք նոցա զուգախառնեալք։

Համարիս զի ատելի եղէց ազգին իմում, զմո-գակրօն ածեալ ինձ կին։ Իմ այսուհետև չիք ազգ, և ոչ հայրենիք. կորուսի զՏուլլոս, կորուսի զՏատիա, և աշխարհ ինձ արդ սահմանի՝ի խրճիթ Զրադաշտայ, սիրտ իմ վկայէ ինձ, զի չեղէց երբէք ատելի։ Տարածեա՛ ինձ հայր ըզ-գիրկս քո, ընկալ զիս քեզ յորդի. շնորհեա՛ ինձ՝ի միում վայրկեան ժամանակի զամենայն, որ ինչ՝ի պարագայս ամաց բարձին յինէն գիք. տո՛ւր ինձ զԱնայիս, և երկայնաւուրս քեզ պատ-րաստեսցուք։ Կեցցուք խաղաղութեամբ՝ի հովտի աստ, ուր որդիք ուստեր քո և դստեր բնա-կեցուսցեն գաղթական՝ որ դարուց՝ի դարս օրհ-նեսցէ զԶրադաշտայ անուն ցանկալի։ Հսկեսցես դու՝ի նորածին ազգատոհմի քում, գորո-վեսցի նա զքև, և քև լիցի բարեբաստիկ։ Դուս-ալը, որ ծնանիցի ինձ, կոչեսցի Ռքսանէ. և ա-

նունն այն ցանկալի քեզ՝ քաղցրագոյն գործեաց ցէ զգգուանս նորա, հալոք և որդիք, փեսայք և հարսունք, առ 'ի սէր ևեթ քոյին կեցցուք. և զօրհանապազ ընդ առաւօտս ազգատոհմք երկաքանչիւր 'ի միասին գումարեալ ապաստեցուք յառնելոյ քո նովին բերկրութեամբ և մեծարանօք, որով աշակերտք քոյին դէտակն ունին ծագելոյ աստեղն տունչեան։

Եւ զոյդ ընդ բանիցն ծունր եդ Նումա. իսկ ծերունին 'ի գութ շարժեալ տակաւին կամէր ընդդէմ կալ, բայց Լևոնդ 'ի վերայ էած. Դա կեցոյց զքեզ, դա ինքն զերծոյց զԱնայիս։ Յայնժամ ասէ ծերունին. Բարւոք է, լիցի նմա Անայիս 'ի վարձ, և Նումա լիցի ինձ յորդի։ Զայն իբրև լուաւ Նումա, ձայն բարձեալ՝ դիմեաց անկաւ զպարանոցաւ ծերունւոյն, և ոչ կարէր բերել զհրճուանսն, և ոչ զշնորհակալիսն յայտառնել։ Կամէր և Լևոնդեայ դիրկս արկանել, այլ նորա փութացեալ էր 'ի խնդիր քեռն իւրոյ. և 'ի դառնալ նորա ընդ նմա, յաւել ծերունին. Դուստր, ահա փեսայն քո, եառ զքեզ կեցուցչին քում. յետ ութ աւուրց կատարեսցին հարսանիք ձեր։ Յիս ևեթ պատուհաս մեծին Արամազդայ, եթէ չիցեն նմա հաճոյ հարսանիքդ ձեր։ Եւ զայս ասացեալ, ողջագուրեաց զամ դատերն և զՆումայ ընդապէս 'ի սիրտ իւր։

Յաճոյց Անայիս 'ի պատկառանաց զաչս իւր, և ապա քաղցր 'ի ժպիտ սիրոյոյց զխոսուն՝

զոր հօրն իւրոյ տուեալ էր զհարանութենէն։

Այնուհետև բարեբաստիկն Նումա և արժանաւոր բարեկամ նորին և գեղանին Կամիլլա ոչ յայլ ինչ պարապէին, բայց 'ի պատրաստութիւն հարսանեացն։ Լևոնդ ընդ Կամիլլայ չոգան հարկանել փայտ 'ի լեռնէն. որպէս զի կառուցէ իւր Նումա բնակարան մերձ 'ի հիւղ ծերունեոյն։ Եւ կառոյց զայն Նումա ընդ արևելս, որպէս զի հարսն բարեպաշտօն կարասցէ հանապազօր ընդ զարթնուլն ուղերձել մաղթանս առ աստղն տունչենային. և պատապարեաց զայն մորթովք գազանաց և խիտ առ խիտ ոստովք, անթափանց 'ի ճառագայթից արեգական յանձրևէ և 'ի ցրտոյ։ Եւ 'ի ներքս անդ որ ինչ մարթէրն 'ի դիւրութիւն և 'ի բերկրանս՝ հնարաւորեաց, այնու ճարտարութեամբ և կիրթ ախորժակօք զարդարեալ զայն, որ սիրոյ ևեթ մարթէին գոլ արդասիք։ Էր առ բնակարանաւն պարտէզ, զոր Նումայ այնպէս ճահաւորեալ՝ զի յաամիկն վայրենի կամարաձև, ընդ որով տեսանէր էր նախ զԱնայիս, 'ի միջավայր պարտիզին անկանէր։ Եւ 'ի վտակէ անտի արար ջրադարձ, որ ընդ մէջ ծաղկանց ուղղակէր, և ծառք պտղաբերք անդ ինքնաբոյսք պիտանի զպարտէզն առնէին, և ցանկ դալարագեղ պատապարէր զայն յայծեմանց՝ որոց մարթէր ճարակել 'ի մատաղատունկս։

Անայիս 'ի վերայ կայր վաստակոցն, և 'ի տե-

սիլ նորին զօրանայր նումա, և կամէր միայնակ կատարել նա զվաստակն. բայց Կամիլլա և Լևոնդ եկին օգնել նմա բռնի։ Ամենեքեան միայն անձկանօք լրանալոյ առ վաղիւ աւուրցն սահմանելոց 'ի Ծերունւոյն, վաղ զամենայն վաստակն կատարեալ։ Կամիլլայ զմարդս շրջակայս կապտեալ 'ի ծաղկանց, և հիւսեալ պատրաստեալ էր պսակս, և բոլորիւք ծաղկանց զարդարեալ զխրճիթն։ Ամրևն ծածկեցաւ յալիս, և վերադարձ նորին ծագելոց էր 'ի բարեբաստութիւն տարիաւորացն երկոցունց. և ահա ընդ երեկս 'ի պահուն, յորում ժողովեալ ամենեքին 'ի խրճիթ Զրադաշտայ՝ բազմէին 'ի սակաւապէտ ընթրիսն, բախիւն դրան լսելի եղև։ Զդողանի հարաւ նումա, իրազգայ ինքն լեալ պատանին զգայուն։ Յարեաւ նախ Լևոնդ զարմացմամբ, և առեալ զլախան՝ ընթացաւ 'ի դուռն. ոչ թշնամիք հասեալ էին, այլ ծերունի պատկառելի հանդերձ երկոքիսմբք զօրականօք խնդրէր ասպնջականութիւն։ Եւ հիւրընկալեալ զնոսա Լևոնդեայ ած 'ի ներքս։ Այն ինչ 'ի նշոյլ կանթեղին՝ որ լուսաւորէր զխրճիթն՝ փայլեցին դէմք նորա, ձայն եբարձ նումա հիացմամբ, և դիմեաց գիրկս էարկ ծերունւոյն. Դու ինքն իցես, Մեռիէ, մտերիմդ Տատիոսի և հօր իմոյ, միակ զօրավիգն և յեռին պատապարան Սաբինայ։

Յապուշ հարաւ Մեռիոս՝ ծանուցեալ զնու-

մա, և չհաւատայր նուաղելոց աչացն իւրոց, և ասէ. Տէր իմ և բարեկամ, զտի ուրեմն զքեզ՝ զոր ընդ ամենայն Իտալիա խնդրէի։ Ա՛հ, թոյլ տուր ինձ, զի մինչ չև զսպաս մեծարանաց մատուցեալ՝ բաղուկք իմ դողդոջք փարեսցին զքև միւսանգամ, և սիրտ իմ վայելեսցէ 'ի յետին վայրկեանս՝ յորս օրէն է ինձ բարեկամ զքեզ անուանել։ Եւ զոյգ ընդ բանիցն հաւատարիմն Մեռիոս զգուէր ստէպ և ողջագուրէր զՆումա։ Եւ ապա դարձեալ առ զօրականն երկոսին ուղեկիցս իւր, ասէ. Վոլէս և Պրոկուլ, պատահեցաք խնդրոյ մերում, զտաք զարքայն մեր։ Յայնժամ հռովմայեցիքն երկոքեան ընդ Մեռիոսի ծունր կրկնեալ մեծարանօք, ասեն ցՆումա. Ողջոյն ընդ քեզ արքայդ Հռովմայ։ Իսկ Նումայ բռնադատեալ զնոսա յոտն կալ, ասէ. Զի՞նչ խօսիք, չեմ ես թագաւոր ձեր, և ոչ արժանի և ոչ ցանկացող թագաւորութեան։ Կրկնեալ անդրէն Մեռիոսի ասէ. Թագաւոր ես, և թագաւոր ըստ գեղեցիկ և ըստ օրինաւորագոյն իրաւանց. ժողովուրդն միաբարբառ ընտրեաց զքեզ. հռովմայեցիք և ստինացիք պատրաստեալք 'ի հեղուլ զարիւնս միմեանց առ 'ի տալ յաջորդ Հռոմուլեայ, ոչ գտին զայլ ոք՝ բայց միայն զՆումա 'ի ճահ երկաքանչիւրոցն ազգաց. անուն ևեթ քոյին ցածոյց զզայրոյթ և միաբանեաց զնոսա։ Թագաւորեցեր, Նումա. ժողովուրդ քոյին քեզ ակնկալեալ մնայ։

Հիացեալ նումայ միանգամայն և տրտմեալ, բաղմեցոյց զպատգամաւորսն 'ի սեղան Զրադաշտայ, և խնդրեաց պատմել զանցս իրացն զմեծամեծս. և զօրավարն ծերունի հնազանդեալ՝ ասէ.

Ի լրումն հասեալ էին չարիք մեր. Հռոմուլ դժպհի լեալ սաբինացւոց, և. ասելի ժողովրդեան իսկ իւրում, տայր հեծել Հռովմայ ընդ դաւազանաւ երկաթեաւ. ոչ ևս աշխարհակալ մշտայաղթ զթշնամեաց ևեթ աշխարհին ճապաղէր զարիւն, այլ բռնաւոր ամենի՝ որոյ խուժադուժ քաղաքավարութիւն հարատահարէր զժողովուրդն առ 'ի նուաճել զնա, և ընդ դուզնաքեայ պատճառանաց հեզոյր զարիւն պատրլկաց։ Ոճիրք զոճիրս այսպէս զհետ իւրեանց առեալ ձգեն. և 'ի շաղախել ուրուք 'ի նոսին, կապտի յամենայն առաքինութեանց, և բնակեն 'ի նմա ամենայն յուսութիւնք։

Զայրացան յայնժամ դիք, և զաստուածատատ վրէժխնդրութիւն իւրեանց ցուցին տասկալի հարուածովք. սրածութիւն անմարդի ապրար զՀռովմ, ժանտ ախտին այնորիկ ոչ երբէք արկածիւք այնպիսեօք ճարակեալ. հուր ծախիչ տոչորէր զկուրծս և զընդերս. աչք հրացայտք և արիւնառուշտք հպիւ 'ի կապիճս իւրեանց թաւալէին. բերան վիրալից բուրէր նեխ ժանտ. լեզու աղտեղի և թանձրամած 'ի քիմն կցեալ՝ հեղձամղձուկ զախտակրեալն առնէր, ջիղք կար-

կամեալք, անդամք 'ի սարսուռ հարեալք, և ցուրտ մահուն տակաւ ընդ մարմինն ծաւալեալ, չկարէր շինչուցանել զբոցն փաղաղիչ՝ որ զոսկերսն ծախէր։ Ոչ բաւէին տունք առ հէք ճարակս ախտին, և լցան նոքօք պողոտայք հրապարակք և մեհեանք դից. անդ էր տեսանել զախտացեալոց բազմութիւն յոգիս ապաստան, փախըստեայս 'ի մահճացն կիսամերկս, փախստեայս 'ի թերափիցն իւրեանց, աղերսաւորս 'ի խնդրել ջուր։ Հոսէին զանձինս 'ի Տիբեր. թաւալէին յաղբիւրս և 'ի տիղմ. ոչ ումեք լսէին. ըմպէին անբոյժք 'ի ծարաւոյ, և 'ի մէջ ալեաց փչէին զոդի։ Փաղցր զօդ բարեկամութեան, զգացումն ընութեան, 'ի մոռացօնս անկեալ ամենայն, և ամենայն ինչ անծանօթ. որդի թափառական առ ցաւոց՝ հրաժարէր 'ի հայրենի դրկաց. եղբայր յեղբօրէ խորշեալ ահիւ վարակման ախտին, և մայր օրհասական թողեալ էքեալ յառնէ 'ի տառապանս մահուն, կկոցեալ աչօք զատամունս կրճտելով, մերժէր կարկամ բազկօք զաղկաղկ մանկիկն՝ որ լայր և ձեռն կարկառէր առ ցամաքեալ ստինս մայրենիս։ Միակ յամենեսին էր զգացումն, ցաւ, ամենայն ուրեք վիշտ, ամենայն ուրեք մահ. մանուկն և երիտասարդ և ծեր՝ մատնեալք առ հասարակ 'ի կորուստ և կործան անկեալք։ Բորբոքէին անշէջ խարոյկք փայտակոյտք, և նորոգէին անդադար, և բազմութիւն նոցին ամբաւ չբաւէր դիականցն, և

վէճք զայնցանէ լինէին, և կառուցողաց նոցին հարկ լինէր պատերազմաւ անդանօր տեղի ազգականացն իւրեանց գտանել։

Հռոմուլեայ ընդ կորուստ զօրականին վշտացեալ, հրամայեաց զոհ աշխարհաժողով յեղուիւրս Փեւրայ 'ի հաշտութիւն դից։ Ժողովուրդքն առ հասարակ, կամ մանաւանդ դոյզն մընացորդ ժողովրդեանն դումարեցաւ անդր. կատարողապետք և քուրմք և քաղաքացիք ոժգոյնք և նիհարք մատեան յառաջ հիւանդաբայլ 'ի բադին անդր, և զօրքն անզրահք մերձենային յամբարաշարժք՝ յեղեալք 'ի գեղարդունս իւրեանց, հազիւ զաչս 'ի վեր յարծուէնչան անդր իւրաքանչիւր գնդացն կարէին ամբառնալ։ Կանայք և ծերք յեցք 'ի ցուպ՝ զձեռանէ կալեալ մանկանցքն, նեցուկք տկարք՝ 'ի միասին ընդ նոսա գլորեալ անկանէին։ Երիտասարդք, ծերք, հիւանդք և դեռաբոյժք անկանէին 'ի քարշ քան թէ գընային. ոչ ոք զօրէր ճիկ հանել, և ազգն հռովմէական հզօր, ազգն ահարկու խառնիոյ, թուէր դունդ իմն ճիւաղաց՝ զորս վհուկ թեսաղացի վերակոչէ 'ի դժոխոց։

Հեղան քաւութիւնք, զենան զոհք, և քրմապետն զենեալ զփորոտին՝ յոգւոց եհան ընդ հմայսն. ել աստուածարեալ յեռատանին սուրբ, յուզէր յաւիւն դիւցական, աչք նորա փայլակնացայտ, բերանփրփրեալ, բազուկք ձգտեալք, գլուխ վեր 'ի վայր խոնարհեալ, հերք քըստ-

հնեալք և ընդ պատին սարդենի 'ի վեր դիզա-
ցեալք, 'ի զուր աստուածամարտ մաքառէր.
պարտեցաւ յոտքէն, և նուաճեալ տեղի ետ
խթանին, և զայտոսիկ հեւալով ետ պատգամն.
Ժողովուրդ Հռովմայ, ոճիր սոսկալի անպատու-
հաս՝ ինչոյց 'ի գլուխ քո զցասումն աստուածա-
տատ. եթէ ոչ ոճիրն այն քաւեսցի, ցորչափ ե-
ղեռնաւորքն տեսցեն զլոյս, մի՛ակն կալցիս դիցն
հաշտութեան: Ճարակեսցի ախտն ժանտ 'ի պա-
րիսպս քո, ցորչափ արիւնն անպարտ...

Եւ մինչդեռ բանքն 'ի բերան նորա կային,
խոժոռ 'ի նա ակնարկեաց Հռոմուլ, և հեղձա-
մղձուկ արար զնա ահ: Եւ ահա մթացան եր-
կինք, արեգակն նեմացեալ, և խաւար թան-
ձրամած ծածկեաց զերկիր, ճայթեցին խիտ ընդ
խիտ ամպրոպք. թուէր տարերաց խառն 'ի
խառն տալ պատերազմ, և էից առ հասարակ
'ի համապարփակն վիհ անդրէն խորասուզել:

Ռամիկն ահիւ և դողութեամբ 'ի ծունր ան-
կեալ առ դիան պաղատէր, առաջի աչաց նկա-
տելով զմահ: Այլ յետ սուղ ինչ պահու ցա-
ծեաւ մրրիկն, փարատեցաւ մութն, փայլեաց
արեգակն անամպ, դարձաւ կապուտակն երկնից
'ի տեսիլ, հանդարտեցին օդք, հուպ ընդ հուպ
և սիրտք: Հայէին ընդ միմեանս հռովմայեցիք,
և ծանօթս տային միմեանց. Հռոմուլ միայն չե-
րևէր 'ի միջի, և ընդ վայր խնդրէին զնա թիկ-
նապահքն և դրանիկք: Երագունքն տապեալք,

հաւատարմագոյնք արքայի՝ որ անպատուհասս զնոսին կացուցեալ էր, սպառնային ընդդէմ պատրիկաց՝ ամբաստանեալ զնոսա 'ի սպանութիւն թագաւորին։ Մինչդեռ ռամիկն պատրաստէր 'ի պաշտպանութիւն ազնուականաց, և ճապաղիք արեան 'ի վերայ կային, և ապա Պրոկուլ զոր տեսանէր զդ, մի'ի հռովմայեցւոց անուն պատկառելեաց աւագութեամբն և հաստակաւ, և մանաւանդ խստակրօն առաքինութեամբ, յառաջ մատեաւ՝ և ճարտար խաբէութեամբ ցածոյց զսիրտս, ասելով. Դադարեցէք, ո՛ հռովմայեցիք, 'ի խնդրելոյ զՀռոմուլ, տեսէ՛ ես, իմովք իսկ աչօք տեսի զՀայր նորա զԱրէս իջեալ յերկիր, և յարիւնաթաթաւ 'ի կառս յաւիշտակեալ զնա. և լուայ զբարբառ թագաւորին, որ ասէր ցիս. Պրոկուլէ, 'ի լրումն հասին փառքիմ, յաղթեցի, յաղթանակեցի, կառուցի զքաղաք՝ որ տիրեսցէ ընդ տիեզերս, լցի զամենայն զպարտս իմ, և արդ ասուածն զօրութեանց հաղորդ յաւէրժակենացն իւրոց փառաց առնէ զիս։ Պատմեա՛ դու զայս հռովմայեցւոց. ասա՛ ցնոսա, զի Արէս և Հռոմուլ առաջնորդեսցեն միշտ բանակաց նոցա. և զի կարդասցեն առ իս յայսմ հետէ, կոչելով զիս Կուիրինոս։

Եւ 'ի խօսելն զայսոսիկ Պրոկուլեայ, ցածեաւ ազմուկն։ Ոչ իշխեցին Երագունքն երկմտել ընդդիւցական առասպելն զթագաւորէն, զոր սիրէին. և ժողովուրդն մտադիր զերծեալ 'ի բրա-

նաւորէն, լաւ համարեցաւ տալ նմա յերկինս կայեան, քան խնդրել և պատուհասել զայնոսիկ՝ որք ազատեցին 'ի նմանէ զերկիր։ Այլ հարկ էր ընտրել զոք յաջորդ Հռոմուլեայ, և 'ի զուր Հերսիլիա խնդրէր թագաւորել. սաբինացիք դրդռեալք ընդդէմ նորա, սպառնացան դառնալ 'ի Կորա, եթէ դուստրն Հռոմուլեայ ամբառնայր յաթոռ, և հռովմայեցիք իսկ ամօթ համարէին անձանց՝ հնազանդել կնոջ։ Հերսիլիա յերկաքանչիւրոցն իսկ մերժեալ 'ի ժողովրդոյ, մեկնեցաւ 'ի Հռովմայ՝ սպառնալով դառնալ անդրէն զօրօք. և ժողովուրդն դարձեալ 'ի մի վայր դումարեցաւ, ընտրել իւր թագաւոր։

Բայց ազգն այն թշուառ, փոքր միւս ևս, և դարձեալ անձամբ զանձն մատնէր 'ի կոտորած։ Հռովմայեցիք՝ Հռովմայեցի զոք խնդրէին 'ի թագաւոր, իսկ սաբինացիք զսաբինացի. զի ասէին ոչքա, թէ յետ Տատիոսի մեռանելոյ՝ թողաք մեք խաղաղութեամբ թագաւորել Հռոմուլեայ, և ժամ է արդ՝ զի 'ի մերոց քաղաքացոցս զք թագաւորեսցէ։ Ոչ պարտութեամբ նուաճեցաք ընդ ձեօք. բարեկամք ձեր եմք և եղբարք, և ոչ երբէք եղաք մեք ձեզ ստրուկք։ Ոչ ազնուականութեամբ, ոչ արիութեամբ, և ոչ առաքինութեամբ ստորև ինչ քան զձեզ գտանիմք. ստորին ապա 'ի բաց դիցուք որ ինչ իրաւանց հաւասարութեան և դոյզն ինչ գործէ ինչս։

Մինչդեռ սաբինացիք զայսոսիկ բարբառեալ

ընթանային 'ի զէն, ազգեալ յայնժամ 'ի դիցն՝ գոչեցի. Լուարուք ինձ ո՛ ժողովուրդք. երկաքանչիւր խնդրէք թագաւոր, և խնդրէք ընտրել զայն 'ի ձէնջ. երկաքանչիւր թողէք միմեանց զկէս իրաւանցն՝ զոր պահանջէք. որ ոք յերկաքանչիւրոցդ ընտրել կամիցի զթագաւորն, 'ի միւսմէն ընտրեսցէ զնա։ Ընտրեցէք ձեզ թագաւոր, ո՛ հռովմայեցիք, այլ 'ի սաբինացւոց զոք, և կամ լիցին սաբինացիք ընտրոյն տէր, այլ ընտրեսցեն 'ի ձէնջ զոք։

Հաճոյ թուեցաւ խրատն իմ, և խաղաղութիւն եղև անդրէն. միաբանեցին ազգք երկաքանչիւր, և թողաւ ընտրութիւնն 'ի հռովմայեցիս՝ ընտրել զոք 'ի սաբինացւոց. և ամենեքին միաբարբառ ընտրեցին զարդարակորոշն զՆումա։ Ի լուր անուանն ազգք երկաքանչիւր մոռացան զատելութիւն, և խնդակից լինէին միմեանց. և գիրկս արկեալ իրերաց, զաղաղակ ցնծութեան արտասուախառն հարկանէին, թէ դարձցի ուրեմն դարն ոսկեղինիկ՝ թագաւորութիւն Սատրեայ, և իշխեսցէ մեզ Նումա։

Ցխէր խունկ 'ի բաղինս, վառակօրէն արիւն զոհիցն գնայր, հնչէին առ հապարակ մեհեանք 'ի շնորհակալիս, և գոհութիւնք առ դիս ընթանային վասն ամենայն բարեացն ակնկալեաց։ Շնորհեցին դիք զխնդրուածն. դադարեաց արածութիւն, և հողմն կենդանարար էած առողջութիւն. ցօղեաց ցօղ բարերար 'ի յոյս երկրա-

գործին կրկնապատիկ հնձոց. դիք և մարդիկ, երկինք և երկիր թուէին զուարթացեալ ընդ թագաւորել առաքինութեան։

Հրամայեցան վաղվաղակի պատգամաւորք. խնդրեցի և ես լինել ընդ նոսա։ Թռեաք 'ի կորբա, ուր յուսայաքն գտանել զքեզ. և ոչ զրոյց ինչ անդանօր զքէն եղև մեզ ունել։ Դարձաք 'ի սահմանս Մարսից, ուր կարծէի 'ի բարեկամութենէ Լևոնդեայ ձգեալ զքեզ. այլ ոչ առաւել յաջողեցին մեզ անդ արշաւանք։ Գնայաք ապա խնդրել զքեզ 'ի հռէական լերինս հռչակաւորս քաջութեամբդ քով և մարդասիրութեամբ, և առաջնորդեցին մեզ այսր դիք։ Եւ'կ արդ ալքայդ հռովմայ, ազգք երկոքին դէտակն կալեալ սպասեն քեզ, 'ի քեզ միայն յուսացեալ են, վայրկեանք իւրաքանչիւր, որ անցանեն՝ գոլոնք են սիրոյ մերոյ և հասարակաց բարեբաստութեան։

Եւ իբրև լուաց Մեռիոս 'ի խօսելոյ, հայեցաւ 'ի նա Նումա քաղցր 'ի ժպիտ, և հանդարտութեամբ ասէ. Լանց, ո՛ բարեկամ, ժամանակ մոլորութեան իմոյ՝ յորում իշխանասիրութիւն և անսիրտութիւն և սէր խօլական աղմկէին զկեանս իմ։ Մարթ էր ինձ շլանալ 'ի ճաճանչ թագի, յորժամ բորբոքեալ սիրովն Հերսիլեայ՝ յարձակէի սուր 'ի ձեռին արժանի լինել նմա դիմադրաւ 'ի պատերազմունս. յորժամ կուրացեալ մեծութեամբ՝ գուն գործէի վարժել յա-

լուեսա արեանհեղութեան մարդկան, և զարմանայի ընդ Հռոմուլ՝ որչափ առաւել աղէտս 'ի նմանէ տեսանէի գործեալ։ Անկաւ քոզ 'ի գիմացդ իմոց, բացան աչք իմ, և գոհութիւն գիւց՝ որք ոչ լքին զիս, և թշուառութեանս իմում՝ որ խրատեացն զիս. գոհութիւն մուերիմ բարեկամութեան և սուրբ սիրոյ՝ որ քաջալերեն զիս. միտք իմ և սիրտ լուսաւորեալ, ոչ ևս մեծարեն ինչ՝ բայց որ արդոյն է, և ոչ ևս սիրեն ինչ՝ բայց որ արժանին է սիրոյ, առաքինութիւն և խաղաղութիւն։

Ոչ իսկ 'ի ճահ լեցի ինձ ունել զաթոռ Հռոմուլեայ. ժողովուրդ նորա խրոխտ և պատերազմող հաղիւ նուաճէր ընդ ձեռամբ թագաւորի աստուածորդւոյ և զօրավարի մեծի. իսկ ես մահկանացուի հօր որդի, գարշիմ 'ի պատերազմէ, ատեամ զարուեստն նենգաւոր պատակտելոյ զազգս սահմանակիցս՝ առ 'ի յաղթել նոցա. զինուորելոյ զակարն ընդդէմ հզօրին՝ առ 'ի նուաճել զերկաքանչիւր, և համարելոյ ժառանգութիւն իմ՝ որ ինչ մարթ լցէ ինձ յափշտակել։ Մի, Մեռիէ. աշխարհակալի ումեք անկ է ձեզ թագաւորել. 'ի զուր լցէ ինձ նուիրել զկեանս իմ 'ի բարեբաստութիւն հռովմայեցւոց. անդաստեսցեն նոքա զթագաւոր խաղաղասէր, որ ոչ յայլ ինչ պարապեսցէ՝ բայց 'ի կրօնս և յօրէնս և 'ի հոգս մշակութեան։

Մեռիէ, իմ զայս այսպէս հաստատութեամբ

եղեալ է 'ի մոի. լցի զպարտս իմ առ Հայրենիս, Հեղի զարիւն իմ վասն նորա, փրկեցի զաբինացիս՝ զաքսոր յանձն առեալ, զպաշտօն իմ կատարեցի, և ոչ այլ ինչ խնդրեմարդ փոխարէն՝ բայց կալ և մնալ յաքսորանս իմ։ Ոչ ևս կամիմ կոխել 'ի Հռովմ, ցանկալի է ինձ հովիտս առաւել յոյժ քան զկապիտոլ, և կամիմ կեալ ասա ընդ հօր իմում, ընդ բարեկամի, ընդ քեռ և ընդ արժանաւոր հարսին։ Բարեբաստիկ և աներ-կևան կեցից ես ասա՝ քան Հռոմուլ յերագունս իւր 'ի Թիկնապահս։ Հիւղս այս հանգստագոյն է ինձ և գեղաձիծաղ՝ քան զարքունիս թագաւորաց ձերոց. ասա զաւուրս իմ անցուցից սրբութեամբ և խաղաղութեամբ 'ի պաշտօն դից, և 'ի բարեբաստութիւն հօրն իմոյ և հարսին, և բարեբաստիկ առ նոսա դասայց, և յօրհաս մահու՝ չիցէ ինձ պարտ զբիւրաւորաց մարդկանտալ դից զհամար, եթէ ոչ կարացից զնոցայն յարդարել բարեկենդանութիւն, որ գրեթէ անհնարին իսկ է մարդոյ մահկանացուի։

Յայնժամ Ընային 'ի վերայ ածեալ համարձակաձայն, ասէ. Բայց տացես դու համար, Նումա, 'ի փոխանակել քո զաղդս երկուս ընդ սիրոյ իմում և ընդ սիրոյ հանգստեան։ Կարծիցես ուրեմն զի երկինք վասն քո ևեթ եռուն քեզ զայդքան առաքինութիւնս. կարծիցես հաճոյ լինել աստուծոյ 'ի կեալ քո վասն անձին ևեթ։ Յն գերաբուն առ ոչինչ համարի զմտածու-

թիւն անգործ. ինդրէ նա զժիր առաքինութիւն, և յառնէ բարեվարէ պահանջեսցէ համար զաւուրց իւրաքանչիւր՝ զորս առանց բարեգործութեան ելցէ նորա անցուցեալ. զի որ արարն զաշխարհ, ոչ սիրէ զոք՝ բայց որ 'ի բարեբաստութիւն աշխարհի վաստակեցեն։

Դու զդիւցազն զոք պատերազմող համարիս 'ի ճահ հռովմայեցւոց քան զթագաւոր խաղաղասէր։ Այլ որչափ պատերազմասէր է ազգն, այնչափ առաւել կարօտի զգօն թագաւորի՝ որ նուաճեալ 'ի չափու կալցի զխեռութիւն նոցա, և ցածուցէ արդարութեամբ զպատերազմական աշխոյժս նորին՝ որ զառաձանի 'ի վայրենութիւն։ Զիք ոք, չիք ուրեք թագաւոր այնպիսի բաց 'ի քէն, Նումա. երկիւղածութիւն քո 'ի դից և խաղաղասիրութիւն՝ պարտ առնեն քեզ իշխել ժողովրդեան, որում կարևորագոյն են առաքինութիւնքդ այդոքիկ։

Ոչ ևս ինչ պարտ անձին վարկանիս առնել վասն հայրենեաց քոց, զի դիմագրաւեցեր վասն նոցին 'ի պատերազմ։ Այլ աղէ, զինչ աւելի գործեցեր դու քան զսինլքոր զօրականն. և վկայ զքեզ ինքն կոչեմ, վասն Հռովմայ եթէ վասն Հերսիլեայ եղեր զկեանս քո 'ի կշիռ։ Եթէ հեղեալ իսկ էր քո զարիւնդ 'ի վերայ հայրենեաց, ցորչափ շիթ մի մնայ 'ի քեզ, այն իսկ նոցին է անկ. ոչ է մարթ ընուլ բովանդակ զպարտս առ հայրենիս, բարերար է նա միշտ առ մեզ։

Մի ինչ ճնայ ինձ յաւելուլ առ քեզ. եթէ վան վարելոյ ընդ Անայիս կենցաղ նսեմ, և վան տարապարտ հալածանաց կրօնիցս իմոց մերժես զթագաւորութիւն, այժմէն իսկ հրաժարեմ 'ի քէն, որպէս զի մի յամենայն կեանս իմ կշտամբեցայց 'ի խղճէ մտաց՝ խափան եղեալ բարեբաստութեան երկուց ազգաց, և զրկեալ զնոսա 'ի բարւոյ թագաւորէ՝ քան զոր գեղեցկագոյն ինչ չկարեն երկինք պարգևել երկրի։ Դառնացին ինձ կեանք իմ 'ի թախիծս յայտնիկ մտաց, և աղօտացի յիս բոց խանդակաթ սիրոյն՝ զոր դու յիս վառեցեր։ Շատ լիցի քեզ ասել, Նումա. գիտեմ ես զպարտս իմ և զքոյս. եթէ չառնուս դու յանձն պիտանի լինել մարդկան, զինև անկցի պատուհասն։

Զայտնիկ Անայիս բարբառեցաւ, և Զրադաշտ և Լևոնդ յաւելին պատապարան լինել բանից նորա. միայն կամի՝՝ա կուսակից դտաւ Նումայ։ Յայնժամ Մեռիոս և հրեշտակքն հռովմայեցիք անկեալ առ ոտս նորա, արկանէին աղէրս յոգնաթախանձ առ 'ի համոզել զմիտս նորա և ողբել զսիրտ. այլ 'ի զուր։ Քանզի նա իբրև ըզժայռ, յոր բաղխեալ խորտակին ալիք, կայր ճնայր անդրդուելի։ Յամառեալ քաղցրութեամբ ընդդէմ աղերսանացն և փաստից, և զիրկս արկեալ ծերունւոյն Մեռեայ, ասէր. Հայր իմ, եթէ սիրես զիս, մի ևս խօսիր զթագաւորութենէ՝ որ դժպհի է ինձ քան զդերեզման. կա-

միմ մեռանել 'ի հովտիս, կամիմ կեալ 'ի հիւղիս։ Ազատ ծնեալ եմ, և վայելեցից յիրաւունս բնութեան ամենայն մարդոյ, բնակել ուր հաճոյ իցէ նմա, և ուր քաղցրագոյն անցուցանիցէ զաւուրս։ Յուսամ զի և ոչ ընդդէմ կամաց դիցն այսուիկ գործիցեմ. այլ եթէ և այս հասանէին ինձ արկածք, լաւագոյն համարէի ողբել զնոսա յամենայն կեանս իմ և զէնընկէց զնոսա առնել, քան ածել թագ 'ի գլուխ՝ յորմէ դարշիմ և մերժիմ։ Ասի ապա գիտասջիր, Մեռիէ, զի ընդունայն են աղերսանք քո և յաւելուն ինձ վիշտս, խնայեա՛ զիս յայդցանէ։ Ե՛կ հանգիր և դու 'ի հիւղիս, ոչ ընդ արքայի քում, այլ ընդ բարեկամի։ Վաղիւ 'ի ծագել այգուն՝ դարձցիս տալ հռովմայեցւոց պատգամ, զի եթէ սիրեն զնումս, յառհաւատչեայ սիրոյ իւրեանց թողցեն զնա յաննշան կեանսն 'ի բարեբաստութեան։

Եւ զայս ասացեալ, ել 'ի բաց. 'ի զուր զհետ նորա ձայնէր Անայիս, զայն առաջինն նուագ չլուաւ նումա ձայնի սիրուհւոյն։ Զոգան հրեշտակքն տրտմութեամբ դիշերել 'ի խրճիթ նորին նորակերտ. և Կամիլլայ պաշտպանեալ ընդ երկար ընդդէմ օրիորդին զխորհուրդ նումայ, մեկնեցաւ 'ի հանդիստ ընդ սիրելւոյն իւրում Լևանդեայ. և մնացին Զրադաշտ ընդ դստեր իւրում, խորհել 'ի կատարումն մեծի գործոյն։

ՆՈՒՄԱ ՊՈՄՊԻԼԻՈՍ

ԳԻՐՔ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԳՐՈՑ

Յայտնին Նումայ սուրբք Տաքիտոսի։ Ապայիս խոյս տայ 'ի նմանէ հանդերձ հարքն։ Յուսահատել Նումայ, և հնազանդեալ դիցն՝ յանձն առնուլ զթագաւորութիւն։ Լեռնդեայ դիմել'ի խնդիր քեռ իւրոյ։ Հասանել Նումայ'ի Հռովմ, և որ ինչ անդէն 'ի սկզբան արար։ Երթ նորա յանտառն Եգերեայ, և խօսակցութիւն ընդ յաւերժահարսին յընտրութիւն պաշտօնէիցն իւրոց և վասն պատերազմի և քաղաքավարութեան և կարգաց քաղաքաժողով ընկերութեան և օրինացն և կրօնից։ Կարգ տեսչութեանն Նումայ։

ՆՈՒՄԱ ՊՈՄՊԻԼԻՈՍ

ԳԻՐՔ ԺԱ.

Նումայ խոյս տուեալ 'ի խորս իւրոյ խրճթին, չկարէր փակել զաչս իւր 'ի քուն. ամենայն բանք Անայիսի դառնային 'ի միտս նորա, և ասէր 'ի մտի. Սպառնացաւ նա հրաժարել յինէն, եթէ առ սէր նորա վերջացայց 'ի պարտուցն իմոց առ հայրենիս՝ ստունգանեալ դիւց։ Աղէտք անհնարին, եթէ անհաճոյ յաչս անմահից՝ միանգամայն և սիրուհւոյն իմոյ գտայց Անայիսի։ Այլ եթէ յանձն առից զթագ, որպիսի ինչ զհանդէս սկզբան թագաւորութեանս իմոյ կացուցցեն հարսանիք ընդ մոգակրօն օրիորդին. 'ի մտի եդեալ է իմ թագաւորել կրօնիւք, և անդէն 'ի սկզբան գահակից ինձ կալայց զոսոխն կրօնիցս իմոց։ Սոսկացի ժողովուրդն 'ի տեսանելն զնա յաթոռ իմ, և հանդերձ ամենայն առաքինութեամբքն ատելի լիցի նա ամենեցուն։ Մի, մի լիցի ինձ արկանել զնա յայն վտանգ. քաւ և մի լիցի ինձ

վոխանակել զսէր ընդ անուտի յուսոյ բարւոք տեսչութեան Հռոմմայ։ Յարդ զոհեցի զկեանս իմ այլոց. ժամ է արդ կեալ վասն իմ։

Անդուստ և թախիծք դառնացուցանելոյ զազգըն, և երկիւղ բարկացուցանելոյ զդիս, սատանեցուցանէին զհաստատութիւն մտացն Նումայ։ Յատանեալ 'ի յոյզս խորհրդոցն հակառակաց, ձգեալ այսր 'ի սիրոյ և անդր 'ի դթութենէ՝ 'ի տարակուսի կայր, և ոչ կարէր վճռել ինչ 'ի միտս իւր. հանգոյն ծառոյ, որ հարեալ տապարաւ՝ կայ 'ի կործանումն առ դոյզն ինչ ցընցիւն, և սպառնայ յամենայն կողմանց տապալումն ահաւոր։

Այդն յերիտնուռնակ 'ի կառս իւր ոպալեայս՝ այն ինչ զդրունս բանայր տունչեան, Նումա պարտաւեալ՝ եւ զանձն քնոյ։ Եւ 'ի քաղցր սիրոյնս անդ՝ ստուերք ծերունւոյ ծածկեալ արիւնաշաղախ դրդլեկաւ եկին կացին յանդիման նորա։ Նումայ յարհաւրաց անտի քաստնեցան հերքն. այլ իբրև ծանեաւ՝ զի էր նա Յատիոս, ոգի առեալ՝ ասէ. Ո՛վ հայր իմ, ո՛վ թագաւոր իմ, ո՞ հարկ արար քեզ մեկնել յեւ՛ի սեայ. առ ինչ արեամբ շաղախեալ ձորձք քո, անշուշտ 'ի նշանակ արիւնհեղութեանն Հռոմուլեայ։ Զինչ հրամայես, խօսեաց ուրուդ ահարկու և ցանկալի. երդուեալ Նումայ հնազանդել քեզ։

Յայնժամ ստուերն մեծաստատ բարբառով

ասէ. Եւ՛րթ ապա 'ի Հռոմմ, հրաման է քեզ 'ի դէց թագաւորել. պատգամաբեր նոցին 'ի նըսեմաստուեր օթևանաց անտի գամ առ քեզ, չև յելիսեան դաշտս բնակեալ։ Զդուզնաքէից բարեգործութեանցն իմոց մինչև ընկալեալ ըզվարձս զչարեացն՝ զորս ոչ արդելի՝ կրեմ 'ի Մինովայ զպատուհաս։ Պարտ է ինձ կալ և մնալ 'ի Տարտարոսն մինչև ժողովուրդն Հռոմէական կացցէ բարեբաստագոյն քան զամենայն ազգս. լեր դու, Նումա, ինձ յաղատարար։ Եւ զայս ասացեալ, անհետ ստուերքն եղեն։ Գիրկըս արկանէր Նումա ունել զնա, այլ զթեթև հողմով փարէր, որ 'ի գիշեր անդր վաղվաղակի կորեաւ։

Զարթեաւ Նումա, և քիրան ցուրտ հոսէր 'ի մարմնոյ նորա. ծունր եդ, երկիր եպագ դիցն անմահից, և քաւութիւնս արար գինեաւ՝ հեղեալ 'ի հուր։ Եւ 'ի ծագել արեգական՝ գիմէր առ Անայիս փարատել յիւրմէ զաղմուկն. այլ 'ի զուր խնդրէր զնա, 'ի զուր ձայնէր զԱնայիս. Անայիս ոչ ևս նմա տայր պատասխանի։ Նումայ խառնեալ 'ի լռութենէն, եմուտ 'ի դաղար անդր Զրադաշտայ. և էին խաչտիքն ամայի. տախտակ ևեթ եգիտ անդ գրեալ, և ընթեռնոյր 'ի նմա այսպէս.

ԱՆԱՅԻՍ ԱՌ ՆՈՒՄԱ.

Մեկնիմ 'ի քէն, և ոչ ևս տեսցես զիս, ցորչափ առ քեզ եղէց, կամ մերժեսցես զու զաթոռն՝ զոր տայ քեզ աստուած 'ի բարեբաստութիւն ազգաց երկոցունց, և լիցի անընդունելի ինձ նուէրդ, և կամ բազմեսցիս 'ի նմա, գահակից քեզ ունելով զիս, և լիցիս անհաճոյ ժողովրդոցդ։ Յօգուտ քոյին և 'ի փառս՝ պարտ է ինձ փախչել յերեսաց քոց, Նումա, և փախչել այսօր իսկ, յաւուր՝ յորում... Արտասուք իմ թանան զդիրս. Ճնա խաղաղութեամբ Նումա, երթ թագաւորել, լեր բարեբաստ՝ թէ հնար իցէ քեզ լինել, այլ մի մոռանար զԱնայիս։ Յուշ լիցի քեզ՝ զի յաղքատին իմում յարկի հոգացայց միշտ զքէն. յուսամ զի օրհնեսցի անուն քո, և ցնծացայց 'ի լուրն, թշուառութեամբ իմով ատացեալ զփառս՝ յոր զու վայելեսցես զբարեբաստութիւն ժողովրդեան քո, և զհաւատիս կեալց 'ի սիրտ քո 'ի ապառ։

Երկիցս անդրէն ընթերցաւ Նումա զդիրն, և չկարէր հեղուլ շիթ մի արտասուաց՝ ընկճեալ 'ի յեղակարծ մտրմնքմանէն։ Ոչ ողբայր, ոչ գանգատէր, հայէր 'ի գիրն անթաց աչօք և ապշեալ։ Այսպէս ճնճղուկ դարձաւոր՝ բերելով ձագուցն ճարակ, ոչ ևս զբոյն իւր գտեալ՝ զկայ առնու ան-

շարժ 'ի կողեր, արկանէ ղճարակ 'ի կոցէն, և ակնկառոյց կայ 'ի տեղին՝ ուր ձագուցն էր բոյն ցանկալեաց։

Եւ ապա ուր ուրեմն վտակք կրկին իջանէին յաչացն ափուփիչք նումայ, և հետ ընդ հետ հեկեկանօք յոգւոց ելանէր. Անայիս, Անայիս, գոչէր սրտառուչ. իմն Անայիս, զիարդ թողեր զիս. կարծիցեա թէ կարիցեմ կեալ յետ կորուսանելոյ զքեզ. կարծիցեա թէ ոչ ընդ ամենայն աշխարհ զհետ քո ընթանայցեմ մինչև զտիր զքեզ իմն Անայիս։ Աւաղ, յաւուր հարսանեաց մերոց լքեր զիս, զանց զհիւղիւս արարեալ՝ որ գեղեցկազարդ ճնայր ընդունել զքեզ, և ոչ կասեցին առ սովաւ դնացք քո, և կարացեր... Ո՛հ, յուսահատութիւն ընկճէ զիս... Օ՛ն անդր, 'ի բաց կացցէ յինէն այսուհետև իմաստութիւն. կորիցեն փառք և առաքինութիւն, և ամենայն որ ինչ ոչ կարացին ընկրկել զԱնայիս։ Գարշիմ 'ի կենաց, զի ոչ կարեմ կեալ նմա. անմիտ այսուհետև զբաց, զի զմիտս իմ յափշտակեաց Անայիս։

Եւ զայդ ընդ բանիցն անկեալ թաւալէր 'ի փոշւոջ. դիմեցին 'ի ճիչ նորա Կամիլլա և Լևոնդ. աւաղ, անդիտանային երկաբանչիւր զմեկնել Զրադաշտայ և դատերն։ Եւ 'ի տեսանելն նումայ զնոսա, ձայն բարձեալ դուժէր. Մեկնեցաւ դնաց, ոչ ևս լիցի մեզ տեսանել զնա։ Հարցանէր զնա Կամիլլա, և նա զնոյն վերատին կրկնէր՝ թէ մեկնեցաւ դնաց։ Հայեցաւ Լևոնդ 'ի

տախտակն, և ետես 'ի միւս կողմն նորին հրաժարական ողջոյնս գորովականս գրեալ առ Նումա 'ի ծերունւոյն, և յաւելեալ. Զի ոչ էր քեզ մարթ ընտիր առնել ընդ հայր քոյին և ընդ բարեկամ, զութ արտի իմոյ խնայեաց 'ի քեզ և 'ի բազմավիշտ մարտէն զերծոյց զքեզ։ Հարկ եղև ինձ թողուլ զքեզ, որդեակ իմ. այլ չզօրէի երբէք թողուլ, եթէ չէր ինձ յոյս աներկևան տեսանելոյ զքեզ դարձեալ։

Եւ իբրև զյետինն զայն բան լուաւ Նումա, դիմեաց էառ զտախտակն, ընթեռնոյր և դարձեալ ընթեռնոյր զայն, և սիրտն էր այնուիկ յուսահատութիւն նորա։ Ողբակից լինէր նմա լեռնդ, քաջալերէր զնոսա կամ՝ի՛ա, և ծերունին Մեռիոս հասեալ 'ի վերայ՝ գիրկս երկաքանչիւրոց գիւցազանցն արկանէր, և յանձն առնոյր թողուլ զամենայն և գնալ 'ի խնդիր Զրադաշտայ։ Կամէր և Նումա գնալ նոյնժամայն. ոչ ևս խորհէր 'ի թագաւորութիւն, այլ հասանել զհետ սիրուհւոյն՝ մինչև հեռացեալ էր նորա։ Այլ ընդ անկանել նորա յուղի, և ահա շանթք 'ի վերուստ սպառնալեցք անկանէին բարկաճայթք առ ոտս նորա, և բարբառ որոտընդոստ 'ի հրացայտ ամպոյ լսելի լինէր. Նումա, յուշ լեցի քեզ Տատիոս։ Եւ զարհուրեալ Նումայ, զկայ էառ, և ամաչէր ընդ փոխանակել սիրոյ զպարտս իւր, և անկեալ տարածեալ ընդ երկիր ժամս ձիգս մաղթէր թողութիւն յուրուէն

Տատիոսի. և յարուցեալ խաղաղագոյն դիմօք, ասէ ցպատգամաւորս. Ահաւասիկ կամ թագաւոր ձեր, ածէք զիս առ ժողովուրդն իմ։

Իբրև զայն լուան Մեսիոս և ընկերքն նորա, ոչ իշխէին յայտնել զխնդութիւն իւրեանց, տեսանելով թէ քանի ծանր էր նմա հրաժարել յըղձից անտի՝ որ առաւել քան զկեանս իւր սիրելի էր նմա. այլ խնդակից ևեթ լեալ միմեանց լռելեայն, պատրաստէին ածել 'ի Հռովմ զայն՝ որում ամենեքին սպասէին որպէս դիցն իւրեանց և փրկչի։ Իսկ Լևոնդեայ յորդորեալ զբարեկամն 'ի չու, վշտանայր զի չմարթէր ուղեկից լինել նմա, զհետ հօրն իւրոյ և քեռ գնալով 'ի խնդիր. և Կամիլլա պատրաստէր գնալ ընդ նմա։ Գիրկս էարկ նա բազում անգամ Նումայ, և խոստանայր և երդնոյր դառնալ առ նա՝ յետ շրջելոյ զամիս երիս զհետ Զրադաշտայ։ Եւ մեկնեալ Նումայ 'ի սիրուհւոյն և 'ի բարեկամէն միանգամայն, դիմէր տխուր 'ի Հռովմ, գնալ բազմել յաթոռ՝ որ ոչն սփոփէր զսիրտ նորա։

Զու արար, առաջնորդեալ 'ի հրեշտակացն. և անցեալ ընդ Ապենեան լեառն, եկ 'ի կառս՝ որ Տնայրնմա 'ի սահմանագլուխս. անց փութանակի ընդ երկիրն, և եռեռս 'ի հեռուստ զբարձրաբերձ պարիսպս Հռովմայ։ Պահակապանք 'ի նոսա աղդք կրկին, զօր հանապազ Տնային գալստեան արքային իւրեանց. և իբրև տեսին զկառս նորա,

աղաղակ բազմաձայն մինչև յերկինս ամբառ-
նայր. Ահաւասիկ արքայն մեր, ահաւասիկ դիւ-
ցազն և հայր մեր, ահա սիրելին Դից, փրկիչն
Հռովմայ։ Կանայք, մանկունք, ծերք, և զօրքն
առ հասարակ խուժեցին ընդ դրունս, ծածկե-
ցին զդաշտն, և դիմէին ընդ առաջ Նումայ. կէսք
ծաղկունս բարձեալ բերէին, այլք ոստս ձիթե-
նւոյ, կէսք ամբառնային զայնոսիկ 'ի տեսիլ նո-
րին, այլք առ ոտս նորա արկանէին, խռնեալ
զկառաջ նորա և կասեցուցեալ զանիւս նորա։
Հռովմայեցին և սաբինացի զնոյն խնդութիւն
ունէին, և հաւասար էր նոցա իղձ, և մի երկա-
քանչիւրոց աղդացն սիրտ։

Եկն Նումա 'ի կառացն, և յամենայն բերանոց
հնչէին օրհնութիւնք, և համբուրիւր ձեռաց նորա
և քղանցից ոչ լինէր վախճան։ Մի՛ ևս թողուր
զմեզ, ասէին հառաչմամբ. լե՛ր միշտ ընդ մեզ,
դիք շնորհեն մեզ հայր, կացցէ նա միշտ ընդ
որդիս իւր։ Իսկ Նումա արտասուաւք տարածանէր
զձեռս իւր առ նոսա, և առ փղձուկ սրտին չկա-
րէր բարբառել. բայց լռութիւն նորա և կեր-
պարան և արտասուք խոստանային զամենայն՝
որ ինչ ժողովուրդն ցանկայր։ Յառաջ մատչէր
Նումա հանդարտաքայլ, խափանեալ 'ի ցնծու-
թենէ և 'ի միահամուռ բարբառոյ ժողովրդեանն՝
որ ևս քան զևս յաճախէր։ Այսպէս լաւադոյ-
նըն 'ի թագաւորս, շուրջ պատեալ 'ի խառնէ
հպատակացն, և խառն ընդ նոսա եմուտ 'ի Հը-

ռոլմ, յոյժ առաւել վեհ երևեալ քան զաշխարհակալ 'ի յաղթական կառս բազմեալ և շուրջ պատեալ 'ի գերեաց։

Իբրև եհաս նա 'ի հրապարակ քաղաքին, ըզգեցուցին նմա զարդս արքունականս, և առաջնորդեալ ածին զնա 'ի կապիտոլ ուր կամէր նա գոհութիւնս դիցն մատուցանել։ Ծխէին խունկք անուշունք. ճապաղէր արիւն զոհիցն, և ընդերք նոցա հմայէին բարեբաստութիւն։ Եւ եղեալ նումայ զգաւազան իւր և զթագ 'ի բաղնին Դիայ, աղօթեաց և ասէ. Զաւակդ Սատուրնեայ, եթէ 'ի խռան հռոմայեցւոցս՝ որ պաղատանս ընդ իս՝ քեզ մատուցանեն, իցէ ոք առաւելագոյն քան զիս վառեալ տենչիւ բարեբաստութեան ժողովրդեանս, ցոյց ինձ, և եղիցս զթագս 'ի գլուխ նորա։ Իսկ եթէ այսպէս քեզ կամք իցեն՝ զի ես զայն կրեցից, յիշեա՛ զաղօթս իմ, և յաւուր յորում անցից զօրինօք արդարութեան, կամ ոչ լուայց աղքատին, կամ ոանհար եղէց թշուառին, տապալեսցեն զիս շանթիք քոյին 'ի գահոյից՝ յոր զնամ բազմել։ Պայմանաւս այսուիկ ընդունիմ զայն, հայրդ անմահից և մահկանացուաց, ցանկալի է ինձ շնորհ քո այդ քան ըզյաղթութիւնս ընդդէմ թշնամեաց։

Եւ իբրև լուեաց յաղօթիցն, յաճախեցին աղաղակք ցնծութեան, և զրաւ եղև զոհիցն մատուցման, զեղեալ ամենեցուն 'ի հրճուանս։ Եւ յելանելն Նումայ 'ի մեհենէն՝ անգեղք երկոտա-

սան ընդ այմէ նորա թռուցեալ մինչև յարքունիս անդր ուղեկից լինէին ընդ նմա։

Եւ հրաման ետ արքայն նորապսակ՝ բանալ զդանձս Հռոմուլեայ, և զկէս նոցին բաշխեաց ժողովրդեան, զմնացորդսն պահեալ զեղջէից։ Եղծ և արդել անդարձ զԵրագունս, զթիկնապահաց դունդ ահարկու, և ասէ. Բաւականք են ինձ 'ի թիկնապահս մեծարանք և սէր ժողովրդեան իմոյ. զմին իշխանութեամբ իմով, և զմիւսն առաքինութեամբ ձգեցից յանձն։ Երագունքն ինձ չեն ինչ պիտոյ, դարձցին 'ի քաղաքացիս. երկու 'ի նոցանէ դաւաճանեցին զՑատիոս, զնոսա 'ի ձեզ առնեմ ապաստան, ո՛ սաբինացիք. սուսեր արդարութեանս իմոյ իցէ զնոցին ևեթ հեղոյր՝ յամենայն աւուրս թագաւորութեան իմոյ՝ զարիւն մեղապարտ. յանկարծ ժողովուրդ իմ առաքինի խնայէր զիս 'ի դժնդակագունէն 'ի պարտս իմ։

Եւ կատարեալ 'ի սկզբան անդ թագաւորութեանն զերկոսին կարևորագոյն պարտս թագաւորի, խնամել զաղքատն և պատուհասել զմեղապարտ, խոյս ետ յապարանս իւր և եկաց անդ զաւուրս բազումս, առնուլ ճշգրիտ զհամար զօրաց աշխարհին և զդանձուց, և մանաւանդ զհարկաց՝ զորս մարթէրն բառնալ. և խորհէր ընդ երկար 'ի փոփոխմունս կարևորս։ Այլ մինչչև ձեռն արկեալ 'ի գործ, կամեցաւ գնալ յանտառն Եգերեայ, կարդալ յօգնութիւն զԱթե-

նաս, և ողբալ անդ զԱնայիս անտես համարձակ։ Եկ 'ի Հռովմայ, և մեկնեալ յիւրոցն՝ եմուտ միայնակ յանտառն դիցանուէր, և եհաս 'ի կամարն դալարագեղ՝ ընդ որով նախ եռեռս զդուստրըն Հռոմուլեայ 'ի քուն։ Ի տեսիլ վայրացն՝ ուր էր Ամազոնն այն, սոսափիւն զոսկերօքն գայր, բաբախէր ուժգին սիրտ նորա, և զօրութիւն նորա նուազէր։ Փութացաւ խոյս եառ 'ի տեղւոջէն, այլ ոչ կարաց առանց հառաչանաց խուսել. այսքան տպաւորագոյնք են հետք նախընծայ սիրոյ։

Տեղի տուեալ 'ի դալարագեղ յարկէն՝ նստաւ առ ծառով միով, հանդարտեալ 'ի յուզմանէ ոգւոցն։ Եւ իբրև յինքն եկն, եառ զանձն 'ի քաղցրագոյն տխրութիւնն՝ որ տայ անխռով հեղուլ արտասուս. յիշէր զաւուրսն զառաջինս, որ է զի ածեն վիշտս, այլ սիրելի են միշտ զդայուն սրտի։ Զմտաւ ածէր զնախկին երթ իւր 'ի Հռովմ, զերազն՝ զոր առ աղբերբն Պանայ եռեռս, զյաւէրժահարանն Եգերիա՝ յոր ոչ կարէր հայել, և զխրատս իմաստութեան՝ զորս 'ի նմանէ ընկալաւ. զտարփանն ընդ Հերսիլիա զաղբիւրս աղեսիցն իւրոց. զսէր իւր ընդ Անայիս՝ որոյ անուն ևեթ սիրէր զնա, ընդ Անայիս՝ զոր կորոյսն, այլ պատկեր սիրուհւոյն զհետ նորա ամենայն ուրեք գնայր, և պահէր զսիրտ նորա 'ի վտանգաց՝ որ տակաւին սպառնային նմա, և 'ի խորս սրտի նորա թողոյր զքաղցր յիշատակ ընդ-

յուսոյ՝ որ սիրտքն զնա 'ի վշտաց՝ և խրախուսէր յառաքինութիւն։

Նումա հանդարտեալ 'ի սպառ՝ յարեաւ, և երթայր ընդ ճանապարհն՝ որ ածէր 'ի մեհեան անդր Աթենասայ. այլ մոլորեալ յուղղոյն՝ գտաւ 'ի խորս թանձրախիտ մայրեաց անտառին, և եհաս յաղբիւր ջրոյ կենդանւոյ՝ որ բղխէր 'ի բլրակի ուրեք, որում սարոյք բարձրաբերձք հովանի առնէին։ Ոչ խաշին երբէք և ոչ հովուի պղտորեալ էր զականակիտ ալիս բացակայ աղբերն. ոչ թռչուն առ 'ի բուժել զծարաւ, և ոչ ուղէշ երբէք անդր անկեալ, վէտս վէտս զմկանունանորին ճօճեալ էր և ծուփս 'ի նմա գործեալ։ Ծառք՝ որ զնոսաւն կային, ընդ միմեանս թևապարեալ՝ գործէին շուրջանակի թաւամուր անթափանց. թուփք անհամար, վարդենիք խիտ առ խիտ վայրենիք զափամբք աղբերն բուսեալք՝ ընուին զիրամատս բնոյ ծառոց։ Վայրն այն անշշունչ և խաղաղաւէտ առ 'ի խորհուրդս սուրբս թուէր նուիրական. այսպիսի արդեօք էր վայրն անտառին Գարդափեայ՝ ուր յանդուգնն Ս.կտէոն հաս 'ի վերայ դատերն Լատոնայ. այսպիսի անշուշտ էր ապաստանն, ուր փեբէ ինչանէր յերկնից՝ հանդէս առնել գեղոյ իւրոյ առ տարփաւորն իւր Ենդիմիոն։

Նումա յուշի կալաւ զվայրն զայն առանձին, և եդ 'ի մտի յաճախել անդր։ Եւ մատուցեալ յաղբերակունս անդր, և խոնարհեալ ճաշակել

ալիոց ջուր, 'ի մատուցանելն զայն 'ի շրթունս և ահա բարբառ մեծաստատ. Ո՞ր հրամանաւ, մահկանացուդ ժպիրհ, իշխես ճաշակել յաղբերէդ։ Կառեաւ Նումա, և թօթափեալ զալիան 'ի ձեռանէ, ետ պատասխանի դողութեամբ. Ներեա՛ անգիտութեանս իմում, ո՛վ յաւէրժահարան. ոչ գիտէի՝ զի քեզ աղբիւրս իցէ Նուիրական. պարտ էր ինձ 'ի գեղոյ ալեացն գուշակել զայն։ Կրկնեաց բարբառն հեզագոյն. Ներեմ բուժել քեզ 'ի դմա զծարաւ. սիրելի միշտ եղեր դու ինձ, Նումա, և 'ի բազմաց հետէ ակն կալեալ մնայի քեզ աստ. յուշ լիցի քեզ յաւէրժահարանն Եգերիա, զոր խորհրդական քեզ եցոյց Դեմեարէ. աստանօր օթևան է նորին։ Լուիցես դու բարբառոյ իմոյ, այլ ոչ տեսցես զիս, և մի՛ անցցես դու այսր քան զթաւամուրդ. այսպէս դիցուհւոյն է հրաման։ Դարձիր յաղբիւր այսր 'ի կարօտել քո խրատուց, ե՛կ 'ի պատմել զօրէնս քո ինձ՝ մինչ չև զայնոսիկ հաստատեալ. մաղիր այսր յայտնել ինձ զխորհուրդս քո և զերկիւղ և զյոյս։ Տա՛ց քեզ խրատս, առանց բռնադատելոյ զքեզ 'ի նոյնս. խորհրդակից քեզ եղէց՝ և ոչ պատգամաւոր։ Դու զիս հարցանիցես որպէս զդիցուհի, և ես խօսեցայց առ քեզ որպէս սիրելի։ Ե՛րթ խաղաղութեամբ, Նումա, մնամ քեզ աստ յետ աւուրց երից։

Լռեաց բարբառն, և Նումա տակաւին կայր անդ ընդերկար 'ի հիացման. և ապա լի ցնծու-

թեամբ շնորհապարտ արտիւ ծունր եդեալ, երկրպագեալ դիցուհւոյն, ոչ դարարէր 'ի գոհանալոյ զեգերեայ, մաղթանս առ նա կողկողագին հեղոյր. համարձակէր հարցուածս դարձեալ մատուցանել նմա. այլ ոչ ևս բարբառն այն պատասխանէր։ Ցակճիռս կայր, ունկն դնէր, այլ 'ի զուր. ոչ ևս ինչ լսելի լինէր յանտառին՝ բայց միայն ախորժ և հեզիկ շրշիւն տերևոց շարժելոց 'ի զեփիւռ։ Հայէր դիտէր շուրջանակի, այլ ոչ ինչ տեսանէր բաց 'ի թանձրախիտ ծառոց։ Եւ առ երկիւղածութեան ոչ ևս իշխեալ 'ի վայր անդր սուրբ լինել խորամուխ, մեկնէր ակամայ յաղբերէ անտի. և վստահութիւն առեալ ընդ դիցն օգնականութիւն առ 'ի տեսչութիւն ինքնակալութեանն, լի խրախուսանօք դառնայր 'ի Հռովմ։

Ընդսին 'ի ժամէ անտի սկսաւ նա պատրաստել զկարևոր մասունս օրէնսդրութեանն, զոր խորհէր յաւէրժահարսինն 'ի քննութիւն մատուցանել, և վաստակն այն երկայն և տաժանաւոր սթափեցոյց զնա 'ի վշտացն, զորս ներգործէր 'ի նմա սէր։ Սփոփէր երբէք երբէք յուսով դարձի օրիորդին, ակն ունելով փոխարէն վաստակոցն ընդունել զշնորհն զայն 'ի դից. և այս ցանկալի ևս առնէր նմա զբարեբաստութիւն ժողովրդեան իւրոյ։

Անցին աւուրքն երեք՝ զորս յաւէրժահարսինն էր սահմանեալ. և դարձաւ Նումա յաղբիւր

անդր. կարդաց զԵգերիա, և լուաւ բարբառ. Գոհ իցես Նումա. կարացեր զբարեբաստութիւն ժողովրդեան քո յարդարել։ Եւ պատասխանի. Աւաղ, դիւրին իմն թուի այն. այլ 'ի բազմել յաթոռ, չարիք ևեթ առձեռն պատրաստ կան թագաւորի 'ի գործել։ Այլազգ 'ի տեսելոցս տուաւ ինձ համար տեսչութեան իրաց աշխարհիս. կամէի բառնալ զզեղծմունս 'ի բաց, և կարևորս ինձ զայնոսիկ ցուցին, և զդժնդակագունից չարեաց առաջի եդին ինձ երկիւղ. որոց մարթէրն ձեռնտու լինել ինձ 'ի բարերարութիւն, ցանկան կալոյ և մնալոյ չարեաց։ Ճշմարտութիւն խուսէ յերեսաց իմոց, շուրջ պատեն զիս խաբեբայք։ Կասկածանք զնոցանէ իրաւացիք՝ հարկ առնեն ինձ գործել ինձէն զամենայն, և երկար և տաժանաւոր լինի ինձ կատարումն խորհրդոց կարի իսկ բարեաց։ Մի արդեօք և ես ծանրացի բեռնս այս 'ի վերայ տկարութեան իմոյ, և այնու ևեթ լիցի ինձ գերազանցել քան զթագաւոր յոռի, զի գտայց առաջին 'ի հեծել ընդ չարիս՝ զորս չկարիցեմ խափանել։

Կրկնեալ անդրէն յաւէրժահարսանն ասէ. Սխալես Նումա, լի մոլորութեամբք են բանք քո, հանդոյն բարեաէր որերոյ՝ որ յամենայն ինչ ձեռնարկեն առ 'ի հասանել ըղձից իւրեանց, և զոյզն ինչ խոչ ձեռնթափ առնէ զնոսա։ Եթէ դիւրին ինչ էր բարուք թագաւորել, զինչ փառք էին թագաւորաց մեծամեծաց։ Հնարեացին

իսկ պատրելգքեզ, լարեացեն իսկ որոգայթս զքև. մարդահաճութիւն անապատութիւն խորամանկութիւն և հրապոյրք ցանկութեան՝ դարանակալք են զահոյից, 'ի դիմակս խաբուսիկս դէտակն 'ի սիրտ թագաւորի խնդրեն նոքա պարապ տիրելոյ նմա ընդ մեղկանալ նորին։ Անձնասիրութիւն տայ նոցա հսկել անքուն. և եթէ վայրիկ մի 'ի քուն լիցի թագաւոր, հասանէ նմա պարտութիւն։ Այլ թշնամիքդ այդոքիկ վտանգաւորք ընդ գալն 'ի յայտ՝ ոչ ևս են ահարկուք. լիցի ապա գլխաւորագոյն պարապումն քո և կարևորագոյն փոյթ 'ի ճանաչել զնոսա։ Որք պատեալ պաշարեն զքև, որք զամենայն ինչ առ ձեռն պատրաստ քեզ ցուցանեն, որք զախորժակս քո հրապուրեն, որք միշտ համախոհքն իցեն քեզ, նոքա թշնամիք քո են։ Վարեսջիր զնոսա 'ի բաց, նումա, ոչ յարքունեաց քոց, որոց հասցէ զոլ անմարդի՝ այլ 'ի սրտէ քումմէ և 'ի խորհրդակցութենէ. արհամարհեա՛ զնոսա, և մի երկնչիր յայտ առնել նոցա զարհամարհանս քո։ Այսպէս թերևս յաջողեսցի քեզ զարհուրեցուցանել զյաջորդութիւն նմանեաց նոցին։

Բայց զգոյշ լեր, մի յամենեսին զարհամարհանս քո տարածանէլ. կասկածդ այդ և կարծիք չար զհանուրց՝ անիրաւ է և բազմավատանգ, զի տայ անխտիր զո՛ որ և իցէ յառաջ մատուցանել 'ի բարձ և յաւագութիւն, ուստի ծնանին ամենայն չարիք։ Թէպէտ և թագաւոր իցես, ոչ

աւելի ինչ ես քան զմարդ. սէր առաքինութեան որ 'ի քեզդ է, մարթի գոլ և յայլս։ Մեծարեաջիր ապա զմարդիկ, մեծարեաջիր և զոմանս յոտանիկ մարդկանէ, զի են իսկ 'ի նոսա առաքինաբերք հայրենաբերք և սիրաբերք։ Լուռկան ինքեանք, այլ ժողովուրդ խօսի զնոցանէ. ոչ թեկն ածեն զաւադութեան, այլ ազգն ինքնին մատուցանէ նոցա զայն։ Մի երկնչիր լինել համախոհ ընդ ժողովրդեան, մի ամօթ համարիր ելանել 'ի խնդիր որոց ոչն գան առ քեզ. ոչ նուաստացին այդուիկ փառք քոյին, բարձրացուցես դու զնոսա առանց խոնարհելոյ. և բանիւ միով, և 'ի ցոյց ինչ սիրոյ՝ որ ոչ ինչ դժուարին է բարեգութ սրտի. յաւելցես կրկնապատիկ զհանճար նոցա և զառաքինութիւն, ես առաւել զսէր նոցա ընդ քեզ։ Ո՛հ, զի՛ զեղեցիկ է տեսանել զթագաւոր անամբարհաւաճ յաթոռ իւր 'ի կենակցելն ընդ այնոսիկ, որ նեցուկ են նորին։ Լիցի նա ահարկու չարաց, խիստ առ մարդահաճոյս, այլ բարեկամ բարեաց, և հեղութեամբն իւրով իբր այն թէ ասիցէ. Հաւասարս ինձ համարիմ զնմանեալս ինձ սրտիւք։

Կրկնեալ անդրէն Նումայ, ասէ. Քաղցր է ինձ և սիրելի մեծարել զայնպիսիս, և զամենայն փոյթ 'ի մէջ առից խնդրել զնոսին և գտանել. բայց օգնականութեամբ իսկ նոցա կարիցեմ բարերարել ընդերկար։ Ժողովուրդ իմ սովորեալ

'ի հայթայթել զկեանս իւր աւազակութեամբ մարտի, թշուառ զանձն վարկանի 'ի խաղաղութեան, գրգռի անգործութեամբ, խռովի և վայրենանայ։ Ազգք կրկին են 'ինմա, յաճախագոյնս հակառակք իրերաց, զորս ոչ է ինձ մարթ միաբանել՝ բայց միայն իմաստուն օրինօք, վաստակս այս մեծ խնդրէ երկայն մտածութիւն. կարևոր է ինձ խաղաղութիւն և պարապ, և ամենուստ ապառնալիք ինձ 'ի վերայ կան։ Գոռոզն Հերակլիա յարուցանէ 'ի վերայ իմ զիտալիա առ հասարակ, և ընդ հուպ հասցէ նա պաշարել զպարիսպս իմ։ Ազգք նուաճեալք խորհին թօթափել զլուծ. ժողովուրդն յաւեր կայ, կեղեքեալ 'ի հարկաց ընդ Հռոմալեաւ՝ ոչ ևս կարէ հաստատացանել զայնոսիկ. պատերազմ լրումն արասցէ կորստեան իմում. իսկ առ 'ի խափանել զայն և պառակտել զթշնամիս՝ խնդրի արուեստ անընդելական ինձ, ասեմ իսկ զքաղաքավարութիւն որ 'ի վեր է քան զմիտս իմ, և դժպհի սրտի իմում։ Զինչ պարտ իցէ ինձ առնել, ԷԲԸ զայժմուս բառնալ զչարիս, ԷԲԸ զառաջիկայն խափանել։

Կրկնեալ անդրէն Եղերեայ ասէ. Նումա, հաստատուն և անսխալ ճշմարտութիւն, յոր թագաւորաց մանաւանդ պարտ է զանկն պինդ ունել, ուսուցանէ յաղթող ամենայնի զառաքինութիւն զարիութիւն և զհանճար. երեքումբքն ևս ճոխանաս բարեմասնութեամբք, մնայ ևեթ

քեզ 'ի կիր արկանել զայդոսիկ։ Խորհեացուք արդ 'ի մօտալուտն վտանգ։ Կարևորագոյն քեզ պէտք են խաղաղութեան, պատրաստեայց ապա 'ի պատերազմ. պատուէրս այս ժամանակակից է աշխարհի։ Հռոմուլ եթող քեզ բանակ մեծ, և զօրավարս քաջս և հմուտս պատերազմի. յարգեալիր զնոսա և մեծարեալիր, և կալ 'ի պատուի 'ի վեր քան զամենայն կարգս զկարգ պաշտպանողաց հայրենեաց։ Որչափ առելի է պատերազմ, այնչափ առաւել պարտ է սիրել ըզզօրականն. զինուորակիցս քեզ կոչեալիր զնոսա, առատաձեռնեա՛ նոցա զմեծարանաց անուանս և զօրէնս պատուոյ. ոչ արծաթ, այլ պատիւ խրախուսեացէ զնոսա. մեծութիւնք մեղկեն զզօրականն։ Ցուշ լիցին քեզ, Նումա, զօրքն կամպանիացիք, զորս Լևոնդ եղծ անաշխատ. զեղխութիւն եղև նոցա պատճառ կորստեան։ Ա՛ռ 'ի մերժել զայն 'ի զօրաց քոց, արտաքսեալիր նախ յարքունեացդ. օրինակ իշխանի բաւական է առ ամենայն, և դիւրագոյն յոյժ մարթ է ուսուցանել գործովք։ Լեր անպաճոյճ 'ի հանդերձս, սակաւապէտ 'ի կերակուր, արհամարհեա՛ առաջի ամենեցուն զմեղկութիւն, և տեսցես զմանկտին հռովմայեցի առ հասարակ հետևող առաքինութեանց արքային իւրեանց։

Այլ ոչ բաւեսցեն առաքինութիւն առանց խիստ հրահանգաց. թէպէտ և յաղնուականաց ոք լցէ հարիւրապետ, հնազանդեսցի հազարա-

պետին իւրում որպէս զյետին զինուոր. ոչ ինչ ընդհատ և հազարապետն կացցէ հպատակ զօրավարին։ Ուստ ՀԵՂԷՈՆԱՑ ՔՈՅ, զի որ կրէ սուր յազդեր՝ պարտի մեծարել զայր անզէն. զի պարտէ զինուորի գոլ առիւծ առ թշնամիս, և գառն առ քաղաքացիս. զի քաղաքացին և զօրական եղբարք են, մին պահունի հայրենի տան, միւսն պարապէ 'ի յանձանձանս ընտանեաց, և հայթայթէ զպարէն իւր և զպաշտպանողաց իւրոց։

Ամենայն լոցի քեզ բանակ. և եթէ յանձնեսցես դու զայն քանի զօրավարի, և պատնէշք ամուրք լցեն քո, և զինարանք սպառազէնք. ժառանգեսցես դիւրաւ զխաղաղութիւն, պահեսցես զայն առանց կարօտելոյ հնարից քաղաքավարութեան՝ որ պատապարանն է տկարաց, և պարարուակ չարաց։ Ոչ միշտ յաջողէ յանկուցանել բանիւք զմարդիկ, իսկ գործովք յաջողէ անվրէպ ակնածելի գոլ նոցին։ Թագաւոր եթէ արդար լցէ և հաւատարիմ, դժկամակ 'ի յարձակել, և կազմ'ի դիմամարտ, ոչ երկիցէ նա 'ի դաւանաց 'ի կարի իսկ հաւատադրուժ դրացեաց։ Վատահութիւն չփոթէ զխորամանկութիւն. է նա արծուի դիմամարտ օձի. 'ի զուր գալարի առղունն վատ, խոյանայ 'ի նա յամպոց բարձանց հաւն Դիայ, հարկանէ զնա կտցաւն դժնեայ, և ոչ ինչ 'ի յաղթութիւն իւր խրոխտացեալ՝ դառնայ առ վերն աստուածոց։

Լեր ապա միշտ արդար առ սահմանակիցս քո,

և միշտ բաւական 'ի վանել զանիրաւութիւնս նոցա. այսպէս ոչ միայն ոչ աղմկեսցեն զխաղաղութիւն քո, այլ և դաշնակցութեան քում լիցին հետամուտ. պատկառելի կացցէ Հռովմ, և դու կարիցես յայնժամ յօգուտ 'ի կիր արկանել զանդորր պանծալի խաղաղութեան՝ առ 'ի տալ օրէնս ժողովրդեան։ Այլ նախ քան զհաստատութիւն նոցին, արասցես դու քեզ օրինակ կարգաց միաբանութեան, և ապա առաջի արասցես զայն ժողովրդեան քում. յայնժամ լաւագոյնք յօրինաց յանդիման լիցին մտաց քոց, և ժողովուրդն ընկալցի զայնոսիկ մտադիրութեամբ։ Յուշ լիցի քեզ, զի մարդիկ աղատօրէն 'ի մի վայր եկեալ են 'ի քաղաքաժողով ընկերութիւն, առ 'ի դտանել զնպաստս կարևորս յապահովութիւն իւրեանց՝ և առ 'ի պէտս և ախտիանս կենաց։ Ի խելամտութենէ ճշմարտութեան այսորիկ յառաջ գան ամենայն տարբերք օրինաց։

Նախկին արդասիք օրինաց քոց լիցին կեանք դիւրին և աներկեան, զոր երկրագործութեան է հայթայթել. վասն որոյ համարեցիս պիտանեագոյն զդաս մշակաց, 'ի յարդի զնոսա կալցիս, յապահովեսցես զդոյսնոցա, օգնեսցես յաճուռն նոցա, և արուեստին՝ որ կերակրէ զմարդիկ՝ մատուցես զարժանին պատիւ։ Ոչ բարդաւաճէ երկրագործութիւն առանց այլոց արուեստից. ծնանի նա զնոսին, և վարձատրէ։ Լիջիր դու նոցա պաշտպան, հրաւիրեսջիր զնոսա յաշխարհ

քո, և տեսցես զի արուեստք դիւրացուսցեն ըզ-
վաստակս մշակութեան, պարապեցուցեալ յայն
և կերակրեալ անտի բազմութիւն յոյժ քաղա-
քայնոց։ Եթէ դաշտք և բլուրք տացեն զար-
դիւնս իւրեանց, գտցին մշակք ճոխք արարուք՝
որոց կարօտ իցէ այլ երկիր. և ատի յառաջ
գայցէ վաճառաշահ, որում օգնեսցես՝ թողլով
զնա ազատ։ Այլ յիշեսջիր միշտ, զի վաճառա-
շահ՝ որ տայ բարգաւաճել արուեստից՝ չկարէ
ինքն բարգաւաճել, բայց ըստ բարգաւաճանաց
մշակութեան։

Հաստահիմն կացուցեալ զերեսին զայսոսիկ
խարիսխս յաջողութեան պետութեանց, զմշա-
կութիւն ասեմ և զարուեստս և զվաճառաշահ,
պարապեսցես ապա 'ի սահմանել զայլ օրէնս՝ ո-
րոց անխտիր ամենայն կարգք քաղաքայնոց հպա-
տակ կացցեն։ Նուազունք իցեն օրէնք քո թուով,
որպէս զի ամենայն ժողովուրդն կարասցէ ուսա-
նել զայնոսիկ. և հիմն նոցա իցէ մարդասիրու-
թիւն, որ է առաջին և արքազան քան զամենայն
օրէնս. միայն 'ի բնութենէ սահմանեալ։

Զսա կալեալ քեզ կանոն անխախ, կացուսցես
զոկարն յակաստանի 'ի բռնութենէ հզօրաց. և
տացես նմա զօրավիգն 'ի կեանս, և վրէժխնդիր
յետ մահու։ Սահմանեսցես զիրաւունս առն ընդ
կնոջ, հրամայեսցես նոցա միաբանութիւն հա-
ւատարմութիւն և հեզութիւն. և թոյլ տացես
նոցա զապահարզանս։ Տացես հարց իշխանու-

թիւն անսահման 'ի վերայ որդւոց. մի երկիցես թէ գուցէ զեղծանիցին նովաւ. բազումք են որ-դիք ապաշնորհք, սակաւք հարք անողորմք։ Շնորհեսցես պատրկազանց զքաղցր իրաւունս պատապարան լինելոյ ռամկին, պաշտպանելոյ զնա և ճոխացուցանելոյ։ Պատուհասեսցես ըղ-ստութիւն և զապերախտութիւն, և ապառնացիս ամենայն յոռութեանց։ Զքաղաքայնոց առ հա-սարակ աներկեան կացուսցես զպատիւ և զխա-ղաղութիւն, մեծատանց զինչս, աղքատաց ըղ-նպաստ, և որբոց զպատապարան։

Յայնժամ Նումայ 'ի վերայ ածեալ, ասէ. Ոչ ինչ զկրօնից ինձ ասես, ո՛ յաւէրժահարան, որոց առաւելապէս շնորհապարտ գտանիմ։ Ան-դրատին 'ի տղայութենէ իմմէ խնամակալու եղև ինձ Դեմեարէ. Նա խոստացաւ ինձ խրատու զեղերիա. և ինքը զարժանի նմա կարիցեմ մա-տուցանել ապաս. կրօնիւք լիցի ինձ ածել 'ի քա-ղաքականութիւն զժողովուրդ իմ, և զդօնացու-ցանել զվայրենի բարս նորա։ Բարեպաշտու-թիւն բարեդութ առնէ զսիրտ. և պարտ է 'ի սէր դից յորդորել զմարդիկ, առ 'ի տալ նոցա սիրել զմիմեանս։ Խորհիմ կացուցանել քրմա-պետանորս, և ապասս զոհից առաւել մեծալայե-լուչս. կարգել տօնս՝ որոց հանդէս մեծաշուք ձգեսցէ զմարդիկ 'ի կրօնս, միաբանեսցէ զնոսա առաւել ևս ընդ միմեանս, և կացուցէ եղբարս 'ի մեհենի զայնոսիկ՝ որ քաղաքակիցք ևեթ են

միմեանց։ Է և այլ ինչ խորհուրդ 'ի մտի իմ-
մում, ո՛ յաւէրժահարան, զոր երկնչիմ յայտնել
քեզ. այլ քանզի ծածկագէտդ ես, ոչ ինչ երկ-
բայիմ զի ներեսցես ամբիծ դիտաւորութեան և
աղիողորմ և խանդաղատելի կրից, որ տան ինձ
'ի խորհուրդն յայն մտաբերել։

Խոր 'ի սիրտ իմ տպաւորեալ բերեմ, Եգե-
րիա, կրօնաւէր մեծարանս առ դիս. և լաւ հա-
մարիմ մեռանել քան յուրատ կալ 'ի նոցանէ և
մեղանչել իւիք առ նոսա։ Բայց է որ քան զա-
մենայն ինչ որ կանս 'ի վերայ երկրի կատարելա-
գոյն և սիրելի և առաքինի, որ զդիս իմ ոչ պաշ-
տէ, զնա կորուսի, և ողբամ զկորուստ նորա հա-
նապազ, և առանց նորա ոչ անդորր և ոչ բարե-
բաստութիւն քաղցրանան ինձ, և անուն նորա
կոչի Անայիս։ Անայիս, անուն ցանկալի, որ արտա-
սուս գորովոյ և ցաւոց տայ ինձ հեղուլ 'ի յօդելն
իմում զայն, Անայիս մոգական դենին է պաշտօ-
նեայ, միակ պաշտէ նա աստուած, և երկրպագէ
նմա 'ի պատկերս նորին յարեգակն և 'ի հուր,
որ նոքին իսկ են դէք մեր Ապոլլոն և Հեփեստոս, զորս պարտ է և ինձ պաշտել, և կանգ-
նեցից երկաքանչիւրոցն մեհեան։ Այլ և ոչ
աստանօր զկայ առնուն իղձք իմ, քաղցր է ինձ
ընծայել հարկ ինն մեծարանաց և սիրոյ իմում
Անայեայ, և կացուցանել քրմուհիս չորս, որոց մի-
այնոյ ելցէ պաշտօն՝ պահել անշէջ զհուր սուրբ 'ի
բագնին Եստեայ. հուրն այն միշտ կենդանանորոգ,

հուր սուրբ և անմահ, լիցի ժողովրդեան իմում նշանակ բնութեան, իսկ ինձ նշանակ սիրոյ իմոյ։ Քրմուհիքն չորեքին եատեանք՝ լիցին կուսանք. և առ'ի մտանել 'ի պաշտօնն հարկ լիցէ նոցա տալ առհաւատչեայ զամբիծ և զանապական կենաց, որպիսի էրն Ընայիս։ Հանգոյն նմին պաշտօն մատուցեն հրոյ, յորոյ 'ի պահ կան. և 'ի յիշատակ նորին, զոր 'ի դէմս ածցեն ինձ, գեր 'ի վերոյ զյարգ նոցա և զմեծարանս կացուցից, և տաց նոցա ժառանգել պատիւ արքունի։ Ակն ունիմ զի ներեսցես ինձ, ո՛ յաւէրժահարսն, մատուցանել զայս խանդակաթ սպաս սիրուհւոյն իմոյ, որում շնորհապարտ գտանիմ վասն գուշնաքէից՝ որ են 'ի յիս՝ առաքինութեանց, և զոր ոչ ևս լիցի ինձ արդեօք տեսանել, այլ յիշատակ նորա ցանկալի յաւէրժ անմահ կացցէ 'ի սրտի իմում։

Եւ 'ի լռել յաւէրժահարսինն վայրիկ մի, տագնապէր ընդ այն նումա. այլ հուպ ընդ հուպ՝ դադարեաց տագնապնորա'ի կրկնել բարբառոյն որ ասէր. Ամբայդ հռովմայ, մեծարեմ զհաստատութիւն մտաց քոց, և ակն ունիմ զի ընկալցիս զփոխարէնն. ոչ արդեւոք չպատուել քեզ զԸնայիս, այլ երկնչիմ զի մի գուցէ առաւելագանց ընծայեսցես դու նմա պատիւ, և զանցանիցես 'ի սպաս կրօնից։ Դատարակեցար դու 'ի մեհենի. զդոյշ լեր, զի մի քրմաբար թագաւորեսցես։ Երկիւղածութիւն որչափ բարձրացու-

ցանէ զայր, որ 'ի պատշաճ չափուն ունի զայն, նոյն չափ և նուաստացուցանէ զանցեալն ըստ չափ։ Սիրտ բարեգործով դիւրաւ զառաջանի յայն, և աղէտք սիրոյ յաճախեն զվտանգն. պարտ է մտաց քոց խուսել 'ի վտանգէն՝ խելամուտ առնելով զքեզ, զի մարթ է թագաւորի երկիւղածի դոլ այր մեծ, այլ նանրահաւատ թագաւորի ոչ և։

Ոչ յապերախտութիւն և 'ի մոռացօնս դիցէր խրատեմ զքեզ, քաւ լիցի, պատուեա՛ զնոսա, նումա, քանզի և պարտիս իսկ. այլ պատուեա՛ զնոսա, ծառայելով մարդկան։ Թո՛ղ ձախողակի երկիւղածութեան զճղճիմ սպասող, զորս նա ինքն հնարեցաւ, և պահեսջիր զպատուէրս կարևորս, զորս քեզ ուսուցանէ։ Եւ մանաւանդ դոհացող լեր զԴեմետրեայ. ընթա՛ ընդ անդաստանս՝ զգեցեալ զձև մշակի, խառնեա՛ց 'ի պարս վաստակաւորաց 'ի դաշտի՝ որք զքեզ համարեսցին եղբայր վաստակակից. խօսեա՛ց առ նոսա զօրինացն Նումայ. խելամուտ լեր զեղծմանց և դժնդակ հետևանաց նոցին. դատեա՛ զայնոսիկ առ 'ի խրախուսել և զայլս 'ի դատումն, և ցանկա՛ լսել պարսաւանս ինչ զայնցանէ քան գովասանութիւնս բաղումս։ Այլ արա 'ի հիւղ գեղջկին, լեր ականատես, կարօտութեանց նորին. դգուեա զմանուկ անձորձ՝ որ լայ առ մահիճս ախտակիր մօրն, և միխիթարեա՛ զհայր նորա. յուսադիր լեր նոցա օգնականութեան յերկնուստ կամ յարքունուստ։

եւ 'ի դառնալ քում յարքունիս, առաքեա՛ նոցա հաց և ձորձս և ցորեան առ 'ի սերմանել։

Ահա ապա՝ զոր մարթ է քեզ մատուցանել Դեմետրեայ. ընդ այս հաճեսցի նա առաւել քան ընդ արիւն բիւրուց երնջոց. և զբարեպաշտութեանդ քո ընկալցիս ընդ հուպ զվարձս։ Ծածկեսցեն հունձք զերեսս երկրի, լցցին բնակութեամբ գիւղք և ամանք. առատութիւն տիրեսցէ ընդ դաշտս, հօտք բազմահոյլք բառաչեսցեն ընդ դալարագեղ արօտս. հնչեսցեն հովիւք 'ի նուագս ցնծութեան, և հովիւք և մշակք ճոխք և խաղաղաւէտք երանաւետեալք խնամովք քովք՝ ոչ հանդիպեսցեն 'ի քուն՝ առանց մաղթելոյ 'ի դէց պահել զբարեգութ արքայն իւրեանց։

Եւ 'ի բարբառել յաւէրժհարսինն այսպէս, գոչեաց Նումա 'ի խնդութենէն. Ո՛վ դէր խնամակալ, յորմէ ակն ունիմ բարեբաստութեան խմում և բարեբաստութեան ժողովրդեանս առհասարակ. ո՛ր հարկ և ո՛ր ճակատագիր անողորմ խափանէ զերեսս քո յինէն. դու որ ընուս զիս պարգևօք բարերարութեանդ, դու որ այդպէս դորովանօք կարեկից լինիս ինձ, զմ՛ուրկ մինչև 'ի ապառ թողուցուս զիս 'ի քաղցր բերկրանաց տեսանելոյ զբարերարդ իմ, և ծածկիցին 'ի սպառ յաչաց իմոց 'ի քոզ անթափանց։

Կրկնեալ անդրէն բարբառոյն, ասէ. Մի՛ խընդրեր, Նումա, բառնալ զքոզն. կորուսանիցես դու զիս անդարձ. այլ ե՛կ զհետ խրատուց իմոց,

և զուն գործեա յարդարել աներկեան զբարեբաստութիւն ժողովրդեան քո, և ես խոստանամ քեզ և երդնում յիշխեցողն երկնից, զի յաւուր՝ յորում լիցիս դու վեհ 'ի թագաւորս՝ ծանիցես և տեսցես զնդերիա։ Եւ զայս ասացեալ, ոչ ևս պատասխանէր բարբառն, ոչ առ հարցուածս և ոչ առ շնորհակալիս Նումայ։

Իսկ Նումայ փութացեալ զկրաւս յաւէրժահարսինն յօգուտ արկանել, դարձաւ յարքունիս իւր 'ի խորհել. և 'ի վաղիւ անդր պարապէր 'ի կացուցանել իւր տեան խորհրդոյ։ Եւ ընտրեաց խորհրդականս իւր 'ի պատրկազանց զհմուտս և զառաքինիս, յաւելեալ 'ի նոսա նոյնչափ և 'ի ռամկէն. և 'ի զարմանալ ազնուականացն ընդ խառնումն իւրեանց ընդ ռամկին, ասէ Նումա. Ոչ ինչ դժպհի է ձեզ խառնուրդս այս 'ի պատերազմունս, խորհրդականք իմ. և արդ ինձ օգտակար իսկ է յատենիս։ Ասա առաւել յոյժ զռամկէն լիցի ինձ հոգ քան զազնուականաց. պարտ է ապա զի զլխաւորք ռամկին պաշտպանեսցեն աստ զիրաւունս իւրեանց։ Պարտ է զի խորհրդականքդ այդոքիկ առաքինիք, որք ոչ կեան յարքունիս իմ, խօսեսցին ընդ իս համարձակ՝ և խրատութեամբ իսկ, որպէս ոչ են սովոր խորհրդականք դրանիկք. պարտ է զի յըմբռնել իմովա՞ի պատրանս ամբարտաւանութեանէ կամ փաղաքշասց ընդդէմ բարեբաստութեան ժողովրդեանս իմոյ, ռամիկքդ այդոքիկ ասասցեն ցիս. Ապրայդ

Հռովմայ, մի հաւատար դոցա, զի ճանաչեմք մեք զթշուառս։

Օգնականութեամբ ատենին, որում նախագահ կացոյց զԺերունին Մետիոս, հնարէր նումա հնարս նախ քան զամենայն 'ի շինչուցանել զհեռ հռովմայեցւոց ընդ սաբինացիս, որ միայն բաւական էր եղծանել զբարեբաստութիւն աշխարհին։ Եւ առ 'ի խառնել ընդ միմեանս զազգսն երկոսին, բաժանեաց զամենայն բնակիչս Հռովմայ 'ի ցեղս. և նոյնհետայն ցեղք իւրաքանչիւր, կազմեալք անխտիր 'ի հռովմայեցւոց և 'ի սաբինացւոց, ազատք 'ի կուսակցութենէ՝ վառեցան 'ի նոյն նախանձ հայրենեաց։ Եւ արքայն իմաստուն, 'ի կացուցանել ընդդէմ ազգային խրոխտանաց զնախանձ օգտի հասարակաց, ետես անդէն խափանեալ զհերձուածս, և զազգսն զերկոսին 'ի մի կացեալ։

Յայնժամ կառոյց մեհեան միաբանութեան, և միւս այլ՝ հաւատարմութեան զթութեան և արդարութեան. կարգեաց պաշտօն Ցերմինեայ դիցն սահմանաց՝ յառհաւատչեայ իւրաքանչիւր ստացուածոց. և կանգնեաց բագին բարեկամութեան հասարակաց, որ է գլուխ առաքինութեանց և ծնօղ այլոցն ամենեցուն։

Վառեալ 'ի սէր ժողովրդեան իւրոյ՝ յառնէր վաղ քաջ ընդ առաւօտն, հեռագօտեալ զաղբիւրս չարեաց և խորհել զօգուտակարս. և վաստակեալ առանձինն միչև 'ի ժամ դումարելոյ ատենին,

անդ առաջի առնէր խոհականութեան բարեկամացն զտեսութիւնս մտաց իւրոց, կամ մանաւանդ զթելադրութիւնս սրտի իւրոյ. և վէճ 'ի ներքս արկանէր զայնցանէ որպէս ոք 'ի խոհըրդականաց։ Այլ 'ի չհաւանել մտաց իւրոց ընդ փաստս հակառակ կարծեաց, վճռէր որպէս ինքնակալ։

Ոչ վստահէր 'ի հանճար իւր առաջնորդական, և օրէնս իմն եդեալ էր անձին՝ որով դուն ուրեք վրիպէր. զի զորոց խորհէրն, ընդ նոսա զանձն իւր դասէր։ Եթէ զմշակաց օրէնս տայր, ընդ մշակս զանձն համարեալ՝ ասէր ընդ միտս իւր. Եթէ ես էի, զինչ խնդրէի 'ի թագաւորէ. յապահովել զինչս իմ, խնամել զարարս իմ, և պաշտպանել ինձ ընդդէմ թշնամեաց և քաղաքայնոց հղօրաց։ Առ 'ի վայելել 'ի շնորհս յայտոսիկ՝ արժան է, զի հանից նմա մասն ինչ 'ի հնձոց՝ զորս քրտունք իմ բերցեն. այլ պարտ է զի մնացէ ինձ բաւական առ 'ի կերակրել զկին իմ և զորդիս, և առ 'ի սերմանել անդրէն զերկիր իմ։ Զայտոսիկ խորհեցեալ Նումայ այսպէս, ձեռնարկէր ապա 'ի հրովարտակն, և երկրագործք գոհք գտանէին։

Եթէ պատերազմնմա առաջարկէր ատեանն, խնդրէր համար ճիշդ զծախուց առ այն, և զօգտիցն որ անտի։ Եւ ապա 'ի հաշիւ ածէր որ ինչ մարթէրն նմա նովին արծաթով առնել, բանալ առուս, զլիճս ցամաքեցուցանել, մշակել զխոպանս. և համեմատեալ զհաւատի զայտ-

սիկ շահս ընդ յաղթութեանն՝ որ միշտ էր կեղակարծ, շառագունանս սովին պարզ համեմատութեամբ ածէր այնոցիկ՝ որ 'ի տարակուսի կային։ Իսկ նումա առանց կշտամբելոյ զվրիպակ կարծիս նոցա, յաւելոյր ևեթ. Թողում զճապաղիս մարդկայնոց արեանց, որոց զեր 'ի վերոյ են արժանք քան զոսկւոյ։

Զմեծ մասն աւուրն պարապեալ 'ի կարգաւորութիւն կարևորացս այսոցիկ և յառնել իրաւունս, սեղանակիցս ապա անպաճոյճ ճաշուն իւրոյ առնէր զխոհականագոյնս և զծերագոյնս 'ի խորհրդականացն։ Եւ ապա երթայր յանծանօթս ածել նպաստ ումեք 'ի թշուառաց. ոչ 'ի հասարակաց գանձուց առեալ զպարգևսն, քանզի խնայէր յայնոսիկ արքայն առատաձեռն՝ ևս և առ 'ի սիրել զառատապեալս, այլ ասէր. Այսոքիկ զբօսանք իմ են, և ոչ է պարտ աշխարհին տուժել ընդ իմ։ Եւ ծախէր 'ի բարերարութիւնս յայսոսիկ զարծաթն ոահմանեալ 'ի թոշակ թիկնապահաց՝ որոց ոչ կարօտէր, 'ի ռոճիկ սեղանոյ իւրոյ՝ որ սակաւապէսն էր, և 'ի պէտս հանդերձից իւրոց՝ զորս ոչ ստէպ նորոգէր։

Այսպէս զբաղումն բարեգործով մարդկան ընթափեցուցանէր զնա 'ի պաշտամանց թագաւորի և զօրհանապազ ընդ երեկս 'ի կատարել զամենայն զպարտս իւր՝ երթայր տալ համար եղերեայ զամենայն գործոց իւրոց, և խօսակցութեամբ առնուլ 'ի նմանէ խրատս վասն վաղուին։

ԵՈՒՄԱ ՊՈՄՊԻԼԻՈՍ

ԳԻՐՔ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԳՐՈՑ

Հերակլիա գումարեալ ընդ Թագաւորս բազումս, զայ պաշարել զՆուսմա 'ի Հռովմ։ Հասանէն Կամիլլա և Լեոնդ, ածեալ զերի։ Գիշերախառն ասպատակ Լեոնդեայ։ Հասանել մարսից յօգնութիւն Հռովմայեցւոց, և Ճակատել բանակացն երկոցունց 'ի մարտ։ Ատենաբանել Նումայ, և զէնընկէց առնել զթշնամիս։ Մահ Հերակլեայ, և խաղաղութիւն աշխարհին։ Փակել Նումայ զմեհեան Յանուսի, և գտեալ ածդրէն զԱնայիս՝ առնուլ զնա 'ի կնութիւն։

ՆՈՒՄԱ ՊՈՄՊԻԼԻՈՍ

ԳԻՐՔ ԺԲ

Այպան բաղմահոգ խնամք և վաստակք առ 'ի յարդարել զբարեբաստութիւն հռովմայեցւոց, զրեթէ ոչ ինչ ապուպէին զվիշտս թագաւորին։ Նումա, հեռի 'ի սիրուհւոյն, ինքն ևեթ յամենայն ինքնակալութեան իւրում էր ողբալի։ Ամ-ձակեալ էր նորա առ ամենայն ազգս Իտալիոյ խնդրակս զՁրադաշտայ և զդատերէ նորին, և ոչ ուստեք առեալ զրոյց. քանզի Լևոնդ ոչ ևս դառնայր, և ժամանակն անցանէր։ Ամրայն ևեթ ազաւոր, 'ի մէջ ժողովրդեան՝ որ պաշտէրն զնա, ողբայր զսիրուհին իւր, կարօտէր բարեկամին իւրում, և զարհուրէր 'ի Հերսիլեայ։

Ոչ յամեաց Ամաղոնն կատաղեալ յայտնել զզայրոյթ իւր. և ահա փոշի մրրկեալ ելանէր դիզանայր յանկարծ յերեսաց Լատինի։ Փարատեցաւ մռայլն և փայլատակէր նիզակախառն սպառազինութիւն։ Շչուկ խառնաձայն, աղաղակ զօրաց, խրխնջիւն երիվարաց, կոփիւն վա-

հանաց գային և սաստկանային. Հանդոյն հիւսի-սայնոց սաստիկ հողմոց, որ 'ի խորոց անձաւաց յերկար մռնչմամբ 'ի դուրս յարձակեալ, և մըրրիկս և աւերածս զհետ ձգեալ, գան հասանեն՝ արմատախիլ զմայրիս առնելով և զժայռս։

Ընդ հուպ 'ի բարձանց պարապացն Հռովմայ նշմարէին բիւրք բիւրուց զօրացն։ Առաջի նոցա հրռուտք պարածածկեալք զրահիւք, զինեալք 'ի տէգս երկայնս՝ որոց ծայրք պողպատիկք կազմէին զռաղմն առաջին։ Խաղային գային կուռ զմիմեամբք մածեալք վահան ընդ վահան կցեալ, սաղաւարտք ընդ սաղաւարտս յարեալ, և ցըցունք նոցա ծածանէին ընդ օդս որպէս որայք 'ի դաշտի։ Տուրնոս զօրավար նոցա, խրոխան Տուրնոս, թառն արժանաւոր դիւցազնին համանուան իւրոյ, խիզախէր հասանել մարտնչել ընդ զաւակն տրոյական. և հարեալ 'ի գեղ Հերսիլեայ, երդմամբ խոստանայր մատնել 'ի ձեռս նորա գերի զնումս։

Զհետ նոցա գային կամպանիացիք, գունդ տկար՝ այլ բազմամբոխ. և զօրավար նոցա նոյն ինքն թագաւորն, զոր Լեոնդ կալաւ յԱլքսենս։ Զհետ նոցա վոլսկացն գումարտակք աղեղամբք ևեթ զինեալք. և զօրավարէր նոցա քաջն Ամրիսբէ, որոց զբօսանք էին կապել ընդ իրեարս զոյգս աղաւնեաց, և արձակեալ զնոսա 'ի թռիչս՝ հասանել նեռիւ զկապ նոցա, առանց 'ի թըռչունսն մեղանչելոյ։

գային խառն 'ի խուռն զհետ հիրպեցիք զի-նեալք լախտիւ, և մորթովք գաղանաց ծածկեալք. որք պարտեալ 'ի Հռովմուլեայ, առ 'ի խնդիր խաղաղութեան հարկեցան թողուլ նմա կառուցանել 'ի մէջ աշխարհին իւրեանց ամրոց անառիկ, և պահակապանս 'ի նմա բնակեցուցանել հռովմայեցիս. և որք 'ի վրէժխնդրութիւն նախատանացն դուն գործեալ տիրել ամրոցին, և 'ի դերև ելեալ, կամէին զվրէժ քինու իւրեանց հանել ընդ Հռովմ: Վայրենւոյ ազգին զօրավարէր վայրենագոյն ևս ոք մարսիկ՝ ահարկուն Ալ'ոն զաւակն Կակոսի, որ և ինքն բորբոքէր տարփմամբն Հերսի'լեայ, և մաշէր նախանձու ընդ փառս Լևոնդեայ՝ զոր կարծէր 'ի Հռովմ առ Նումայ. և էր նորա արդելեալ զօրացն՝ մի յարձակել յերկոսին ևս յոտխան, անձին պահեալ զփառս մարտնչելոյ ընդ նոսա:

Զհետ ամենեցուն գային վեատացիք, որք աղեղամբ ևեթ մարտնչէին՝ պատապարեալք յապար 'ի սպիտակ զրահք նոցա թռչքք և մորուք ձաղկահերք արկանէին արհաւիրս: Ցերունին Ցեսապ հայր Կամի'լեայ թագաւորէր նոցա տակաւին. որ յետ կորստեան դստերն՝ անձնատուր լեալ 'ի նիզակակից իւր 'ի հիրպեցիս, հնազանդէր նոցա. և թէպէտ չէր ինչ նմա փոյթ զՀերսի'լեայ, զինուորէր՝ 'ի պատերազմն դրդեալ 'ի նմանէ:

Երևելի 'ի մէջ բանակին, որպէս արմաւենի

'ի մէջ թիւոց պատանեաց, ամբառնայր օրիորդն դուստր Հռոմուլեայ։ Կրէր նա 'ի գլուխ սաղաւարտ փայլուն՝ պատեալ 'ի պսակ ոսկի, յաջումն գեղարդունս կրկնակ, և 'ի ձախումն զասպարն պարգև Դեմետրեայ՝ առհաւատչեայ անշուշտ յաղթութեան, զոր Նումայ իսկ թողեալ էր 'ի նա։ Ամազոնն այն խրոխտ հեծեալ 'ի կառս՝ զոր ձգէին ձիք սեաւք, գնայր գայր և արանայր ընդ ռազմս առ հասարակ զօրացն, ումեմն զուարթերես, այլումպատառնանկատ, զերկչոտս խրախուսէր, զյանդգունս և ևս գրգռէր, և ցուցեալ զպատանէշս Հռովմայ, ասէր. Զինուորակիցք իմ, ահա սոսացուած իմ, ահաւասիկ ժառանգութիւն իմ, դարձուցէք զդա յիս, և հաստուցից ձեզ զամենայն աշխարհակալութիւնս հօր իմոյ։ Սիրա իմ և աչ, երդուեալ 'ի դիս, լիցին մրցանակ զլխոյ Նումայ։

Զայն իբրև լուաւ ամենին Ամլոն, դիւրագին յոյժ զմրցանակն զայն զմեծ բողոքէր։ Բայց Տուրնեայ ժպտելով ընդ խրոխտումն խուժադուժ մարակին, ակնարկեայ 'ի նա արհամարհանօք. և դարձեալ հայեցաւ սիրատարի աչօք յօրիորդն արքայադն. իսկ վոնսիկն Ամիսբէոս անտես ըզհրապոյրսն արարեալ զսիդին Հերակլեայ, պանծայր զի ինքն միայն վասն փառաց մարտնչէր։

Տարածանէր 'ի դաշտին զօրն բազմամբոխ, մերձենայր գայր 'ի Հռովմ, և ոչ յոյժ 'ի բացեայ 'ի պարապացն բանակ հարկանէր։ Ամհա-

ւիրք կալան զքաղաքն, և բնակիչք դաշտացն հանդերձ ընտանեօքն արտաքուստ ելից՝ բարձեալ բերելով՝ որ ինչ մարթէրն նոցա զերծուցանել, հասանէին անդր յամենայն կողմանց. ծերք և կանայք զիմէին 'ի մեհեանս, և տղայք սրտառուչ կային բարձեալ ողբային. քաղաքացիք առ հասարակ 'ի զէն ընթանային, մինչև երկնչել զօրականին մնալ ապաղէն. ժողովուրդն համօրէն զարհուրեալ յերեսաց բազմութեան թշնամեաց, ոչ յայլ ինչ յուսայր՝ բայց 'ի թագաւորն իւր։

Բայց Նումա նախատես ամենայնի՝ անխռով 'ի տեսիլ վտանգին կայր. ոչ պարէնք պակասէին նմա, ոչ զէնք, և ոչ դունդք քաջամարտիկք և յոգնախումբք։ Սակայն խնայէր զնոսա յաշխատութենէ ընդունայն պահպանութեանց, խնամէր զզօրութիւն նոցա, հակէր պիտոյից նոցա, և փարատէր զերկիւղ 'ի բնաւից։ Վստահ 'ի նախահոգ զգուշութիւնս իւր, ոչ այլ ինչ հոգ էր նմա՝ բայց զի Լեռնդ ոչ էր անդ. և զի թշնամիք արգելուին զանտառն Եգերեայ։ Եւ իբրև այսպէս անօգնական 'ի խորհրդակցաց՝ խորհէր միայնակ 'ի գիշերին հնարս պատակտելոյ զբազմութիւն թշնամեաց, ազդ եղև նմա զի զօրականք երեք առ դրունս Հռովմայ ձերբակալեալք՝ խընդրէին յանդիման լինել նմա. և հրաման եւ ածել զնոսա առ ինքն։ Եւ ընդ ակնարկելն 'ի նոսա՝ ծանեաւ զԼեռնդ, և դիմեալ զերկս

էարկ նմա ձայնիւ ցնծութեան. Ո՛վ եղբայր իմ, տեսանեմ ուրեմն զքեզ վերստին. և ո՞ւր է Ընայլիա, ո՞ւր կարիցեմ գտանել զնա, կայցէ՞ի վերայ իմ գաստակնիւք ողբալոյ զնա մինչև ՝ի սպառ։

Իսկ Լևոնդ փարեալ զնովաւ խանդաղատանաւք, ասէ. Ի դերև ելին ամենայն հեռազօտութիւնք իմ. անցի ընդ ամենայն հարաւակողմն Իտալիոյ, և չեղև ինձ գտանել զհետս օրիորդին և զծերունւոյ հօր նորա։ Այլ լուայ զվտանգն՝ որ հասանէ քեզ. տեսի զաղգս գումարեալ ՝ի վերայ քո՝ գալ պաշարել զքեզ ՝ի Հռովմ, և փութացայ յօգնութիւն քոյ։ Յոյս գտանելոյ քեզ ենիզակակից՝ համարձակեցայց զիս գնալ առ Մարսա. իշխեցի կոչել զնոսա ՝ի մի վայր, և ասեմ.

Քաղաքակիցք իմ, հրամայեցէք դուք ինձ գնալ տարագիր յաքսոր. այլ իղձք օգնելոյ ձեզ յաղթեցին յիս երկիւղի յանդիման լինելոյ ձեզ ընդդէմ հրամանի ձերոյ։ Թէպէտ բարեկամք և թէ թշնամիք իցէք Հռովմայեցւոց, ահա դէպ ժամանակ ընկճելոյ զնոսա կամ յանկուցանելոյ ՝ի ձեզ ՝ի սպառ։ Դուստր անողորմ յելուզակին Հռոմուլեայ՝ որ եկն յարձակեցաւ ՝ի յարկս մեր՝ յարուցանէ զաղգս ընդդէմ Հռովմայ, և ընդդէմ արդարոյն Նումայ՝ որ հզօրագոյն պատսպարան եղև ձեզ պանծալի խաղաղութեանն։ Ի գումարել ձեր ընդ դատերն Հռոմուլեայ՝ դրժէք աշխարհական ուխտին, ապաշնորհք գտանիք և

վերջացեալք 'ի լաւութենէ։ Թերևս օգտակար լեցի ձեզ պատերազմդ. բայց թերևս օգտակարագոյն առաքինութիւնդ ձեր յօգնելդ Նումայ։ Նումա զերծեալ ձեօք 'ի վտանգէն՝ դարձուցէ 'ի ձեզ զՈւրոնկս. շնորհեսցէ ձեզ զպատիւ քաղաքացւոցն Հռովմայ, և կալցի զձեզ առ եղբարս։ Որ արարն ընդ ձեզ արդարութիւն և զթութիւն մինչ թշնամին ձեր էր, զինչ ոչ արասցէ ընդ ազատ արարս իւր։ Միշտ իսկ արդեօք, այլ առաւել ևս աստ, ուր մարսիկք, օգտակարագոյն կողմնգտանի առաքինութեան. սակայն ընտրեցէք, կամ յաւելուլ յամբոխ խուժադուժ ազգացն՝ որոց առաջնորդէ դուստր անողորմ ձերոյ թշնամւոյդ, վաղ իսկ շաղախեալ յոճիրս բազումս, և որ արդեամբ զդաշոյն 'ի կողս հայրենեացն, և կամ դիմել յօգնութիւն արդարագունին և լաւագունին 'ի թագաւորս, դիւցազին՝ որ եղև ինձ յաղթող, և որ պաշտպան եկաց իրաւանց ձերոց 'ի կռել զուխտ խաղաղութեանն, յոր տակաւին կապեալ կայք։

Մինչ չև աւարտեալ իմ զբանս, և ահա ձայն բարձին ամենեքեան միաբարբառ. Հապա դիմեսցուք յօգնութիւն Նումայ, և Լևոնդ կացցէ մեզ զօրավար։ Յայնժամ ասեմ. Քաւ լիցի հայրենակիցք իմ բարեգութք, այլ յողդողդք, որ սիրէքդ զիս, այլ տարապիր զիս արարիք. չկարեմ զօրավարել ձեզ։ Մարսկի ումեք պատիւդ այդ անկ է. իսկ ես, յորմէ հետէ թագաւո-

ըեաց Նումա 'ի Հռովմ, եղէ Հռովմայեցի։ Ի բեկանելն իմում դիցն օգնականութեամբ զկաղամախն՝ զոր 'ի վիճակ ընտրութեան զօրավարի սահմանեցիք, դրդուեցաւ ծառն այն 'ի զօրութենէ չորից ոտիցն իմոց՝ որ հզօրագոյնք արդեօք էին քան զիս. երկու 'ի նոցանէ, Լիդեր և Պենթէոս, անկան 'ի պատերազմի. Աւլոն զօրավարէ Հիրպեցւոց, իսկ ծերունին Սոփանոր ոչ ևս է. այլ կեայ տակաւին կորովին Աստոր, համբակն Ապոլոնի ցանկալի, այն որ 'ի տղայ տիոց եկաց նշանաւոր։ Եթէ մանկութիւն նորա զձեզ երկմտեցուցանէ, պարծանք նորա դեր 'ի վերոյ քան զՀասակն են, և մանկութիւն յաճախէ ըզպարծանս նորա. կորովին Աստոր կացցէ ձեզ զօրավար, ոչ մարսիկք. և Ապոլոն ինքնին, որումսիրելի է նա, առաջնորդեսցէ բանակիդ ձերում։ Իսկ ես վուԹամ ճեպիմ և չկարեմ մնալ չուոյ զօրականիդ. դիմեմ աւետել Նումայ՝ զի Մարսք առաքինագոյնք յամենայն ժամանակի՝ քան զամենայն ազգս դուանին։

Բարբառք բիւրաւորք կարճեցին զճառս իմ. պատանին Աստոր դիմեաց 'ի դիրկս իմ, և իմ յանդիման կացուցեալ զնա Մարսից, կալայ զասպարն 'ի վեր՝ յորոյ վերայ կարդացին զնա զօրավար։ Եւ զի փուԹայր նա հասանել քեզ յօդնութիւն, աճապարեցի ես կանխել քան զնա յափշտակել 'ի աաբինացւոյ իսկ զպարծանս նա. խայտարձակ շահատակելոյ 'ի վերայ քո։

Իբրև լուաւ զայն Նումա, անկեալ զպարա-
նոցաւն Լևոնդեայ՝ ոչ ևս կարէր բաժանել 'ի
նմանէ։ Իսկ չքնաղագեղն Կամիլլա հանեալ ըզ-
սաղաւարան 'ի գլխոյ իւրմէ, մատեաւ առ Նու-
մա, և ասէ. Եւ ո՞չ իսկ ճանաչես զիս։ Եւ ձայն
բարձեալ Նումայ, կալաւ զձեռանէ նորա, և
համբուրէր զայն ստէպ և թանայր արտասուօք.
և մինչդեռ քաղցր բերկրանօք մերթ 'ի Կամիլլա
և մերթ 'ի Լևոնդ զաչսն դարձուցանէր, յա-
ռաջ մատոյց Լևոնդ զպատանի զոմն մարտիկ,
որ զտուսեր իւր դնէր առ ոտս Նումայ։ Զար-
մացաւ թագաւորն. հայէր 'ի նա, և տիպք կեր-
պարանաց պատանւոյն ոչ անծանօթք թուէին
նմա. այլ ո՞չ կարէր յիշել թէ ո՞ւր տեսեալ էր
իւր զնա։ Յայնժամ Լևոնդիոս ասէ. Ո՞չ յիշի-
ցես զորդի արքային Կամպանիոյ, որ հրաժարեաց
'ի զօրավարութենէ հայրենի բանակին՝ առ 'ի
կալ հարիւրապետ 'ի զօրս Հռոմուլեայ, և որ
ապա տուաւ Մարսիոյ պատանդ խաղաղութեան։
Եւ արդ զի արքայն Կամպանիոյ դրժեաց դա-
շինն, քեզ զորդի նորա առանդեն Մարսք. զերի
զնա ածեմ առ քեզ։ Իսկ Նումայ կարկառեալ
զաչ իւր առ արքայորդին, ասէ. Ոչ զերի, այլ
բարեկամ է դա իմ. և լիցի դա ինձ սիրելի,
թէպէտ և հայր դորա զումարեալ եցէ ընդ թա-
գաւորս՝ որ պաշարեն զիս 'ի մայրաքաղաքիս։

Յայնժամ ելհարց Լևոնդ զհանգամանս բանա-
կի միաբանելոցն, և անձկայր գործել ինչ 'ի վա-

զիւ անդր գործ քաջութեան։ Իսկ Նումայ զաչս 'ի վայր արկեալ՝ յոգւոց հանէր, յիշեցուցանելոյ նմա, զի առ Հերակլեայ կայր վահանն տուրբ, առհաւատչեայ յաղթութեան կրողին զայն։ Եւ յաւելոյր՝ թէ ցորչափ վահանն այն կայր 'ի ձեռին նորա, ոչ կամէր ինքն փորձել զբախտ պատերազմի։ Լեռնդեայ իսկ հաճոյ թուեցաւ խոհական զգուշութիւնն, և վախճան արար բանիցն՝ որ շառաղունանս ածէին սիրելոյն։ Եւ ապա էած Նումա զկամին՝՝՝ա և զԼեռնդ 'ի գեղեցկադոյն կողմն ապարանիցն, և զկապիս յանձնեալ ապայից, զի խնդութեամբ մեկնեցաւ դնալ տալ զանձն քնոյ։

Յայնմ վայրի բարեկամութիւն թելադրեաց Լեռնդեայ խորհուրդ քաջայանդուգն. այլ ծածկէր զայն 'ի Կամիլլայ, թէ դուցէ կամիցի դիմադրաւել ընդ իւր 'ի վտանգ։ Եւ 'ի քուն լինել նորա՝ յարեաւ էարկ զիւրև զառիւծենին, և զինեալ լախտիւն՝ դիմէր հանդարտաքայլ 'ի մի 'ի դրանց քաղաքին, որ բացաւ առաջի նորա։ Մի այնակ 'ի դաշտին ակնարկեալ շուրջանակի՝ եռեռս զբանակ թշնամեաց, և զհուրս առաջապահիցն զրեթէ շիջեալ. գիտէր թէ ընդ ո՛ր կողմն մարթէր նմա մատչել անտեսաբար. այլ լուսին 'ի ճաճանչագեղ կառացն իւրոց սիրէր լոյս պայծառ։ Ցուներ եղ Լեռնդ աստեղն գիշերոյ, և զայս մատոյց նմա ազօթս.

Ո՛ զքեզ կարդամ, ո՛վ փերեզ, ստուերայո՛

զճառագայթս քո։ Դու ոչ երբէք ձեռնտու լինիս եղերան. ոչ ասա յանդուգն տարխաւոր զառիթ բաղձիցն խնդրէ յափշտակել, և ոչ մարտիկ 'ի փառասիրութենէ դրդեալ. քաւ լիցի, դիցուհիդ սիրոյ զդասութեան. ազնուականացոյն իշձք խրախուսեն զիս, սերբ և անապակ սէր բարեկամութեան։ Գնամ թափել զժառանգութիւն սիրելւոյ իմոյ, գնամ քաւել զմեղս՝ զոր եռ նմա գործել Սէր, անողորմագոյնն 'ի դից՝ որում դու սոխդ պարծիս գոլ։ Ո՛վ դիցուհի, պատերազմն այս քո է և առաքինութեան։

Մինչ դեռ բանքն 'ի բերան նորա կային, և ահա ամպք ածեալ զլանիս՝ ծածկեցին զարծաթափայլ անիւ նորա։ Ի տեսիլ բարեգուշակ նշանին քաջալերեալ, դիմեաց դիւցազնն 'ի բանակ անդր, հաս յառաջապահս. նոքա 'ի դիտակ դիւցազնին հայեցեալ և 'ի լսոյ, համարեցան զնա զոք 'ի հիրպեցւոց անտի։ Դիտէր իսկ Լեանդ զբարբառ նոցա, և անցեալ զնոքօք անխափան՝ միջամուխ եղև 'ի բանակն, ուր զօրականն ծանրացեալ 'ի քնոյ և 'ի գինւոյ՝ նիրհէր խառն 'ի խառն տարածեալ առընթեր գինուցն և կառաց։ Մարթէր նմա արագաղթով զբաղումն 'ի նոցանէ առնել, այլ անարդ էր մարտն, և չէր հնար Լեանդեայ մոռանալ 'ի նախճիրն։

Ոչ երկիւղ և ոչ զայրոյթ ազմիկէր զնա. եռեալ նա զԱ.ՀՆ տարածեալ ընդ երկիր, ապարտ ընդ գլխով, և տապար անհեթեթ առընթեր. յա-

զեալ տագնապեալ յերաշ անդոհական՝ թոյժ ելեր նա զանուանս Լևոնդեայ և զնումայ անիծիւք։ Յայնժամ դիւցազնն անդէն զառաջինն վերացուցեալ զլախտ իւր, ապա իբրև յինքն եկն՝ ամիսոփեաց զայն իսկոյն, և զտապար ևեթ ամենեցուն Ս.Լ՝ոնի երարձ։

Եռեւ ապա զխորան Հերսի՝ենայ ամայի՝ի պահապանաց, և եմուտ անդր աներկիւղ։ Ներհեր դուստրն Հռոմուլ՝ենայ խոր՝ի քուն. բայց Լևոնդեայ պատաղեալ՝ի խնդիր ապարին քան՝ի տեսիլ արքայազն օրիորդին, դիտէր շուրջ՝նակի զդանձն անտես՝ի մթան։ Եւ ահա անցին՝ի բաց ամպք յերեսաց լուսնի, և ճարագայթք նորա դողդոջունք ցոլանային ընդ վահանն ոսկի։ Յաւիշտակեաց զայն Լևոնդ, և առանձնեալ զաւարն ցանկալի և զտապարն Ս.Լ՝ոնի, դարձաւ ընդ նոյն ճանապարհ. անց միւս անգամ ընդ բանակն, և՝ի բաց ելանէր ապահովեան յառաջապահից անտի։ Եւ մինչ դեռ աներկեան և ի խնդութեամբ մատուցանէր գոհութիւնս փեբեայ և Գիշերոյ և բնաւից իսկ դից, լսելի լինէր յետկուսէ աղաղակ և շաչիւն զինուց, այն ինչ արևածայրք արձակէին։ Պակեաւ Լևոնդ, լուաւ, հայեցաւ, եռեւ կին մի աղեղնաւոր փախչէր յերեսաց Ջոկատի մոյ Հռոմուլ՝ացորք երբէք երբէք ընկրկէին՝ի ապառնալեաց նեռից նորա։

Ուշ՝ի կուրծս անկաւ Լևոնդեայ մինչև

աչաց նորա ծանուցեալ զնա, զի էր ինքն Կամ-
մինչա։ Դիմեաց, կոչեաց զնա յանուանէ, հաս
առ նա, եւ 'ի ձեռանորա զասպարն տուրբ, յար-
ձակեցաւ 'ի Հռուտուլս, հար զնոսա տապարաւն
և լախտիւ, դարձաւ առ սիրելին իւր, քաջալե-
րեաց զնա, և թեւարկեալ զնովաւ՝ ած զնա վերձ
'ի պարիսպս քաղաքին, և դարձաւ անդրէն 'ի
հարուածս որոց իշխէինն յառաջ մատչել։ Այս-
պէս կինճ վայրենի հալածեալ 'ի վոհմակէ շանց
ամեհեաց, խուսէ և դառնայ ետէպ դարձա-
դարձիւք հարկանել զյառաջամատուցեալն 'ի վոհ-
մակէն։

Ահաբեկեալ Հռուտուլ՝ ձայն եւուն զինուո-
րակցացն. ընդոստ 'ի քնոյ զէն առին զօրքն,
դիմեցին յամենայն կողմանց։ Գունդ մի հիր-
ապեցւոց յառաջ մատեաւ պաշարել զԼոնդ, և
ջոկաւ մի վոլսկաց փութայր հատանել զճանա-
պարհ նորա 'ի քաղաքն։ Զկայ էաւ Լոնդ-
առ Կամինչայ՝ որ զնա տապարաւն ոսկով ապ-
տրապարէր բռնի. և զՀռուտուլից և զհիրպե-
ցւոց միահաղոյն զդէմ կալեալ, փոխեաց յան-
կարծ զճանապարհն, և շրջան առեալ՝ հաս 'ի
Տիբեր։ Յայնժամ աղաղակ ցնծութեան հար-
կանէին թշնամիքն, անշուշտ համարեալ զկո-
րուստ նորա. պատեցին զնովաւ մահկաբար, և
տակաւ մատչէին յառաջ՝ 'ի ներգ արկանել զփա-
խստեայս 'ի մէջ զինուցն և զեռոյն։ Բայց
Լոնդեայ այն ինչ 'ի զեռոյն հասեալ, թռոյց

կորովի բազկաւ զլխատն և զտապար յայնկոյս, և 'ի թիկնամէջս իւր առեալ զկամիլլա, և խրոխտ 'ի թշնամիսն ակնարկեալ՝ որ ապշեալ կային, արկ զանձն յալիս անդր. և թէպէտ սըրընթաց էր գետն, և թէպէտ տեղային յեռակուսէ ներոք վոյնակաց, հաս յայնկոյս, էառ ըզգէնս իւր, և դիմեալ դնայր 'ի Հռովմ։

Այն ինչ զերծեալ 'ի վտանգէն դիւցազն ամենի խանդաղատեալ 'ի գորով, ասէ. Ներեա՛ ինձ ո՛վ սիրեցեալդ իմ Կամիլլա, ներեա՛ ինձ զի զմի ինչ զայս ծածկեցի 'ի քէն. այլ սէր քոյին պատուհասեաց զիս։ Արկի 'ի վտանգ անհրամանն 'ի քէն զկեանս իմ, որ քո իսկ են. դու զիս դողացուցեր զքոյոցդ. քաւութիւն յանցանաց իմոց եղև լիուլի։ Պատասխանի ետ Կամիլլա և ասէ. Եւ կարծէիր, ո՛ ապաշնորհ, թէ կարէի ես ճնալ դարձին քում. համարէիր թէ շատանայր գութ իմ ընդունայն արտասուաք։ Զօրականք նուազ քան զքեզ անողորմք ցուցին ինձ զշաւիղս քո, բացին առաջի իմ զդրունս՝ ընդ որս դու անցեր, և միայնակ 'ի մթան առաջի զօրաց թշնամեաց՝ ոչ ընդ այլ ինչ հոգայի, բայց թէ գուցէ չդատնիցեմ զքեզ։

Զայսոսիկ աղերսական յանդիմանութիւնս առնէին միմեանց սիրակցորդ ամուսինքն, և վըտանգն՝ ընդ որ անցին՝ յաճախէր զգորով սիրոյ նոցա, եթէ էր ինչ հնար յաւելուլ յայն։ Բայց ատացուած վահանին ոսկւոյ ընդոր զնոսա ցնծու-

թեամբ։ Մտին 'ի Հռոմ 'ի ծագել ճառագայթից արեգական. և դիմեալ յարքունիս, մնային յառնելոյ թագաւորին՝ առ 'ի մատուցանել նմա զասպարն դիւցական։ Որպիսի ինչ եղև նումայ խնդութիւն ընդ այն. ոչ բերել զայն կարէր 'ի սրտի, և ոչ բացատրել. փարէր և գարձեալ փարէր զերկ ընդ խառն զսիրելեաւն, և 'ի ծունկս անկանէր Կամիլլայ, և ասէր. Քանի՞ շնորհապարտ ձեզ գտանիմ, որ կանգնէք զաթոռ իմ և զփառս. ո՛հ, ձեր է աթոռ իմ, ձեր է և սիրտ. ձեզ անկ է իշխել Հռոմայ, որ իշխէք 'ի սիրտ նումայ։

Եւ վաղվաղակի համախմբեալ զժողովուրդն, եցոյց նոցա զասպարն տուրբ. և պատմեալ նոցա զոր ինչ արարն Լևոնդ, կացոյց զնա անդէն զօրավար զօրացն Հռոմայեցւոց։ Եւ մինչդեռ միաբարբառ անհամար բազմութիւնն զաղաղակ բարձեալ՝ հաստատէր զիրաւացի ընտրութիւնն, պահապանք պատնիշացն ազդ առնէին զաւետիս գալստեան Մարսից։ Քանզի պատանին Ղատոր պատրեաց զթշնամիս, և ընդ վերկոյս Տիբերի մերձ յակունսն անցեալ յայսկոյս՝ 'ի զդոյշ 'ի չու հաս 'ի տորոտ պարսպաց քաղաքին յետ բուրական կուսէ, որ միայն ազատ էր 'ի պաշարողաց։

Հրաման ետ Նումա քանալ զդրունս, և դիմեաց ընդ առաջ նիզակակցացն։ Եւ եմուտ Ղատոր 'ի քաղաքն բիւր արամբք. և ընդ տեսանել

զարքայն, յառաջ մատեաւ՝ երդնուլ նմա հնազանդութիւն և բարեկամութիւն։ Գիրկս էարկ նմա թագաւորն խանդաղատանօք, և ժողովուրդքն զաղաղակ հարկանէր ցնծութեան, և մինչդեռ նումա յապարանս իւր ածէր զԱստոր, իւրաքանչիւր ոք 'ի քաղաքայնոց հիւրընկալեալ զոք 'ի զօրացն մարսկաց՝ մեծարէր զնա իբրև զեղբայր։

Յայնմ վայրի Հերակլեայ և Ալէն մոլեգնեալ 'ի տեսիլ զօրացն՝ որ յայնմ կողմանէ Տիբերի մտանէին խաղաղութեամբ 'ի Հռովմ, չկարելով նոցին աղմկել զչու, և կորակոր ինքեանց ամաչեցեալք՝ զի միոյ ուրուք մարտկի յափշտակեալ էր զմիոյն զասպար և զմիւսոյն զտասպար, Հերակլիա և Ալէն 'ի նոյն բոց վրէժխնդրութեան վառեալք, խիզախէին 'ի յարձակումն, ձայն տուեալ միաբարբառ. Հապա 'ի զէն։ Վոլսիկք, և հիրպեցիք, կամպանիացիք, Հռուտուլք և վեստացիք զէն առին. ելին առ Հասարակ 'ի բանակէն, գունդ կազմեցին, և բարձեալ բերելով զերկայնաձիգ սանդուղսն՝ դիմէին 'ի պատնէշս անդր, վարեալ զառաջեաւ զբաղիատր և զբաբան։

Ազդ եղև Նումայ զի յարձակէին թշնամիք, և ոչ ինչ զարհուրեցաւ 'ի վտանգէն։ Անխառով 'ի պատերազմի որպէս առ բագինս դից, հրաման եառ Լևոնդեայ ելանել զօրքն Հռովմայեցւովք 'ի դաշտ. զնոյն պատուէր եառ և Ատորի. իսկ ար-

քայորդւոյն կամպանիացւոյ կալ 'ի մէջ գնդացն Մարսից, և գեղանւոյն Կամիլլայ 'ի մէջ լեգէոնացն Հռովմայեցւոց։ Եւ երկաքանչիւրոցն զօրավարաց արդել ամենևին, չթողուլ զօրացն ձգել և ոչ նետ մի։ Զարքունականն ապա զգեցեալ զարդս, ած 'ի գլուխ իւր պսակ, և գաւազան արքունի և ուղէշ ձիթենւոյ 'ի ձեռին, և նուիրակք յառաջոյ գնայր ընդ մէջ երկուց բանակացն։

Հիացեալ թշնամեաց ընդ տեսին, զկայ առին կարգեալք 'ի ճակատ՝ մնալով հռովմայեցւոց։ Նոքա հասեալ մերձ իբր նետընկէց մի, ճակատեցան կացին հանդոյն իմն թշնամեաց։ Ասէր և անտի աղեղունք լարեալք, և սուսերք թերաքամեալք, և Տիտիոն 'ի միջոց ասպարիզին տատանէր զձաս իւր, և դէտակն ունէր նշանին 'ի պատերազմ։ Բայց թագաւորն հռովմայեցւոց յառաջ մատուցեալ, ամբարձ վերոյ գագաթան զուղէշ ձիթենւոյն. և քարոզքն ազաղակեցին լսել նումայ, և բիւրք բիւրուց կրկնեցին զնոյն բարբառ։ Բայց թէպէտ և Հերսիլիա և Ալլան արդելուին, արքայն վեստացւոց և զօրավարքն վոլսկաց և հռուտուլացց մատեան 'ի լուր արքային հռովմայեցւոց. հարկ եղև յայնժամ և Ալլանի անսալ նոցա. և Հերսիլիա իսկ մռնչելով առ ցասման՝ մատեաւ 'ի լսել որ ինչ իշխէրն նումա առաջարկել։ Իսկ նա քաղցր և համարձակաձայն բարբառով ասէ. Արքայք և դիւցա-

զունք, որ լսէք զինձ, առ ինչ ածէք 'ի վերայ իմ պատերազմ. մինթէ զսահմանս ձեր աւերեցի կամ զկանայս և զորդիս ձեր յափշտակեցի, և կամ ուխտի դաշանց ինչ դրժեցի. զինչ խնդրէք յինէն, զինչ պահանջէք։

Աղաղակեաց Աւլոն. Զի ի՞նչ յաթոռոյ՝ զոր յափշտակեցեր՝ և թողցես դատերն Հռոմուլեայ զժառանգութիւնն հայրենի. առ այս զինուորիմք, դամք թագաւորեցուցանել զնա, և զվրէժ նորին խնդրել։

Կրկնեալ անդրէն Նումայ, ասէ. Զթագս զայս՝ զոր դու խլել 'ի գլխոյ իմմէ կամիս, Աւլոն, ոչ ես խնդրեցի, և ոչ ցանկացայ սմա. ծանր իսկ էր ինձ ընդունել զսա. այլ դիք հրամայեցին, և հնազանդ եղէ նոցա։ Ժողովուրդս այս ընտրեաց զիս 'ի թագաւոր, այն որ և զՀռոմուլ ընտրեաց։ Հռովմէականն զահ անկ այնմիկ է, զոր ազգն ընտրեաց, որ և թագաժառանգ է սաբինացւոց՝ կիսոց ժողովրդեանն Հռովմայ։ Եղեռն զՀեռ եղեռան յաջորդեալ, զորս չկամիմ յուշ ածել ձեզ, մնացի յեռին 'ի թագաւորս Սաբինաց. և արդ դիք, և իրաւք ժողովրդեան, արիւն արքայաղն և օրէնք հրաւիրեն զիս յաթոռ։ Իսկ դուք առ ոչ ինչ զայս ամենայն իրաւունս համարեալ, գայք պաշարել զիս 'ի պարիսպս իմ անազդ պատերազմաւ։ Ոչ ինչ տրտունջ է ինձ զձէնջ, այլ մանաւանդ շնորհ ունիմ ձեզ, զի զարդարութիւն առնէք ինձ կուսակից և զդիս ձեռնտու։

Արքայք Իսրայէլոյ, մեծարեմ զձեզ. 'Ի կամս ձեր է սիրելի լինել ինձ, այլ չէք ինձ ահարկուք. ահա բանակ հռովմայեցւոց յոգնախումբ, հաւասարազօր միահամուռ ձերումդ բանակի. ահա Մարսք, որ զպահպանութեամբդ ձերով խաղ արարեալ՝ հասին ինձ 'Ի Թիկունս. ահա զօրութիւն առ զօրութիւն։ Մարթ էր ինձ, թէպէտ և 'Ի ճակատամարտս բազումս տկարանայցեմ, արդելուլ զձեզ առ պարսպօքս զամս բազումս. և եթէ 'Ի միումն եթէ ճակատու պարտիցիք, չմնայ ապաստան։ Մի կարծիցէք թէ զՄարաս եթէ կարիցեմ հանել ձեզ 'Ի ճակատ. եւրուրացիք իսկ և ապուլեցիք և ՀԻդուրացիք հացեն ընդ հուպ յօգնութիւն։ Ի յարձակել միահամուռ այսքանեաց ազգաց 'Ի վերայ ձեր, ոչ կարիցէք զդէմ ունել նոցա, և կորնչիցիք առ հասարակ։ Վեստացիքդ եթէ հանդիպեացին ողորմութեան. յամենայն ժամանակի դոքա ընդ Մարաս եղեն որպէս եղբարք, և համարիմ ըզդոսա նիզակակից ինձ, և երդնումն նոցա յանդիման ձեր՝ ոչ իբրև ընդ թշնամիս վարել ընդ նոսա։

Իբրև զայն լուան Ալ'ան և Տուրնոս և Արիսբէոս, հայէին 'Ի ծերունի արքայն վեստացւոց և կասկածանք 'Ի դէմս նոցա նկարէին ակնարկս։ Իսկ նումայ յաչողեալ արկանել 'Ի նոսա հերձուած, յառաջ ածեալ զբանս իւր՝ ասէ.

Ասաղ, ինձ նախ լիցի ողբալ զյաղթութիւնն

որ կորուստ'ի վերայ այնքանեաց աղգաց ածիցէ, և լուացից արտասուօք զդաբնիս արիւնաթաթաւս։ Արքայք զինուորակիցք իմ. ինձ առաւել քան զամենայն ինչ ցանկալի է խաղաղութիւն, և առանց մատնելոյ'ի պարտութիւն, և վատահ իսկ'ի յաղթութիւն, առաջի առնեմ ձեզ զայն առ'ի յօգուտ ձեր։ Ցաց ձեզ, ո՛ հիրաբեցիք, զբերդեանն՝ զոր Հռոմուլ կառոյց յաշխարհիդ ձերում. անիրաւեցաւ նա, պարծանս ինձ համարիմ փոխարինել անիրաւութեանն։ Վոլսիկք և Հռուտուլք, հրաւիրեմ զձեզ 'ի նիզակակցութիւն և յիրաւունս քաղաքակցութեան Հռովմայեցւոց։ Արքայդ Կամպանիոյ, որ այդպէս վաղ մոռացար զյեռին պատերազմ քո ընդ Մարսս, դարձուցից 'ի քեզ զորդի քո զոր 'ի ձեռս իմ ետուն թշնամիք քո։ Եւ քեզ արքայդ վէստացւոց, որ 'ի բազմաց հետէ ողբաս զդուստր քոյին՝ զոր ծովամոյն համարիս կորուսեալ, հատուցից քեզ զքոյդ Կամի՛լլա։ Եկայք Կամի՛լլա և Կապիս, մատիք 'ի գիրկս ծնողաց ձերոց։

Եւ զոյգ ընդ բանիցն՝ Կամի՛լլա և Կապիս դիմեցին 'ի գիրկս արքային վեստացւոց և արքային Կապուայ։ Իսկ ծերունիքն երկոքեան ոչ կարէին հաստատել աչացն, արտասուս առ ցնծութեան հեղուին, և ողջագուրէին 'ի ծոցս իւրեանց զորդիս իւրեանց՝ զորս չյուսային երբէք տեսանել։

Եւ ապա յաւել Նումա. Մարտերո՛ւք այսու-

հետև ընդ իս. վաղ իսկ արդար էր պատերազմս իմ, կամեցայ արդարագոյն զայն յարդարել. յա-փիշտակօղք ևեթ էիք, արդ և ապաշնորհք դը-տանիցիք. մարտերուք, եթէ հաճոյ իցէ ձեզ։

Յայնժամ արքայքն երկոքին փոխանակ պա-տասխանւոյ անկան յուսնորա, և փարէին զծըն-գոլքն. իսկ քաջն Տուրնոս և հանճարեղն Ա-բիսբէոս, աջ կարկառեալ՝ գոչէին խաղաղութիւն. և խաղաղութիւն՝ զօրքն առ հասարակ կրկնէին։ Ա-ենն միայն կամէր բարբառել. բայց Լևոնդեայ դիմեալ 'ի վերայ նորա, ասէ. Եթէ արեան իցես ծարաւի, ահաւասիկ ես. դարձուցանեմ՝'ի քեզ զտապարդ, զոր բարձի 'ի քէն 'ի քուն։ Իսկ նորա սասանեալ 'ի բանից անտի և 'ի զօրու-թենէ քաջին Լևոնդեայ, հայեցաւ 'ի նա և լը-ռեաց։ Յայնժամ դիւցազնն յաւել. Հապա, ո՞ւմ կաս. ասակայ սիրտ իմ՝ներկանել զձեռս յա-յրիւն մարսիկ. ընտրեսա՛ հրաժարել 'ի հայրե-նեացդ, կամ ընդունել զաչ իմ։ Եւ Ա-ենն 'ի վերայ էած. ընտրեցի. և ետ զաչ իւր նմա։

Յայնմ հետէ բարձան ամենայն խոչք խաղա-ղութեան, և յամենայն կողմանց հնչէին ձայնք ցնծութեան. և բանակքն երկոքին, թողեալ զիւրաքանչիւր կայս, խառնէին ընդ միմեանս։ Բայց Հերսիլիա, որ մինչև ցայնվայր յուսա-ցեալն էր յԱ-ենն, Հերսիլիա ամենեին այն մո-լեգնեալ, աչք հրացայտ, գոյնք երեսաց նորա հատեալ 'ի արտմտութենէ, գոչեաց. վատք, ա-

պաշնորհ.ք և հաւատադրուժ նիզակակից.ք, որք մատնէք զիրաւունս թագաւորաց. մի կարծիցէք զիս կցորդ վատութեանդ ձերոյ։ Եւ զու Նումա, զոր ատեամ որչափն սիրեցի, զի չկարեմ տպաւորագոյն ևս բացատրել զՀեռ իմ, ընկալ զչարագոյժ ողջոյն իմ հրաժարական։ Տուայտեացիս չարատանջ 'ի սիրոյ, որչափ յաւելեր ինձ տանջանս. լացցես 'ի գահոյս զաղէտս չկարելոյ գահակից ունել.քեզ զոր նախամեծար արարեր.քան զիս. ազգն հռովմէական, որ զքեզ ընտրեաց թագաւոր, լիցի ոխերմագոյն թշնամի թագաւորաց. հալածեացէ զնոսա ընդ ամենայն երկիր, վարեալ զքեզ կամ զյաջորդս.քո զանարժանս 'ի պարապաց իւրոց։ Յանտաժուտ ճիւաղք դժոխոց հեռամուտ լիցին.քեզ 'ի սպառ, յանդիման աչաց.քոց տալ.քեզ նկատել միշտ զդիակն Տատեայ՝ կենդանեաւ 'ի թունից իմոց, և զՀերսիլեայն խողխողեալ 'ի սրոյ՝ զոր խուժադուժ ձեռն.քո տայ մխել։ Ու զայս ասացեալ, մխեաց 'ի սիրտ իւր ցերախակալ անդր զսուսերն։ Դիմեցին հասին 'ի վերայ, այլ տարաժամ. ոչ ևս էր շունչ 'ի նմա, և տակաւին զայրոյթ 'ի ցուրտ դէմս նորա կայր նկարեալ։

Ելաց Նումա 'ի վերայ նորա, և հրամայեաց յուղարկաւորել զնա արքունական շքով։ Եւ մինչ դեռ խարոյկն պատրաստէր, եղեն նա զոհս, երդուաւ զխաղաղութիւն ըստ պայմանացն խոստացելոց, և դարձաւ եմուտ 'ի Հռովմ, շուրջ

պար առեալ յարքայից պարսեալց յարդարութենէ։ Եւ հասեալ ընդ նոսա 'ի Կապիտոլ, մատոյց անդ զոհ Դիայ. և առաջարկեաց հաստատել նիզակակցութիւն 'ի հաստատութիւն խաղաղութեան և յազատութիւն իտալիոյ։ Արքայն առ հասարակ պատկառեալ յառաքինութենէ նումայ, զնա ինքն խնդրէին իրաւարար 'ի մէջ իւրեանց։ Եւ նորա քննեալ զիրաւունս իւրաքանչիւրոց, արար փոխարէնս տուժիցն, և տոյժս ինքնին յանձն առեալ, յօրինեաց զպայմանս ուխտին՝ զոր կռեցին ամենեքին մուսդիւր։ Եւ կազմէին 'ի չու նոր նիզակակից.ք թագաւորի Հռովմայ, մեծապարգև մեծարեալք 'ի նմանէ, վստահք 'ի հաւատարմութիւն նորա, և լի սիրով և պատկառանօք յերեսաց նորա։

Թագաւորն Կապուայ դարձաւ 'ի սահմանս իւր հանդերձ որդւովն, որ դիւցազնացեալն էր 'ի Մարս։ Արքային վեստացւոց չեղև հնար յորդորել ածել զդուստր իւր 'ի Կինդիլիա. Կամի՝ այլ հրաժարեալ 'ի ժառանգութենէ թագաւորութեան՝ ընտրեաց կալ 'ի Հռովմ ընդ Լևոնդեայ և ընդ Նումայ, և զբախտ նորա դեղեցկանսեհ՝ յոր վայելէրն՝ շատ համարեցաւ հայր նորա 'ի բարեբաստութիւն իւր։ Վոլսիկք և հիրպեցիք և Հռուտուլք, զերծեալք յանիրաւութեանցն Հռոմուլեայ՝ զորոց բողոքէին, դարձան յաշխարհս իւրեանց, օրհնելով զնումա։ Մարսք լցեալք պարգևօք, և ընկալեալ անդրէն զժառանգու-

թիւն Աւրոնկաց, դարձ արարին 'ի Մարրոբիա, մոլմոքեալ յոյժ Աստորի 'ի մեկնել անդ յառաքինի նիզակակցէն։ Իսկ ժողովրդեանն Հռովմայ տեսանելով վախճան լեալ պատերազմին առանց հեղման արեան և ոչ միոյ ուրուք 'ի քաղաքացոց, պաշտէր զթագաւորն իւր և օրհնութիւնս տայր նմա։

Եւ յապահովեալ հանճարեղ արքային զխաղաղութիւն Իտալիոյ, փութայր գնալ աղխել հանդիսիւ զդրունս մեհենին Յանուսի, որք առ Հռոմուլեաւ բաց կացին միշտ։ Ճռնչէին դրունքն պղնձիք 'ի ժանգահար ծղինիս իւրեանց և ոչ տեղի տային ուժոյ առ 'ի փակել։ Յայնժամ Նումայ 'ի ծունր իջեալ առաջի դիցն, աղօթեաց 'ի ձայն բարձր և ասէ. Ո՛վ Յանէ, որ թագաւորեցերդ Իտալիա արդարութեամբ և խաղաղութեամբ, պատապարան լեր խաղաղասէր խորհրդոց իմոց. փակեա՛ զմեհեանդ ահարկու, և զսիրտս մեր յարդարեացուք քեզ օթեան՝ պաշտել զքեզ անդ։ Մատուցանեմ քեզ սպասնոր. ամենանուիրական Արիսի մարտակիզքն առնէր ցարդ թերակատար տարւոյ, յաւելում ամիս կրկին 'ի լուսին թերւոյն, և նախաակիզքն ամնոց կացցէ Յանուար. արժան իսկ է, զի աստուածն պատերազմի տեղի տացէ դիցն խաղաղութեան։

Եւ զոյգ ընդ բանիցն շրջեալ ինքնակի դրունքն 'ի ծղինիս, փակեցան ահեղ շառաչմամբ։ Եւ

ապանուիրեաց Նումա զասպարն ոսկի՛ի մշտայաղթ զօրութիւն Հռովմայեցւոց ընդդէմ ամենայն ազգաց. և կացոյց՝ի պահ նորին քուրմն, Ռատուցիկս * զնոսա կոչեցեալ։ Եւ յետ կրօնական պաշտամանցն պատրաստէր զնալ անդրէն յանտառն եգերական, ածեալ ընդ իւր անդր և զԿամիլլա և զԼևոնդ։ Այլ զի մի՛ անհաճոյ ինչ յաւէրժհարսինն թուեսցի, եթող զսիրելիսն իւր՝ի բացեայ յաղքերէն. և մատուցեալ անդր միայնակ, կարդաց զԵգերիա, բողոք կալաւ զի՝ի բազմաց հետէ չքէր զբարբառ նորա, և պատմեաց նմա որ ինչ ցայն վայր գործեալն էր, և յաւել ահիւ և պատկառանօք. Ոչ՝ թէ հաճ ինչս և հաւան։ Եւ պատասխանի բարբառն. Այո՛, հաճ եմ և հաւան, և յայսմ հետէ կացցես դու վեհագոյն՝ի թագաւորս։ Լցեր դու զամենայն ակնկալութիւնս իմ, ինձ այսուհետև անկ է ընալ զոր խոստացայն. ասա ուրեմն ծանիր զԵգերիա։

Եւ զայս ասացեալ՝ եկն յերևան, և էր ինքն Անայիս։ Ցապուշ հարաւ Նումա, և կարկեալ եկաց ընդ առեսին, աչք նորա պշուցեալ, բերանաբաց և բազկատարած։ Եւ ապա յանկարծ հեկեկանօք անկեալ առ ոտս օրիորդին, չանայր բարբառել՝ այլ՝ի զուր, չկարէր այլ ինչ՝ բայց հեղուլ զարտօսր։ Ցայնժամ ասէ ցնա Անայիս.

* Գանգն կայթիւք զայն ածէին քուրմք՝ի հանդէս։

ցոան կայ, չեմ ես յաւէրժահարանն եղե-
ւիա. մարդ եմ մահկանացու, և առաւել քան
զպաշտօն դիւցական հաճոյ է ինձ սիրելի լինել
քեզ։ Ծանուցեր դու ինձ զտեսիլն՝ զոր առ
աղբերբն Պանայ տեսեր, և զյոյս քոյին խրա-
տելոյ յեղերեայ. և խորհուրդ կալայ ընդ հօր
իմում արդիւնացուցանել զյոյս քո։ Սոփպեալք
բաժանել 'ի քէն, որպէս զի յանձն առնուիր
բարերարել ազգի քում, եկաք թագչել յան-
տառիս՝ ուր անշուշտ համարէաք դառնալ քեզ
ընդ հուպ։ Ցաջողեցին ամենայն խորհուրդք
մեր. խօսեցայ առ քեզ 'ի դէմս եղերեայ, ե-
տու քեզ խրատս զթելադրեալսն ինձ 'ի դե-
ղահանճար իմաստութենէ հօրն իմոյ։ Դու
կարծէիր յաւէրժհարսինն բարբառել քեզ.
խաբէութիւնդ այդ կարևոր 'ի փառս քո՝ քաղցր
էր սրտի իմում։ Ցեսանէի զքեզ ընդ սաղար-
թախիտ ուղէշս ծառոց յորժամ զայիրն խորհըր-
դակցել ընդ եղերեայ, և բարեբաստագոյն
քան զքեզ կայի առ քեզ՝ յորժամ լայիրն
զԱնայիս։

Մինչ դեռ Նումա հիացեալ կայր 'ի լուր բա-
նից Նորա, և ահա ետես զՁրադաշտ. դիմեաց
'ի գիրկս Նորա, փարէր զնովաւ ստէպ. և մեկ-
նեալ հաղիւ ուրեմն 'ի գրկաց Նորա, ընթացաւ
խնդրել զկամիլլա և զԼևոնդ, և գոչէր. Ա՛ստ
է Ա՛նայիս, ա՛ստ է. ե՛կ փութա՛. հայր քո և քոյր
մնան քեզ։ Բայց Լևոնդ չկարէր հաւատալ

բանիցն, սակայն փութացաւ եհաս անդր. և Զրադաշտ անկեալ զպարանոցաւ նորա, գիրկս արկանէր նմա ասելով։ Որդեակ իմ, սիրեցեալ որդեակ, դուք դարձեալ զմիմեանս, և կեցցուք ընդ միմեանս 'ի սպառ։ Իսկ Լևոնդ արտասուէր և եթ անբարբառ, և սիրելին Կամիլլա ողջագուրէր զՈնայիս. ցնծութիւն և բարեկամութիւն թուէին յիմարեցուցեալ զբարեգորով ծերունին, և զչորեսին տարփաւորս։

Եւ ապա ուր ուրեմն իբրև արտասուք սփոփեցին զնոսա, ած զնոսա Զրադաշտ 'ի հիւղ իւր, և ասէ. Ասա ծածկեցաք, ասա կատարեացուք զկեանս մեր. տամ քեզ, Նումա, զՈնայիս. բայց ժողովուրդ Հռովմայ մի գիտասցէ երբէք զզօդ ձեր, և Ոնայիս մի երբէք մոցէ 'ի Հռովմ. զօր ամենայն պատճառանօք զյաւէրժահարանն հարցանելոյ՝ գայցես առ հարան քոյին, և բարերարութեանցդ քոց վարձ՝ լիցին բերկրանք պատմելոյ մեզ զայնոսիկ։ Այսպէս դուստր իմ հաւատարիմ 'ի կրօնս իւր կացցէ. գաղտնութիւն յաւելցէ զբերկրանս բարեբաստութեանն Նումայ, և Զրադաշտ երանաւէտ ընդ բարօրութիւն նորա՝ կատարեսցէ խաղաղութեամբ 'ի միջի ձերում զնշխարեալ աւուրսն, որ սահմանեալ են նմա յԱրամազդայ։ Հաճոյ իցէ քեզ խորհուրդս այս։ Իսկ Նումա փոխանակ պատասխանւոյ անկաւ յոտս նորա. ժպտեցաւ Ոնայիս խոնարհեալ զաչս իւր. և Կամիլլա և Լևոնդ առ խնդին ծափս հարկանէին։

ի վաղիւ անդր կատարեցան հարսանիք Նումայ ընդ օրիորդին 'ի Հիւղի անդ առանց շքոյ և հանդիսի, և չէր ոք անդ իրախճանակից բաց 'ի ծերունւոյն և 'ի Լևոնդեայ և 'ի Կամիլլայ։ Բարեբաստիկն Նումա գայր այնուհետև հանապազօր 'ի Հիւղ անդր. և առաքինաբէրն Ս. Նայիս և հայր նորա ազդէին 'ի նա ևս քան զևս զցանկութիւն և զհնարս առ 'ի յաւելուլ յարդարութիւն և զերազանցել 'ի թագաւորս լաւութեամբ։

Եւ եկեաց ընդ նոսա Զրադաշտ մինչև 'ի խոր ծերութիւն։ Լևոնդ զօրավար Հռովմայեցւոց հաստատեաց զբնակութիւն իւր 'ի Հռովմ ընդ կնոջ իւրում, յորմէ զանուն կալաւ Կամիլլոս, և եկաց հայր ազգատոհմին դիւցազանց՝ յորոց զերահռչակեալն վրկեաց զՀռովմ 'ի գաղղիացւոց։ Նումա սիրեաց միշտ զՍ. Նայիս և սիրեցաւ 'ի նմանէ 'ի սպառ, թագաւորեալ զամս քառասուն և հինգ։ Ընդ ամենայն ժամանակս թագաւորութեան նորա չերևեցաւ թշնամի 'ի սահմանս Հռովմայ, և դրունք մեհենին Ցանուսի երբէք ոչ բացան, և ընդ պետութեամբն Նումայ չեղև ոք թշուառ 'ի հարստահարութենէ կամ 'ի թերութենէ օրինաց։

ԿԱՏԱՐԵՑԱՆ ՊՈՄՊԻԼԻՈՍԻ ՆՈՒՄԱՅ
ԳԻՐՔ ԵՐԿՈՏԱՍԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՍՍՀ ԳԱ Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2606

2013